This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

B 1,181,271

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Khosrov, Andzewatsi, 10th cent
Meknutiwn zhamakargutean

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

Արարեալ Երանելւոյն Խոսրովու Անձևացեաց Եպիսկոպոսի, և կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի։

253 p.

Հրամանաւ ամենապատիւ և վեհափառ Պատրիարքի Թագաւորեալ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ՝ Տ֊ն Յակով֊բայ բարեջան և ծախուան Աղեքսանդրիկոսի։

Ի տիպ արձանացեալ

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ

1840 = ՌՄՁԹ

ՅՕՐԹԱԳԻՒՂ

Ի Տպարանի երից որդւոց Պօղոսի արապեան ատրուչեանցւոյ։

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Grad
EEEN
31601
Buhr

ԱԿԱԴ
ԵՐԵՒ
3164
02/28/96

ՅԱՌԱՋԱԲԱՆ

և Հակառա… [illegible]

Բաղձանք մարդոյս են անհուն, և կարողութիւնքն՝ հանաւոր. յայն սակս չէ՛ հնար ՚ի ձեռս բերել զայն ամենայն, յոր միանգամ բաղձան բաղձանօք մարդիկ ըստ իւրաքանչիւր բաղձանաց, եթէ ոչ՝ նախախնամութիւնն աստուծոյ գայր օժանդակ նմին։

Ուստի ՚ի բազում գրոց սրբոց և հոգեշահ մատենագրութեանց նախնեաց՝ ցանկալի էր արդարև մեզ Մատեանս այս, այսինքն՝ Մեկնութիւն ժամակարգութեան, արարեալ երանելւոյն Խոսրովու Անձևացեաց Եպիսկոպոսի, և կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի. որ ըստ բաղձանաց մերոց գտաւ արդէն ուղղեալ և սրբագրեալ ՚ի հնագոյն ձեռագիր գաղափարէ՝ ՚ի ձեռն հոգելոյս պատուելի Գէորգ դպրի Պալատականի, որ իւրով իսկ գրչաւն ՚ի սկզբան անդ մատենին նշանակեր այսպէս։

„՚Ի յոյժ հնագոյն ձեռագիր օրինակէ ինչ՝ բաղդատմամբ սրբագրեցաւ, և
„ բազում տեղիքն ՚ի մթութենէ երկբայութեան ՚ի լոյս ածեալ պայծառացան,
„ որպէս իսկ յընթեռնուլդ. եթէ իցես խելամուտ և մտավարժ կարես իմանալ,
„ որք որոշեցան կարմրով. և այս վճռութիւնք մանաւանդ ՚ի բանս Խոսրովու ե-
„ ղեն. քանզի գոն և այլ վարդապետաց բանք ՚ի սմա, և առաւել Մովսէսի ու-
„ րումն որպէս ցուցանէ յառաջաբանութիւն գրոցս. և այս ՚ի վայելս սիրողաց
„ հնաբանութեան արդ՝ նախնի վարդապետացն մերոց։ ՚Ի Կոստանդնուպօլիս
„ ՚ի Պալատն. ՚ի ձեռն Գէորգ չնչին դպրի. յամի փրկութեան մերոյ 1775։

Ապաքէն զայս ընտիր օրինակ առեալ մեր և նախանձ բարւոյ յանձին բերեալ՝ կամեցաք եռանդն սիրով ՚ի լոյս ընծայել ըստ երկուց շարժառիթ պատճառաց։

Նախ՝ զի կարի հարկաւոր և առաւել պիտանի են ծանօթութիւն և տեղեկութիւն առուգութեան մեկնութեանց եկեղեցական բանից, որք հանապազ ընթեռնանին ՚ի յուր ժողովրդոց՝ առ ՚ի զարթուցանել զնիրհեալս ՚ի գիշերային քնոյ թմրութենէ։

Երկրորդ՝ անկորուստ և անմոռաց պահել երախտագէտ մտօք զաշխատասիրութիւն թէ հեղինակին և թէ սրբագրիչ պատուելւոյն, յանձն առեալ գիտնական թարգմանյ վարդապետի մարդաշուքոյ՝ զգուշաւոր և հաւատարիմ խորհրդածութեամբ ՚ի բաց յապաւել ՚ի նմանէ զ՚ի վերջոյ յաւելեալ զանպարիր բանս, և զհետ եղթեալ սրբագիր օրինակին՝ զիւրաքանչիւր պարբերութիւնս բարւոք անատել և ըստ պահանջման բանին կետադրել ՚ի դիւրութիւն վերծանողաց։

Վասն որոյ այժմ գեղեցիկ և վայելուչ նորոգ տպագրութեամբ նուիրեմ ձրիաբար զայս հոգեշահ Մատեանն՝ բարեմիտ ընթերցասիրաց հայրենի ազգիս, ՚ի յիշատակ հոգւոց համայն ննջեցելոց իմոց։

Ծանիկ
մահտեսի Աբմոնեան

Grand
ERN
31604

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Պօղոսի. եբրայեցւոց վարդապետի՞ սուրբ գրքոյ հաւաքողի.

Որչափ անձին ճանաչել՝ ուսուցանեն մեզ ամենայն օրէնք եւ պատուիրանք, եւ մի՛ ամբարտաւանել առաւել քան զոր-ժամն. զի քան զմանցանացն պատիժս են յոլովակի ցուցանի զառաւելագոյն խոնարհութեան. Մանաւանդ թէ եղերէ եւ յամենեցունց, անխորհրդաբար հանապազորդակիցն եւ ձեռնասուն լինիլ՝ մեր իմաստ, որքան զկար զօրութեան ումեք բարեձեւադոյն իցէ. Նաեւ ոչ այս միայն, այլ եւ անմատոյց եւ ապացուցանել լիցի ամ առաջնորդութիւնքն, եւ նախատեսլի ամենեցուն վասն անյարմար եւ կարողութիւն բանիցն. Այլ եւ ինքն ուսիցն հարեալ դատելի ի խղճէ մտացն, երկբայաբար միշտ դոլով ի գործածութիւն գործոյն, անտարբեր զառաւելագոյն աւանդելով զմտացն իւրոց յանդիմանութիւն. զի ահ մեծ է անկանել ի ձեռս այ կենդանւոյ, բստ գրեցելումն.

Օ՜ի նախ սուրբ լինել պարտ է, եւ ապա հանդիսանալ եւ ճանաչել զսրբութիւն մեծին այ. զի մի փոխանակ վարձուց հատուցման՝ պատիժ կրեցէ անարժան յանդգնութեանն. Նաեւ կրթութեան յոյժ պիտոյ են գրոց սրբոց եւ նորին վերծանութեան. այլ եւ արտաքնոց եւս ակղեկութեան զրացատրութեանցն, եւ բայիցն եւ բառիցն. եւ ճանաչող միոյ ուներ, զի կարող լիցի ընտրութիւն առնել խորթատեսակ բանիցն. եւ մարմնոյ եւս պնդութեան եւ զգուշաւորանացն առողջութեան յոյժ պիտոյ են. Նաեւ անդորրութեան ժամանակի եւ յապահով տեղւոջ դեգերմանն, առ ընթեր միշտ ունելով զօգնութիւն տեառն, յորս պարապելով հանդարտ հմտացի ճշմարիտ մակացու լինելով.

Նա յայսմ ամենայնի թափեաց իւր զօրով, և հակառակորն յաւէտ լցեալ, զոր թուի թէ ոչ այլ ոք պատմեսցէ կրկին. բայց քանզի խնդրեցեր սիրելի՝ զվերլուծութիւնս աղօթից զորս թողեալ է մեզ երանելւոյն Խոսրովու, ոչ բաւական համարելով զառաջեալն, կապեցեր զմեզ ընդ հարկաւ՝ դրուելով ի ծառայութիւն: Զի ամենեցուն խնդրողաց հրամայէ տալ ըստ կարողութեանն. և զոչ ձեռնհասութեանն կորուսեալ մնայ խնամոցն: Զի ոչ կարելի՝ տկարութեամբ, իսկ ոչ կամելի՝ անհաւատութիւն. զի հանապազակաց է շահն, և իւրաքանչիւր ոք վարձս առցէ: Վասն որոյ ապաւինելով յայն որ առանց նախատելոյ շնորհէ հաւատով խնդրողաց, և աղօթիւք ձերովք և մեծաւ յուսով ձեռնարկեացուք ի գործս.

Բայց սկսցուք ի սկզբն գրոցս զոր սկզբնաւորեալ է մեծին Խոսրովու, հաւաքելով յանձնիւր տեղիս ըստ պատշաճ պիտոյից, և զիւրաքանչիւր որոյն խօսեցեալ բանս. Նա թէ առցէ ոք ըստ հաճոյից իւրոց յարմարել [illegible]կութիւնս, ասասն շնորհ. և թէ ոչ՝ և այնպէս շնորհ, զի գիտէ ըստ արժանւոյն բաշխել: Նա մերում տառապանութեան ներեսցէ, զի ոչ գտաք ըստ արժանւոյն ոռոգել զբնական երկիր մտաց մերոց ամենայնի գրոց վարդապետութեամբ, ապա ի դէպ ժամու պտղաբերելոյ զարժանն.

Արդ ահա ձեռնարկեալ հրամանաց քոց բարեսէր և պատուելի եղբայր Գէորգէ, թէպէտ և յոյժ ըմբռնութիւն գոյ մեզ և առաւել դատապարտութիւն, սկզբն առնացուք աստուծով ի գործս: Նա դու աղօթեա՛ ի վերայ մեր, զի արժանի լիցուք առանց սայթաքելոյ յաւարտ հասանել. որով փառաւորի ամենակալն փառաց նմա. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Երանելւոյն Խոսրովու Անձեւացեաց Եպիսկոպոսի՝ սուրբ գրքոյս յօրինողի։

Ընդ Այ եւ վասն Այ խօսելով, ամ արժանութեամբ եւ զգուշութեամբ պարտիմք միտ դնել բանիցն ասացելոց. զի մի ընդունայն կամ թէ ՚ի դատապարտութիւն մեզ ասացեալքն լինիցին։ Ո՛ է. թէ ընդ մեր նման մարդոյ ոչ դանդաղաշեալ մտօք խօսիցիմք, այլ իմացուածովք զբանն բերիցեմք եւ յօդաւոր ասիւք պատշաճեմք. եւ մանաւանդ յորժամ ընդ աւագաց ումեքիմք խօսել, երկիւղալից մտօք հոգ տանիմք։

Արդ որչափ անզգօս խորհրդովք ընդ Այ եւ ընդ Այնմ պարտիմք խօսել, եւ ամ երկիւղիւ ընդ նմա եւ վասն նորա բնաւ իմացուածովք աւարտել զբանսն. զի յաղագս այսորիկ կանխաւորք եմք եւ ոչ յաղագս այլ իրիք. ապա թէ ոչ, մարթէաք զմարմնաւոր պէտսն անբանութեամբ հարկանել, որպէս անպատմելոցն ամենեցուն ջոկք։

Այլ եղաք բանաւորք եւ մտաւորք, եւ պատուաւորք յանբանիցն. զի զհոգւոյն եւ զմտերն բովանդակ՝ մեք ասացուք Այ բան՝ մտաց լուսաւորութեամբ. եւ զուգահրեշտակք յերկրի, նման երկնայնոցն լիցուք. եւ նոյնպիսի սիրով եւ ահիւ առ նորայն լիցուք պատիւ եւ երկրպագութիւն եւ փառաւորութիւն։ Եւ առաւել եւս՝ որքան զպատուականսն անարգն, եւ քան զհաճոյսն յանցաւորքն, եւ զչափաւոր խնամեալսն յոքնաբար նրբախօսութեամբն. զի ոչ ասէ զհրեշտակաց բանն հարկանէ՝ այլ զզաւակէն աբրահամու, որով եւ զամենայն մարդկանէ։

Իսկ զի պարզաբար եղիցին զենումն, եւ ամ խղախճանութիւնքն ոչ յաղագս հրեշտակաց անդրանկին եւ հաճոյ եւ պատուականն որդւոց. այլ վասն մեր փրկութեան եւ անհնազանդից եւ ամբարտաւանացելոցս եւ զամ հայրենիսն վատնողացս. Իսկ եթէ շատ օգտողն եւ շատ թողութիւն դաօղն, շատ խնդրի եւ շատ սէր պարտի որպէս ասաց Տէրն երբեմն առ աշակերտսն, երբեմն առ կինն պոռնիկ. ապա յայտ է թէ կարի առաւել պարտին աղերս մարդկան քան զհրեշտակս երախտահատոյց լինել Այ յոգն սիրոյն եւ յանձն ներողութեան եւ անպատում առատ պարգեւացն։

Այլ այս՝ այսպէս է, անշուշտ ջանասցուք ըստ կարի մերում զպաշտօնս մեր մատուցանել Աստուծոյ՝ 'ի սուրբ սրտէ և 'ի մտաց բարեաց և յանկեղծաւոր հաւատոց։ Քանզի և զայն 'ի Պօղոսէ աղաչիմք գթութեան Աստուծոյ պաղատել, զի պատարագ կենդանի սուրբ և հաճոյ Աստուծոյ զխօսուն պաշտօնս պատրաստեսցուք։ 'Ի սոյն և սաղմոսանուագն յորդորէ. երբեմն որպէս յինքենէ, և երբեմն որպէս 'ի դիմաց Աստուծոյ։ Յինքենէ՝ յասելն, մատո՛ Աստուծոյ պատարագ օրհնութեան, և կատարեա՛ բարձրելոյն զուխտս քո։ Այլ դարձեալ՝ հատե՛ր զկապանս իմ, քե՛զ մատուցից պատարագ օրհնութեան։ Այլ դարձեալ յերեսաց Աստուծոյ, յորժամ ասէ՝ պատարագ օրհնութեան փառաւոր արասցէ զիս։

Այլ զի մի՛ դարձեալ բանբասիցիմք յԱստուծոյ որպէս հրէայքն, ըստ այն թէ՝ ժողովուրդս այս շրթամբք պատուեն զիս. և սիրտք իւրեանց հեռացեալ 'ի բացեայ են յինէն, զուր պաշտեն զիս։ Այլ կամ անպտուղ միայն լինիցիմք՝ որպէս ասէ առաքեալ. և կամ ըստ աւետարանական բանին, շատախօսք լեալ առանց մտացն առ Աստուած ամբառնալոյ, և առանց զբանս աղօթից ստուգապէս և յստակութեամբ նմա մատուցանելոյ, համարիցիմք ըստ հեթանոսացն 'ի բազում խօսից լսելի լինել։ Այլ զի սաղմոս ասասցուք և 'ի միտ առցուք. և զսակաւ բանսն մեք կամեսցուք որպէս ասացն Պօղոս, քան զբանս բազումս լեզուաւ։ Այլ զի մի՛ լինիցիմք որպէս ընդ օդս խօսեցեալք. և կամ ոչ գիտելով զզօրութիւն ձայնին, լինիցիմք ասօղքս՝ խուժ, և լսօղքն՝ դուժ։

Յաղագս այսորիկ կամեցայ ես բացայայտել որ 'ի պաշտամանն եկեղեցւոյ քարոզութիւնք և աղօթք քահանայականք. Զոր դիտակքն՝ մի՛ արհամարհեսցեն. զի թէ և ինքեանք անկարօտ են մերոց իմաստիցս, այլ 'ի պարզամտացն հայեցեալ օգտաւս՝ ընկալցին զմեր ջանս վաստակոց, և զպակասութիւն՝ եղբայրաբար խնամով ուղղել խոկասցին։ Այլ հասարակաց հոգածօղն Քրիստոս մեզ և նոցա օգնական, և տացէ բան աւետարանել զօրութեամբ բազմաւ։ Այլ նմա փառք ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյն. այժմ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հոգևոր երգով 'ի փառաբանութի և 'ի պատիւ ամենասուրբ անուան տեառն մերոյ և փրկչին յի քի։ Հոգևոր երգով, ասելով երգք, յայտ առնէ թէ հոգին սուրբ 'ի թիկունս և 'ի գործակցութիւն և յօգնականութի տկարութեանս մերում գայ ըստ պօղոսի. և երգակից լինի ուղղեցելոցն մտօք սրբութեամբ, և յորդորելոցն 'ի փառաբանութիւն աստուծոյ։

Փառաբանութիւն կոչի, զի բանիւ փառաւորեմք զանկարօտ բնութիւնն նորա։ Եւ տէրն ասելով և փրկիչն. զտէրն, վասն ստեղծանելոյն. և զի տիրէ մեզ։ Իսկ փրկիչն, զի զանձն փրկանս տուեալ փրկեաց զմեզ արեամբն իւրով 'ի մեղաց և 'ի մահուանէ. և եբարձ զանէծսն որ 'ի վերայ մեր։ Սակս այսր զնա յանձախ անուանեմք յերկոցունց. զի յարարչութենէն և 'ի խնամակալութենէն, և որով ընտանութիւն ընդ մեզ եցոյց՝ գոհացուք զնմանէ։

Ահիւ և դողութ կացցուք յաղօթս առաջի նր։ Զի հրեշտակացն հրամայէ ունել զահ և զերկիւղ և զդողումն. վասն այնր յաւել թէ՝ առաջի նորա։ Զի որպէս հրեշտակք 'ի տեսլենէ փառաց նր միշտ յահեալք են. նոյնպէս և մեք միշտ յահ զմիտս ամբարձեալք և առաջի կացեալք ահագին փառացն՝ դողութ զնա պաշտեսցուք։

Եւ գոհացարուք զնմանէ 'ի գիշերային ժամուս յայսմիկ վասն խրատուց և արդարութե նորա։ Վասնզի ասէ դաւիթ, * 'Ի մէջ գիշերի յառնէի գոհանալ զքեն վասն խրատուց և արդարութե քոյ։ Զնոյն և մեզ հրամայէ առնել. և ցուցանէ զխրատուն և զարդարութիւն նորա զոր արար ընդ մեզ. և ոչ ըստ արժանեաց, այլ ողորմելով. վասն այնորիկ ասէ,

Որ ընտրեաց զմեզ ողորմութեամբն իւրով։ Զի ողորմեցաւ ասէ՝ յայն սակս ընտրեաց։ Իբր զի խոտանքեալք և ընկեցեալք յերեսաց նր, ողորմութե նր ընտրիս արար ըստ առաքելական բանին։ * Ընտրեաց զմեզ ասէ նովաւ, այսինքն քիւ, յառաջ քան զլինելն աշխարհի. լինել մեզ սուրբս և անարատս առաջի նր։

Եւ շնորհեաց մեզ բերել զնմանութի երկնային հրեշտակացն։ Զի նոքա յերկինս փառաբանիչք են, ոչ յաւել թէ՝ երկնային հրեշտակացն, եւ լինիլ մեզ յերկրի հրեշտակս փառաբանիչս նր. վասն այնր յարէ 'ի նոյն, փառաբանիչս ան նր ամենեցուն՝ և մեզ լինիլ։ Եւ ածծ և տր ամենեցուն ասելով, զարթուցանէ զմիտս մեր դիտել թէ զերկնից և զերկրի և զամ արարածոց ստեղծիչն կարդեալ եմք փառաւորել։ Եւ դնէ առ նմին,

Այլ մեք այսուհետեւ սրբելով զանձինս մեր։ Այսինքն՝ թէ որովհետեւ հրեշտակս արար զմեզ յերկրի, կացցուք յանձինս ըզ հրեշտակացն սրբութիւն։ Այլ զոր ինչ ըստ մարդկային բնութեան սխալեալ իցեմք, խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ սրբելով զայն, մաքուրք լիցուք. քանզի ասէ սրբել ՚ի խղճէ եւ ՚ի չար գործոց։ Այլ քանզի մարգարէն հրամայէ, *՚Ի գիշերի համբառնալ զձեռս մեր ՚ի սրբութի։ Ըստ այնմ հրամայէ եւ քարոզս, նախ սրբել զխիղճ եւ զչար գործս, եւ ապա համբառնալ զձեռս ՚ի սրբութի։

Համբարձցուք զձեռս մեր ՚ի սրբութի առանց բարկութե եւ երկմտութե։ Հայելով ՚ի մարգարէականն եւ յառաքելականն եւս խրատ, թէ առանց բարկութե եւ երկմտութե։ Զի պէտք են աղօթականին աներկմիտ հաւատով եւ անբարկանալի մտօք զաղօթսն՝ այ նուիրել։ Վասն որոյ եւ տէրն ասէ, *Թող զպատարագն քո՝ զաղօթսն, եւ երթ նախ հաշտ արա զեղբայրն քո, եւ ապա կես։ Նոյն ակս եւ քարոզս զբարկութիւն թողուլ տայ, եւ ապա զքաւութիւն հայցել. ասելով, խնդրեսցուք հաւատով զթողութիւն մեղաց։ Զի թողլովն եղբարց, խնդրեսցուք եւ մեզ թողութի յայ, եւ հաւատասցուք եթէ առնումք։

Խոստովանելով զգաղտնիս սրտից մերոց ծածկագիտին այ։ Զի ասաց յառաջ՝ սրբել ՚ի խղճէ զանձինս, ըստ զօրինակն ցուցանէ թէ խոստովան լինելով եւ քաւութիւն խնդրելով սրբիմք։ Զի թէ եւ չխոստովանիմք, ՚ի ծածկագիտէն չկարեմք թաքուցանել. այլ խոստովանիլն եւ մեղապարտն զանձն առնել, ՚ի խոնարհութի ածէ զմեզ եւ յամօթ եւ ՚ի զղջումն եւ ՚ի պաղատանս. որով եւ զողորմելն եւ զներելն յայ գտանեմք եւ զարդարանալն։ Քանզի ասէ իսկ մարգարէիւն. *Ասա դու նախ զանօրէնութիս քո՝ զի արդարասցիս յասելն։

Զի ընդունելով զպաղատանս մեր աղօթիւք եւ բարեխօսութբ ամ սրբց իւրոց։ Այսինքն է թէ՝ խոնարհելն խոստովանութբ եւ անարժան համարել զանձինս՝ առ ՚ի սրբցն ապաւինել բարեխօսութիս, ընդունելի առնէ այ զպաղատանսն։ Մանաւանդ թէ զարթնուցումք ոչ ՚ի քնոյ միայն, այլ եւ յամ զբաղանաց աշխարհիս, եւ յազգի ազգի ցնորից, եւ արթուն զոգիսն ունիցիմք։ Այլ նախ զոր ասիցեմքն մեզէն, եւ ապա յամենալուր ականջսն այ արկանել։ Որոյ փոխարէն,

Շնորհեսցէ մեզ մարդասէրն ած կալ առաքինութբ եւ անարատ վարուք ըստ կամաց նր յայսմ աշխարհիս. եւ արժանաւոր լինելով յաւիտենական ուրախութեանցն զոր խոստացաւ տալ սիրելեաց

խուրոց։ Շնորհելն՝ յայս առնէ թէ ձրի են պարգեւք նորա. թէ և մեք բազում առաքինանամք։ Ոչ ի սիրէ զմարդիկ, և շնորհ է զոր շնորհէ մարդասէրն ած, և կալն առաքինութք և ոչ մի ինչ բեծունելով, այլ անարատ վարուք կալ։ Իսկ առաւել քան զարքայութեանն պատիւ է. որում ընտիրքն բաղձային յոյժ ցանկութք քան երկնից բարեացն։ Ոչ ի ոչ վարձս առնուլ 'ի քրիստոսէ, այլ ձգնել յաղագս քո ցանկային։

Որ յաղագս սաստիկ սիրոյն որ առ քս, բազմապատիկ տխորժական էր նոցա քան ընդ քո 'ի փառս լինիլ՝ չարչարիլ վասն քո։ Որպէս և երանելին յովհան ասէ թէ, * Քան ընդ քերովբէսն մերձ կալ քո, 'ի կապանս կալ վասն քո ընտրեմ։ Իսկ երանելի ածաբանն գրէ, * Ջի մի տացից թէ նոյն ինքն աշխատելն է վարձ որ ոչ է ամենեին մոօք։ Իսկ նիւսացի ընտրեալն գրիգոր՝ վս այնր ասէ, * Երգերգոց լինել օրհնութեանցն սողոմոնի, զի վասն սիրելոյ զառաքինիլն և ոչ վասն վարձու, ունի զհարսն։

Իսկ յերիս որոշմունս ածաբանի և սուրբ եղեալ է զարդարուն։ Վս վարձու. վս երկիւղի. վս սիրոյ։ Սա զսիրոյ վասն զգերակայութիւնն յամուսնական մերձաւորութենէն օրինակէ սողոմոնականաւն, և նա յորդիութենէ. երիս կարգս ապրեցելոցն ասելով։ Ծառայ կոչէ զերկիւղիւ ուղղեալսն, և վարձկան՝ զյօժարեալսն յառնուլն. ապա թէ առաւել է քան զայսոսիկ՝ ասէ որդի՝ է հօրն հաւանել և ոչ վարձուն։

Արդ՝ է առաջին և մեծ պարգեւ այս՝ զառաքինութի ստանալ. և երկրորդն՝ յաւիտենական ուրախութեանցն արժանաւորիլ. զոր սիրողքն քրիստոսի ըստ անսուտ խոստման նորա առնուն 'ի նմանէ։ Վասն այնորիկ 'ի ճշմարտութենէն կոչէ զայն որ խոստացաւն. զի մի երկբայեսցուք խոստմանցն։ Այսպէս ասելով,

Ճշմարիտն ած յիսուս քրիստոս տր մեր կեցո և ողորմեա մեզ։ Դու խնդրուածս փակէ զբանն, և զանօրինական անուանսն յիշէ. որ վս մեր եղև և կոչեցաւ յս որ է փրկիչ. վասն զի փրկեաց զմեզ 'ի մոլորութենէ, և'ի սատանայական գործոց, և'ի մեղաց, և յանիծից, և'ի մահուանէ, և յապականութէ, և'ի դժոխոց։ Իսկ քս անուանեցաւ, վս զի օծաւ հոգւովն կոչի քս. այսինքն օծեալ։ Իսկ նովին հոգւովն էօծ և զմեզ, և օծեալս արար և քրիստոնեայս արար և անուանեաց։

Տէր մեր։ Իսկ ածապարգեւ է հասարակաց տն մեր սեպհական լինիլ. վասն այնորիկ յաւել անդ զմերն. զի այնու առաւել զնա 'ի գութ ածիցեմք կեցուցանել և ողորմել։ Ասելով,

Յ՜ Ք՜ս Տէր մեր կեցո՛ եւ ողորմեա՛ : Զնոյն եւ ժողովուրդքն ամեն, կեցո՛ Տ՜ր : Վասնզի մեռեալ էաք ՚ի մեղս մեր. եւ կեցուցանել Ք՜ս կամելով եկն յերկիր եւ ասաց, Ի կեցուցանել եկի եւ ոչ ՚ի կորուսանել : Իսկ զի կորստեան եւ ոչ կենաց արժանի էաք. այլ նա կեցոյց ողորմելովն : Ա՜յնորիկ քարոզն ասէ՝ կեցո՛ եւ ողորմեա՛ . այսինքն՝ թէ եւ անարժա՛ն եմք կենաց, կեցո՛ ողորմութե՜ : Զի ողորմին չթողու զարժանին խնդրել. այլ հարկ առնէ եւ զանարժանն կեցուցանել :

Զմնացուած գիշերիս խաղաղութե՜ անցուցանել հաւատով ՚ի տեառնէ խնդրեսցուք : Զանապազ վասն խաղաղութե՜ հրամայեմք աղօթել. ոչ միայն մարմնոյ, այլ եւ հոգւոյ եւ մտաց խաղաղութիւն հայցել. ուստի բազում օգտութի՜ լինի եւ լուսաւորութի՜ եւ յըստակութիւն յաղօթանոյ : Իսկ ամեն ժողովուրդքն միաբան՝ ոչ թէ տուր, այլ եթէ՝ շնորհեա՛ Տ՜ր : Ամենայն ուրեք զշնորհելն խնդրելով եւ զողորմելն, եւ յոչ արժանեաց զգթով տալն մաղթէ :

Զհրեշտակ խաղաղութե՜ պահապան անձանց մերոց ՚ի Տ՜նէ խնդրեսցուք : Վասն զի են հրեշտակք որ ՚ի պատժել առաքին ասէ երանելին յովհան. եւ են որ պարգեւաց եւ խաղաղութե՜ արբանեակք են, ՚ի պահպանութի՜ եւ ՚ի փրկութիւն առաքեալ մեզ՝ զոր հանապազ ընդ մեզ լինել հայցեմք :

Զքաւութի՜ եւ զթողութի՜ մեղաց մերոց ՚ի Տ՜նէ խնդրեսցուք : Զի կարի պիտանացու է յա՜մ ժա՜մ զմտաւ ածել զոր յանցեաք առ արարիչն, եւ ապերախտք առ նորա երախտիսն եղաք : Այլ առաւել կարեւոր է ՚ի միաբանութե՜ զայս առնել, եւ միմեամբք վասն միմեանց աղաչել, եւ զիրերաց թեթեւացուցանել զբեռն մեղացն : Զի ՚ի միաբանութե՜ մերում եւ հրեշտակք եւ սուրբք կցորդակից լինին մերոց պաշտամանցն եւ աղօթանաց : Իսկ Ա՜ծ առաւել խոնարհի ՚ի միաբանութեան խնդիրն եւ զհաշտութիւն առնէ. որպէս եւ նինուէացւոցն միաբանելոց՝ արար քաւութի՜ եւ անցոյց զապառնալեացն պատուհաս :

Զսրբոյ խաչին զօրութի՜ն ՚ի պահպանութի՜ անձանց մերոց ՚ի տեառնէ խնդրեսցուք : Զոր գթութի՜ն ա՜յ մեծ պահապան մեզ պարգեւեաց. սուր սրեալ իւրով ահագին արեամբն եւ առ ձեռն պատրաստ զէն մեզ, հակառակ անմարմին թշնամեացն : Այլ եւ ՚ի մարմնականաց ընդդիմամարտաց պարիսպ եւ փրկան անմատչելի : Միայն թէ աներկբայ եւ անպղտոր ոգւով դրոշմեսցուք զմեզ, խա-

փառին տէր երևելի և աներևոյթ մարմնաւ 'ի մէնջ։ Միայն թէ․ և 'ի կնքելն մերում յիշեսցուք զանուան մերոյ զմարդասիրութիւն․ որ ոչ գոլով ուղղի, սուրբ անմեղ անարատ զատեալ 'ի մեղաց, և վասն մեր մեղաւորացս իւրով մարմնովն կրեաց զչարչարանս խաչին։

Վնասեալ զնա բևեռօք և սաստիկ մարմնաշնչմամբ ցաւոց՝ զմեր յանցանաց 'ի նմա պահանջեցաւ զպարտս։ Եւ եդաւ 'ի նմա զանի-ծիցն և զմեղացն դատակնիք, ազատ և անաղխ և անմահ և անա-պականս զմեզ արար։ Ինքն քահանայապետ և ինքն պատարագ 'ի նմա գոլով․ և իւրով արեամբն յերկինս երկնից յանմատոյցն մըտ-եալ սրբութիւնս։ Հաշտ առնելով զՀայր ընդ մեզ, յանդիման առ-նելով երեսաց նր զմեզ՝ իւրն կացոյց մարմնովն, յորդիս ոչ կար-գեալ զդատապարտութիւն անկեալքս յերեսացն ոչ․ և ինքն բարձ-րացեալ 'ի խաչին ամբառնալով 'ի նմա, և 'ի նմա է մեծութեամբն։

Սմա այնուհետև և մեք դնելով զնշան խաչին 'ի մեզ՝ հաւատա-ցուք զնոյն ինքն զՏէր որդին ծածկեալ արեամբն 'ի մեզ կրել․ և զե-րեսս դրոշմեալ, և զգլուխս պսակեալ, և զանձինս պարապեալ, և ընդ գիրկս ոգւոց մերոց խառնեալ զփրկութիւն ոգւոց մերոց։ Եւ ապաւինելով 'ի սուրբ նշանն, աներկիւղ լինիլ 'ի չարեն․ ըստ մարգարէին, * Ո՛չ երկեայց ես 'ի չարէն, զի դու տէր ընդ իս ես։ և * Ցուպ քո և գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս։

Արդ զնա խնդրեսցուք մեզ 'ի պահպանութիւն, և 'ի նոյն պար-ծեսցուք միշտ։ Եւ 'ի քարոզէն լուեալ զայս՝ հաւատով նկարեսցուք և 'ի սիրտս և 'ի հոգիս մեր և 'ի դէմս․ և ասասցուք սրտի մտօք, Շնորհեա տէր։ Զոր և ըստ իւրաքանչիւր ասանց քարոզին սովոր եմք ասել և յայժմ աւարտել։ Ապա քարոզէ,

Եւ ես՝ վասն միաբանութեան ճշմարիտ և ոչ հաւատոյս զանէր աղաչեսցուք։ Որ է խնդիր մեծ և կարևոր ամենեցուն, քակելոց յուղիղ հաւատոց և մոլորելոց 'ի հերձուածս՝ դարձ խնդրել և միաբանութիւն յուղիղ հաւատս, և 'ի ճշմարտութիւն հաստատիլ միա-բանութեամբ։ Յաղագս որոյ և զանէր ողորմեսցին առ հասարակ վերա-ձայնեն․ զի ողորմեսցի և 'ի գութ դարձեալ խնամարկեսցէ յիւր արարածս․ և գթալով յիւր արարածս և 'ի գինս արեան իւրոյ, ոչ թողուցու խպառ կորնչիլ։

Զանձինս մեր և զմիմեանս տն ոչ ամենակալին յանձն արասցուք։ Զմեր ոգիս և զՏէր հաւատացելոց, մանաւանդ զայնոցիկ որք աղօթս 'ի մէնջ հայցեցին՝ պարտիմք յանձնել ոչ։ Բանզի և զայս իսկ սովոր եմք պատասխանի առնել նմ թէ՝ ոչ յանձն․ յայն սակս և առաջինքն այլ քարոզ չառնէին վա նց զի. այսու շատէին։

Ո՛չ վայրապար և զամենակալին յուսելու. այլ զի զմտաւ ածցուք թէ նոյն տէր է ամենեցունց, և բաւական առ ամենեսին. և զամենայն ունի ընդ իւրով իշխանութեամբ. զի այս է ամենակալն: Այս 'ի նոյն ինքն յամ՝ ժողովուրդք զբանն դարձուցեալ ասեն միաբան, Քեզ Տէր յանձն եղիցուք: 'Ի նոյն բերէ և քարոզն զաւարտն,

Ողորմեա մեզ տէր ած մեր ըստ մեծի ողորմութեան քում: Ոչ ըստ որչափ մեք խնդրեմք և իմանամք, այլ որչափ մեծ է ողորմութիւնդ 'ի քում բնութեան: Զի որպէս ինքն ած անսահման է, նոյնպէս և ողորմութիւնն: Ողորմութիւն ասի ըստ մեզ 'ի սրտի, 'ի նեղութիւնս 'ի վիշտս և 'ի վարանս ուրուք ախտանալ, և ըստ կարողութեան դիւրել վտանգելոյն: Ած և պարտապան ինչ չէցէ, սակայն գթութեամբ սրտին՝ խոնարհեցուցանէ որպէս պարտապան 'ի կարեկցութիւն:

Զայս և մեք յոյժ աղօթիւք մաղթեմք. թէ և այլովք գինօք չեմք ասեմք արժանի քոց պարգևացդ, այլ զի անկաք 'ի փառացն որ տուան 'ի քէն և եղաք 'ի դրախտէն. և ընդ մահուամբ և ընդ ապականութեամբ դատապարտեցաք, 'ի հողս և 'ի տրտմութիւնս և յաշխատութիւնս և յազգի ազգի ցաւս և 'ի տառապանս և 'ի տարակուսանս խարշիմք, զրկեալք 'ի տեսութէ տր̃ երեսացդ քոց. և զբանսարկուն անհաշտ պատերազմօղ ունիմք մեզ և որոգայթադիր և մեղսածու զանազան ախտիւք. և եղկելիք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ և ըստ մտաց եմք. բանզի և նոյն իսկ բնութիւս հակառակ մեզ կարգեցաւ:

Յայսպիսի աղէտս հայեցեալ ամենողորմն տէր, և քով մեծաողորմութեամբդ՝ զմեզ յամի ողորմելիս իմացեալ, ողորմեսցիս մեզ անչափ ողորմութեամբդ քով: Յայս ձայն ողորմագին պաղատանաց և ժողովուրդն զհայցուածն միաբանեն ասելով առ հասարակ, Տէր ողորմեա:

Իսկ թէ քանի՞ կարևոր է այս եօթն տուն քարոզիս ուսցիս. զի ըստ ամ ժամուց և ըստ իւրաքանչիւր կարգաց այլ և այլ քարոզք են. իսկ սոքա յամ ժամու պաշտին. և 'ի գիշերին երկիցս, մի յիւկրղբանն և մի 'ի կատարմանն: Իսկ և զերիս տունսն՝ յամ ձայնիւ քարոզն դնեմք, զառաւել պիտանութի սոցա յայտնելով:

Աղօթք գիշերապաշտման:

Զքէն գոհանամք տէր ած մեր. որ շնորհեցեր մեզ հանգիստ քնոյ խաղաղութեամբ: Վասն զի հրամայեաց քարոզն գոհանալ զքէն, յառաջ կալով առաջնորդին՝ բերան ամ ժողովր-

դեանն լեալ, և զսիրտս ամցուն յինքն միացուցեալ, որպէս մի ոգի զամենեան ժողովեալ, զհասարակաց գոհութիւն և զաղօթս մի լեզուովն ոյ մատուցանէ. նախ զգոհութիւն՝ և ապա զաղօթսն։ Վասնզի այսպէս ուսուցանէ առաքեալն. *Գոհութեամբ ասէ խնդրուածք ձեր յայտնի լիցին առ ած։ Զոր և երանելի վարդապետն յոհան ասելով զբանն ասէ, թէ *Ըստ առաքելական խրատուն յորժամ կամիցիս խնդրել ինչ յայ, նախ գոհացիր զորոց առեր, և ապա խնդրեսցես. զի այնպէս լսելի լինիցին։ Իսկ այնմիկ և սկիզբն աղօթիցս գոհութիւն է։ Զքեն գոհանամք տէր ած մեր։

Դարձեալ զառաւել ընտանութիւն ընդ մեզ հաւատացելոյ յուշ առնէ, տէր ած մեր ասելով։ Որպէս աբրահամու և իւրոցն ասէ՝ վասն մեծերիմ նոցա ծառայութեն. թէ և ամենեցուն ած է, սակայն հաւատացելոց առաւել կոչի ած։

Որպէս և տր լուսաւորիչն ասէ. *Որ ասէքդ թէ ած քո՝ բարուք առնէք. զի և որք ճանաչենն զնա, նաև նոցա է ած. իսկ որք ոչն ճանաչեն զնա, թէպէտ և են նորա արարածք, հեռի են 'ի խնամոց և 'ի բարերարութենէ նորա։

Զայս և մարգարէքն յաճախ առնեն. զի ամ ժողովրդեանն կոչեն զնա տր, է՛ երբեմն զի և իւրեանց իսկ առանձին։ Ժողովրդեանն, յորժամ ասեն *Տէր ած իսրայելի. կամ *Տէր ած մեր։ Իսկ իւրեանց առանձինն՝ *Ած ած իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ։ և թէ՝ *Դու ած իմ մի՛ յամենար։ և թէ՝ *Ած իմ ես դու՝ խոստովան եղէց քեզ։ Զայն և 'ի պօղոսէ գտանեմք ասացեալ։ *Գոհանամ զայ իմոյ. և գուցէ նկուն ինչ առնիցէ զիս ած իմ առ ձեզ. և ած իմ լի՛ արասցէ զամ պէտս ձեր։ Նա այլ ևս բազումս գտանեմք յառաքելոց և յայլոց որց ասացեալ։ Որք առ ջերմեռանդն սրտին սիրոյ խանդաղատէին՝ և զհասարակաց տէրն կոչել որպ առանձնակ։ Որպէս և աղօթքն՝ տէր ած մեր ասելով, բոլորոքէ զմեզ 'ի սէր նորա, և զգութ նորա 'ի մեզ յանգուցանէ։

Գոհանալն շնորհակալութիւն է։ Նա զորմէ՞ գոհութիւն. զի հանգոյց քնով զաշխատութիւն մեր. և զի խաղաղութեամբ պահեաց։ Վասնզի բազում և ազգի ազգի փորձութիւնք յերևելիս և յաներևոյթս կան մարդկային կենացս. մանաւանդ 'ի քնոյ ժամանակ։

Զի բազում անգամ յարձակին դևք հեղձուցանել և տանջել և զարհուրեցուցանել, և խափանեալ լինին 'ի հրեշտակաց. ջանան և որոգայթս պատրաստել. և ած զանցուցանէ զմեզ։ Այլև 'ի գազանաց և 'ի զեռնոց և 'ի սողնոց ևս՝ և 'ի փոքր ճճեաց և դաւք և վտանգք մերձին և մահք, և փրկութիւն գտանեմք յայ։ Յաղագս որոյ և երանելին յոհան, *Առաւելքան զոր երևիս մեզ և գիտես, զան-

գիտելեացն՝ ասէ մեզ խնամք՝ և պաշտպանութիւն լինել յաստուածոյ։
Եւ մեք զայս ոչ զմտաւ ածելով պարտիմք գոհանալ յամ̃ն. որպէս ասէ առաքեալ, * Գոհացարուք յամ̃ն ժամ ՚ի վերայ ամենայնի։ Արդ և մեք աղօթիւքն գոհութեան վ̃ն զի զհանգիստ քնոյ շնորհելով. և զի խաղաղութիւն շնորհեաց. և զի զարթնուլ ետ և կանխել ՚ի փառաբանութիւն անուան իւրոյ։ Քանզի ասէ,

Եւ ժամանեցուցէր զմեզ կանխել ՚ի փառաբանութիւն և ՚ի պատիւ ամենասուրբ անուանդ քո։ Զայս մեծ երանութի մարգարէն համարի. * Երանելիք են ասէ որ բնակեալ են ՚ի տան տեառն. յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ տ̃ր։ Նոյն երանութե հասեալ կանխեցաքն ՚ի տուն ա̃յ և ՚ի պաշտօն ն̃ր և ՚ի փառաբանութի ն̃ր անուան ն̃ր, ՚ի պատուել զմեծութի ն̃ր, գոհանալ զշնորհացն ն̃ր՝ բերանով առաջնորդին և ոգւոցն միաբանութե։ Նոյն ասէ,

Տուր մեզ տ̃ր աղաչեմք զքեզ։ Զի ես աղաչանաց սովոր ես ողորմել, վ̃ն այնր տուր, և ոչ զի արժանի եմք։ Եւ զինչ է խնդիրն։

Զառաջակայ ժամ գիշերիս առանց մեղաց և առանց գայթակղութե անցուցանել։ Քանզի հանապազ իսկ՝ բայց առաւել ՚ի ժամ աղօթիցն նետաձիգ լինել սովոր է բանսարկուն, աղաչէ ապրել ՚ի պատրանաց ն̃ր, և ազատ մնալ յամ̃ն մեղաց ծառայութենէ, և ոչ զօրել մեզ գայթակղութեց նորա. այլ երկիւղիւն ա̃յ պարսպիլ։ Ոչ միայն ՚ի մնացուած գիշերին, այլ և յամ̃ն ժամանակի կենաց. այսպէս ասելով,

Եւ զամ̃ն ժամանակ պանդխտութե մերոյ՝ երկիւղիւդ քո ամրացո։ Պանդխտութի կոչէ զառօրի կեանս ըստ մարգարէին, որ զինքն և զամ̃ն հարսն պանդուխտ կոչեաց որ ս̃բքն էին։ Եւ ըստ տ̃ն որ ասաց թէ՝ * Դուք չէք յաշխարհէ. այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ։ Յաղագս որոյ և առաքեալն յոհաննէս յաղագս այլոցն ասէ, * Յաշխարհէ՛ են, և աշխարհ լսէ նց. մեք յա̃յ եմք. որ զա̃ծ ճանաչէ, լսէ մեզ։ Եւ զի՝ որ յա̃յ է, պանդուխտ է յաշխարհի. յայն սակս և առաքեալն պետրոս պատուիրէ յասելն, * Եւ եթէ հայր կոչիցէք զառանց ակնառութե դատօղն, ապա երկիւղիւ զձերոյ պանդխտութե ժամանակն գնասջիք։ Եւ ըստ առաքելականիս խրատու՝ մաղթէ բան աղօթիցն եթէ, Զամ̃ն ժամանակս պանդխտութեանս մերոյ՝ երկիւղիւդ քով ամրացո։

Քանզի չիք ինչ զգուշաւոր ամրութի քան զերկիւղն ա̃յ. և ոչ դիւրըմբռնելի սատանայի քան զաներկիւղսն յա̃յ. զի հեռի են յա̃յ՝ հեռացեալքն յերկիւղէ ն̃ր։ Իսկ երկիւղածք նորա մերձենան առ

նա. և այցելութիւն նր՞ շուրջ է զնովաւ և պահէ զնա. քանզի և բանակօք հրեշտակաց պարփակէ զնա։ Այս ըստ ասացելոյն սաղմոսի, * Երկիւղ տն ատէ զանիրաւութիւն և զթշնամանս և զամբարտաւանութիւնս։ Այս ամե յերանելի վարդապետացն ասաց, * Ուրանօր երկիւղ է, պատուիրանաց պահպանութիւն և մարմնոյ մաքրութիւն և որ 'ի կարգին։ Զոր և աղօթիւքն բան՝ յետ զերկիւղն տն հայցել՝ անարատ մնալ և զգուշաւոր ասէ զկեանն յաշխարհի. այսպէս ասելով,

Զի զգուշութ̃բ և անարատ վարուք կրօնաւորեալք յայսմ աշխարհի։ Զի որ երկնչին, զգոյշ և պատրաստ հանապազ կան. և զգուշանալովն ոչ ըմբռնին յորսոյ մեղաց. այլ ըստ տն կրօնաւորի յայսմ աշխարհի, և հասանին յապահով և 'ի խաղաղ նաւահանգիստն. զոր անքոյթ բանն կոչէ ասելով,

Ժամանեսցուք յանքոյթ և 'ի խաղաղ նաւահանգիստ յաւիտենական կենացն։ Ուր հողմք և ալիք մեղացն ոչ բերին. այլ աներկիւղ յամ խռովութեց կեանս յաւիտենականս ստանան, որ է անհաս և անպատմ՝ լի ամ բարութ̃բ. Այս լինի այս,

Շնորհօք և մարդասիրութ̃բ տեառն մերոյ և փրկչին յի քի։ Քանզի քո ասէ սիրելովն զմարդիկ և գալովն առ մեզ և 'ի վր մեր մեռանելովն, հանդերձեալք այսմ ամենայնի. զոր և շնորհք քի սովոր են գիրք կոչել։ Այս տէր և փրկիչ մեր 'ի խոստովանելն զնա, 'ի փառաբանութիւն փակէ զբանն յասելն,

Որում վայելէ փառք իշխանութի և պատիւ։ Մ՛ այելէլ նմա՝ ցուցանէ թէ նմա միայն անգաւորէ փառաւոր լինել և իշխել 'ի վր ամի, և պատուիլ յամենեցունց։

Այժմ, զառ ձեռն ժամանակն ասէ. և Միշտ, զհանապազորդեանն։ և Յաւիտեանս յաւիտենից, որ 'ի հանդերձեալն է անըսպառութեամբ. Այս ժողովուրդն միաբան ասեն զամէնն. և սակաւ բանիւս հաւատարին՝ բովանդակ ասացելոցս, գոհութ̃բ և մաղթանաց։ Այս է ամէնն՝ եբրայեցի բարբառով՝ այո, և արդարև։

Խաղաղութիւն ամենեցուն. Մ̃տ այսր խաղաղութ̃բ երկայն բանիւք բազում գիրս խօսելով երանելի վարդապետն յովհան և այլք 'ի վարդապետաց մրց, ասեն զառ զողջոյն զոր հրամայեաց քս առաքելոցն՝ տալ տանցն յորս մտանիցեն։ Այս զի հասարակաց տուն է եկեղեցին, և 'ի նմա հանապազ տայ գլխաւոր եկեղեցւոյն զողջոյնս զայս։ Այս ստ է խաղաղութ̃ի զոր տէրն հաստատեաց առաքելոցն.

որ լի է ամ՟ բարեաց պարգևօք։ Եւ զի միջնորդ կայ առաջնորդն՝ ա՟յ և մարդկան, հանէ զաղօթս ժողովրդեանն առ ա՟ծ՝ և իջուցանէ զնորա խաղաղութիւնն յերկնից առ մարդիկ։

Վասն այնորիկ յետ օրհնութեանցն, և յետ աղօթիցն, կամ ՚ի կամիլն կարդալ աւետարան, տայ զխաղաղութիւն. զի յաւետարանելն՝ առաքելաբար տայ զողջոյնն, և ապա աւետարանէ։ Իսկ յօրհնելն կամ յաղօթելն՝ յերկինս զձեռն տանելով զօրհնութիւն և զաղօթս, առ մեզ զամենապարգև խաղաղութիւն նորա բերէ։

Զի ոչ հասարակաց ժողովրդեանն բերան է, նոյնպէս և ա՟յ. որպէս ասաց մարգարէն, * Թէ հանցես զպատուականն յանարգէն, բերան իմ եղիցիս։ Եւ զի առաջնորդաց գործ է զպատուական մարդն որ է պատկեր ա՟յ՝ յանարգութենէ մեղաց հանել մկրտութ՟բ և ապաշխարութ՟բ, վարդապետելով ՚ի հաճոյսն ա՟յ. վասն այնորիկ բերան է ա՟յ։ Եւ զօր օրինակ որք հրեշտակեն զպատգամաւորութի երկոցունց կողմանցն, տանին և բերեն զերկոցունց բանսն։

Այսպէս առնեն և առաջնորդք եկեղեցւոյ, ՚ի մէջ կալով ա՟յ և ժողովրդեանն, բանս տանին և բերեն. և կոչին հրեշտակք ա՟ն ամենակալի ՚ի մարգարէէն։ Արդ մատուցեալ ա՟յ զաղօթիցն հայցուածս, փոխադարձէ ժողովրդեանն՝ զխաղաղութ՟ն ընդունելութ՟ի աւետարանելով. որպէս թէ ասիցէ, * Վ՟ն որոց առաքեցիքն՝ լուաւ, և զխաղաղութի իւր առաքեաց բերել ձեզ զա՟մ պարգևս. ոչ միում ումեք կամ երկուց, այլ բովանդակ ա՟մ ժողովրդեանդ։ Ս՟ն այնր ՚ի խաղաղութ՟ն յաւելու՝ զա՟մ՟ցունն՝ ասելով, Խաղաղութի ա՟մ՟ցուն։

Եւ զի աւետեաց է բանս, ըստ աւետեաց բանի առնեմք ըղ դարձուած բանին։ Զի երբ տայ աւետաւորն թէ աւետիս ձեզ. ասեն նմա, և քեզ բարեացն աւետիս. այսինքն թէ՝ բարեացն աւետիք և քեզ պարգևեսցին։ Այսպէս առնեն և ժողովուրդն. լսելով զխաղաղութե՟ բան, ձայնեն ասելով, Եւ ընդ հոգւոյդ քում։ Այսպիսի ինչ թէ, և հոգւոյդ քում եղիցի զոր և մեզ աւետարանեցեր։

Եւ առ այս որ ոչ սրտի մտօք ածնուցուն և տայցեն զխաղաղութիւն, գրեթէ թափուր միայն յա՟մ պարգևաց խաղաղութեանն մնասցեն։ Այլ որպէս ասացի՝ յորով են առ այսոսիկ ա՟րցն բանք, և մանաւանդ երանելոյն յոհաննու. ընդ զուսումնասէրսն առաքեսցուք, և մեք յառաջ ըստ կարգին զբանն վարեսցուք։

Հրամայէ ապա սարկաւագն, Աստուծոյ երկիր պագեսցուք։ Քանզի և այսպէս է օրէն. պարգևաւէն ՚ի թագաւորաց՝ ուսուցանեն հրահանգօղքն երկրպագութ՟բ շնորհ ունել։ Զայն և սարկաւագն առնէ. ա՟յ ասէ՝ որ լուաւ զպատգամաւորին աղօթից

զբան · և ետ ձեզ զխաղաղութիւն իւր · որ ունի զամ̃ ձեր զհայցուածոց լրումն · երկիր նմա պագէք ։ Եւ երկիրպագելով ամ̃ցուն,

անդէն առ պարգեւատուն ասեն միաբան, Առաջի քո տր̃ ։

Որպ̃ ինձ թուի՝ ասեն եթէ՝ դու տէր մեր առ ամենեսեան մերձենաս որ կարդան առ քեզ · և ուր երկրպագեն քեզ՝ առաջի քո է · և մեք այժմ զոր երկրպագեցաք առաջի քո է և տեսանի 'ի քէն ։ Եւ քանզի առ մարդիկ յոլով անգամ զայս առնեմք · և թէ տեսանի 'ի նմանէ երկրպագելն , սակայն մեք յաւելումք յասելն , երկրպագի տեսանող խմում ։

Ապա անդրէն դառնայ առաջնորդն առ ած̃ , կրկին տանել զժողովրդեանն զպաղատանս ։ Եւ զորօրինակ՝ պարգեւաբերքն դառնալով 'ի պարգեւատուէն , ասեն նախ եթէ՝ երկիրպագին և գոհացան · և ապա զայլ ևս խնդիրսն ասեն ։ Սոյնպէս և առաջնորդն՝

նոյնպիսի օրինակաւ առնէ սկիզբն բանիցս ասելով,

Նայեա տէր բարերար ողորմութբդ քո յերկրպագուս և 'ի փառաբանիչս անուանդ քում սրբոյ ։ Եւ վա̃ զի ողորմութեամբ սովոր ես խոնարհել առ մարդիկ , և 'ի գորովոյ և 'ի գթոյ հարկիս նայել յամենեսեան թէ և ոչ ունիցին արժանիս ։ Նոյնպէս և 'ի քո ժողովուրդս նայեա ողորմելով , տեսանել զսոցա զերկրպագութիւնս , և ունկն դնել սոցա փառաբանութեանս ։ Եւ ապա առացեալ վա̃ երկրպագելոյ ժողովրդեանն , եթէ միշտ երկրպագուք և փառաբանիչք սբ̃ անուանդ քո են , յարէ 'ի նոյն և զպաղատանսն ։

Խաղաղացո զանձինս մեր յամ̃ սատանայական խռովութեանց և յաշխարհական զբօսանաց ։ Զհրեշտակ խաղաղութեան քո տէր առաքեա առ մեզ որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով 'ի տուէ և 'ի գիշերի , յարթնութե̃ և 'ի հանգստեան մերում ։

Զանազան խորհուրդք աչագին և խռովարարք զօդիս մեր վտանգեն · և աշխարհիս հոգք և զբաղմունք զմիտս մեր խաւարեցուցանեն · աղաչեմ զի խաղաղասցին ոգիք մեր յայնպիսեաց դառն վտանգից ։ Եւ այս լինի թէ հրեշտակք սբ̃ 'ի բաց հալածեն զդիւաց մարտս · և դիւրութի̃ արասցեն մեզ 'ի զարհուրականաց դիւականաց և 'ի ցնորից աշխարհականաց ։ Որ 'ի քուն և 'ի յարթնութեան պղտորումն և երկիւղս զարհուրեցուցանօղս անձանց մերոց առնեն , անձառելի ցնորիւք 'ի տուէ և 'ի գիշերի ։

Վ̃ որոյ արտասուելի պաղատանօք հայցելի է մեզ զհրեշտակացն պահպանութիւն ։ Զի որպ̃ որոց 'ի թագաւորաց պահապանս տացին՝ աներկիւղս պահին 'ի հակառակամարտից · նոյնպէս և վասն

որոց մեզ պատուիրեալ է հրեշտակաց խուռն պահել զնոսա, անհոգս մնան յամ չարին արկածից. և զերծեալք 'ի բռնահարութէ որոտ-գին, անխափան և զօրաւոր գնան զառաքինութեան ճանապարհ։

Սղան որոյ և յարէ 'ի նոյն։

Որպէս զի՝ պարկեշտութք և արժանաւորապէս քեզ տեառն ծառայելով 'ի կեանս յայսմիկ։ Քանզի արգելեն վատթար խորհուրդք զպարկեշտ վարս այսպիսի օրինակաւ։ Կամիմք 'ի կերակրոց և յըմպելեաց պարկեշտանալ, և խորհուրդք զորկրամոլութի 'ի վերայ յարուցանեն։ Կամիմք 'ի քնոյ զգաստանալ, և խորհուրդքն՝ քնոյ զմեզ տաղտկեն։ Կամիմք և ազատանալ յընչից ծառայութենէ, և խորհուրդք զագահութիւն մեզ օրինադրեն։ Կամիմք համբերել անարգանաց և թշնամանաց և զրկութեց և ցաւոց և աղքատութեց 'ի վերայ հասելոց, և խորհուրդքն զամբարտաւանութի և զանհնազանդութի և զանհամբեր բարս մեզ ուսուցանեն։ Նոյնպէս և այլովք առաքինութք կամիմք զգաստանալ, և խորհուրդքն զմեզ մեղկեն և լքուցանեն և անկարելիս մեզ զայսոսիկ առնեն։

Յաղագս այսորիկ հոգւոյն աղաչէ խաղաղանալ, և'ի հրեշտակէ մեզ ընկրկել խորհրդոցն ընդդիմակաց. որպ զի նզ խափանեալ՝ զօրասցուք ամի պարկեշտանալ, և արժանաւորապէս ծառայել մեզ։ Այս է արժանաւորապէս ծառայելն մեզ, որչափ կարն մեր զօրէ, ըստ նր մեծութեն զծառայութի մեր բաղում երկիւղիւ հատուցանել. որպէս մեզ պարտ է ծառայել մարդոյս հողոյս և աւերծուածոյս անարգիս և փոքու՝ մեծին և փառաւորելոյն և անբաւ արարչին և խնամողին և փրկողին։ Ոչ եթէ որչափ նա արժանաւոր է կարեմք ծառայել նմա, այլ որչափ մերս բաւականանայ տկարութի, և մեք ոչ հեղգայցեմք, արժանաւոր ծառայութի մեզ համարի զայն։

Այս է զոր ասէն, պարկեշտութք և արժանաւորապէս քեզ տեառնդ ծառայելով 'ի կեանս յայսմիկ։ Ոչ էր յաւել 'ի կեանս յայսմիկ. քանզի այսու կենօքս մտերմութի առ արարիչն ցուցեալ, անապառին և անապականին կենաց առ հասարակ տեառն ուրախութեամբն միշտ վայելելով։ Որպէս յարէ 'ի նոյն։

Ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութե քոյ, զոր պատրաստեցեր 'ի սկզբանէ աշխարհի որդ քոց։ Սղան որոյ և մեք զայս իմասցուք, եթէ յերկրի և յանցաւոր 'ի կեանս սակաւ աշխատելով, յերկինս յաւիտեանս յաւիտենից թագաւորեսցուք ընդ քե և ընդ սուրբս նորա. զի այսպէս է արքայութիւն թագաւորութի որում արժանանան սուրբքն։

Եւ ընդ նոսին սա է գոհանալով փառաւորեսցուք զամենայն բերկրութիւնդ։ Որով յայտ է եթէ կցորդին մեզ սուրբքն ՚ի գոհութիւն և ՚ի փառաբանութիւն իւր՝ և յայս եւս կեանս. քանզի ՚ի մի շնորհս կոչեաց զմեզ և զնոսա յանանց թագաւորութիւն. որոց պատրաստութիւնքն ՚ի սկզբանէ աշխարհի յիւր կարգեցաւ։ Նոքա գնացին զճանապարհ որ յանդերանութիւն տանի. որ թէ և մեք նոյն ճանապարհաւն ուղևորդք լինիմք, աստէն իսկ զառհաւատչեայ յուսոյն ընկալցուք. աստէն և սրբոցն հաղորդ լիցուք յուրախալից փառաբանութիւնն իւր, ՚ի կեանս մշտնջենաւորս, և միշտ յամ աւուրս մեր, և յաւիտեանս յաւիտենից յայն յանկէտ և յանթիւ աւուրն յետնում որ ոչ ունի վախճան։ Եւ ժողովուրդն ասեն միաբան՝ ամէն. և այսու աւելու բանիւս ամենայն գոհութեանցն և աղօթիցն հաւաստարորդ լինին։

Սամն որոյ և վկայութիւն սովոր եմք կոչել. զի զամէնն ասելով վկայ լինիմք նմ ասացելոցն յառաջնորդէն։ Եւ յաւելու ՚ի նոյն թէ, օրհնեալ տր։ Զի որպէս սա է առաքելոյն. * Հաւատամք եթէ առնումք զհայցուածն զոր հայցեմք առ ՚ի նմանէ։ Սամն այնորիկ և ըստ այնմ օրինակի զոր ասացին, իբրև պատգամաւորաւ զմեր խնդիրն յիւր առաջնորդաւն հայցեալ և հաւատացեալ թէ տայ, ասեմք եթէ, օրհնեալ զմծ ընդ մեր։ Եւ նա անդէն օրհնէ ասելով, օրհնեալ է տէր մեր յս քս։ Եւ միաբան ասեմք՝ ամէն. զի յայտ լիցի թէ մեք շնորհակալութիւն առնեմք առնել առաջնորդի եկեղեցւոյն։

Իսկ թէ էր աղագաւ սատանոր որպէս ՚ի վախճան ժամուն օրհնել հայցեմք։ Քաւ թէ առաջինքն յայսմ վայրի գիրս ընթեռնուին. և որպէս զկանոն ՚ի կանոն չյարէին, այլ զառաւօտնէին կարդացմամբ. սոյնպէս և զսաղմոս առաջաբանիցն ՚ի կանոնն չյարէին, այլ գրովք մեկնէին։ Քանզի և կանոնական բանն այսպէս օրինադրէ չյարել զսաղմոսն ՚ի միմեանս. և սաղմոս ասելով և ոչ կանոն, յայտ առնէ թէ և յառաջաբանից սաղմոսացն որոշել արժան է զսաղմոս՝ գրովք։ Եւ օրհնեալ տէր; ասելն՝ զնոյն գուշակէ դարձեալ։

Եւ զի կարևոր եւս է յայսմ տեղւոջ գրոց կարդացումն վասն եկեղեցւոյն՝ մտաց նորոգութեան, և վասն չև եւս եկեղեցւոյն՝ գալոյ. որպէս զի ամենեքեան միաբան զսաղմոսին հոգևոր երգս ասացեն իւր, օժանդակ լեալ գրոցն խրատք և լուսաւորութիւն ոգւոյն։

Բայց թէ ընդէ՞ր այժմ խափանեալ է. ոչ վասն այլ իրի, այլ միայն վասն պղերգութեան. քանզի և զկանոնսն գիրս ՚ի յոլով տեղիս այժմ խափանեալ տեսանեմք. և ուր կարդանն, քնոյ պատճառ և ոչ խրատու օգտի զգիրսն առնեն բազումք։ Եւ ըստ յա-

առաջանալոյ ժամանակիս՝ թուի թէ և սուղ կարդացմամբ այս խափանի. քանզի աւելորդ իրս և ոչ կարևոր յոլովից թուի։

Այլ երանի թէ աւելորդ միայն՝ և ոչ վնաս ևս իսկ համարէին բազումք, և վայրապար դատարկութիւն 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր գործոյ։ Այլ ասեն այսպիսի բանս. թէ զմիտս ամենայն գիտէ. և եթէ խոտորիլ կամի 'ի չարէն և զբարին առնել, անզգայ է ամենայն մարդ. իսկ դրամք պատարագին չէ՛ ինչ շահ, այլ խափանումն 'ի կարևորացն։

Այլ այս է որ զամովսական ըմպանացումն յարդիւնս ածէ. զորմէ ոչ հացի, և զծարաւն ոչ ջրոյ. այլ սով լսելոյ զբանն Տեառն. զի որպէս 'ի սովոյ՝ խարշեն և տապականին ոգիքն որք ոչ լսեն զպատգամս Աստուծոյ, յայտ առնէ մարգարէն։ Քանզի որպէս առանց մարմնական կերակրոց չարաչար մեռանին, նոյնպէս և ոչ առանց խրատու գրոց կեալ կարէ ոգին. զայս և մովսէս ասէ։

Զայս և Տէրն 'ի վկայութիւն առնու ընդդէմ փորձողին. * Ո՛չ ասէ հացիւ միայն կեցցէ մարդ. այլ ամենայն բանիւ որ ելանէ 'ի բերանոյ Աստուծոյ։ Այլ դաւիթ՝ քան զմեղր քաղցր ասէ քմաց զբանն Աստուծոյ. զոր և գրիգոր Աստուածաբան ըստուգէ յասելն, * Կերակուր իմն է վարդապետութիւն և կերակրողին։ Այլ երանելին յովհան ասէ, * Զի՞նչ չար քան զայն կայցէ՝ յորժամ զոր մեծ 'ի մանկանց կարգի ստանալոյ, դու անձամբք յանձն կուտես զապականիչ ումէ։

Բա՛ց իմս զբանն եթէ չգոյ ինչ այլ չար քան զայն. զի եթէ զկորնթացիսն ողբայ պօղոս. զի չկարէին զհաստատուն կերակուր վարդապետութեան առնուլ, այլ կաթն ջամբել պիտոյացաւ. ապա և որ ոչ կաթինն ջամբելոյ հասցեն, ո՛րքան ողորմելիք են։ Այո՛, նոյնպէս և զեբրայեցիսն բանբասէ ասելով, * Եղէք կարօտք կաթին և ոչ հաստատուն կերակրոյ։ Զի վասն Աստուծոյ բանին ասէ զայս, որ ոգւոցն է կերակուր, յայտ 'ի յառաջորդէն է։ * Ամենայն որ կաթընկեր է ասէ՝ անփորձ է բանին արդարութեան։

Այլ ո՞ր է բան արդարութեան, եթէ ոչ՝ խրատք սուրբ գրոց. և որ նոցա ազգեան է. ապականին ապայ է թէպէտ և լսէ զնոսա. իսկ որ և լսէ ոչ, զիա՛րդ ապրի։ * Կատարելոցն է հաստատուն կերակուր. եթէ կերակուր է, ապա և կենսատու է։ Որպէս ասաց Տէրն թէ * Պատուէրն այն կեանք են յաւիտենական։ Այլ եթէ պատուիրանքն Աստուծոյ՝ կեանք են յաւիտենականք, յայտ է զի զրկեալքն 'ի պատուիրանացն Աստուծոյ՝ մեռեալ են յաւիտենական կենացն. որպէս զրկեալքն 'ի հարկաւոր կերակրոցն՝ մեռեալ են յայսց կենաց։

Այլ ոչ միայն մեռեալ են այնմ կենաց, որք ոչն կերակրին պատուիրանօքն Աստուծոյ, այլ և 'ի խաւարի ասատեն են. քանզի ոչ ունին զլոյս

պատուիրանաց Ա՟յ։ * Պատուիրանք Տ՟ն լոյս են ասէ, և լոյս տան աչաց։ Նա ոչ լուսաւորէ միայն. այլ և իմաստուն առնէ։ * Վկայութի՟ Տ՟ն ասէ հաւատարիմ է, և իմաստուն առնէ զտղայս։ * Ճրագ է բան քո ոտից իմոց, և լոյս տայ շաւղաց իմոց։

Որով յայտ է թէ որոց շաւիղքն այսու ոչ լուսաւորին, միշտ 'ի գայթակղութեան են ոտք ն՟ց։ Որպ՟ ասաց Տէրն, * Որ գնայ 'ի գիշերի՝ գայթագղի. զի լոյս ոչ գոյ ընդ նմա։ Դարձեալ և 'ի նոյն սաղմոսին ասէ զայն թէ, * Եւ իմաստուն առնէ զտղայս։ Քան ըզ-ծերս ասէ իմաստուն եղէ. զի զպատուիրանս քո քննեցի։ դարձեալ, * 'Ի պատուիրանաց քոց իմացեալ՝ ատեցի զճանապարհս չարաց. զի դու օրէնսդէտ արարեր զիս։

Տես և զինչ սողոմոն ասէ, * Ճրագ է պատուիրանն օրինաց. միանգամայն և լոյս և յանդիմանութի՟ և խրատ։ Օ այն և գլուխ առաքելոցն պետրոս ասէ, * Ունիմք հաստատագոյն զբանս մարգա-րէից, որում թէ անսայցէք՝ բարւոք առնէք։ * Իբրև զճրագն որ տայցէ լոյս 'ի խաւարչային տեղւոջ. մինչև տիւն լուսաւորեսցէ և արուսեակն ծագեսցէ 'ի սիրտս ձեր։

Այս ասաց որպ՟ մարգարէն ասաց թէ լուսաւոր առնէ. և պօ-ղոս ըստ նոցին վկայէ թէ իմաստուն առնէ, առ տիմոթէոս գրէ, * Միտ դիր ընթերցուածոց մխիթարութե՟ և վարդապետութեան։ և թէ, * 'Ի մանկութե՟ զգիրս ս՟րբս գիտես որ կարող են իմաստուն առնել զքեզ 'ի փրկութի՟, 'ի ձեռն հաւատոցն որ 'ի ք՟ս յ՟ս։

Նա յարէ 'ի նոյն թէ, * Ամենայն գիրք ա՟ծաշունչք և օգտա-կարք՝ 'ի յանդիմանութի՟ են և յուղղութի՟ և խրատ արդարութե՟. զի կատարեալ լիցի մարդն ա՟յ յա՟մ գործս բարութե՟ հաստատեալ։ Նա նոքա ասեն՝ չե՞ն պէտք գրոց, և պօղոս ասէ՝ օգտակար են. խրատեն ուղղեն և կատարեալ մարդ ա՟յ առնեն և յա՟մ գործս բա-րութեան հաստատեն։

Արդ՝ դու քեզէն տուր զիրաւն՝ թէ ո՞ւմ հաւանել արժան է, պօղոսի՞ թէ մոլեգնոտացն որ արհամարհեն զգիրս ս՟րբս. որոց մարգարէն եսայիաս վա՜յ տայ։ * Վա՜յ արհամարհողաց, որ արհամար-հեն արհամարհանօք զօրէնս։ * Վա՜յ այնոցիկ որք առ իմաստունս ու-նիցին զանձինս, և յաչս անձանց իւրեանց խորհրդականք։

Դարձեալ ուշ կալ. թէ տիմոթէայ որ լցեալ էր հոգւով սրբով և 'ի հոգւոյն ս՟րբ ուսանէր՝ պէ՞տք էին գրոց, ո՞րչափ ևս առաւել մեզ։ Նա զինչ ասեմ տիմոթէայ, պօղոսի իսկ գլխովին պէ՞տք էին գրոց. գրէ առ նոյն իսկ տիմոթէոս, * Յորժամ գայցես, բերջիր զգիրսն. մանաւանդ զմատեանսն։ Նա այն զի մօտ 'ի վախճան էր։ * Ես այսուհե-տև նուիրեալ եմ ասէ. և ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ 'ի վ՟ր։

Աստի յայտ է թէ, որպէս հիւանդաց որոց յայս հասեալ իցէ կենաց, հարկ առնեմք որչափ ունիցին շունչ՝ կերակրել դեղն ինչ՝ աղապէտաւ զի զօրասցին ոգիքն որչափ 'ի մարմնի իցեն։ Այնպէս և՝ հոգևոր կերակրոյն մինչև յելանել ոգւոցն 'ի մարմնոյն՝ պէտքն պահանջին. մանաւանդ եթէ յայնժամ առաւել, զի զղջմամբ և յուսով և կատարեալ հաւատով գնասցէ աստի։

Բայց հարցից ցնոսա, վայրապար հրամայեաց ա͞ծ մովսէսի և մարգարէիցն գրել զգիրս. և կամ ունայն գրեցին առաքեալքն զաւետարանս և զթուղթս իւրեանց և որ զգործս առաքելոցն գրեաց, և կամ վարդապետքն զոր ինչ գրեցին։ Գրակէս մի 'ի պատուիրանացն ա͞յ՝ պատուականագոյն է քան զերկինս և զերկիր։

Վասն որոյ պատուիրէ մովսէսիւ ա͞ծ թէ, * Եղիցին քեզ պատգամքս այսոքիկ զոր ես պատուիրեմ քեզ այսօր՝ 'ի սրտի քում և՝ յանձին քում. և իմացուսցես զսա որդւոց քոց. և խօսեսցիս սոքօք 'ի նստել 'ի տան 'ի գնալ 'ի ճանապարհի, 'ի ննջել և 'ի յառնել։ Եւ արկցես զսա նշան 'ի ձեռին քում. և եղիցին անշարժ առաջի աչաց քոց։ Եւ գրեսցես զսոսա 'ի վ͞ր սեմոց տանց քոց և 'ի դրունս քո։

Այլ դաւիթ յայս հայեցեալ, երանէ որք յօրէնսն տ͞ն խորհիցին 'ի տիւ և 'ի գիշերի։ Երանի տայ որք քննեն զվկայութիւնս տ͞ն. բոլորով սրտիւ իւրեանց խնդրեսցեն զնա։ Այնպէս և Երեմիա երանի տայ խորհելի վասն այսր. զի պատուիրանք տ͞ն լոյս են նորա։ Այլ եսայի 'ի գիշերոյն խաւարէ դիմէ առ ա͞ծ, լոյս զպատուիրանս նորա ունելով. այսպէս ասէ, *'Ի գիշերաց կանխէ հոգի իմ առաւօտ առնել առ քեզ ա͞ծ. վ͞ն զի լոյս են հրամանք քո 'ի վ͞ր երկրի։ Այլ քարոզէ ամենեցուն, *Ուսարուք զարդարութի͞ բնակիչք երկրի։ Այլ ուստի՞ ուսանին զարդարութիւն. եթէ ոչ 'ի հրամանաց նորա որ լոյս է երկրի։

Այլ եթէ այս այսպէս է, մթացեալ խաւարաւ ծածկեալ են ոգիք ատեցողացն զպատուիրանս տ͞ն. և ոչ զլոյսն որ 'ի նոցանէն գիտեն. և ոչ իմաստութի͞ն որ 'ի նոցանէ են բաղձան։ Խելագարեալք են և նման շամբելոցն խօսին. զի եթէ գիտէին լսել 'ի պօղոսէ, թերևս իմանային։ *Հաւատք 'ի լսելոյ են. և լուր՝ 'ի բանէն քրիստոսի։ Այլ կամ տէրունեանն ձայնին իսկ լսէին. *Քննեցէք ասէ զգիրս, զի նոքօք զկեանս ունել համարիք։ Այս և մոլորեալս իսկ կոչեաց զայնպիսիսն որք անգէտ են պատուիրանացն ա͞յ. զի և զզօրութի͞ ա͞յ անգիտանան։ Իսկ որք զի պիտոյ են պատուիրանք ա͞յ՝ իմանան, այսպէս խօսին, թէ վասն այսր զի զա͞յն խօսիմք՝ և ոչ վասն այլ իրիք եղաք բանաւորք. և եթէ այսու լաւ եմք քան զանասունս, իսկ յայլսն յոյժ անկարագոյնք եմք քան զնոսա։

Ո՜չ է եթէ ՚ի մարմնաւոր իրս իմաստնոցն իւրք զօրանան, քանզի՞օն ՚ի հոգևորսն խօսեցեալքն յոյժ. և եթէ պղծոյն բանք և ՚ի սատանայէ հնչեցեալ երգքն իբրև զքաղցկեղ ճարակ գտանեն, և զգերեն զմիտս զգաստից ՚ի կորուստ. այլ ո՛րչափ հոգւոյն սրբոյ ազդելով բանքն ՚ի հնազանդութիւն քի գերեն զունկնդրացն ոգիս:

Ո՜չ է եթէ սոսկ բան որպէս ասէ ոսկեբերան ՚ի յարութեան ճառին՝ * Ցուցեալ ոչ սակաւ, այլ յոյժ օգտակար է. ոսկեշունչ բանքն քանզի՞ բազմապատիկ յաւելուն զարդարութեան տուեալսն. զի որքան միջոց այ ընդ մարդիկ է, նոյնքան և ընդ մարդկային իմաստութեամբ խօսեցեալն և ընդ այ շնորհիւն:

Այլ եթէ մարդկայինքն ոչ միայն առ մարդիկ, այլ և առ անասունս կարողանան որպէս ասեն գիրք. և զհեղգութիւն զեզին և զձիոյ զիշոյ և զշան ՚ի փոյթ յորդորէ. այս զմարդ որ անասնադոյն հանդիպի որպէս զեզն, և անմտագոյն որպէս զէշ, և զվրնջելն ունի ՚ի կանայս նման ձիոյ, և շանց դունակ ազգի ազգի պղծի. չկարէ՞ քրիստոսատուր իրատն դարձուցանել ՚ի չարէն ՚ի բարին:

Ահա, որքան ՚ի միում աւուր որսաց ձկնորսն բանին ուռկանաւ ՚ի կեանս. որչափ բիւրս ՚ի հրէիցն ՚ի սակաւ ժամանակս աւետարանին հնազանդեաց: Նա և խորանակարն ոչ պակասէն յերուսաղէմէ մինչև ՚ի կողմանս լիւրիկեցւոց՝ բանիւ ընծայեցոյց քի զանբաւութի մարդկան: Ոչ և այլ առաքելոցն բանք կարողացան ամ երկրի լնուլ, և յամ ազգաց ժողովել յարքայութեան ամեն:

Բայց ոչ երանելեն յովհան ասէ վարդապետն աւետարանչաց, թէ * Մատանայական մնաց է այն՝ որ չաստ հայել մեզ ՚ի գանձն, զի մի զմեծութիւնն որ անատ է շահիցիմք: Այլ թէ՝ զոր օրինակ ՚ի ծխոյ աչք բժաբեկք և արտօսրալիցք լինին. իսկ որք ՚ի մարգս և յաղբիւրակունս և ՚ի մէջ օդս զբօսնուցուն, սրատեսք և քաջահայեացք լինին: Ըստ այնմ օրինակի և ակն ոգւոցն եթէ ընդ ծուխ աշխարհիս իրաց դայցեն, բազում վտանգիւք խաւարեալ և մթով վարակեալ, ազգի ազգի լալիւնս լայցէ և աստ և անդ. այլ թէ յաղբիւրս հոգևոր բանից ճարակիցի, քաջատես և սրակն լինի:

Դարձեալ և որոց լսեն և չպահեն ՚ի միտ, սաստիկս մեղադրէ: * Անկեալ ասէ ոսկի գտեալ ուրուք ՚ի քսակ արկանէ և զգուշանայ կապով և կնքով և պահպանութբ: Այլ մեք զբանն այ զցանկալին քան զոսկի և քան զակունս պատուականս՝ ոչ յոգիս ամբարեմք. այլ թողումք սահել ՚ի մտաց: Այս ո՞ այնուհետև ողորմեսցի մեզ անձանց նենգաւորաց, և յայնքան աղքատութիւն իջելոց:

Այլ զանբանականութն զպիղծն յօրինացն՝ երջանիկ վարդապետս յայլում գրէ՝ նյ օրինակէ, * Որք ոչ պահեն ՚ի միտս զսերմն բանին

նոյ, այլ ծորեցուցանեն 'ի մտաց · վասն որոյ յոյժ պիղծ են · և եթէ որ ոչ պահեն 'ի միտս՝ յոյժ պիղծք են · և ուր մերձինն պղծեն ։ Բայց յայտ է թէ բիւր պղծութք լի են և կարի անմերձենալիք , որք և ոչ լսել անգամ և ընդունել զբանն նոյ անսան ։

Նա թէ անդաստան և այգի անսերմ և անգործ չպտղաբերի · այպս և ոչ ոգի որ ոչ գործի և սերմանի 'ի խրատուց նոյ՝ կարէ արդիւնս տանել ։ Ըստ որում օրինակէ եսայի վն հոգևորին զերկրաւոր մշակութն ասելով , եթէ՝ * Նախ կակղեն , և ապա զադդ ադդ սերմանցն սերմանեն ։ Նա 'ի վերայ բերէ թէ , * Խրատեցիս դու երաւամբք նոյ քոյ ։ Յայտ արարեալ թէ այսպէս պիտոյ է օրինադրել ամ ոգւոյ ածային երկիւղիւն , և զսերմն բանին կենաց ընդունիլ , և ապա պտղաբերել աստուծոյ ։

Այնպէս և Տր լուսաւորիչն օրինակէ երկրի սերմանց զսերմ ածպաշտութն · և յիշէ զակօսելն և զցանելն և զայլսն · և ասէ , * Նոյնպէս պարտիք կակղել զանդս մտացն , զի սերմանիքն սուրբ և օգտակարք ցանիցին 'ի ձեզ ։

Նա թէ այսպիսի ջանից պէտք են՝ անջանքն և անվաստակքն և ուր ոչ սերմն ածպաշտութեն ցանիցի , զիա՞րդ արդիւնարարք լինիցին · զի թէ սերմանահանքն 'ի չորից մի մասն արդիւնացաւ , ապա անսերմնացանելոյն զիա՞րդ արմտիք լինիցին ։ Բայց զի 'ի սատանայէ խօսին որք խափան լինին գրոց լսելութն , առացաք փոքր 'ի շատէ · 'ի կարգն դարձցուք ուր սկիզբն արարաք ։

Զի թէ և կարևոր է ընդ դէմ նոցա երկայնել զբանս , և յաւելեն առ այս աստուածացութիք սրբոցն ձայնից , այլ ոչ թողու զմեզ պատառել զայսու՝ շատութն երեր որ առաջի կայ ։ Վասն որոյ սակաւուք պատմեսցուք առաւել ուսումնասիրաց , 'ի մեր խնդրոցն լուծումն յառաջեսցուք ։

Յաղագս սաղմոսին որ յետ աղօթիցն ։

Յետ կատարման աղօթիցն՝ սկսանին զսաղմոսն կանոնին սաղմոսին եօթն գործոցիւք՝ փառաւորութ կատարելով · և սարկաւագն քարոզէ ըստ ամ գործոյն ,

Նա և ես խաղաղութեան զսէր աղաչեսցուք ։ Այսինքն թէ՝ և վս խաղաղութեն դարձեալ այլ աղաչանս նոյ մատուսցուք · զի՝ և ոն այլ է , և՝ եւեան այլ · զի ուսցուք եթէ հանապազ զնորա խաղաղութ

Բ. յաղէս և բանաւոր պատարագացս թէ և այլ ոք 'ի քահանայից իցէ մատուցանօղ, զխաղաղութի եպիսկոպոսն յորում եկեղեցւոյ հանդիպի, առնու յնջ և տայ նց. որ քան զնմ պարգև գերագոյն է. մանաւանդ թէ բովանդակ պարգևօք լցեալ: * Եւ զի նմ տուրք բարիք և նմ պարգևք կատարեալք 'ի վերուստ են իջեալ առ 'ի հօրէն լուսոյ: Եւ գլխաւոր եկեղեցւոյն զամենեսեան զնո միով բանիւս այսու աւետաւորէ. խաղաղութի ամենեցուն ասէ: Որմէ առաքեալ ասէ, * Խաղաղութի նյ որ 'ի վեր է քան զնմ միտս, պահեսցէ զսիրտս ձեր և զմիտս 'ի քս յս:

Անհասանելի ուրեմն հրեշտակաց և մարդկան մտաց, վկայեալ զայս առելով. յաղագս այսորիկ և 'ի վեր աստ քան զնմ միտս. Սորին աղագաւ թէ օրհնէ քահանայն, թէ աղօթէ, առ 'ի յնյ զխաղաղութիս զայս բերէ պատասխանի. որ լի է անիմանալի պարգևօք:

Երրորդ ցուցումն առաւելութե քահանային այս է, զի կրկին առնու միով անձամբն զպատիւ քան զժողովուրդն ամենեքումբք: Ոչ է ոչ միայն զիւրեանց փառաբանութիւն քահանայքն աւարտեն. այլ զի և նոքա ասեն, փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. Իսկ առաջնորդքն և զօրհնութի ևս յաւելուն 'ի փառսն. և չէջկէ ոք 'ի ժողովրդենէն զայս առնել, և ոչ բովանդակ իսկ ժողովուրդն.

Բ. ժլ որպէս յայլ եւս կրկին պահանջէ առաքեալ զերիցանցն պատիւ առնել, թէ * Բարւոք վերակացուքն երիցունք կրկին պատւոյ արժանի լիցին: Նոյնպէս և յօրհնութիւն նյ կրկին կարգեալ է զպատիւ երիցանցն:

Դարձեալ՝ զի չէք ինչ շնորհ, զոր առանց առաջնորդաց տայ նծ. այլ վերստին ծննդեանն որ 'ի հոգւոյն, և կենարար մարմնոյ և արեան անտան բաշխումն, թողութի մեղաց դարձելոցն 'ի խոստովանութի ապաշխարութե, ամուսնութի զուգութեան, ընծայից և նուիրաց և պարգևաց մատուցումն, հոգւոյն հանգուցելոց առ քս յուղարկումն, և մարմնոց նոցա ընդ ամենապահ աջովն նյ ամփոփել. և որ այլ ևս կարգք են քրիստոնէականք՝ և օրհնութի եկեղեցեաց նյ և սպասուց նց, կամ նշանի խաչին, կամ մեռոնին գերագունի, կամ երկրի, կամ ջրոց, սերմանց, պտղոց, անկոց, անասնոց, ախտից բուժելոյ նծային շնորհիւն, կամ այլ ինչ նծատուր պարգևի, միջնորդք՝ առաջնորդք եկեղեցւոյ լինին:

Նոքա առնուն 'ի ժողովրդոցն զխոստովանութիւն՝ զաղօթս՝ զօրհնութի՝ զնուէրս մատուցանեն նյ: Եւ դարձեալ առնուն յնյ զօրհնութիս զզանազան զշնորհսն զխաղաղութին երկնային, և տան մարդկան մեռելոց և կենդանեաց: Ո՛չ վայրապար զայս յեղանակեմ բազմօրինակապէս. այլ զի կարացից խնդրուցանել առ հասարակ

քահանայից, և ժողովրդոց։

«Քահանայից, զի 'ի հեղգալն կամ 'ի տգիտանալն որ ինչ վասն ժողովրդեանն, գիտասցեն թէ որչափ առ ած մեղանչեն, կամ որքան զժողովուրդն վնասեն։ Կամ որչափ դատի քս որ զարիւնն իւր եհեղ վասն մարդկան՝ զայն որում զհրեշտակութի միջնորդութեան հաւատաց. և պատուիրեաց զգոյշ լինել միում 'ի փոքրկանցն, եթէ ոչ ած սպասու և ած մարդ յամ զօրութէ մատակարարիցեն զժողովրդեանն՝ այյ, և զնոյն՝ ժողովրդեանն. և ած ուղղութեամբ միջնորդեսցեն։ Որպս և խրատէ գլուխ առաքելոցն պետրոս. * Եթէ ոք խօսեսցի իբրև զայյ պատգամս, եթէ ոք մատակարարիցէ իբրև 'ի զօրութէ զոր շնորհէ ած. զի յամի փառաւորեսցի ած 'ի ձեռն յի քի։

Զի թէ որք վասն անցաւոր կենացս պատգամաւորեն 'ի հողեղինէ և 'ի մահկանացուէ առ նմանս, հոգան և զգուշանան զի մի՛ ամօթ և երկիւղ նց հասցէ 'ի պատգամաւորելն. և կամ վնասեսցին նքօք որք ունիցին զնոսա խօսելիս 'ի միջի. այլ ած իմաստութեամբ ջանան յիմաստս և 'ի բանս։ Բայց որ ընդ ած և ընդ մարդիկ ոչ միայն վասն անցաւորիս, այլ և վասն անանց կենացն տարուքերին, բանիւք և արդեամբք զգուշութիւն պիտի։ Որք այսմ կենաց կամ մահու և այնմ առիթ լինին 'ի չզգուշանալն կամ 'ի հեղգալն. արիւնապարտք լինին ըստ մարգարէին 'ի ծուլանալն, և փառացն քի հաղորդ ըստ պետրոսի 'ի փոյթ դառնին։

Իսկ ժողովրդոցն, զի գիտասցեն թէ որչափ պատիւ առ 'ի այյ ունին առաջնորդք. կամ որքան օգտից և շնորհաց առ 'ի այյ, նոցա բերողք են. և որչափ բարեաց առաջնորդօղք։ Կամ քանիօն 'ի վերայ նց իշխանութի առեալ այյ՝ կապել և արձակել յերկինս և յերկրի։ Թողուլ զմեղս, և ունել, բանալ նց զերկինս և փակել. իջուցանել առ նոսա զողորմութի այյ և արգելուլ. բերել նց և իրաց նց օրհնութի այյ՝ կամ անէծս. և զայլն ևս զոր յառաջն ասացաք։

Նա զայս ած իմացեալ նց, ընկալցին զնս որպս հրամայեցաւ 'ի տեառնէ այնպէս որպս թէ ինքն քս իցէ։ Զի թէ ժողովրդեանն իբր այլ 'ի քնէ նոցա շնորհի, ապա և ընդունել զնոսա որպէս զքս 'ի ժողովրդենէն պահանջի. նոյնպէս ունկնդրութի և հպատակութիւն, որպէս հրեշտակի այյ՝ զաստուածոյն խօսողի։

Դարձեալ՝ մարմնական պիտոյից լուծս որպս հօր հոգասցի. որպս վարդապետի, որպս զհոգևորսն սերմանողի հնձեսցի. որպս աշխատաւոր մշակի և այգեգործի քի՝ պտղատուեսցի։ Իբրև 'ի առձարի այյ գործողի, իբրև սեղանոյ այյ պաշտօնէի, անդուստ հարկաւոր պիտոյիւքն լցցի. իբրև զաւետարանն աւետարանողի, յաւետարանէն կեալ պատրաստեսցի։

Ո՛չ ապաքէն և առաքեալ այսու օրինօք խրատաբանէ զառաջ-նորդացն հարկաւոր պարտիս դարմանատրութե՛ան։ Նա զի՛ և երկո-ցունց կողմանցս սէր ՚ի միմեանս առաւելեսցի քան զծնողաց և զծննդոց։ Այնչափ՝ որչափ առաւել է քան զմարմնաւորն՝ հոգևոր ծնունդ և սնունդ. նոյնչափ և գութք յաճախեսցին առ իրեարս քան զբարեկամաց առ իրեարս, այնքան՝ որքան օգտութի՛ւն երկնային լաւ է քան զօգտութի՛ւն երկրային։ Այլ և վշտակցին և կարեկցին ևս առաւելագոյն քան որ մարմնոյ են կարեկիցք, այնքան՝ առաւել է որչափ հոգի քան զմարմին. և այլք սոյին նմանք բովանդակ իրերաց փոխադարձեալ հարկեցին։

Այլ զի ևս ինձ երկայնաբանելն է, օրինակ առաջի կացելոցքն, և աշակերտացն առ միմեանս ուղխութիւքն, և առաքելոցն առ իւրեանց աշակերտսն, և աշակերտացն առ նոսա իրագործութիւքն։ Որոց թէ ո՛չ նմանին երկաքանչիւրքն, մեծ դատաստան ընդունելոց են կողմն սխալելոցն, և բազում վարձս գտանելոց այնպէս արարողքն։ Այլ ես ՚ի յիմն դառնալով՝ զպատճառսն ՚ի նոյն բանս՝ առ այլ թողլով ժամ և ժամանակ, եթէ տէր հրամայեսցէ։

Յետ կանոնին և օրհնութեանն օրհնելոյ, կան քարոզք և աղօթք չորք կրկնով։ Այլ պաշտօնն սոքա երկոցունց կանոնաց. մի մի քարոզ և աղօթք առ կանոն մի։ Այլ իբրև դժուարի, դարձեալ սկիզբն առնու ՚ի չորից կանոնացն մնացելոց։

Քարոզ՝ Երանեալ և Իբրև կանոնացն, զկնի ասելոյ զՄաղթանքն՝ ըստ պատշաճի աւուրն։

Վասն ՚ի վերուստ խաղաղութե՛ան և փրկութե՛ան անձանց մերոց զՏէր աղաչեսցուք։ Որպէս հրամայէ, զի ինքն է խաղաղութիւն մեր և փրկեսցէ զոգիս մեր. այն խաղաղութի՛ւն զոր խոստացաւ տէրն թողուլ առաքելոցն։ Այլ ընկալեալ զայն՝ փրկեսցին ոգիք նոցա ՚ի ձեռնարկութէ՛ սատանայի. և վերագոյնք դտան քան զննդութի՛ւն դիւացն և մարդկան, և առանց խռովութեան և ղանդիտելոյ, այսինքն չկասելոյ։

Բայց դու հաւատա՛ միտ դիր բանին, թէ որպէս յայն խորհուրդ խաղաղութեան զոր խոստացեալ է ՚ի տեառնէ՝ բերէ զմիտս.

զի անդ ասէ, *Ո՛չ որպէս աշխարհս տայ տամ ես ձեզ։ Այլ ասա 'ի վերուստ ասելն՝ զչնաշխարհիկն յայտնէ։ Նորին ասէ, *Մի՛ խռովեսցին սիրտ ձեր։ Որ զուգոյն տրութիւնն յայտնէ. և քարոզն զուգոյն փրկութե՛ն խնդրել հրամայէ և է նոյն խնդիրն. զի անխռով և առանց զանգման ոգին մնասցէ։ Յոր ոչինչ դիւական ախտք կամ երկրաւոր անհք ազդել կարասցեն, փրկութենն անճառելոյ հասին։

Յաղագս այսորիկ և ժողովուրդքն միաբան՝ զտէր ողորմեայն տան. զի Թէպէտ և անարժան իցեմք, ողորմեսցի և պարգևեսցէ զխաղաղութիւն զխոստացեալն։

Վ՟ն լսելոյ տեառն ո՟յ՝ ձայնի աղաչանաց մերոց զո՟ր աղաչեսցուք։ Լսելն՝ զընդունելն զաղաչանս և տալ զխնդրելին ցուցանէ։

Վ՟ն քաւիչ և ներօղ լինելոյ ո՟յ 'ի վերայ մեղաց մերոց զո՟ր աղաչեսցուք։ Քաւելն՝ սրբել է, և ներելն՝ չածել զպատուհաս ըստ մեղացն 'ի վերայ. այլ տալ տեղի ապաշխարութեան։

Վ՟ն Թողլոյ մեզ զա՟մ յանցանս մեր զկամայն և զակամայն զտէր աղաչեսցուք։ Վասն զի և վասն ակամայ մեղացն դատիլ ունիմք, խնդրեմք Թողուլ զոր մեքն յօժարեցաք գործել, և զոր յանյօժար կամաց սխալեցաք 'ի հարկէ։

Վ՟ն զի մի՛ ընդ խոտանս դասնիլ մեզ յաւուրն պատասխանատուութեան զտէր աղաչեսցուք։ Որ պատասխանատուութեան՝ է օր դատաստանին. յորում որք առաջի կան դատաւորին՝ զիւրաքանչիւր գործոց պատասխանիս պահանջին. և խոտան դասնին որք ոչ ընդ քրիստոնեայս վերանին. և հեռեղաւ հրոյ 'ի գեհենին անկանին։ Ըստ տէրունական առակին՝ *Յուռկանէն յետ ժողովելոյ զբարին յամանս, և զխոտանն 'ի բաց ընկեցին։ Ոչ արտաքոյ է գեհենն ոչ միայն երկնից, այլ և այսմ երկրիս որ մարդաբնակ։ Արդ հրամայիմք աղաչել զի մի՛ յայնցանէ լիցուք, այլ որ 'ի յարկսն յաւիտենից ժողովին։

Ամենայն տանց քարոզս աւարտէ զո՟ր աղաչեսցուք։ Այս զողորմութիւն յո՟յ ըստ իւրաքանչիւրոցն ժողովրդն հայցելով տանն տէր ողորմեա։ Զի ողորմին հաւանեցուցանէ տալ խնդրողին Թէպէտ և չիցէ արժանի։

Աղօթք՝ Երանեալ և Իբրև կանոնացն:

Տէր տունջեան և գոյացուցիչ գիշերոյ, որ արարեր զտիւն 'ի զբօսանս բարեգործութեան 'ի փրկութիւն անձանց մերոց, և զգիշեր 'ի հանգիստ քնոյ տկարացեալ բնութեանս մերոյ:

Տէրն անուն՝ զտիրանալն և զտիրելն յայտնէ ծառայիցն. զի Նա՛ հաստատեալ է զտիւն և զգիշերն, վասն այնորիկ ծառայք հնազանդին, և հրամանի Նո՛ր անսայ. որպէս ասէ Դաւիթ, * Հրամանի քում մնայ տիւ, զի ամենայն ծառայ քո է:

Եւ գոյացուցիչ գիշերոյ: Արարիչն՝ սահմանիչ, որ 'ի չգոյէ 'ի գոյ ած. և զտիւն կարգեաց և հաստատեաց գործել և վայելել յարարածս իւր բարեաւն. զի 'ի նմին տեսանեմք զերկնի գեղեցկութիւն և զերկրի վայելչութիւն. զկենդանեաց յօրինուածս. և զազգազգս բուսոյ և անկոց և ծաղկանց. զաղբիւրաց՝ գետովք և ծովովք զառ 'ի մեզ պիտանութիւն: Եւ զբօսնումք նոքօք՝ վայելելով 'ի նոսա, և փառաւորելով զարարիչն, որ վասն մեր հաստատեաց զնոսա, և ետ մեզ գործել զօրօք զպիտոյս մեր և զընկերաց, և օգնական միմեանց լեալ, և միմեանք զմիմեանս հոգացեալ:

Ոմն իշխէ և ոմն իշխի. ոմն արուեստս բերէ յառաջ շինողութեամբ՝ և զհանդերձից և զանօթոց պէտս: Եւ ոմն սերմանէ զերկիր բուսովք սերմանեօք և անկօք, և զհասարակաց պէտս լիացուցանէ. ոչ զմարդկան միայն, այլ և զանասնոց:

Եւ հրճուի իւրաքանչիւրոք 'ի վաստակս ձեռաց իւրոց, և հրճուանս այլոց կազմէ: Եւ անկարիցն ընծայ բերէ յարդեար վաստակոցն. զի ոչ միայն յայսմ աւուր կենացս միայն լեցի աշխատիլ տունջեանն, այլ և 'ի հանդերձելումն: Եւ վասն այնորիկ է գոհութիւնս. զի այնպիսի շնորհս գտաք յԱստուծոյ:

Արարեր ասէ զտիւն 'ի զբօսանս բարեգործութեան 'ի փրկութիւն անձանց մերոց: Զի ամ՛ վաստակովքն իւր՝ երախտաւոր լեալք, փրկեցաք 'ի չարէ և 'ի մեղաց և 'ի գեհենէ, և երկնից հասցուք:

Զի եթէ 'ի շինուածս զօտարն հանգուցանես, և զգեստուց զմերկն ծածկեսցես, և կերակրովք և ըմպելեօք զկարօտն լցուցես, երկրաւս զերկինս գործեցեր. և շահեցար զանսուտ և զանուն: Նա և 'ի բանտարգելսն և 'ի հիւանդսն. և որ զերկինն՝ տունջեանն բազումն թէ կամիս բարեգործես 'ի նոսա: Փրկես և փրկիս. յուսովս այս, և պարգևօքն անդ զուարճանաս:

Իսկ գիշերոյն հանգիստ որպէս բանն ասէ՝ նորոգումն առնէ տկարութեան. և զօրինակ մահու և զյարութեան 'ի մեզ տպաւորէ:

Իսկ այժմ զարթուցեալ բացեր զերանս մեր 'ի փառաբանութիւն փառաւորեալ անուանդ քում սրբոյ ։ Յայսպիսի օգտութե զարթուցեր, զի հրեշտակաց լիցուք երգակիցք ․ քանզի ակար է բնութիս, ոչ զանմարմինս ոչ զօրէ անդադար 'ի քում փառաբանութե ։

Յաղագս այնորիկ հանգուցանելովն զօրացուցեր զմարմինս մեր, և հոգւոյս օժանդակես ընդ հրեղէն փառաբանիչսն զքո փառաւորեալ անուանդ փառաւորել, որ յիսկզբանցն և յաւիտենից փառաւոր էր ․ և անկարօտ էր եղելովքս փառաւորիլ ։

Նմա առ գութ արարչութեանն հաճեցաւ յարարածոցս պաշտօն առնուլ ․ ոչ զի ինքն յաւելուած կամ փառս առցէ, որ ամենակատարն է և անփոփոխ ․ այլ զի փառաւորիչքն պատուեսցին՝ զփառաւորեալն օրհնելով ․ քան զոր պատիւ մեծ այլ ոչ գոյ ։

Ընկալ և այժմ զաղաչանս մեր, և յաջողեա մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք միշտ 'ի պաշտօն քո կանխել երկնային կանոնիւ ։

Տեսանե՞ս թէ որպիսի մեծապատիւ գիտացեալ զոյ փառաբանիչն լինել, աղաչէ մեծ բաղձանօք միշտ 'ի նոյն կանխել, ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք, երկնայնոցն նմանիլ կարգաց ։ Զոր և կանոն անուանէ ․ զի առանց ուղիղ հաւատոյ և առաքինութեան անընդունակ է պաշտօնն ․ սակս այնորիկ երկոցունց լինել մաղթէ ․ զի * Հաւատք առանց գործոց մեռեալ են, և գործք առանց հաւատոյ ։

Իսկ որ ուղիղ հաւատով զբարիս գործէ, նա է որ արդեամբք և ոչ բանիւք և եթ զած փառաւորէ ․ քանզի ասէ, * Լուսաւորեսցի լոյս ձեր առաջի մարդկան ․ որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զհայր ձեր որ յերկինս է ։

Արդ մեք զայս ած խնդրեալ, նախ քան բանիւք՝ գործովք փառաւորեսցուք ․ և զնոյն զայս 'ի տեառնէ խնդրեսցուք երկնային կանոնիւ անդադար փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգի ․
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Խաղաղութիւն տալն ․

Եւ յետ այսորիկ տայ և առնու զխաղաղութիւն աղօթամատոյցն՝ և ոչ ևս եպիսկոպոսն ․ զի դեռ ևս ունի դառնալոյ և ասելոյ զմնացուածոյ ժողովրդեանն, և վասն գոհութեան նոցա և

երկրպագութեան · որով որչափ առացաքն՝ շնորհակալութիւն առ ած-
ցուցանէ խոստման հայցուածոյն ։ Եւ այս սարկաւագն երկրպա-
գել հրամայէ ։ Զայս արարեալ , սկսանի քահանայն ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Զքեզ որ յամէն գթած և մարդասէր տէրդ ես՝ աղաչեմք հանապազ · զի զօրացուցես զմեզ օրըստօրէ՝ կալ ՚ի կարգի կրօնաւորութե՟ մերում ։ Թեթևացո առ մեզ զքաղցր լուծ քո զոր եդիր ՚ի վերայ մեր · զի կարասցուք կալ ՚ի պատուիրանի քում , և զհաճոյսն առնել առաջի քո յամ ժամ ՚ի տուէ և ՚ի գիշերի , հրեշտակային երգակցութեամբ զքեզ օրհնել ։

Աղէ՝ նայեաց դարձեալ թէ որպէս մեծաքանչ պարգևատուաց զնոյն հայցէ , զգթութն և զմարդասիրութի յիշեցուցանելով , աղաչէ՝ օրըստօրէ զօրաւոր լինել ՚ի հրեշտակական կարգաւորութիւն · զայն առնել կրօնաւորութիւն՝ զոր հրեշտակքն ։ Որոնք աստ հաւատք և վարք ուղիղ · յորմէ՝ աղաչէ անթերի մնալ և անմեղկելի որպ վերինքն ։

Զի թէպէտ և սաստանելի հողեղէն բնութեանս է հրեշտակացն լուծ , այլ քեզ կարողութե՟ է թեթև և քաղցր առնել զնա մեզ՝ քո սիրովդ և յուսովդ ։ Եւ զհոգին մեր ՚ի թիկունս հաստատելով , որով անհնարինքն հնարաւորք՝ և անկարելիքն կարելի լինին · քանզի զայս ակնարկէ յասելն , Զի կարասցուք կեալ ՚ի պատուիրանի քում ։

Եւ զօրօրինակ յառաջին նուագ նուագեաց ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք միշտ ՚ի պաշտօնն կանխել ըստ երկնայնոցն ։ Այնպէս և աստ զնոյն յայտ առնէ յասելն , զհաճոյս քո առնել յամ ժամ · զի հաճոյ է նմա հաւատք ուղիղ և վարք մեր ։ Ընդ աստ՝ երկնային կանոնի · այսինքն՝ երկնային կարգաւորութե՟ ։ Եւ որ առաջիս կայ՝ զնոյն մաղթէ ,

Ի տուէ և ՚ի գիշերի հրեշտակային երգակցութեամբ զքեզ օրհնել , զքեզ գովել , և քեզ փառս մատուցանել ։ Տեսանես զբովանդակ աղօթիցս բան · զի ոչ յերկնէ ինչ խնդրէ և ոչ յերկրէ · այլ զի միայն նորա փառաբանութեանն հրեշտակական վարուք արժանաւորեսցուք ։

Քանզի որչափ առաջի՝ այս պատիւս քան զամ պատիւ գերազանց է , և քան զերկնից և զարքայութե՟ ։ Որում պատուի մեծն դաւիթ անձկացեալ , կաթոգին բաղձանօք ասէր ցած , * Զինչ կայ իմ բնաւ յերկինս · կամ ՚ի քէն զինչ եւս խնդրեցից յերկրի ։

Այլ արդ ասա ով երանելի մարգարէ · զի թէ չունիս ինչ պէտք իրաց յերկրէ , ապա զինչ է որ քեզ փափագելին է ։ * Նուաղեաց ասէ սիրտ իմ և մարմին իմ ։ Աստանօր սիրտ զոգին ասէ · և զոգւոյ և զմարմնոյ ջերմն փափագն առ Աստուած յայտ առնէ · որպէս թէ նուաղիլ ՚ի սաստիկ ցանկութենէն ։

Քանզի կարօտութիւն հացի և ջրոյ նուաղէ զմարմինն , այսպէս և իմ կարօտութիւնս առ քեզ՝ նուաղէ զիմ հոգի և զմարմին ։ Զօր և յայլում սաղմոսի ծարաւ իսկ կոչէ ։ * Ծարաւէ՛ ասէ առ քեզ հոգի իմ · քանիցապատիկ եւս և մարմին իմ ։ Այլ դարձեալ , * Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց , այնպէս փափագէ անձն իմ առ քեզ Աստուած ։ Այլ ոչ անդ ասաց՝ նուաղեաց սիրտ իմ , զնոյն օրինակ ասէ և յայլում սաղմոսի , * Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ · վաղվաղակի լուր ինձ , զի նուաղեաց յինէն հոգի իմ ։

Զի որպէս ծարաւեալն արագեցուցանէ զմերձակայսն թէ արագեցէ՛ք ջուր տալ · ապա թէ ոչ , նուաղեալ ոգիս չհանդարտէ , այլ վաղվաղակի ըսպառի ։ Այնպէս և մարգարէս պասքեալ յաստուածային ծարաւոյն՝ զԱստուած աղաչէ , և զոգին նուաղեալ ասէ · և պաղատի , * Մի դարձուցաներ զերեսս քո յինէն , նմանեցայց այնոցիկ որ իջանեն ՚ի գուբ ։ Այսինքն , թէ ծարաւոյս զովացումն չտանես՝ և զերեսս դարձուցանես , մեռելոց նմանիմ որ իջանեն ՚ի գուբ ։

Վասն այնորիկ որպէս աստ վաղվաղակի լսել հայցէ նուաղեցելումն · նոյնպէս և անդ յասելն , * Նուաղեաց սիրտ իմ և մարմին իմ Աստուած սրտի իմոյ ։ Դու ես ասէ կեանք հոգւոյս իմոյ և առանց քո ոչ ունիմ կեանս · յաղագս որոյ խանդաղատելով փարի զաստուծով · * Բաժին իմ ասէ՝ Աստուած յաւիտեան ։ Ոչ առկաւ ժամանակս , այլ մշտնջենաւոր բաժին իմ ես ։

Այլ ասացեալ զհեռացելոցն յԱստուծոյ զստահակումն և զկորուստ , ասէ և զոր ինչ իւր բարին է ։ Այլ զայն ոչ զարքայութիւն , և ոչ զոր անդ բարիքն ընտրէ , այլ զառ Աստուած մերձիլն և զյուսալն ՚ի նա և զօրհնելն զնա · այսպէս ասելով , * Ինձ մերձենալ առ Աստուած բարի է , և դնել առ տէր զյոյս իմ · և պատմել զամենայն օրհնութիւնս նորա ։

Նա՝ ասաց թէ չկայ ինձ խնդիր և ցանկութիւն այլոց , ոչ յերկինս և ոչ յերկիր · բայց առ քեզ ցանկութիւնս իմ նուաղէ զիմ սիրտս · և դու ես իմ սրտիս բաղձանս ։ Այլ ասա ասէ , ինձ առ քեզ լինիլն բարի է · ապա աւասիկ զայն գնէ՝ զօրհնելն զնա ամիւ ։ Այլ յայլում սաղմոսի ասէ , * Շուրջ եղէց և մատուցից ՚ի խորանի նորա պատարագ օրհնութեան · օրհնեցից և սաղմոս ասացից տեառն ։ * Լուր տէր ձայնի իմում զի կարդացի առ քեզ · ողորմեա՛ ինձ և լուր ինձ զի զքեզ ասաց սիրտ իմ · և խնդրեցին երեսք իմ զերեսս քո տէր խնդրեցից ։

Իսկ զի՞նչ է զոր կարդայերն․ կեա՞նս յաւիտենից, կամ որ անդ բարիքն խնդրեցեր։ Ո՛չ ասէ․ այլ զի՞նչ։ *Զմի ասէ խնդրեցի և զայն աղաչեմ։ Իսկ ո՞ր է այն․ բնակել ինձ ՚ի տուն տեառն, և շուրջ զանգանով նորա երգել զերգս օրհնութեան։ Իսկ որպէս առաջ եմք զախորժակս մտացն յայտնել այսպիսի բանիւք, եթէ չասէ ինձ ինչ մտացս՝ բայց յայսմ իրէ․ սոյնպէս և մարգարէս յամէ հրաժարեալ զմին և եթ խնդրէ, զամ աւուրս կենացն ՚ի տան իւր բնակել․ և զնա տեսանել և օրհնել հանդերձ հրեշտակօք։

Վասն որոյ և զանենչանս յայս բերէ թէ, *Զ.քեզ ասաց սիրտ իմ․ և խնդրեցին երեսք իմ զերեսս քո տէր խնդրեցից։ Իսկ ոչ շատանայր ասել մի անգամ թէ *խնդրեցին երեսք իմ զերեսս քո տէր․ Այլ կրկնէ թէ խնդրեցից․ որպէս թէ ասել, իմ մտացս դու ես միայն․ և զքեզ խնդրեմ, և ոչ դադարեմ ՚ի խնդրելոյ։

Այսպիսի ոգի և միտս և մեք ստացցուք․ և մի ինչ նախամեծար քան զնա և զնորա օրհնութիւն համարեսցուք։ Իսկ սորա մօք խնդրեսցուք յաղօթից հայցուածն ասել զմտ, մեծաւ պաղատանօք զայս, հրեշտակային երգակցութեամբ զքեզ օրհնել, զքեզ գովել, և զքեզ փառս մատուցանել հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ջինի մաղթանք։

Սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զսուրբ հոգին․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Քարոզ՝ Երկնիքպատմեն և Տերապաւէն կանոնացն։

Վասն ՚ի գիշերի և ՚ի առանձնեան յամ ժամու խօսիլ մեզ ընդ տեառն փոքր աղաչեսցուք։ Փրկանաւ բարձրացեալ սաղմոսերգողին՝ երանութեանցն բաժանորդ լինել, խրատէ քարոզն խնդրել զի ասացեն յայս այս շնորհք․ յորժամ տեառն խորհել զտիւ զգիշեր, և զնոյն խօսել։ Ո՛չ է սոյն ասաց երանելին յովհան, թէ ․ Ի հոգևորան մէջ զգերանն բանալով՝ սրբի բերանն յամ բանից որ ՚ի սատանայէ ազդին։

Նա զի սատանայի խոկ բերան լինի՝ բերանն որ խօսի զսատանայինսն։ Նա՝ քո բանիցն խօսօղ լինելով և ՚ի նոյն ցանկ կրթելով, բնաւանոյ բերան նմանօղ բերանոյն քո. մանաւանդ՝ թէ յարդիւնս զբանն ածիցէ։

Մատն չանկանելոյ մեզ ՚ի փորձութիւն, որում ոչ կարեմք համբերել զոր աղաչեսցուք։ Զի՞նչ աղօթելի է այս՝ չլալ փորձութեանց որ մեզ չէ տանելի. զի բազումք կորեան ՚ի փորձութեանց ՚ի վր եկելոց առաւել քան զհեռեանց կարծ։ Նա մատնեցան պատկութեանց և ազգի ազգի պղծութեանց. և անկան յուրացութիւս և ՚ի հայհոյութիւս, չհամբերելով ցաւոց կամ նեղութեանց կամ սգոյ կամ աղքատութեան, կամ այլ ազգ վտանգից, կամ չար խորհրդոց արկածից։ Նա լինի այս վասն անհամբերութեան և յանձնապաստան լինելոյ ուրուք. վասն որոյ ցանկ պարտիմք յաղագս խոնարհութեան աղաչել. զի տայրեսցուք յանտանելի վշտաց. և զի որ գիտէն զմեր կարն, այնքան ածցէ մեզ փորձութիւն որքան օգտիմք և ոչ վնասիմք։ Զայն զայս գրէ կորնթացւոցն երանելին պօղոս։ * Հաւատարիմ է ած որ ոչ ածցէ զձեզ ՚ի փորձութիւն առաւել քան զկարն ձեր. այլ արասցէ ընդ փորձութեան և զելսն զի համբերել կարասջիք։ Նա տէրն յաղօթսն զոր մեզ ուսոյց՝ զայս եդ աւարտ, թէ * Մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն. այլ փրկեա ՚ի չարէն։ Որով յայտ է ՚ի կարի կարեւորայն զայս գոլ։

Մատն անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատեանին քո զտէր աղաչեսցուք։ Բիծ կոչի արատ մեղաց. և անբիծ է, այսինքն անարատ. զի որպէս ՚ի մարմինս՝ տեղի որ արատի, անպիտանանայ. և չկարէ զհուրն առ բոլոր մարմինն զպարտս վճարել. այլ և նախատանաց անուն անձինն բերէ խեղութեամբն։

Զաչացն վնասեալ կոյր կոչի, և յականջացն խուլ. յոտիցն կաղ, ՚ի ձեռացն փեցի։ Նա թէ այլ տեղի վիրաւորեալ կամ բորոտեալ, անդուստ առնու զգարշանացն զկոչումն։ Նա մինչ զամենայն, մեղ տեղւոյ ապականութիւն՝ ծածկէ զպյղոցն ողջութեան անուն, և յինքն զկոչօղսն հոյեցուցանէ, զթշնամանացն միշտ ձայնել անուն, և անտի յհուրեանց ուշի պահել և այլոց ծանօթս առնել։

Նմանապէս և յարատեալ ոգւոյն հանդերձի ըստ մեղացն զանուն առնուլ. սպանօղ, շուն, գող. և կամ թէ այլ ինչ յանդգնար գոցի, այնու որոշեալ, զանբծութիւն ՚ի բաց դնէ. և բոլոր ոգւոյն զգանցանացն դնէ զբիծ. և այնու դսրովի ՚ի մարդկանէ, և անկեալ յերեսացն տառածոյ գտանի։

Թէպէտ և ՚ի մի յանցանս գտեալ և յայլսն ուղիղ իցէ, ըստ

տուաքելոյ՝ * Ամենայն օրինացն պատուական է․ Մ՚ն որոյ հրամայէ քարոզն՝ խնդրել յայ զի անքիծ պահեսցէ զմեզ․ և զպարտաւորն ՚ի դարձ և յապաշխարութիւն ածել՝ քաւիչ լիցի․ Մ՚ի լիցի մեզ արատեալս երևիլ յորժամ գայցէ քս և ահեղին ատեանն դնիցի զոր ահեղ կոչեաց քարոզն։

Քանզի մեմ ուսաեք ահից յաճախութիւն լինի, ՚ի քն անձառափառացն և անմատնելի լուսոյն։ Քանզի հայրական գոյ փառօք․ որում և հրեշտակք ՚ի սպասու կալով յիսկզբանց մինչև ցայն օր, և ոչ մի ժամ առանց երկիւղի և դողման ՚ի փառամնայն հայիլ կարացեն․ զորս ըստ հանդուրժելոյ նոցա նոցին ցուցանէր։

Դարձեալ և ՚ի հրեշտակաց անհուն զօրացն՝ է սարսուելի օրն․ քանզի մեմ հրեշտակք սաե գայցեն ընդ նմա։ Իսկ թէ, մի հրեշտակի երևումն այնքան տագնապ հրեշտակացելոյն եբեր դանիելի, մինչև հազիւ զոգւոյ ելումն արգելուլ ՚ի մարմնոյն նոյն հրեշտակի։ Ապա քանի՞ պակուցումն մեղաւորացն իցէ յերևմանէ մեմ հրեշտակացն․ որք ահագինս հայեսցին ՚ի նոսա վասն ապստամբելոյն յերեանց տեառնէն։

Նաև կծեն այն սաստիկ տիեղերական․ քանի՞ոն անըմբերելի լինիցի․ և կամ հուրն որ առաջի տեառն գայցէ՝ մեծաւ նախանձաւորել շուրջ զթշնամիս նորա՝ որպիսի ինչ տագնապաբեր լինիցի։ Նաև չար գործոցն երևումն որքան երկիւղ և ամօթս և վտանգ ածիցէ․ քանզի իւրաքանչիւրոք յանդամոցն, զիւրոյ սխալմանն ըզկերպ աշխարհատես ցուցանէ։

Ակն՝ զյրատութն և զչարակնութն, զանողորմութեան, զանակնարկման ՚ի կարիս եղբօրն։ Օ խայտալն՝ ՚ի զգեստս և յինչս և յայլայլս և ՚ի ստացուածոց յաճախումն․ և զոչն տեսութե ապարածուցս՝ զպարարիչն օրհնել․ և զոչն առաջնորդել նորօք յընկերացն օգուտ, գործով կամ օգնականութբ, կամ մխիթարական տեսութբ և վշտակցութբ։ Օ ճչն արտասուելոյն վս իւրոցն և այլոց մեղաց, կամ վս մարմնոյ վտանգին․ զայս և զայցին նմանս կերպանան աչքն։

Նոյնպէս և ունկն՝ զանլուրն լինիլ հրամանացն այ, և զհլուն՝ անտառակ խօսից և երգոց և անիրաւ խրատուց, և զըպարտութեց և նենգութեց և բանբասանաց և այլոց պիղծ ասիցն։ Իսկ դշնդունելոյն զձայն կարեաց և վշտաց եղբօրն և զըկանաց զըկելոց, և զդատաստանաց և զատուապանաց, և որ այլ այսոցիկ նման ականջացն արատք։

Նեռանն՝ զդատարկաբանութն, զստութն, զերդման, զպղծաբանութն․ զբամբասանացն, զանիծից, զպառանջմանն, զթշնամանաց,

զառաքինութեան զլկտութն, զչարախրատութեան, զարգելլոյն զբարի խրատն, զոչ ուսուցանելոյն զօգուտն զհոգւոյ և զմարմնոյ, և ըզ չխօսելոյն յար ընդ ոք, և կամ զխտրն ընդ մարդկան։ Եւ զուրացմանն, և զխաբէութեան, և զկեղծաւորութեանն, և զանափառութեանն, և զարհամարհանացն, և այլ ևս անիրաւութիւնք բերանոյն՝ կերպաձևի յայնժամ։

Ձեռք՝ զդատարկութեան, և զոչ վաստակելոյն, և զոչ կերակրելոյն զաղքատս և զտկարս և զկերակուրս, և զոչ սպասաւորելն հիւրոց և հիւանդաց և բանտականաց։ Եւ զոչ աղաչելն զԱծ հանապազ, և զոչ համբառնալն առ նա սրբութեամբ, և զոչ փրկելն զզրկեալս, և զոչ թափելն և խաղաղել զկռուեալս։ Զգողանալն, ըզզրկելն, զարբանեկելն պոռնկութեանց և ազգի ազգի պղծութեց, զձգելն 'ի կաշառս և յանիրաւ հարուածս։ Կամ շինել կամ ժողովել ոչ ուղղապէս զիւրսն կամ զօտարս, կամ վաճառել և ցրուել անարատաբար կամ ագահութեամբ։ Եւ որ այլ գունակ ձեռաց մեղաք՝ ազգի ազգի որոշմամբք երևելեան ոք և մտ աշխարհախումբ հրապարակին։

Ոտք՝ առնուն զհանգամանս ոչ աշխատելոյ 'ի Ճանապարհս բարեաց՝ յաղօթից՝ յողորմութեանց՝ 'ի տան այ, 'ի սպասաւորութն հիւրոց, 'ի տես հիւանդաց և արգելականաց։ Այլ և ազերգանալն առ 'ի գործ և յուստմն բարութեան, և յօգնել և 'ի կարեկցել եղբարց ըստ մտ պիտոյից և վշտաց։ Եւ զընթանալն 'ի չարիս՝ 'ի գողութիւն յազգի ազգի մեղս, և 'ի պէս պէս պոռնկութիւնս և 'ի պղծութիւնս, և 'ի խարդախութիւնս և 'ի կռիւս, 'ի խաղս և 'ի թատերս և 'ի ժողովս այլանդակս և 'ի տես անառակ և պիղծ երևմանց, և հանդգանակաց և արբեցութեց. և որ այլ ոտք ևս անառակ շաւղօք գնացեալ իցէ։

Յայտնէ և որովայնն զորովայնամոլութեան տեսակս, զգունակ գունակ շուայտութիւնս և զբազմօրինակ փափկութիւնս. և ըզ յանդգնեալ պարծանօք արբեցութիւնն և զգեղխութիւնս. և մանաւանդ որ յայլոց աշխատութեանց և 'ի բազմաց կարօտ և անտես լինելն, և կամ սովամահ ևս։ Եւ որ վասն որդեծնութե է մարմին, զպէս պէս պղծալից ախտիցն և զգիջութեցն բացայայտէ զօրինակն։

Եւ ոչ այսչափ միայն, այլ և սիրտն զբազմութիւն պղծալից խորհրդոցն և զյորդութե զանազան չարեացն զոր ծովացեալ յինքն 'ի ներքս և վերաբերեաց արտաքս զմմ, ոչ զանազանութե աղէտից ազգախազգեաց, 'ի յայտ երևութե այ և հրեշտակաց և մարդկան բերէ։

Նա եւ 'ի կշտամբութիւն խորհելեացն եւ գործելեացն որպ̃ ասացն առաքեալ, * Յանդիմանել զմիմեանս 'ի խորհրդոց իւրեանց · կամ թէ պատասխանի իսկ տալ յաւուր յորում դատէ ած̃ զգաղտնիս մարդկան ըստ աւետարանիս իմում։

Քանզի խորհուրդ խորհրդոց յանդիմանիչ լինի · եւ երեւմամբ գաղտնեացն որպ̃ թէ պատասխանատու լինի · թէ այսպիսի վատթարութիւն էր՝ յոր ժպրհեցարն, եւ ինձ ոչ լուար եւ խափանեցեր։ Զի համառօտ ասացից, ըմ̃ ըստ մեղացն նկարագրին իւրաքանչիւր անդամք · որպ̃ ասաց առաքեալն թադէոս, թէ * Ոպ̃ 'ի մնդաղաթի կերպարանիլ անձնիւր գործոց։

Կամ որպ̃ սուրբ լուսաւորիչն զգաւրուննն 'ի գալուստ քն̃ օրինակեալ, ցուցանէ զքարի ցուցմամբ քարեաց՝ բուսովք անկովք ծաղկովք հոտովք, համով մրգոցն եւ երեւմամբ բիւրազգի ծաղկաց եւ որ 'ի նոցանէն հեշտութիւնք աչաց եւ քմաց եւ ճաշակելեաց։

Իսկ զմեղացն յայտաբերումն՝ զանազան փշովք եւ տատասկաւոր բուսովք · յորս ասէ, * Ընդ քեզ բուսանիցին զորս ընդ քեզ թաղեցեր, արդարութիւնքն կամ մեղքն։ Նա եւ առաքեալն պօղոս զայն իսկ վկայեաց յասելն վասն մեռոց թէ՝ * Եւ որ այլ ազգ ինչ իցեն, թաքչել ոչ կարեն։ Նա դարձեալ վասն բոլոր չարեաց կերպարանելով 'ի մեղաւորս՝ ասէ, * Մի կերպարանիք կերպարանօք յոր ինչ աշխարհս այս · այլ որ նորոգմանն է։

Նա զմեղօք կերպարանիլն՝ հին մարդ կոչէ · զոր մերկանալ հրամայէ եւ զնորն զգենուլ որ ըստ այ̃ն հաստատեալ է արդարութբ̃ եւ սրբութբ̃ եւ ճշմարտութբ̃։ Նա ապա զիւրաքանչիւր անդամն զհին մարդոյն զոր մերկանալ հրամայէ՝ համառօտ բանիւք յայտ բերէ։

Զայն եւ յայլում թղթի գրէ, * Թլփատեցարուք զանձեռագործ թլփատութիւն 'ի մերկանալ զանդամս մարմնոյ ձերոյ թլփատութեամբն քն̃ · Նա տասցեալ նդ̃ զհին մարդն մերկանալ գործովք իւրովք, յաւելու 'ի նոյն · * Եւ զգեցարուք զնորն նորոգեալ 'ի գիտութի̃ ըստ պատկերի արարչին իւրոյ։ Զի ոչ միայն զհնացեալ մեղօք անդամն չմերկանալն դատապարտէ, այլ դատապարտին եւ այնոքիկ որք զնորն ոչ զգենուցուն · եւ ոչ 'ի կերպարանս արարչին նկարագրին։

Քանզի եւ յիմար կուսանքն ոչ զի պոռնկութեան ունէին ըղ̃ կերպ՝ արտաքսեցան յառագաստէն եւ զրկեցան 'ի փեսայէն, այլ զի զողորմածութեանն զարդ ոչ ունէին յանձինս որով ընդ առաջ ելանէին փեսային։ Նա ձախակողմեանքն ոչ զայծից թխութեան ունէին նշանութի̃ վասն այնր, զի զգթութեան եւ զայլոց մտաւուց կրէին զարաս յանձինս, այլ զի ողորմութեան պատկերսն՝ իւրեանց արարչին ոչ էին նմանեալ։

Արդ որ մեղացն կերպարանաւ անդր փոխին, և որք զարդա-րութեան ոչ զգենուն զմարդկան առաջին դատապարտն լինել կրեն. որպէս և ասէն առաքեալ, * Զի ամ̃ բերան խցցի և դատապարտ լիցի ամենայն աշխարհ Աստուծոյ:

Արդ՝ աշխարհ զմեղաւորսն և զոչ արդարացեալսն սովոր են կոչել գիրք. զորոց խնուլ ասէ զբերանս և դատապարտս ն̃յ լինել: Որպէս 'ի ձախուն կայն, որ վ̃ն անօրէնութե խցան բերանքն. կամ ծառայքն որ զտաղանդն թաքոյց: Եւ ոչ այնորիկ որ ազատեալ հանդերձ զգեցեալ էր 'ի հարսանիսն, այսինքն՝ 'ի մեղս կերպացեալ մարմնոյն:

Արդ զի մի՛ ինչ մեզ այնպիսի դիպեսցի՝ հրամայէ քարոզն ա-ղաչել զա̃ծ զի շնորհեսցէ զամ̃ բիծ բնաւ անդամոց մերկանալ, և բոլորովին 'ի պատկերն ք̃ն կերպանալ: Եւ անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենի նորա:

Որպէս զի՝ ոչ մեղացն բիծ արատաւորս զմեզ ցուցցէ կամ ար-դարութեան պակասութիւն դատապարտեսցէ: Արդ զի անբիծ 'ի մե-ղաց լեալ և աննուազ յարդարութե փառաւորց առանց կշտամբա-նաց և անդատապարտելիք լեալ, յերկիւղէն մեծէ և յամօթոյն ան-բաւէ և յանվճարելի տանջանացն զերծեալ, զանեզրական կեանսն անպատում պարգևօքն շահեսցուք յահեղ ատենին որ այսպէս է որպէս ասացաք:

Վասն առաջնորդելոյ մեզ 'ի նաւահանգիստ կենացն ա̃ն, զՏէր աղաչեսցուք: Բազում անգամ խնդրէի 'ի միտս իմ էր աղա-գաւ ոչ զայս առուն եղեալ նախ որ յաշխարհէս էր կամարար լինել ն̃յ, և ապա զանբիծ և անդատապարտն կալ 'ի հանդերձեալ ատենին.

Իսկ այժմ թերևս հասի պատճառին շնորհօք ն̃յ. զի որպէս 'ի սաղմոսէն օրհնութե և պահպանութեան խնդրելով՝ յարէ 'ի նոյն, * Մի՛ տար 'ի սասանութի զոտն քո. և մի՛ ննջեսցէ պահապանն քո.

Արդ որպէս և աստ զանբիծն և զանդատապարտն լինել հայցե-լով՝ ցուցանէ թէ որով օրինակաւ այն լինիցի. եթէ աղօթիւք խնդ-րելի է 'ի տեառնէ առաջնորդել մեզ յայն ճանապարհն որ 'ի կամս ն̃ր հանգուցանէ զմեզ: Եւ մեք ևս ճանապարհորդեսցուք 'ի նոյն. զի առաջնորդել՝ ոչ որոց արձանացեալ կան, այլ որ գնան 'ի փա-փագելիսն երթալ, նոցա են պէտք:

Եւ զի որք գնան 'ի շաւիղս արդարութե և 'ի նաւահանգիստ կամացն տեառն հասանին՝ ն̃ց է անբիծս և անդատապարտս երևել յայնմ ատենին: Վասն այնորիկ զփափագելիս անբծութե 'ի դէմս ածեալ, զճանապարհն և զառաջնորդօղն որ այսմ հասանել տանէ, հայցել հրամայէ:

... Այլ եթէ զի՞նչ օրինակաւ զկատարելութիւնն քո՝ նաւահանգիստ կոչէ։ Ո՛վ որչափ արտաքոյ կամացն քո լինին մեր ոգիքս, որ ՚ի ծովու ալեկոծիմք աստի անտի մրրկօք և պէս պէս ցանկութեամբք, անթիւ հոգով և զանազան արտմութեանց արկածիւք։

Իսկ շնորհիւն քո առաջնորդեալ և ՚ի կամս նորա, դադարումն լինին ամ հոգւոցն հոգւոյ որ զոգիսն միաւեն։ Քանզի չկարէ ցանկութիւն մարմնոյ շարժել զհաստատեալն ՚ի կամս քո։ Վասզի և ոչ կարիք մեղացն յաղթակսին. այլ խափանեալ լինին շարժմունք նր. և իբրև ընդ վիմի հարեալ՝ խորտակեալ ընդ կրունկն դառնայ։

Այլ ոչ հոգք որ վասն աշխարհիս, և կամ վասն մեծանալոյ, և կամ վասն ընտանւոյ իսկ հարկաւորացն աղագաւ զնա հեղձուցանէ. զի քո հաստատեալ լինի զգեստս հոգւոյ և մարմնոյ. և օգուտ զայն գիտէ զոր նոյն առնէ. և անարատ և խնդալից լինի միշտ։

Այլ ոչ երկիւղ զնա սասանէ ուստեք. այլ նման լերին անխախտելի է սիրտն քո՝ ըստ գրեցելումն, *՚Ի բաց լեր յանիրաւէ անտի. և դողումն ՚ի քեզ ոչ մերձեսցի։ Եւ՝ *Ո՛չ երկեայց ՚ի չարէ, զի դու ընդ իս ես։ Եւ եթէ՝ *Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց. տէր ապաւէն կենաց իմոց ես յումմէ դողացայց։

Ո՛վ թէ որք մարդկան ըստ կամաց հաճոյանան ծառայք, անհոգ և անլլուկ իւրեանց ստանան կեանս. ապա քանի՞ աներկիւղ և անհոգ և ազատ կեանս նոցա իմանիցես՝ որ մարդասիրին քո ըստ ամենայն կամաց հաճոյ լինին, վասն որոյ ասաց մարգարէիւն իւր. *Ահաւասիկ որք ծառայեննն ինձ, ցնծասցեն ուրախութեամբ սրտից։

Արդարև մեծ և անպատում ուրախութիւն է այն, յորժամ սրտիւ կատարեալ քո գիտէ զանձն. և վստահացեալ ՚ի նա լինի իւր ամ օգնի և պահպանից։ Արդ իս՝ և հանդերձելոցն, վասն այնր նաւահանգիստ կոչէ քաղաքն, և յորդորէ խնդրել ՚ի տեառնէ զի առաջնորդ առ այն լինիցի։

Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն և երկնից արքայութեանն զՏէր աղաչեսցուք։ Այն է վերին կոչումն, *Եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի։ Վասն զի ՚ի վեր յերկինս կոչէ և տանի. և անդ ժառանգս առնէ իւր ամենապատրաստ թագաւորութեանն, զոր արքայութիւն կոչէ, զոր և ի սկզբանց պատրաստեաց։

Բայց մեք տեսցուք զպարգևս մեծութիւն, ոչ որքան են. զի այն հրեշտակաց անհնար է, թող թէ մարդկան. բայց որքան փոքրկութիւն մտաց մերոց կարէ ձգել յիմացումն։

Յորժամ կոչող՝ քո միածին որդին իցէ, և առ իւր հայրն կոչիցէ, և օրհնեալս ՚ի նմանէն անուանեսցէ, և զիւր թագաւորութիւն

նոցա խոստանայ, ոչ տալ միայն, այլ և ժառանգեցուցանել. այսինքն սեպհական նոցա առնել որպէս և իւրն է սեպհական։

Այլ եթէ որդին այ զայն ունելով թագաւորութիւն ած է, յայտ է թէ և սոքա որ զնոյն ժառանգեն թագաւորութի՛ն ածային. յաղագս այսորիկ շնորհացս է զոր աղաչել քարոզն միաբանէ։

Այլ զի երկոքեան այս պարգևք, անբիծ և անդատապարտ 'ի մեծի աւուրն երևելն, և արժանի լինել վերին կոչմանն, յայնժամ լինի՛ եթէ 'ի նաւահանգիստ կամացն այ առաջնորդեսցիմք. Յայս սակս զայս 'ի մէջ երկոցունցն դնէ. որոյ արժանի արասցէ զմեզ ողորմութեանն քո շնորհքն, ամէն։

Աղօթք՝ Երկնիքպատմեն և Տէրապաւէն կանոնացն.

Ի գիշերի և 'ի տունջեան և յամ ժամու առ քեզ կարդամք մարդասէր տէր։ Աստանօր զկարդալն առ այծ՝ ցուցանէ պատճառ լսելոյն՝ և զայս մարդասիրութի. ոչ զուղիղ վարս և ոչ ըղ բարեաց գործոց յոլովումն, այլ զի զտիւ և զգիշեր յամ ժամու առ քեզ կարդամք, և զամ պէտս քեզ ծանուցանեմք. և խնդրեմք պարգևել մեզ, յուսացեալք յայն՝ զի մարդասէր ես։

Այլ զի՝ որչափ դեգերիմք առ քեզ 'ի կարդալ՝ անարժեսս. չէք ժամ գիշերի կամ տունջեան որ անպատշաճ լինի աղաչելոյն զքեզ։ Զի ոչ ես մարմնաւոր տէրանց նման, որք ժամանակ պատշաճ խնդրեն, կամ յամենայն մեղադիր լինին։ Այլ յամ ժամու կարդալն առ քեզ՝ հաճելի է քեզ, և յաճախել զօգտակար խնդիրն գովելի, և յամենայն յաջողթս առաւել բաղձանս. քանզի մարդասէր տր ես։

Այլ սաստկութիւն գթոց քոց, առաւել պատրաստ առ 'ի լսել առնէ զքեզ յորժամ և կարդասցեմք։ Այլ զօգտակարն մեր առաւել ցանկաս տալ՝ քան մեք առնուլ. և յամենայն առ քեզ յայտ կարօտիս անկարօտ քս բնութբդ. Այլ զայս մեր գիտացեալ, երբ կամիմք՝ կարդամք առ քեզ 'ի գիշերի և 'ի տունջեան։

Տուր մեզ ած փրկիչ մեր։ Դարձեալ այլ պատճառս դնէ լսելութեան. ած մեր ես ասէ, և դու ստեղծեր զմեզ. և արարչի առ արարածս բազում է խնամակալութիւն.

Այլ և փրկիչ մեր ես՝ որ մարմնանալովդ քո և մեռանելովդ՝ փրկեցեր զմեզ 'ի չարէն որ վաճառեաց զմեզ մեղաց, և դատապարտ արար զմեզ անիծից և մահու և ապականութե։ Այլ զի որինչ վասն մեր եղեր 'ի վերայ մեր կրեցեր՝ ողորմել մեզ 'ի քեն առնէ։

Խոնարհեցո՛ զունկն քո ՚ի խնդրուածս մեր։ Մ՛ի թէ ուրոյն ուրոյն զգայութիւք լսէ Ա՛յ, և միտ լսէ՞ և միւսն տեսանէ՞ և այլ ումեմն հօտի՞, քաւ լիցի։ Եւ կամ թէ ոչ ՚ի վայր խորհի ՚ի լսելութիւն, չառնի՞ նմա զոր ասեմքն։ Օ՛ն անդր, իբրաց թողցես որ ինչ մարմնոյ է. զի Ա՛ծ՝ ամիս լուր է. ամիս տես է. ամենայնիւ քան է։

Որպէս ասաց մեր տէր լուսաւորիչն, և յա՛մ տեղիս մօտ է. և ա՛մ գիտելի է նմա. խորհուրդք, և բանք, և գործք։ Այլ մեք ՚ի մերոց աստի խօսիմք ընդ նմա. ասեմք՝ զարթիր ընդէ՞ր ննջես՝ անքուննկանն։ Երբ ասեմք այնմ, որ ոչ ունի բնաւ պէտս նշանաց. առզզէն և զասպար քո ասեմք նմա, որ ոչ է կարօտ զինու։ Ըստ այսմ օրինակի ասեմք և խոնարհեցուցանել զունկն, և բանալ զաչս, և առաքել զձեռն ՚ի փրկութի՛, և զնետսն ձգել ՚ի ցրումն թշնամեաց. և այսու ամենայնիւ զկամսն մաղթեմք։

Նա և ՚ի մարդկան սովորութի՛ այսպիսի իրս գտանեմք. խնդրեմք ինչ, և չկամին տալ, չլուաւ ասեմք. թէպէտ և լուեալ իցէ. և ՚ի տալն զխնդիրն, ասեմք լուաւ։ Ո՛չ զայն ցուցանեմք թէ յականջսն աղդեցաւ ձայնն, այլ թէ կամացն ընդունակ եղև։ Այնպէս և աստ զկամսն ընդունելի՝ կոչեմք ունկն Ա՛յ. ՚ի խոնարհումն ՚ի մեր խնդրուածս, և զայն մաղթեմք։

Բազում անգամ առաջի աչաց ուրուք աղաչանս արարեալ ասեմք՝ տե՛ս զաղաչանս։ Եւ ՚ի լուր ականջաց խօսիմք, ասեմք՝ մի՛ անլուր լինիր, այլ մատո առ իս զականջդ. զայս խնդրելով, զի կամք նորա դարձցին ՚ի մեզ։ Եւ թէ լինիցի այն, և խոստանայ զխնդիրն, դառնալ ասեմք կամացն։

Բայց իմասցիս և զոր ինչ մարմնապէս բանն առնու յԱծայինսն. ոչ զի զքոյսդ ՚ի նմա նկարեսցես, այլ զի քոյովդ զնորայոցն գիտութիւն առնուցուս։

Զի մի՛ ընդունայն լիցին վաստակք ծառայից քոց։ Զի է տաժանելի է՛ բնութիւ և վաստակի յաղաչելն. և զի ծառայք քո եմք՝ մի՛ ընդունայն առներ, այսինքն անօգուտ։

Այլ համարեա՛ զաշխատութիւն մեր գործս արդարութեան։ Զայս ասէ, զոր աշխատիմք ՚ի կալն առաջի քո յօրհնել և յաղաչել, համարեսցիս արդարութիւն գործել, և պտուղ Ածպաշտութե՛ բերել. և թէ և այլ ինչ արդարութիւնս չունիմք։

Քանզի թէև բարի ինչ ՚ի վերայ մեր գտանիցեմք, պարտիմք հանել ՚ի մտաց, և մեզ ողորմութեն Ա՛յ՝ զպարգևսն Ա՛յ համարեսցուք։ Զի որ յաջողէն մեզ զկամսն և զառնելն զբարին՝ Ա՛ծ է. և մեր նորա զա՛մ համարել, խոնարհ հոգւով առ նա կարդասցուք. որպէս և

աղօթիցս վարքն մեր ամ̃ խոնարհութբ̃ · զոր և ցուցաք մի ըստ միոջէ , և ցուցցուք յառաջիկայիցս ։

Ընկալ տէր զաղօթս և զերկրպագութիւնս մեր , և հատո մեզ զողորմութի քո առատապէս ։ Ողորմելն ոչ է պարտուց որպէս տա-ցաքն · այլ 'ի կարեկցութէ և 'ի վշտակցութէ ։ Իսկ արդ զի ես եմ տալ կարեւորն վշտաց՝ ընկալեալ զոր աղաչեմքս երկրպագութեամբ · հատո առատապէս զողորմութիւն քո ։ Քանզի գիտես զպէտս մեր զհոգւոյ և զմարմնոյ , ողորմելով առատացո զամենայն ։

Ծածկեա զմեզ ընդ հովանեաւ աջով քով ։ Զի թէ և առատասցիս առ մեզ ողորմութե պարգեւօքդ , չէ ինչ մեզ օգուտ , եթէ ոչ քո խնամակալութբ̃ պահպանեսցես զմեզ , զոր աջ կոչէն գիրք ։
Քանզի և ադամ պատուական էր , այլ անխիղճ եղեալ՝ հաւասար անասնոց և նման նոցա գտաւ ։ Իսկ և սողոմոն ամ̃ իմաստութբ̃ և շնորհօք լցեալ , այլ կանամբքն կողոպտեալ եղև 'ի շնորհացն ։
Կոչեցաւ յառաքելութի և յուդաս , և յառաջին դասն աշակերտացն թուեցաւ · և զգանձապահութիւն ունէր , և մի յերկոտասան աթոռոցն նորա էր · այլ անկեալ յերանութեանցն եղկելի ամենեցուն եղև , չարին տուեալ տեղի ։
Վասն այնորիկ և աղօթիցս բան՝ ոչ միայն զի ողորմելոյն առատապարգև լիցի 'ի մեզ մարթէ յոյժ , այլ և զի նովին պարգևօքն ամուրս և անդրդուելիս զմեզ արասցէ · վասն որոյ և յարէ 'ի նոյն ։

Արա՛ առ մեզ նշան բարութեան ։ Զոր և դաւիթ հայցէր զօրաւոր առնել նշանաւն բարութե · զի տեսցեն ատելիքն և ամօթով լիցին դարձցին · և մեք երրորդութիւնն փառաւոր լիցի մերով փրկութբ̃ն ։ Քանզի զայս յայտ առնէ յարելն 'ի նոյն ,

Ի փառաբանութիւն և 'ի պատիւ սուրբ երրորդութեանդ · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Հովիւ քաջ , հովիւ բարի և յաւիտենական , նայեաց և այց արա բանաւոր խաշին անօթի քոյ զոր ժողովեցեր առ քեզ գթութեամբ քով ։
Քաջ հովիւ է որպէս ինքն ասաց · զի զանձն իւր եդ 'ի վը հօտի իւրոյ , ոչ խնայել զանձն և ոչ զանգիտել 'ի մահուանէ ։ Իսկ յաւի-

ամենակալն է, ոչ պատուումն ունելով. զի առանց անցանելոյ ունի ըզ հոլովութիւն և դքահանայութիւնն : Արդ մաղթէ աղօթիցն բան, չդարձուցանել զերեսս վասն մեղաց. այլ նայել և խնամ տանել բեկելոյն, վիրաւորելոյն, մոլորելոյն, տկարացելոյն :

Ո՛վ այցելութի, խնամակալութի կոչի. և զի նոյն գութ որ ՚ի ցամանէն և յօտարանալոյն ՚ի քէն, ժողովել զմեզ սախալեաց, նոյն և այժմ ՚ի խնամակալութի զմեօք դքեզ ածցէ : Քանզի յամ տիեզերաց ՚ի մի միաբանութի հաւատոյ ժողովեաց ըստ գրեցելումն, *Յամ գաւառաց ժողովեաց զնոսա, յարևելից և յարևմտից, ՚ի հիւսիսոյ և ՚ի ծովէ : Այս ասէ,

Ո՛ր առաջի կամք տէր, և առ ՚ի քէն ողորմութեանցդ ակն ունիմք : Զունիմք ասէ ՚ի վարուց համարձակութիւն. այլ առաջի կամք՝ ցուցանել զմեր աղքատութիւնս, և ողորմել ակն ունիմք : Որպէս ասաց մարգարէն, *Նայեա առ իս և ողորմեա ինձ, զի միամօր և աղքատ եմ ես : Այլ խնդրեմք օրհնել զմեզ, իմաստուն առնել հոգևոր իմաստութեան, լուսաւորել լուսով գիտութե քոյ, և տալ մեզ զերկնից արքայութիւն քո. այսպէս ասելով,

Ո՛ ամենաեան օրհնեա, զամենաեան իմաստնացո, զամենաեան լուսաւորեա. և ամենեցուն պարգևեա զերկնից արքայութիդ. զի դու ես տէր կենաց և մեծ ողորմութեանց. և քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն :

Ասանիմք զայս այսու թէ, խոնարհութե պարտիմք խնդրել յքոյ, և յողորմութե միայն յուսալ : Ո՛վ դու ես կեցուցիչ, վասն այնր խնդրեմք. զի այսպէս ունի բանն. Զի դու ես տէր կենաց և մեծ ողորմութեանց. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն :

Մաղթանք.

Աղաչէրի և ՚ի առունջեան և յամ ժամու անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զսուրբ հոգի. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն :

Քարոզ՝ Մի նախանձիր և խստասրտեան կանանց.

Վասն ուղղելոյ զգնացս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։ Զինչ է ուղղել զգնացս. մանաւանդ զճանապարհն ասաց սէրն. և պատուիրեան օրէնքն, մի յաջ խոտորիլ և մի յահեակ։ Իսկ սողոմոն ասէ, *Է՛ ճանապարհ որ թուի մարդկան ուղիղ. բայց կատարածն հայի յատակս դժոխոց։ Իսկ սաղմոսանուագն և 'ի ճանապարհին իսկ որոգայթ եդեալ ասէ, *'Ի ճանապարհ յոր և գնայի՝ եդաւ ինձ որոգայթ։

Ո՛ն տուեալ, եթէ տացէ մեզ՝ ըստ իւրաքանչիւրոցն պատմեսցուք։ Ընձուկ է ճանապարհն այն աշխարհաւորաց. նախ՝ զի ոչ անխարժեն զառաքինութիւն, այլ զլայն և զմեղկ կեանս սիրեն։ Ընձուկ ասի դարձեալ, վասն զի նուրբ է. և սաստ և անսաս ոչ ուղիղ գնացելոցն ունի զոտնառութ 'ի կորստեան վիհն. այս իսկ է զոր ասեմս։

Խոտորումն է պոռնկութիւն յուղիղ ճանապարհէն. խոտորումն է և պարծիլ 'ի կուսութիւն և խոտել զամուսնութիւն։ Այս է զոր մեզն պատուիրեաց՝ չխոտորիլ յաջ կամ յահեակ։

Դարձեալ՝ խոտորումն է որովայնամոլութիւն յահեակ. խոտորումն է և պարկեշտին յաջակողմն, եթէ պիղծ զկերակուրսն համարեսցի. խոտորումն է բարկանալն։ Խոտորումն է և չխնդրել զվրէժ զրկելոցն, հեզ առ զրկիչսն լինելով. խոտորումն է աննուէրն լինիլ. և յայտ խոտորումն է 'ի զրկանաց և 'ի յափշտակութենէ ընծայել աստուծոյ, կամ զխոստմն, կամ աղաչաւանօք։

Իսկ զինչ այլն. չաղօթելն չար է։ Իսկ վասն չարի ուրուք, և վասն անձին փառաց և մեծութեան, և ընդ իսկ վս՟ երկրայնին իրաց, կամ ոխս ումեք պահելով, և կամ թէ 'ի ցոյցս մարդկան աղօթեսցեսք, կարի վտանկաւորք են այսոքիկ։

Զհաղորդիլ 'ի մեր խորհրդոյն, զյաւիտենականն բերէ զմահ. և խզձիւ հաղորդիլն, քան զերեանն առնէ պարտական։ Այն և այլ այնպիսիք որք վտանգն երկոցունց կողմանցն. ոչ և նուրբ է ճանապարհն և դիւրագայթ։

Իսկ ըստ սողոմոնի որ ասէ, *Են ճանապարհք թուին մարդկան ուղիղ, և կատարածն հայի յատակս դժոխոց։ Որպէս սաւուղին, որ պատարագօքն կարծէր հաճոյ լինիլ այ, և այնու անարգիչ բանին այ եղև. ողորմիլ կարծելով չսպան զագագ, և զրկեցաւ 'ի թագաւորութենէ։ Նա և յեփթայէ բարեգործել կամելով, պատարագ դուստրն արեան գատանէր. և որ զմարգարէն ոչ կատաւփեաց, վրիժապարտ գտաւ։ Համարեցաւ հերովդէս ուղղութեան զանսուտ մնալ

յերդմանն , և մարգարէասպան եղև ․ այսպիսիք բազում ինչ եղեն և լինին մինչև ցայսօր ։

Բանիք են որ երդնուն վասն չարիս գործելոյ ․ և պահելով զերդումն , անհնարին չարեաց պատուհասք գտանին ։ Որչափ մարդիկ զատանին յամուսնացն առանց նոցա կամաց ․ և ինքեանց և նոցա պատճառս չարեաց լինին ։

Բազումք են , քահանայ կամ կրօնաւոր լինիլ լաւ համարին ․ և յատակս դժոխոց զինքեանս և զայլս առաքեն ։ Յոլովք և զայնցանորս բանբասել լաւ համարին ․ և որով դատեն՝ դատելոց են ըստ բանի տեառն ։

Եւ զի կարի բազմանայ բանս՝ զայսոսիկ զա̃մ ասելով զպատճառսն յայտնել , 'ի միւսն եկեսցուք զոր դաւիթն ասաց որոգայթս եդեալ 'ի ճանապարհին ։ Այս է՝ յաղօթս 'ի պահս և յողորմութիւ և յայլ բարեգործութիւն ամբարտաւանիլ կամ սնապարծիլ , կամ այլոց գեր 'ի վերոյ ելանել ․ որով և փարիսեցին սնավաստակ եղև ։

Արդ՝ քանզի այսքան և առաւել քան զայսոսիկ սխալանք են ճանապարհաց մերոց , հրամայէ քարոզն միաբան աղաչել զա̃ծ , ուղղել 'ի ճանապարհս արդարութեան զգնացս մեր ․ այսինքն՝ ստուգութիւն որ անթիւրին է անխոտորն և անգայթակղն , որ երանելի առնէ զանբիծն 'ի ճանապարհի ։

Եւ այս ուղղի աղօթիւք և երկնչելով յա̃յ ․ քանզի գրեալ է , * Ով է մարդ որ երկնչի 'ի տեառնէ , օրէնսդիր առնէ զնա 'ի ճանապարհի յոր և հաճեցաւ ։ Զի զօրութիւն է տէր երկիւղածաց իւրոց ․ և զկտակարանս իւր ուսուցանէ նց ։ Յուցանէ ընդ որ պարտ է գնալ , և զօրացուցանելով 'ի գնալն ։ * Եւ երանին որ երկնչին 'ի տեառնէ և գնան 'ի ճանապարհս նր ։ Զի հրեշտակաց իւրոց պատուիրեալ է պահել զերկիւղածս ա̃ն յա̃մ ճանապարհս նր ։ Որք 'ի բազուկս իւրեանց բարձցեն և չտայցեն զքարի հարկանիլ ոտից ։ Այլ աստի և անտի բանակք հրեշտակաց շուրջ լեալ պահեն մինչև յանքոյթ նաւահանգիստն հասուցանեն ․ ըստ գրելումն թէ՝ երկիւղածն անցցէ ընդ ա̃մ , այսինքն՝ ընդ ա̃մ որոգայթս սատանայի անցցէ , և ոչ միով իւիք վնասիցի ։

Վասն ցրելոյ զա̃մ չար խորհուրդս 'ի սրտից մերոց զտէր աղաչեսցուք ։ Բիւր ազգ են խորհրդոցն անմաքրից , որ խռովեցուցանեն զոգիս մեր ։ զոր գտակն չարեաց հակառակ մեզ իմացաւ ։ Զոր եթէ կամի ոք՝ հաւաստեաւ ուսցի 'ի գրոցն եւագրեայ , որ աղօթիւք յազգս ազգս զբաժինսն ցուցանէ ․ որովք զօրանայ խարդախութիւն չարին 'ի մղերգան ։

Իսկ փոյթքն յառաքինութիւն՝ արմատակից առնեն զմեզ յանձանց իւրեանց. և գնայ ամօթալից այն, որ ծուլանայ ՚ի բարիս առնելոյ. և զհեշտացն ախորժական ընտրել տայ ազգի ազգի պատճառաւ. Սրով և զհայհոյութիւն խօսելով ՚ի խորհուրդն, և զանգիտել և լքանել ՚ի հոգևոր պատերազմէն տայ. Արիութիւն խաւարեցուցանէ և համբերութեան մեղկէ. որ յորովայնին բանութիւն գերէ, և ՚ի փառացն ցանկութիւն գրգռէ. և ամբարտաւանութիւն և ամբարհաւաճութիւն յերկից կործանէ.

Զայսոսիկ և զսոցին նմանս՝ առաքինացեալքն ՚ի բաց մերժեցին յանձնէն. զողորմն զՔս յինքեանս բնակեցուցին. Մանաւանդ որ խոնարհքն հաստատի իցեն. զի նոքա դիւրաւ յաղթեն այնմ, որ ամբարտաւանութեամբն կործանեցաւ, և կործանեաց սովիմբ զմարդն. Զի Աստուած որ հակառակն կայ ամբարտաւանից, նա տայ շնորհս խոնարհաց, առ ՚ի յաղթութիւն չարին խորհրդոց. Յայս և քարոզն յորդորէ յասելն,

Վասն ցրելոյ զամ չար խորհուրդ ՚ի սրտից մերոց զՏէր աղաչեսցուք. Մի՛ ասէ յանձինս ապաստան լիցուք. այլ խոնարհութեամբ զԱստուած աղաչեսցուք օգնել տկարութեան մերում, ընդ դէմ հնարից սատանայի. ցրեսցէ ՚ի սրտից մերոց զարկածս առ ՚ի նմանէ. Եւ ոչ տացէ թոյլ արդիւնս առնուլ սերմանցն զոր նա ՚ի մեզ սերմանէ. այլ անդէն հեղձուցանիցէ. Եւ եթէ արմատ ինչ առեալ իցէ, արմատաքի խլեսցէ, և զբարին ՚ի ներքս սերմանեսցէ և տնկեսցէ. զոր և յաջորդաւն ցուցանէ.

Վասն պարգևելոյ մեզ առողջ խորհուրդս և առաքինի վարս զՏէր աղաչեսցուք. Եւ ո՞ր են առողջ խորհուրդքն. որ ընդ դէմ մեղացն վարին. Զի չար խորհուրդքն հիւանդարար ոգւոցն են. և բարիքն՝ առողջացուցիչք. Եւ զոր օրինակ մարմնոցն ըստ իւրաքանչիւր ախտից հակառակօքն լինի դիւրելն, ջերմն ՚ի ցրտէն՝ և հովն ՚ի տապացուցչէն. Մաղձքն որ այնդեն զընութեն., ՚ի լուծականացն և ՚ի վեր և ՚ի վայր հանողացն զնոսա բժշկարին ՚ի դեղոցն. Այնպէս և մեղաքն կծուագոյն՝ զընդդիմակն առնլով, այնպէս վայրագայիլ սահպէ.

Սմին նմանութեամբ յոգիսն է տեսանել. ախտ բարկութեան՝ հեզութեամբն առողջանայ. և ամբարտաւանութիւն՝ խոնարհութեամբ. որկրամոլութիւն՝ պարկեշտութեամբ. պոռնկութիւն և յայրատութիւն՝ անխայութեամբ մարմնոյ. Ընչասիրութիւն և ագահութիւն՝ սակաւապէտութեամբ մարմնոյ, և զարհամարհելովն ընչից և զաղքատութի սիրելով.

չարս և առ բարիս. և մեք զայս գիտելով կարդալ առ քեզ յամե-նայն ժամ վստահիմք։

Եւ մեք զայս ես պաղատիմք. զի տացես մեզ խնամել զհոգւոց և զանբաւ տէրութիւնդ քո. և որչափ 'ի կարի մերում է՝ երկիւղիւ կեալ 'ի ծառայութեան քում։ Ճանաչել զանոխակալ գթութիւն քո և զանչափ մարդասիրութիւնդ և զանբաւ խնամակալութիւնդ, և փոխա-դարձել զմերն առ քեզ զսէրն որքան է կարողութի մեր։ Ս՛ա այ-սորիկ յետ զամենակալութի նորա և զառ ամենեսեան զխնամակալու-թիւն ասելոյ, անդէն դնէ զայս։

Շնորհեա՛ մեզ երկիւղիւ 'ի պաշտօնս քո կանխել զօրհանա-պազ. սիրել զքեզ յամենայն սրտից և 'ի բովանդակ մտաց և 'ի զօրութենէ մերմէ։

Եւ զի ասաց տէր և թագաւոր և արարիչ ամի, և զի թագա-ւորաց և տերանց պաշտել 'ի ծառայից օրէն է, և արարչի սիրել 'ի ստեղծուածոց։ Աւասիկ զկեալ և զխնամս և զդարմանս գտանեն 'ի նորայն սիրոյ անքակ մնալ. վասն այնորիկ զսոսա հայցեն, առաջին և մեծ պարգև գիտացեալ զերկիւղիւ ծառայելն նմա։ Զասէ թէ սէր, այլ թէ՝ շնորհեա՛ մեզ, այսինքն՝ թէ պարգևեա՛։

Իսկ կանխելն, թէ անխափան և անդադար յերկրաւոր պատաղ-մանց 'ի պաշտօն քո ժամանել։ Եւ պաշտօն՝ ոչ միայն փառաբանու-թիւնն նմա է, այլ և բովանդակ նորա ծառայութիւն. զի և մարդկան ծառայութի պաշտօն կոչի։ Որպէս զսուրբ լուսաւորչէն ասէ պատ-մութիւն յերթալն առ տրդատ, թէ զանձն 'ի ծառայութի տուեալ պաշտէր առաջի նորա։

Եւ 'ի տեառնէ լսեմք զայսպիսի ծառայէն որ յագարակէ գայ-ցէ. ասել տեառն իւրոյ, * Գօտի ածեալ պաշտեա՛ զիս մինչև կերայց և արբից ես։ Եւ զինքենէ ասէ Տէրն, *Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ՝ պաշտել։ Որպէս թէ ասիցէ ոչ եկն ծառայութիւն առնուլ, այլ՝ ծառայել։

Զոր մարգարէն 'ի վաղուց գուշակէր, արդարացուցանել զարդարն որ մատուցեալն ծառայեաց բազմաց։ Այն 'ի հաստատակաց սովորութենէ ասի. երբեմն այս անուն 'ի ծառայութե է և երբեմն 'ի պաշտելութեան։ Արդ՝ աղօթիցն բան զայս հայցէ, երկիւղիւ 'ի ծառայութեան կանխել. բստ Դաւթայ՝ * Ծառայել Տն երկիւղիւ։

Իսկ զօրհանապազ, թէ յամ օր. զի և ծառայն փութայ զամ աւուր ծառայութիւն 'ի կանգուն ունել։ Այս եթէ պղերգի եր-բէք, բարկացուցանէ զտէրն և հազիւ ապրի 'ի պատուհասէ յորում աւուր ծուլայ. թէ և յանցեալ աւուրսն առանց հեղգութեան ծա-

ուսեալ իցէ։ Նաև ՚ի տեառնէ մերմէ ուսեալ և հանապազ արթ-նութեան պատուէր առաք և գօտեպինդ ծառայութեան․ վասն այ-սորիկ ցանկ զնոյն աղօթեմք։ Նաև երկիւղիւ յարմարեալ ՚ի ծառայ-ութեան, ՚ի բարձրութիւն սիրոյն ամբառնալ զոր յետ այսր խնդ-րէ յաղօթսն։

Սիրել զքեզ յամ սրտէ․ Նաև ո՞ր է յամ սրտից․ այն է, յոր-ժամ զսէր աշխարհի և զանձին և որ ինչ յաշխարհին է՝ ՚ի բաց հանցէ ՚ի սրտէն․ և զբովանդակ սիրտն՝ այ տացէ զնա միայն սիրել։ Զի ոչ մի ինչ կարասցէ հանել զնա ՚ի սրտէն, յայնցանէ զորս պօղոս թուեաց։

՚Ի բովանդակ մտաց։ Նաև ո՞ր է այն․ որչափ իմանայն՝ զայն գործեսցէ, որ զսիրելւոյն սէրն հաստատէ և անխզելի պահէ։

Իսկ՝ ՚ի զօրութենէ։ Որքան ունի զօրութիւն և կարէ պատուել զսիրեցեալն․ եթէ բանիւք եթէ ընչիւք եթէ վաստակով եթէ այլ ինչ հաճոյական ծառայութեամբ։ Նաև յարէ ՚ի նոյն․

Պահել զպատուիրանս քո։ Որով յայտ լինի սէրն որպ ասաց յովհաննէս առաքեալ․ * Այս է սէրն զի գնասցուք ըստ պատուի-րանաց նր։ Նաև ինքն իսկ տէրն, * Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք։ Նաև դարձեալ՝ * Եթէ պահիցէք զպատուիրանս իմ՝ կացջիք ՚ի սէր իմ․ որպ ես զպատուիրանս հօր իմոյ պահեցի, և կամ ՚ի սէր նր։ Նաև է պատուիրանն պատուիրեալքն յայ մարգարէիւքն և առաքելովքն և սրբովք աւետարանովքն։

Համբառնալ առ քեզ զձեռս մեր ՚ի սրբութիւն առանց բար-կութեան և երկմտութեան։ Վասն զի պատարագ ընդունելի է այ այն-պիսի ձեռացն տարածումն, որ սրբեալ է ՚ի մեղաց և ոչ ունի ՚ի միտին բարկութիւն առ մարդիկ կամ երկմտութիւն առ ած։ Զի թէ այսպէս համբառնայցեմք զձեռս, գտանեմք մեծ բարեաց փոխա-դարձութիւն․ զոր և յաջորդն իսկ յայտ առնէ։

Նաև գտանել ՚ի քէն զողորմութիւն՝ և զառաքինասէր գործոց յաջողութիւն։ Զի ողորմելն այ բնաւական է առ ամ բարիս․ որպէս ասէ դաւիթ, * Ողորմութբ տեառն լի եղև երկիր։ Նաև առաջին բարի է՝ նորա ողորմութիւն յաջողելն յառաքինութիւն որ ըստ այ․ որ ամ շնորհօք լի է, և ամ շահիւք երկնաւորօք և երկրաւորօք, և օգտաբեր յարդիս և յապառնիսն։ Որպ և ասէ առաքեալն պօղոս, * Աստուածպաշտութիւն առ ամ ինչ օգտակար է և զաւետիս կենաց ունի զարդիս և զհանդերձելոցն։ Նաև ասէ,

Ո՛վ դու ես բարերար և բազումողորմ տէր։ Եթէ զոր ինչ խնդրեմք՝ ոչ եթէ արդարս և արժանիս զմեզ գտանեմք, այլ զի զքեզ բարերար և ողորմած ճանաչեմք առ մեղաւորս անգամ։ Եւ յաղագս անզղջական բարերարութեանդ քո՝ փառաւորեալ ես յաւիտեան։ Քոյս է զոր աւելադրեն, Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Քում ամենազօր և յաղթող աջութեդ կրկնի ամենայն ծունր յերկրպագութիւն. և փառաւորի յամենեցունց թագաւորութիւն քո։

Զմեր առէ ըստ կարի զպարտսն հատուցանեմք երկրպագելովս և փառաւորելովս. ոչ եթէ կարօտ մերում զքեզ գտանեմք որում կրկնի ամ ծունր, և յամենեցունց փառաւորեալ ես ամենեցունց տէրդ և ամենեցունց թագաւորդ. որ և յամէ անկարօտդ։ Այլ առաջի քո արկանեմք երկրպագութե զպարտս. շնորհս ունիմք վասն առաւելոցն ՚ի քէն բարեաց յանցեալ կեանսն, և վն առաջիկայ կենացն աղաչեմք։ Ձայն սակս ասէ,

Լուեա՛ յաղաչանս մեր ամենեցուն. և շնորհեա՛ խաղաղութե զամ ժամանակ պանդխտութե։ Քանզի որ ետուր զխաղաղութիւն ասէ, հայցեալ յաղաչանս մեր ամենեցուն հանապազորդեա՛ մեզ. զի քո խաղաղութեանդ պահպանեսցէ ՚ի ժամանակի պանդխտութեանս մինչև գայցես առնուլ զմեզ յերկինս զոր ժառանգեցուցանել մեզ խոստացար։

Քանզի և վասն այսորիկ յերկիր եկիր, զի հաշտութի և խաղաղութի արասցես. և զհեռաւորս զհեթանոսս, և զմերձաւորս ըղ հրէայս ՚ի մի պարգև բարեաց աւետաւորեսցես. հանել ՚ի պանդխտութէ կենացս յորս անկաքս՝ զմերն կորուսեալ զբնակութի զդրախտն։

Եւ կոչէ տէր խաղաղութեան, վասն զի սովոր են մրք յիւրաց ինչ որ առաջի կայցեն՝ կոչել զտէր. որպ յորժամ զողորմութիւնն հայցեն, տէր և աէր ողորմութե կոչեն։ Եւ յորժամ զգթութեցն պատամեն և զողորմութենց ՚ի կարեաց, տէր ողորմութե ասեն և հայր գթութե. և յորժամ վասն փրկելոյ ՚ի մշտաց, աէր տէր փրկութե։ Այսպէս և յորժամ վասն խաղաղութե մաղթեն, տէր խաղաղութե դնեն նմա անուն. որպէս և սա աղօթիցս բան ասէ,

Զի դու ես աստուած խաղաղութեան որ բարձեր զթշնա-
մութիւն ՚ի միջոյ և արարեր զխաղաղութիւն յերկինս և յերկրի։
Թշնամութիւն էր երկնաւորացն ընդ երկրայինս՝ վն. ապստամ-
բելոյն յիւրեանց սեառնէն որք յերկրի. Թշնամութիւն էր Հրէից
և հեթանոսաց ընդ միմեանս վասն պատուիրանի կրօնիցն։ Եւ ոչ այս-
չափ միայն, այլ և ազգային պատերազմօք լի էր երկիր. և բնութիւ
մարդկան իմիւ թշնամանեալ էր։ Եւ զուստերս և զդստերս եւս հա-
ւանեցուցանէին դևք նոքեանց զոհել. և ազգի ազգի խայտառականս
և լրպանութիւնս միմեանց առնէին։

Իսկ ամ. խաղաղութե. եբարձ զթշնամութիւն ՚ի միջոյ, և արար
խաղաղութի. արեամբ խաչին իւրոյ ընդ հրեշտակս և ընդ մարդիկ. և
Հրէից և հեթանոսաց աշխարհատացեալն միաբանեաց, զերկպառակն մի-
աբանելով. և զպատերազմասէր դևսն Չքասեաց որք զերկիր շաղախել
արեամբ ուսուցին։ Եւ ՚ի սէր և ՚ի միաբանութի. կոչեաց զամենե-
սեան, և հրաւիրեաց յիւր արքայութի. և ՚ի փառսն։ Զայս և որ
ասացին նման՝ գոհաբանէ աղօթիցս բան յասելն,

Բարձեր զթշնամութի. ՚ի միջոյ և արարեր զխաղաղութի. յերկ-
նինս և յերկրի։ Հրեշտակաց և մարդկանց ուրախութիւն(?) զնոյն
պարգևս բարեացս.

Զի և այսպիսի պարգևի՝ մեզ երկրպագութե. եղեւ որդ-
ւոյն(?) մատուցանեն փառաբանութե. նմ., քաղցրացեալ այսմ շնորհի
մեծի զբարեհաճութիւն լինել, և երկրպագութե. աստուծոյ կոչելով. այսպ-
էս ասելով,

Որում մեծի շնորհի արժանացեալս և զեկեղ(?) արժանի։ Որում շնոր-
հէ. օրհնելոյ ընդ Հրեշտակս երկրպագութեամբ(?) քո, որք յամ ժամ փառա-
ւորեն զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին։

Երգարաք(?)՝ մեծ շնորհէ, և անքաւ պարգևք, հողոյս և դիւրամ-
տոյծ բնութեան՝ անհաս և անքննելի(?) բնութեանն փառաբանիչ
լինել. և մեծապարգևին մղ, խոնարհել և փոխադարձութի ընդու-
նել իւրով աներևոյթ(?) բնութբն ՚ի մեր ամենայնութեան(?) զմեզ գումարեալս(?)։
Վասն որոյ կարի իմն պատեհագոյն նմա տալ զփառսն տալ։ այսպ-
էս ասելով,

Որում վայելէ փառք իշխանութի և պատիւ. այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Եւ միաձայնեալ ժողովուրդն զա-
մէնն և զհաւանականն ասիցն, այս եղելոյ(?) զխաղաղութիւնն և
[illegible], [illegible] լրումն, և վայելելով յաւ-
իտենականութիւնն, [illegible] զխաղաղութիւն և առնելով։

պաշտօնս ասացուք զգործակցացն, և ընդ նոցա և ընդ մեր. զորս ասա-
ցուք իսկ: Որպէս թէ մեր զգուշացեալ և աղօթեալ իցէ վասն այնր,
և թող այս ամ վասն իմիք պատկերս՝ անկանիլ ՚ի փորձութիւն.
այլոս կացցուք քաղցրութեամբ և համբերութեամբ, օրինակ առնլով
զսուրբսն, և զմեծն իսկ զՅոհաննէս. զոր դիտաւոր և առաքեալ կո-
չէին, և ամ՝ հանդարտական աստուածոյ:

Իսկ նա բանձեալ՝ ոչ փոխարէն բանբասէր. այլ այնչափ ան-
սուտ ըմբռնումն ցուցանէր, մինչ զի և մոռանալ, և զգործադրացն
մեղսն՝ իւրով մարմնովն ՚ի խաչափայտին մերացուցանել, և զերծու-
ցանել զայն ՚ի մեղաց՝ որ կամիցին զայնոսիկ։ Այնպէս և մօտա-
ւորն անձինք և զայլոց ասէր, * Բանբասէին զմեզ՝ օրհնէաք. հալածէին՝
յանձն առնուաք. հայհոյէին՝ աղաչէաք։

Յայլոց ասացեալ ասէ, * Երանի է ձեզ յորժամ նախա-
տիցեն զձեզ և բամբասիցեն սուտ՝ այլովքն հանդերձ։ Ուրախ համ-
բերելովք՝ ծանուցուք մարդկան թէ սուտ է առացեալն զմենջ. և
ցնծալովն և ուրախանալովն՝ յայտ արասցուք զհանդարտութիւն. և
զմեզ ընդհէն ՚ի մեզ կորզեսցուք:

Ո՞վ է թէ յիրաւի բանբասանացն արդարանամք որոց զմեղա-
ւորն զայն ասացաք քանզի կատարեալ, արդարք լինիմք զգործութեան
համբերելովք։ Ո՞րոց զմարձան ոչ այնչափ ինչ էր ամն առանձիննաց.
այլ բազմաւն զտնտեսն յայս աշխար. քանզի բաշխեմք ՚ի սրբոցն ան-
սուտ զասօդսն համարեալ, քաղցրութեամբ առաջին պատուհանութեան և այլոց
սխալից զգործութեան. և փառաւորեցան յերկրի և յերկինս։

Այսպէս ամ անձին բերկրանեցեն՝ և սան հաստատացելոյ՝ զանէր
անդաշինցուք։ Քանզի պարապոյն էիք միմեանց աղօթս առնել,
մշտնջենաւորել և փրկել զմիմեանս ՚ի մեղաց վտանգից և յորդորեւ։ Ո՞վ է եթէ
կատարելագոյնս մարմնոյն ոչ միայն անձին, այլ և ընկերին զգուշա-
ցն և մտածելն են յայլոցն մեղաց. մինչ եւ առնել մեզ ՚ի հո-
գևոր պատերազմի արարածս աղօթիւք և բազում բարերարութեամբ
օգնական լինել. որպէս ուսաք ՚ի պօղոսէ և ՚ի յովհաննէ գլխաւորաց
առաքելոցն. և ՚ի յակոբայ որ եղբայր տեառն է։

Քանզի ասէ, * Աղօթս արարէք ՚ի վերայ միմեանց բժշկութեան:
Իսկ յորժամ զօրաւոր զաղօթից աղանակութեանն ցուցանէ, մանաւանդ
յորդորելով Մովսէսիւ ցոյց տալ. իսկ պօղոս ասէ, * Զգուշացարուք միմեանց
յորդորմամբ սիրոյ և գործովք բարեաց։ Իսկ զարձեալ թէ *Աղօթս
արարէք յամ ժամանակի հոգւով և ՚ի նոյն արթնութիւն ամ ժուժկա-
լութեամբ և խնդրուածովք վասն ամ սրբոց։ Որպէս թէ և վասն ամ
քրիստոնէից, և ՚ի վերայ նոց թէ, և վասն իմ:

Եւ եթէ Պօղոս աշակերտացն աղօթից կարօտանայր, մինչեւ եւս առաւել մեք աղօթից միմեանց կարօտանամք. եւ մեր այլոց աղօթելով, զայլոց աղօթս մեզ շահեսցուք։ Իսկ Յովհաննէս ոչ աղօթից միայն զմեզ պարտաւորեալս արար, այլ եւ մահու. * Քս ասէ. զանձն եդ 'ի վերայ մեր. եւ մեք պարտիմք 'ի վերայ միմեանց դնել զանձինս։ Եւ եթէ մեռանիլ մեզ պարտ է վասն ամ ուրուք, որչափ եւս առաւել աղօթել վասն ամենեցուն։

Քանզի եւ որ աղօթիցն է վարդապետ եւ ընդունիչ, ոչ անձին յատուկ, այլ հասարակաց առ հասարակաց Հայրն աղօթել հրամայէ. Հայր մեր ասելով ամենեցուն. որ սուրբ աւազանաւն նմա որդեգրեցաք։ Եւ այսպէս կարգ ըստ կարգէ վասն բնաւ եղբարց ըղ հայցուած առնէ՝ մեր եւ մեզ, եւ ոչ երբեք իմ եւ ինձ ասելով. եւ մեք 'ի Քրիստոսէ վարդապետէն խրատելով, խնդրեսցուք խաղաղութիւն ամ անձին քրիստոնէի եւ տան հաւատացելոց։

Եւս առաւել այնոցիկ՝ որք 'ի լերինս եւ յայրս եւ 'ի փապարս երկրաց բնակեալ սուրբ հարքն։

Վասն որք սաղմոսիւք եւ օրհնութեամբ կատարեն զամ ժամանակս կենաց իւրեանց՝ զՏէր աղաչեսցուք։ Եւ քանզի նոքա սիւն եւ հաստատութիւն եկեղեցւոյ են, եւ հաշտեցուցիչք Այ ընդ մարդկան. վասն այնորիկ ոչ շատացաւ ընդ հասարակն քրիստոնէայս յիշել միայն, այլ եւ առանձինն երկուս առնես. զի աղաչեսցուք զՏէր անփորձ մնալ նոցա, եւ փորձանաւորացս մեզ օգնական լինել։ Եւ ամենայն քարոզ յայս յօդի,

Վասն հոգւոյն հանգուցելոց որք Քրիստոսիւ եւ ուղիղ հաւատով 'ի Քս ննջեցին զՏէր աղաչեսցուք։ Եւ այսու ուսանիմք թէ յամ աղօթս մեր խնդրել պարտիմք վասն եղբարցն, որք Քրիստոսի հաւատս ունէին եւ յուսով 'ի Քս ննջեցին։ Զի եւ որ սուրբքն 'ի նոսա իցեն՝ զմեզ հոգասցեն, վասն մեր հասարակաց նոցա եւ մեր եղբարցն հոգալոյ։

Աղօթք՝ Ողորմեա եւ 'ի նեղութեան կանանց։

Գոհանամք զքէն տէր ած մեր որ զարթուցեր զմեզ 'ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քոյ։ Ամենայն ուրեք մեզ գոհութիւն պէտք են. քանզի մեծագոյն ընծայ 'ի բնու-

թենէ զոր մատուցանէ մարդ ոք , տիրապէս այլ ինչ ոչ գտանի , բայց միայն օրհնութիւն գոհութիւն եւ փառաբանութիւն ։ Արդ ասէ առաքեալն , *Գոհացօղք լերուք յամենայնի զԱստուծոյ եւ զՀօրէ նովաւ ։ Այս որ-դորն յիրաւի ․ զի որ զմեզ էացոյց յոչէից , օրհնի 'ի յէիցս ․ եւ որ զգոյսս գոյացոյց , գոհաբանի 'ի գոյիցս ։ Այս զի փառօք զարդարե-ցաւ , առաւել փառաբանի 'ի փառաւորելոցս ։

Այլ ոչ եթէ 'ի մատուցանելն զայս՝ յաւելուած ինչ լինի ան-կարօտ բնութեան նորա ․ զի նա 'ի փառս իւր փառաւորեալ է լիով եւ անթերի եւ յառաջ քան զլինելն աշխարհի ։ Այլ զմեր մեծութիւն եւ զսէրն ցուցանելով առնեմք զայս ․ զի մեք աղերսալից գտանիցեմք եւ անշնորհակալութեան բամբասեցուած որպէս հինն Իսրայէլ ․ այլ ընդ գոհութեան եւ առաւել եւս յորդորեսցուք զնա 'ի տալ պարգեւաց ․ զի ամենայն ուրեք յարժամ խնդիր կամեցի ոչ խնդրել , նախ գոհանալ եւ ապա խնդրել ։

Այլ դարձեալ՝ զի յառաջին աղօթից սկիզբն գոհացաւ , եւ ապա զնայիլն խնդրեաց , եւ զխաղաղացուցանելն 'ի սատանայական խռո-վութեանց եւ յաշխարհի զբօսանաց , եւ հրեշտակ պահապան շնոր-հելն ․ եւ յասելն զամենայն մի ըստ միոջէ զպարգեւատուն մատոյց ։ Այս ասա որպէս թէ առաւել զխնդրեալն՝ գոհանայ ․ եւ վասն այնորիկ՝ եւ վասն խաղաղութեան հանգիստ քոյ շնորհել եւ զարթուցանել՝ ասէ զնոյն գոհութիւն ։ Ո՜վ է առաւել 'ի քուն գիշերին ջանայ զատ ինչ գոր-ծել սատանայ ․ եւ խնամքն նորա պահպանէ ․ վասն որոյ միշտ գոհանալ պարտ է ։ Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր ։

Այս Տէր Աստուած մեր ասելով , զառաւել մեծութիւն յայտ առնէ ․ նա եւ փառս եւս վարկանի զծառայելն նորա ․ եւ արդարեւ յիրաւի մեծ եւ բարձրագոյն փառք ։ Ո՜վ է ոչ իբրեւ զհեթանոս եմք մոլորեալք որք զտարերս աստուածացուցին ․ եւ առ կուռս անմռունչս երթային եւ գային , ուրուականացն ծառայելով , եւ բանականաց՝ զանբանն պատուելով որ ոչինչ էին յաշխարհի ըստ առաքելոյ ։

Այլ մեր՝ Ամենակալին նորա ծառայելով որ արարիչն է երկնի եւ երկրի եւ ամենայնի որ 'ի նոսա , զնա միայն պաշտեմք եւ փառաւորեմք ․ եւ գոհանամք վասն մեծի երախտեացն նորա ․ վասն որոյ ասէ ,

Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր որ զարթուցեր զմեզ 'ի հան-գստենէ քոյ շնորհիւ ողորմութեամբ քով ։ Ո՜վ է շնորհքն նորա է որ յամենայն հաշակ հարկանէ ըստ առաքելոյ 'ի բարերարելն , եւ ողորմու-թեամբն պահպանէ զամենեսեան ․ վասն որոյ ասէ ; Որ 'ի հանգստենէ քոյ շնորհիւ ողորմութեան քո զարթուցեր ,

Օրհնի զմեզ մեր արդարութեամբ առ քեզ Տէր Աստուած մեր ։ Առ այս զարթնուլ զայն խնդրէ , զի մեք ցնորք [illegible]

և արկանք սատանայական խորհրդոց անձինեն զնա, և զաղօթս սուրբ և յստակ մտօք առ ած ոչ կարիցեմք մատուցանել։

Զի և ՚ի զգալեաց մտաց աղօթք ոչ հաճի ած. վասն որոյ զմիտս զարթուցանել հայցէ արդարութիւն առ ած. զի կարօղ լիցուք հա-ճոյական մատուցանել զաղօթսն և ընդունիլ զողորմութիւն յամենա-տատուածեն։ Զի միտք որ արթուն է և հաստատուն աղօթէ՝ առ-նու զխնդրելին յիւր. որպէս և հետագայս ցուցանէ բանն։

Տեսցեն աչք մեր զփրկութիւն քո. եկեսցէ և բնակեսցէ առ մեզ աստուածութիւն քո։ Եթէ յստակ և պայծառ ունիցիմք ըզ մտաց հայեցողութիւն, կարեմք արդարև տեսանել յայտնապէս զփր-կութիւն նոյ, և զամենասատ շնորհաց նորին ՚ի մեզ զբնականալն ա-բարիքս։ Եւ զփրկութիւն միշտ օր ըստ օրէն կոչէ զհոգեկան և ըզ մարմնական, որում միշտ բաղձամք։

Եւ ողորմութիւն քո հովանի լիցի ՚ի վերայ պաշտօնէից քոց։ Զոր օրինակ յարկ բնակութեան՝ հովանի և պահապան լինի բնակո-ղաց ՚ի տօթոյ արեգականն, և ՚ի տեղումս անձրևի, և ՚ի ցրտութենէ օդոյ, ՚ի գողոց և յաւազակաց և յայլոց ոմանց դաւողաց, զի մի՛ վնասիցին։ Նոյնպէս և ողորմութիւն նոյ զպաշտօնեայս իւր պահ-պանէ յերևելի և յաներևոյթ թշնամեաց, զի մի՛ գայթակղեսցին հոգւով կամ մարմնով. այլ միշտ պահպանեալ՝ պաշտեսցուք զնա երկիւղիւ հանապազ։

Եւ զմեզ զծառայս քո՝ արժանի արա ՚ի տուէ և ՚ի գիշերի և յամենայն ժամու միշտ խորհիլ ՚ի սէր պատուիրանաց քոց։ Մեծագոյն վարձ և բարձրագոյն պարգև է յոյժ ծառայի՝ թէ և այլ ինչ փո-խարէնս ոչ ընկալցի, յորժամ արժանի լիցի ՚ի պատուիրանս այ խորհիլ միշտ և հանապազ. որպէս և սաղմոսանուագն ասէ, * Տէ՛ր զի պատուիրանս քո սիրեցի. ըստ ողորմութեամբ քով կեցո զիս։ * Երանի որ խորհի զաղաքսան և զանանկն։ Նախնիքն՝ որ վասն մեր ամենաբարեացս ճշմարիտ մեծատուացն արարիչն և որդին նոյ։

՚Ի տուէ և ՚ի գիշերի, ոչ միայն զգալիս, այլ և ՚ի տիւ բարի գործոց, և ՚ի գիշեր մեղաց խոկալ ՚ի սէր պատուիրանին աստուծոյ։ Վասն այսորիկ արժանաւորեալ, առնել պարտիմք գոհութիւն ամե-նաստեղծ մատուցանել. զոր և յաջորդ բանս ցուցանէ։

Եւ գոհանալով փառաւորեսցուք զհայր և զորդի և զսուրբ հոգի. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Խաղաղութեան ամենեցուն:

Կենդանարար զօրութիւն և աղբիւր անմահութեան, դու ես Քրիստոս Աստուած մեր, որ շնորհեցեր մեզ ի մէջ գիշերի յառնել և խոստովան լինել առ քեզ վասն իրաւանց և արդարութեան քո:

Ամենայն զօրութիւն յէսա՝ կենդանական զօրութիւն միայն է, թէ դիտելի թէ իմանալի. իսկ կենդանարար զօրութիւն՝ միայն արարչականն է զօրութիւն, որ ամենեցուն զլինելն ետ, և զբարւոք լինելն պարգևեաց. վասն որոյ ասէ, Կենդանարար զօրութիւն և աղբիւր անմահութեան: Որդի զօրութիւն արարիչ է, այսպէս և անմահութեան աղբիւր է. զի անսպառ միշտ աղբիւրացուցանէ զանմահութիւն և զանեղծութիւն յարարածս ի ներկայումս, և ի հանդերձելումն զյաւիտենական անմահութիւն վայելս պարգևէ սիրելեաց իւրոց Թագաւորն մեր. որպէս ասէ յաջորդս,

Դու ես Քրիստոս Աստուած մեր, որ շնորհեցեր մեզ ի մէջ գիշերի յառնել և խոստովան լինել առ քեզ վասն իրաւանց և արդարութեան քո: Դու ես Քրիստոս Աստուած մեր որ շնորհեցեր ասէ, զի քո սակի եմք գրաւեալ և ոչ այլում ումեք: Զի որք ի Քրիստոս մկրտեցաք, զՔրիստոս զգեցաք քրիստոնեայ անուն ժառանգելով, յայս զՔրիստոս ունող. որով պարծիմք միշտ և յոյս ունիմք փրկութեան:

Որ շնորհեցեր մեզ ի մէջ գիշերի յառնել և խոստովան լինել առ քեզ: Զի թէ սէրն ոչ բնակեսցէ ի մեզ, ոչ տայ մեզ թոյլ մինչ ի մէջ գիշերին յամել յանկողինս. այլ ըստ մեծին եսայեայ կանխել առ նա հանապազ ասելով, *Ի գիշերաց կանխէ հոգի իմ առաւօտ առնել առ քեզ Աստուած: Նմ զայս խորոց արկանէ զի մի առաւել ծուլութեամբ անագանեսցուք:

Եւ խոստովան լինել առ քեզ վասն իրաւանց և արդարութեան քո: Իրաւունքն են ոչ խոստովանել միշտ զբարերարութիւն. զի որ յոչ էից ի լինելութիւն էած և նախախնամութեամբ միշտ մատակարարէ, որպէս արժանի է խոստովանաբար հանապազ փառաբանութեան և երկրպագութեան: Նա և զինչ պարտ է ասել և զի երկրորդ նորոգմանս որ ի ձեռն քո շնորհեցաւ մեզ: Մանաւանդ յորդեգրութիւն հօրն երկնաւորի կոչել, որ քեւ եղև սիրապէս. վասն որոյ խոստովանութեամբ միշտ օրհնեմք և շնորհակալ լինիմք:

Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր Աստուած մեր: Զի միշտ աղաչելն՝ միշտ պարգևաց արժանացուցանէ. յորժամ հաւատով և ըստ հաճոյից ոչ լինիցի: Եւ տէր և Աստուած ասէ, զդատողական և զարարչական անունն ի կիր առեալ:

Որ զմեզ տայ արթունս և պատրաստս 'ի ժամ առաւօտու ընդ սուրբս քո։ Արթնութիւն ինձ առաւել զմտացն խմացիր · որով և մարմինն կանխէ առ ած սիրով · որպ դաւիթ ասէ, * 'Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ։ Եւ պօղոս և շիղայ 'ի մէջ գիշերի կային յաղօթս, 'ի բաց ընկեցեալ զամենայն՝ ումպէտս հոգս և զցնորս, և յածայինսն միշտ պարապեալ։ Վասն որոյ և քան աղօթիցս ընդ այսպիսիս հայցէ արթունս և պատրաստս գտանիլ 'ի փառաքաւորութիւն նոյ։ Զի որք աշխատասիրացն կցորդ լինին սրբոցն, և փառացն հաղորդ լինելոց են · որպէս և հետագայս ցուցանէ բան։

Եւ ընդ նոսին փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգի · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Դարձեալ աղօթք։

Կանխեալքս 'ի ժամ գիշերիս՝ աղաչեմք զմարդասիրութիւնդ քո որ բացեր զբերանս մեր 'ի փառաբանութիւն ամենասուրբ անուանդ քոյ։

Կանխել՝ զվաղայարոյց լինելն ասէ · որպէս և մարգարէն յայտ առնէ թէ, * Կանխեցի տարաժամու աղաղակեցի, և 'ի բանս քո յուսացայ։ Զի էր ասէ ժամ պաշտաման, և ես հասի կանուխ աղաղակել առ քեզ։ Եւ դարձեալ, * Կանխեցին աչք իմ առաւօտու 'ի խօսիլ ինձ զբանս քո։ Զայս կամի ասել՝ թէ զպաշտօն առաւօտուն ոչ թողի 'ի սովորութենէ պաշտօնէից քոց ժամ որ ըստ հաւանն խօսից · այլ կանուխ քան զայն յարեայ ընդ քեզ խօսիլ։

Եւ եթէ որչափ է կանխութիւն, 'ի սմին սաղմոսի յայտ առնէ․ * 'Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել տեառն։ Եւ վն էր զայս առաջի արկանէ մարգարէս · զ'ի գութ այսու կամի շարժեսցի ած․ որպ թէ ասել, թէ և այլ ինչ լաւութեն պատասխանս չունիմ, սակայն զի 'ի տարաժամու և 'ի հասարակ գիշերի՝ զգիշերի և զծանրութիւն քնոյն անցեալ առ քեզ դիմեցի, պարտիս ունկն դնել։

Նոյնպէս և առ մարդիկ սովոր եմք առնել յորոց զկարիս մեր պահանջեմք, զճանապարհացն երկայնութիւն և զգիշերի գնալն նպաստ մատուցանեմք · ելի և եկի առ քեզ, զիա՛րդ մարթես ունայն յղարկել · եթէ այլ ոչ, զտարաժամութիւն գալստս զմտաւ ած և տուր զոր պահանջեմս։ Զայն զայս և տէրն յօրինակ աղօթականացն էառ․ 'ի մէջ գիշերին գալ ասէ բարեկամին առ բարի նկանակացն խնդիր ·

որ թէպէտ և պատճառեաց զփակիլ դրացն և զմանկանցն ընդ իմն լինելն յանկողնին, սակայն ժամելն 'ի գիշերին առաւել քան զցերեկամութեան հաւանեցայց 'ի խնդիրն ։

Այլ եթէ մարդ արհամարհէ որ ինչ իւր տաղակութի առաջիկայ, իսկ անգուռն աչն և անվաստակ և գործակցութ աչքն անտես առնէ՞ որք առժանելի մարմնոյն զթերութիւն թողեալ հանդիսա քնոյն առ նմ կարգայցեն ։ Բայց խաղիս մօք և աղօթիցս քան զկանխելն սկիզբն դնէ . և յարէ 'ի նոյն զկնա պատճառն լսելութեան զաղօթելն՝ թէ որ առ բարեկամին ժամեցաւ, նոյնպէս և մեք առ քեզ ժամեմք ։

Այլ նաև՝ աղաչեմք զքեզ, այլ երկրորդ ևս պատճառս յաւել լսելութե ։ Այլ ո՞ր է այն . 'նոյ բարեբարութիւնն, որ յամէ սովոր է բարերարել առ չարս և առ բարիս ։ Այն այսորիկ այսպէս առէ, Աղաչեմք զբարերարութիւնդ քո որ բաշխեր զպէտս մեր 'ի փառաւորութիւն անձնասուրբ անուանդ քո ։

Դոյն առէ այդ մեծ բարերարութեանդ քո ցոյցք են՝ անձնաւոր անուանդ փառս առնուլ 'ի հողեղէն զանգուածոյս, և չզարշիլ 'ի մեղանչական մեր բերանոյս . այլ որով բարեաւ անգամ զքեզ բարկացուցանեմք, բանաս զառ քոյին օգնականութեամբ 'ի փառաւորանու վասն զթութեանց ողորմութեան քոյ ։

Զի թէ մարգարէն ասայի 'ի կալն առաջի քո աթոռոյդ, և 'ի ըսելն զերկոյակեցն փառաւորութե, միայ առեր ինքեան և սիրեն զիւր շլթունս կոչէր . և խոստովանէր, զի առ պղծաշրթութ ժողովրդեանն բնակակիցն լինելն՝ իւր էր եղկութե ։ Այլ վասն այնորիկ մինչև մարգարէն 'ի սերովբէին՝ չեչիլեաց կցորդակից լինել փառաւորութեան այնմիկ ։ Բայց քանիօ՞ն պարտ էր մեզ խորշել, եթէ ոչ 'ի մարդասիրութիւնդ քո ապաստանէաք . որով և ուսուցանէ մեզ սովորս և օրհնութիւն և բանս աղօթից . և այսուքիւք բանաս զպէտս մեր 'ի փառաւորութիւն անձնասուրբ անուանդ քոյ ։

Իսկ զայսոսիկ մեզ շնորհեաց, բայց մի մեք անխորշք և առանց երկիւղի առ այս մատիցուք . որք 'ի մարգարէն այսպիսի երկիւղածութե աւանեմք ։ Այլ նմա սրբեսցուք զպէտս մեր խոստովանութե և ապաշխարութե, հառաչանօք և արտասուօք . և այսպէս բացցուք զպէտս մեր 'ի փառաւորութիւնն ։ Զայս և առաջաբանի
քարոզն խրատէ յառեկն,

Այլ մեք այսուհետև սրբեսցուք զանձինս մեր 'ի խղճէ և 'ի չար գործոց . համբարձցուք 'ի դէշերի զձեռս մեր առանց բարկութ և երկմտութե . հաւատով խնդրեսցուք զթողութի մեղաց մերոց ,

խոստովանելով զպաղատանս սրտից մերոց ծածկագիտին Աստուծոյ:

Զգուշութիւն այս անդէն խնկելանն, զի մաքրել նախ ՚ի խղճէ, և սրբել զսերտս մեր յաղտոյ մեղաց. և ապա առ նա զսերտս մեր բացցուք: Նա որդ՝ գոհացեալ զմեզ վասն նոր փառաբանութեան արժանաւորս մերոյ բերանոյս. ապա և զհայցուածսն առաջի արկանել, և գոհութեամբ զխնդրեալն յայտնել բարեպաշտելոյն կարգաւ: Նա ևս է զոր խնդրեն:

Ասացեն աղաչանք մեր առաջի մեծի ակերութեան քոյ: Նա մտանելն այս է. լսելի լինել և ընդունելի. և զաւերութիւն զմեծութիւն ոչ վարկապարազի յիշէ. այլ զի զարթնուցուս ոգւովք, և խոնարհեցես, թէ մանկանացս և անցաւոր ունողացս զաւերութիւն և փոքր մասին, այնչափ ՚ի սրտէ բազմանոք և երկիւղիւ զպաղատանս առնեմք: Նա ՚ի լսելն և ՚ի առնլն զերծանելն պարգևսն՝ անչափ խընդամք. և յուշընդունելն և արգելուլ զհայցուածսն, անհնարին սուգ առնումք:

Այս հրեշտակաց առաւն որ զերկնից և զերկրի պարգև ՚ի բըրախին ունի, և իւր ամ ստացուածք են, և անմահութիւն զյաւիտենական ամենակալութիւն ունի անչափ մեծութիւն: Մերան երկիւղիւ պարտ է կալ առաջի, և սաստիկ ցանկութիւն առ ՚ի նմանէ խնդրել զօգտակար շնորհն. և յառնուլն՝ ամենազօրաւոր խնդութիւն գոհանալ: Նա թէ յապաղէ տալ, անձանձրոյթ աղաչել մինչև շնորհեսցի. քանզի այս խնդրողացն բաստնաւոր խոստմանն: * խնդրեցէք տաց և տացի ձեզ:

Բայց է ուրեք զի և յամէ զտալն առ սէր բարերարութեանն իւրոյ. որով զի կարօտութիւն խնդրելեացն՝ ցանկ առ իւր մնալ մեզ տրասցէ. զի ոչ ծնօղք զորդիս սիրելիս, և ոչ բարեկամք զբարեկամս, և ոչ այլ ինչ իրի որ ՚ի փափագն են՝ առտրժեն բացակայել զիւրեանց փափագելիսն, որպ ամ զմեզ ցանկորդել առ իւր բաղձայ:

Նա վասն այսորիկ կարօտութիւն և նեղութիւն այս մեզ, զի առ նա դիմեսցուք: Նա ոչ վաղվաղէ զաւագնալին զերծումն, զի մի փոյթ ընդ փոյթ ՚ի նմանէ ՚ի բաց դարձցուք. այլ զի կարևորօքն և ստուարել զմաղթելն յաճախեսցուք: Նա առնլով զշնորհն, գիտասցուք զմեծութիւնն և ՚ի շնորհատուին սէր հաստատուն միասցուք:

Բայց տեսցուք և որ զկնին գայ:

Բացցին դրունք մարդասիրութեան քո ՚ի վերայ ժողովրդեան քոյ: Զի որպէս թագաւորացն առուրք՝ պէտս ունին խանթից բազմաց դրանցն, և այնպէս պարգևատուացն շնորհին: Նոյնպէս քո անծախ բարեպարգևութեանդ դրունք են քո սիրոյդ առ մեզ յարձակումն.

զոր ըստ մարգարէին՝ * Մեղքն մեր որոշել սովոր են, և փակել ըզ-
դուռն մարդասիրութեան։

Վասն որոյ աղաչեմք չլինել յաղթական մերոյ մեղացն քան զքո մարդասիրութիւնդ. այլ ՚ի մատանելն մեր աղաչանաց առաջի քո մարդասիրութեանդ, քո դուռն անարգելապէս բացցի ժողովրդեան քո. զի այսու առաւել զսէրն բորբոքել արասցէ. զի և մարգարէքն այսու առաւել զա͞ծ թախանձել սովոր էին. որպէս և մովսէսն ասէր, * Ընդէ՞ր չարչարեցեր զժողովուրդ քո, և փրկելով ոչ փրկեցեր զնոսա։ Եւ դաւիթ ասէ, * Յիշեա զժողովուրդ քո զոր ստացար ՚ի սկզբանէ։ Եւ սողոմոն երկայն բանիւք խնդիրս առաջի ա͞յ մատուցեալ, և պէս պէս շնորհս խնդրեալ ՚ի տաճարէն տալ հայցելով, յայն զառաջին պատճառս աւարտէ. * Քանզի ժողովուրդ քո են զոր հաներ յերկրէն եգիպտոսի։ Եւ միւս մարգարէ ասէ, * Խնայեա ՚ի ժողովուրդ քո. և մի տար զժառանգութիւն քո ՚ի թշնամանս։ Նա և ՚ի նորումն երանելին գրիգոր ա͞ծաբան, յաղօթսն որ վասն հարուածոյ կարկտին՝ ըստ նմանութեան մարգարէին յայն յանկէ զհայցուածս։ * Մեք ժողովուրդ քո և գաւազան ժառանգութեան քոյ։ Եւ ՚ի վերջ բերէ, * Վասն այսորիկ խրատեա զմեզ ողորմութեամբ քով. և մի սրտմտութեամբ քով վասներ զմեզ զի ժողովուրդ քո եմք։

Ըստ այսմ օրինակի և աղօթիցս բան՝ բացման դրանցն մարդասիրութեան՝ պատճառ մեծ զժողովուրդ ա͞յ լինելն դնէ։ Եւ յետ այսորիկ այլ ինչ խնդիր ոչ յաւելու. յայտ արարեալ թէ սէր սիրողին ստիպէ տալ առաւել քան զոր խնդրեմք և իմանամք։ Բայց միայն զառաւել պատճառ մարդասիրութեան առաջի արկանէ զայն՝ զի ողորմած է և բարերար. զոր և զմարդասիրութեան դրացն փակ՝ յոյժ ՚ի բաց մղէ, և զյորդութիւն սիրոյն անհուն առաւելութեամբ ՚ի մեզ ծաւալէ։ Վասն այսորիկ ոչ փակեսցես, այլ բացցես զդուռն մարդասիրութեան քոյ ասէ։

Զի դու ես բարերար և բազումողորմ աստուած։ Եւ ապա փառս տայ այնպիսի բարերարին և մարդասիրին՝ այսպէս ասելով,

Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Օրհնեալ ես ամենակալդ Աստուած և Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի · որ զարթուցեր զմեզ 'ի ծանրութենէ քնոյ · և ետուր երգել զերգս հոգևորս։

Քանզի այսպէս իսկ վայելէ ծառայից Աստուծոյ միշտ օրհնել զնա, և զարժանաւորն օրհնել՝ մեծ պարգև համարիլ և վասն այսորիկ յոյժ գոհութիւն մատուցանել։ Որպէս և սա՝ յառաջին դրուագին գոհացաւ վասն սորին՝ թէ բացեր զբերանս մեր 'ի փառաբանութիւն ամենասուրբ անուան քոյ։ Եւ գլխաւորելով զառաջինն, դարձեալ յերկրորդումս զնոյն սկիզբն առնէ գոհանալ՝ զի զարթոյց 'ի ծանրութենէ քնոյ · և զի զհոգևոր երգս արժանացոյց երգել՝ ասելով, Օրհնեալ ես ամենակալ Աստուած և Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Զերկոսին զայսոսիկ դնէ զամենակալդ՝ և զՀայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Զի ամենակալութեամբ մեք ծանիցուք թէ որ զվերինս և զներքինս ընդ իշխանութեամբ ունի և յամենեցունց փառաւորեալ է, ոչ կարօտ գոլով փառաց փառաւորի 'ի մէնջ, այլ վասն առաւել զմեզ սիրելոյ։

Որպէս հարք որդեսէրք զմատաղ մանկունս յիւրեանս բարձեալ, ասեն ոչ զիւրեանմբք ածել զգիրկս, և համբուրել զերեսս, և բանս գովութեան ստիպեն ասել իւրեանց։ Եւ է՛ զի երկիր եպագանել առաջի իւրեանց տան, և 'ի ծառայութիւն ձևանալ։ Ուրեմն ոչ եթէ 'ի մանկանցն համբուրելոյ կամ ածելոյ 'ի գիրկս կամ դեռախօս լեզուոյն գովութենէ կամ երկիր մանկանն պագանելով Հայրն յաւելուած կամ փառս առցէ · այլ զի առաւել 'ի սէր մանկանն բորբոքեսցի։ Այնպէս և Աստուած զի անպակաս սիրելով զմեզ և կարի այնմ բաղձայ, կամի զի մեր սիրելովս և զնովաւ գալովս և օրհնելովս և ծառայելովս նմա, ևս քան զևս յորդորեսցուք զսէր նորա 'ի մեզ։

Արդ՝ յասելն ամենակալ, զտացեալս զմտաւ ածցուք · իսկ՝ Հայր մերում և տեառն փրկչին Յիսուսի Քրիստոսի հաւաստեմք 'ի մեզ զհայրութիւնն · զի եթէ մեք և նա մի եղաք, մարմնանալովն նորա և մեր 'ի նա մկրտելովս և 'ի մարմին և յարիւն նորա հաղորդելովս, և նա անդրանիկ 'ի բազում եղբարս։ Ապա որ նորայն Հայր է, նոյն և մեր · և զի՞ ասեմ եղբարս միայն, այլ և գլուխ նա մեր, և մեք մարմին · ապաքէն որ գլխոյն Հայր է, նոյն և մարմնոյն։ Արդ՝ յասելն մեր յԱստուած թէ, Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի · զհարազատութիւն որդւութեան նորա առաջի արկանեմք։ Եւ զայս ասելով յարէ 'ի նոյն։

Որ զարթուցեր զմեզ ՚ի ծանրութենէ քնոյ։ Դու ես ատակ փարատել ՚ի մէնջ զքնոյ ծանրութիւն, և զարթնութիւն շնորհս և զօգտութիւն ՚ի դէպ ժամանակի, քնով և արթնութեամբ մեզ շնորհելով։ Միոյն՝ զի զաշխատութիւն մարմնոյն ՚ի բաց դիցուք. և զի առանգամ հանգիցուք ՚ի հոգոց և ՚ի տրտմութեանց որով զերկիր ուտել վիճակեցաք. Իսկ միւսոյն՝ զի պաշտեսցուք զքեզ, և երգել զերգս հոգևորս։

Հոգևոր կոչի երգն, նախ զի հոգին սուրբ ուսոյց մեզ մարգարէիւքն և այլովք սրբովք։ Եւ դարձեալ, և այժմ ևս նովաւ երգեմք. և նա լինի բարեխօս յանմռունչ հեծութիւնս ըստ առաքելոյ, ՚ի զարթուցանել զմեր ոգիս ՚ի սէրն այ, ՚ի յորդորել զմեզ սէր՝ առնորա երգն, ՚ի քաղցրացուցանել մեզ զօրհնութիւն նորա։ Այս սակ զչափն որ ՚ի մեզ հոգևոր երգոցն։

Քեզ ՚ի գովութիւն և ՚ի փառաբանութիւն, մեզ ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց։ Երկրպագումք օգնեալք. զի ՚ի գոհութենէ նր գոհանալով և փառաւորելով զնա, համարձակութիւն առնումք խնդրել զպիտոյսն մեր ՚ի նմանէ։ Զի առ մարդիկ շնորհակալութիւն առ տուեալսն՝ ոչ տուեցելոցն մատակարարէ, որչափ ևս առաւել յամենառատ բարերարութեանցն աստուծոյ։

Իսկ քաւութիւն և թողութիւն մեղաց՝ յայտնի որքան է մեզ օգուտ։ Զի թէ անդէն քաւութիւն հասեալ էր ադամ, ոչ այսքան պատիժ ինքեան և մեզ բազմացեալ էր։ Արդ՝ զի բանս փառաբանութեան այ ասէ՝ ոչ միայն շնորհակալութիւն է առ նա, այլ և մեզ քաւութիւն. այսինքն սրբութիւն ՚ի մեղաց։ Եւ գոհացեալ վասն այսպիսի օգտից, վասն առաջիկայիցն մաղթէ։

Արդ աղաչեմք զբարերարութիւնդ քո որ զայսքան բարիս շնորհես, զմնացուած գիշերիս շնորհեա խաղաղութեամբ անցուցանել։

Տես թէ քանի պէտս ունիմք խաղաղութեան խնդրոյ. զոր յառաջին ազօթիցն մինչև ցկանոնին յանգումն, զխաղաղութիւն հայցէ և հայցել հրամայէ և յառաջնորդէն ընկալեալ՝ ոչ շատի. այլ և աղաչէ վասն նր, առանց որոյ ոչ ոք տեսանէ զտէր։ Զորոյ և մեք մնացեալ, անդադար աղաչեսցուք զտէր և զնոյն խնդրեսցուք յայ. և նորուն զհետ երթիցուք. զի մի աստ և անդ զրկեալ լինիցիմք ՚ի զտէրն տեսանելոյ։ Եւ այսու միտ դիր թէ՝ որչափ խոստովանի շնորհ զայսր գիւտն՝ ասելով,

Զմնացուած գիշերիս շնորհեա խաղաղութեամբ անցուցանել։ Այսինքն թէ՝ շնորհս պարգևեա, զի և որ ինչ մնացեալ իցէ ՚ի գիշերոյս, խաղաղութեամբ անցուսցուք։

Եւ հասանել ՚ի պաշտօն աստուածուն, յերկրպագութիւն և ՚ի փառաբանութիւն ամենասուրբ երրորդութեանն։ Նա և ամ՟ շնորհաց գերունակ է սուրբ երրորդութեանն երկրպագուս և փառաբանիչս լինել։ Յաղագս որոյ յոլովից մաղթանաց զնոյն դնեն առաջի. Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Մաղթանք։

Գոհութեամբ և ճշմարիտ խոստովանութեամբ անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զսուրբ հոգի. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Բանք պիտանիք խրատականք, յոյժ օգտակարք և հոգեշահք՝ Նորին սուրբ հոգեկիր վարդապետին խօսեցեալ, զկամքն և զերկիւղն աստուծոյ՝ ճշմարտութեամբ ծանուցողի։

Բազում աղօթից մեզ պէտք են, բազում արտասուաց, յոլով պաղատանաց, և մեծապէս ճգնութեամբ հայցել յԱյ, զի արժանի լիցուք լուսաւոր միտս ստանալ. որով բորբոքեսցի ՚ի մեզ բաղձանք աղօթից և աստուածային գրոց վերծանութ՟։ Եւ համբառնասցի ՚ի ճաշակելիս մտաց մերոց խոհարարութիւնք իմանալի խորհրդոցն այնոցիկ. և ծանիցուք զշահ օգտութեանց հոգևոր երկանց, և զարդիւնաւորութիւն անսպառ բարութեցն։ Եւ դիմեսցուք սիրով զկաթն բանի հոգևոր ստեանցն. և զմայլեսցուք յօժարութեամբ՝ հոգւոյն սրբոյ պարգևօք. զի մի մնասցուք իբրև զանդաստան անգործ և անարդիւն, որ միշտ սերմանի և սերմանակորոյս լինի. զուր աշխատանք և ընդունայն վաստակք։

Ը, յայտնիք են մեզ ցնորեալք և բազք զբաղեալք, որոց ապառեալ է սէր լսողութ՟ ա՟ծային կատակարանացն. որք իբրև զխուլ և զաշացաւ շրջին յաշխարհի։ Զի կամ բնաւ ոչ ընթեռնուն, և կամ զոր ընթեռնուն՝ ոչ սիրով և փափագանօք. այլ իբրև զհարկ ինչ և վճար պարտուց։ Զի չիք ինչ ողորմելի քան որոց ապառեալ իցէ սէր գրոց սրբոց և բաղձանք վերծանութ՟ ա՟ծային պատուիրանաց։

Ո՜վ որչափ յամէ որք ՚ի հաղորդութենէ, ուրախանան դեք. զի դիւրամատչելի է նոցա հեռացեալն ՚ի փրկական խորհրդոյն։ Իսկ յորժամ հաղորդեսցի որ ՚ի զարհուրելին և յայս տան. և հեռանայցեն ես փախիցեն. զի խուրեանց տեղի անդր ոչ գտանեն։ Ո՜վ որ քն լինի անաձար, մեհեան դիւաց անդր ոչ յաջողի։

Վասն որոյ աղաչեմ զամենեսեան, և փոխան հայցեմ, յորդորել փեխրագոյնս յերկիւղն, և ՚ի ներքս այս. զի մի քնա ուտիք լեցի ... անարժանութբ հաղորդիլ և քարոզիչ ... յաղագս հաղորդութբ որոշել և ՚ի կորուստ մատնել, այլ յերկնից և սն անչափութեանց խոյս տալ։ ՚Ի լրութբ խորհրդոյն, և ՚ի հեղգութբ և յուսահատութեամբ յամելոյն և ՚ի բաց որոշելոյն։

Նմ այս ամ յանուղղութէ լինի և յանապաշխարութէ. ուր հովիւք զհօտից ոչ հոգան. վասն որոյ անտերունչք հօտն քն և մոլորականն շրջին, և թափուր և ունայն ՚ի հոգևոր խնամարարութենէ։ Իսկ ագահութի և ամայութի յաշխարհի տարածի. և ըստ անխորժակաց և հակառակ վարուց ամենայն որք ընթանայցի։

Ըստ այնմ ասէ առաքեալ՝ և նովաւ ամ անապաշխարողաց որոց ասացաւ. տարածեալ զոչխարս իմ, վասն որոյ զփրկութիւն իմ հեղի և փրկեցի. և ձեզ յանձին արարի հովուել բարւոք զի մի ոք կորիցէ։ Իսկ մարգարէիւն ասէ, * Որդի մարդոյ դէտ կացուցի զքեզ ՚ի վերայ ժողովրդեան իմոյ. եթէ տեսանիցես զսուրն մերձեալ և ոչ ազդ առնիցես անօրինին, անօրէնն յանօրէնութեան իւրում մեռցի, և զարիւն նորա ՚ի ձեռաց քոց խնդրեցից։

Լուսաւորք հովիւք լուսաւորք և երկնաւորք և առաւել զարհուրեցուցք. և ողջացէք ահիւ և դողութբ։ Ո՜վ ոչ թէ վասն այն կոչեցայք հովիւք զի զանձինս արածիցէք, և իշխանօք և երևելի երեսօք շրջեցիք յաշխարհի. և ՚ի փառս մարմնականս յօրանայք. և զգեստուք խենեշանայք իբրև զանխմաստս։ Այլ զի զժողովուրդեան հովուեցէք. զի զգառնաւոր խաշինս արածիցէք. զի զմատաղ գառինս տածիցէք. զի զայծիսն յօդիս փոխարկիցէք. զի միշտ բանիւ վարդապետիցէք և գործով զնոյն յաւէտ առնիցէք։

Զնմ բարեաց յանձնէ առ օրինակ հօտին մաքրութեան, և ՚ի նախանձ բարի յորդորել զամենեսեան։ Ո՜վ որում շատ առաւելութի իմաստ, շատ խնդրեսցի ՚ի նմանէ առաքինութի տեսակ։ Իսկ որում բազում յաւանդեցաւ վերակացութի բանաւոր հօտից, առաւել ևս պահանջեսցի ՚ի նմանէ ուղղութիւն վարուց և հոգաբարձութիւն ժողովրդոց։

Եւ դուք թողեալ զայս բարձրագոյն շնորհ, ունիցեք գործոց

հեռանայք և մարմնական հոգւոց պարարտիք․ և անբան կենդանեաց նմա-ծօղք լինիք, և նզովեալ երկիր կոչիցիք։ Եւ զոր ներումն թողութեան լիցիք․ կամ որ պատուական արժանի զանձինս համարիք․ մինչ զփառաց և զհեշտութեանց հոգայիք։ Երկրաւ դաշնեկանս ան-ւանդեալ ձեզ ամերն մեր քո զհետ և զնոր կատակերանս․ զի նորոգ զանձանց ոչխարին դարմանեք զանկեալն ի ձեռս աւազակաց և եղեալ կիսամեռ։

Եւ ձեր թողեալ զայս ամենայն առաքինութիւն, զինի ուխտի ընթանայք, զպահս ունելով և զաւուրս զգենլով․ և զբեկեալն ոչ համարիք արժանի բժշկութեան․ այլ կեղեքէք կրկին և կակծեցուցանելով։ Եւ որոյ օրինակ բարեաց լինել պարտ էր, գայթակղութեան լինելով պատճառ, զանձինս և զոլոր ձեռամբ անկեալսն կորուսանէք․ և որ զանձինն կորուսանէ անփոյթ առնիցէ, վասն այլոց ոչինչ հոգաց փրկութեան վարիցէ։

Ով հովիւք և հոգաբարձուք քո հօտին․ ոչ լուայք ի սաղմոսնէ զի ասէ, * Հզօրք զօրաւոր դատաստան ընկալցին․ այլ խառնիճաղանճն ներելի ողորմութեան է, ասէ։ Ով առաջնորդք և վերակացուք ոչ միայն զանձանց, այլ և զհնազանդելոցն հատուցեն պատիժս պատուհասից ըստ սխալանաց։ Նա՝ որ մեծն է քան զամ սխալմանս, և առաւել ունիցի զդատապարտութիւն յերկուց կողմանց։

Ով է ձեռս վաղվաղակի դնէք ի վերայ ազգաց․ և զորոց ոչ գիտէք զկեանս վարուց, հակառակ առաքելոյ զինելով, և կցորդ լինիք մեղաց օտարաց։ Թողում ասել զախմնեանն ախտ ախտանալոյն․ զի թէ աեղեակ գոլով վարուց և թէ ոչ, երկոքումբք տանջիք․ և երկոքին կողմամբք դատապարտիք։ Խոստացեալ ընտրեալքն ասէ պարծանօք․ և որք վասն ագահութեան կամ փառաց՝ գործ վճարիցեն․ և դատեսցին տուօղքն և առօղքն։

Թէ առեր մամոնայ և ձեռնադրեցեր զոք՝ զյուդայեան և զգ-սիմոնեանն ախտացայք զախտ, ի դատապարտութիւն անձանց, զի զպարգեւն որ ընդ վաճառուք փակեալ, զարժանիսն զրկելով ի շնորհացն, և զոչ արժանիսն պատուելով։ Եւ դարձեալ թէ ոչ առեր ինչ և զանարժանն որ ձեռնադրեցեր, կրկին պատիժք պատուհասի եղեցին․ զի դնէ ոչ վասն ագահութեան պատուեցար, այլ անմտութեան շուատփոյթ եղեր, յոչ արժանիսն զշնորհսն տալով։

Առ որոյ զգուշացարուք հովիւք․ և զգաստացարուք․ և լերուք զուարթունք ի գործ, պաշտպանելով միշտ ամենայն անարծաթասէրք։ Ով է ոչ օգնեսցեն ինչք ի մեծի աւուրն ասէ իմաստունն․ այլ միայն արդարակշիռ լինել զփրկանս շնորհէ ի մահուն յաւիտենից։

Օ՜ զարթիք զարթիք և առաւել ևս զգաստացիք. զի մի՛ լռեսցէ ՚ի մէնջ զսաստկագոյն բանին զայն, եթէ, *Աշխատեալ եմ ՚ի մէջ ձեր հովուացդ. և դատեցայց զձեզ դատաստանաւ: և եթէ՝ *Փայտ որթուն այլ ինչ. ոչ է պիտանացու. բայց զի ՚ի հուր այրեսցի: և եթէ՝ *Աղն յորժամ անհամի, արտաքս ընկեսցի և կոխեսցի յամենեցունց: և եթէ՝ *Եւ անօրէնութիւն ՚ի ծերոց, թիւրութիւն ՚ի քահանայից: և եթէ՝ *Առաջնորդք միաբանեցին ՚ի չարիս հակառակ տեառն և օծելոյ նորա. և բարկացաւ տէր վասն այսորիկ. և կորնչիք յուսոյն յաւիտենից: Օ՜ թէ ՚ի կեանս յայս միայն յոյս ունիմք լեալ, ողորմելի և անյոյս կորնչի որք տան աւարեալս. և լսէ ՚ի տեառնէ թէ, *Ընկալայք զվարձս անցաւոր կենօքս ՚ի կեանս ձերոց լռումն: Ուր արդարև վա՛յ են արժանի ըստ տեառն բանին:

Այլ վա՛յ է ինձ և եղուկ եմ ես. զի անձամբ զանձն դատապարտեցի, զայս խրատելով և զիս ոչ ես: Զայս ձաղելով՝ ես ՚ի նոյն յանցանս գտանիմ. զայլոց շիղական տեսի, և զմեծագոյն գերանն իմ ոչ նշմարեցի. զայլս դատեցի, և զանձն իմ ոչ երբէք ՚ի բարիս կրթեցի:

Բայց թէպէտ և այս այսպէս և առաւել եղկելի եմք քան զամ որք, այլ որչափ և է կարողութիւն, զարծաթ բանին արկանել պարտ է ՚ի սեղանաւորս. զի մի՛ իբր զքանքարանթաղքդ դատեսցիմք. զի ժամանակս մերձեալ է. և սկիզբն լինելոց է դատաստանի ՚ի տանէ տեառն: Յայտ է թէ ՚ի սրբութեանցն սկիզբն լինիցի. այսինքն՝ յառաջնորդաց, ՚ի վերակացուաց, ՚ի գլխոց և յիմաստնոց, ՚ի թագաւորաց, ՚ի դատաւորաց և ՚ի մեծամեծաց բանիւք և գործովք:

Վասն որոյ աղաչեմ զամենեսեան և փոխան պաղատիմ, դարձջուք առ տէր սրտի մտօք, սիրով հեզութեան և խոնարհութեան. զի դարձցի առ մեզ տէր գթութեամբ և ողորմութեամբ: Կանխեսցուք առ նա հանապազ երկարաձիգ աղօթիւք. և աղաչեսցուք միշտ զերեսս նորա ՚ի դէպ ժամանակի: Վասն զի մեծ են մաղթանք հոգևորք առ այծ. և կանխութիւք յարաժամ աղօթից. և մեծի շնորհի արժանացուցանեն զմարդ յորժամ ՚ի սրբ սրտէ լինիցին և խոնարհ ոգւով:

Եւ զի աներևութական է հրաման յարաժամ կանխութեան աղօթից, միշտ և անդադար կարդալ առ նա: Օ՜ թէ թէպէտ և այլոց առաքինութեանց ունիմք չափ և սահման, այսինքն՝ պահոց պնդութեան և ճնշելոյ զմարմին ըստ կարին՝ և զողորմութիւն տանել ըստ գոյին և ըստ ժամանակին: Իսկ զպատուղ աղօթից յամ ժամու պահանջեմք յաստուծոյ, և յամ հասակի և ՚ի դիպուածի:

Մանկանց բարւոք սննդականից է աղօթք ; և պահապան յետ և ՚ի
մէնս · երիտասարդաց գործակից · ծերոց յոյս հաստատութեան ·
քահանայից պատիւ պարծանաց · ժողովրդոց պարիսպ ամրութեան ։
Մենաւորաց փափկութեան փրկութեան · Թագաւորաց ցնծութիւն · իշխանաց ուղղութիւն · դատաւորաց զգաստութիւն ։ Զինաւորաց մարտակից · հիւանդաց կատարելութիւն · սգաւորաց սփոփանք · բերկրելոց հրճուանք · ննջելոց անդորրութիւն · խաղաղացելոց զգուշութիւն ։
Արանց գործակից · կանանց անակից · ճանապարհորդաց ուղեկից ·
նաւորդաց յառաջխաղացութիւն · առողջաց խնդութիւն · հիւանդաց մխիթարութիւն · մեղուցելոց քաւութիւն · արդարոց խնդութիւն · ննջեցելոց թողութիւն կենաց և յոյս բարեաց ։

Այս ամենայն են ներբողեցից զարդարանաւորութիւն աղօթից · զի
հրեշտակաց դասակից առնէ · սրբոց քաղաքակից · սերովբէից կաճառակից ։ Համար գործէ զմարդն և օթեվանս երրորդութեան կազմէ ։
* Ուր երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ ասաց տէրն , անդ եմ
ես ՚ի մէջ նոցա ։ Եւ դարձեալ , * Որ զբանն իմ պահէ , ես և հայր
առ նա եկեսցուք հանդերձ հոգւովն սրբով · և օթեվանս առ նոյն
արասցուք ։

Այլ հայրց զարդարան զառաջինս · և աղօթիւք գանձեա հաճոյացեալ էր ։ Եթէ զարել առեա զառաջին արդարն , աղօթիւք
նախ արդարացեալ և ապա պատարագն ընդունելի մատուցանէր էր ։
Սէթ , ենովս , ենօք , նոյ · աբրահամ , սահակ , յակոբ , մելքիսեդէկ ,
մովսէս , և ահարոն · ամենեքեան որքա ընդ այլ բարի գործոցն՝ և
աղօթիւքն յաւէտ հաճոյ գտան աստուծոյ ։

Դաւիթ ոչ միայն ՚ի մեղացն ուրիշ ապաւէր , այլ և զմարգարէական շնորհն աղօթիւք յինքեան պահէր ։ * Վաստակեցայ ասէ ՚ի
հեծութեան իմում , լուացի զամ գիշեր զմահիճս իմ և արտասուօք
իմովք զանկողինս իմ թացի ։ Միւսոյս գրեալ առաքելոցն՝ երից ուրացութեանցն դեղ և ապաշխարութիւն զաղօթսն գտանէր · եւլաց
ասէ դառնապէս , և այնչափ աստիկ մինչ զի արիւն ասի կաթեալ
ընդ արտասուացն ։

Մաքառորն աղօթիւքն արդարանայր և գեր ՚ի վերոյ գտանէր
փարիսեցւոյն ։ Կինն պոռնիկ յոլովից մեղաց թողութիւն աղօթիւք
ընդունէր և կեայր հոգւով · հաւատք քո կեցուցին զքեզ ասաց
տէրն՝ ՚ի ձեռն աղօթից ։ Եզեկիան միով բանիւ զմեղանսն յանձն
առնէր և ՚ի քրիստոսէ յիշել հայցէր , և դրախտին ժառանգ լինէր ։
Զի և յաւուրս եղեկիան եթէ Ճշմարիտ յաղօթս էր ապաւինեալ ,
թերևս ոչ էր այնպէս ՚ի կորուստ մատնեալ ։

Առաքեալքն աղօթիւք հանդիսացան · մարգարէքն հրաշալիք ցուցան · մարտիրոսքն պսակաց արժանացան · հայրապետքն ահարկուք ցուցան։ Պօղոս և Շիղայ զհիմունս բանտին շարժեցին աղօթիւք։ Պետրոս զանօթն կտաւի լի հրաշիւք իջեալ տեսանէր։ Եղիա հուր յերկնից իջուցանէր · և զանձրևն յարուցանէր։ Եզեկիաս հանգոյն վարդապետին գործէր, և առաւելեալս զամանէր · զՃուրան երկրաւք բժշկէր, զերշխանն ասորի մաքրէր, զգետեղի գող՝ ատանջէր · փայտիւ զերկաթ ՚ի ջրոյ վեր ածէր և յօրինակ խաչին ներգործէր · և զգունդքն ասորւոց կուրութե կապէր հանգոյն բելիարայ և դիւաց նր։

Ստեփաննոս նախասարկաւագ և առաջին վկայ՝ ոչ միայն նշանս և արուեստս գործէր աղօթիւք, այլ և զերկինս փեղկէր · և զորդի ընդ աջմէ հօր տեսանէր · և զոգի իւր յաւէտ ՚ի նոյն յանձնէր։ Աղօթիւք և յս հանդիսանայր անկարօտն աղօթից և ընդունիչն մաղթանաց համայնից · զի զմեզ յորդորեսցէ ՚ի սէր սրբութե աղօթից անձանձիր կալ միշտ և յարաժամ։

Աղօթք՝ պարիսպ ամրութե · ուժն հաստատութե · հիմն հաստատոյ · խարիսխ յուսոյ · սանդուղք առ ած ելից։ Աղօթք՝ պսակ պարծանաց · պատճառք փրկութե · առիթ բարեաց · մարդիչ համբերութեան · ծանօթութիւն ածպաշտութե · հոգւոյն սրբոյ հրաւէրօղ · և վկայէ կուռնեղիոս աղօթիւք զայս գտեալ և պայծառացեալ։ Աղօթք՝ սանդարամետականաց դիւաց հալածիչ · բեկումն բելիարայ · կործանիչ բանսարկուին, և ամ արկածից նորա լուծիչ, և ամօթ կորստեան։ Եւ քանզի դիւն ստանայ եթէ շնորհ առնու մարդ յայ ՚ի ժամ աղօթիցն, վս այնորիկ ջանայ ցնորել զմիտս մարդկան ՚ի ժամ աղօթիցն զի զրկեսցէ ՚ի շնորհացն զոր առնելոց է մարդն մաքուր մտօք աղօթելն։

Աստ որոյ և մեք զայս գիտելով, հանդիսասցուք հանապազ հակառակ նմին անդրդուել կալ յաղօթս։ Եւ մաքրեսցուք զմիտս մեր յամ արկածից չարին ՚ի ժամուն յայնմիկ · և առանց բարկութե և երկմտութե միշտ աղօթեսցուք։ Եւ մանաւանդ ՚ի վերայ թշնամեաց աղօթեսցուք սրտի մտօք · զի ընդունելի լիցի և մերն աղաչանք առ ած։ Նաև ՚ի ժամ աղօթիցն զհուր սիրոյն քի ստասցուք առ բուսեալս յանձինս մեր, կանխելով միշտ առ նա պաղատանօք, թեթև համարելով զաւուրեայ աշխատութիւնս առ մշտնջենաւոր բարեացն վայելս։

Զարթուսցուք զմիտս մեր ՚ի հանճարս կամացն այ յամ ժամ · և առաջնորդեալք վարուք դատախարակեսցուք զանձինս մեր։ Մի՛ յաւուրեայս և եթ նայեսցուք · այլ յաւիտենականին միշտ ցանկա–

ցուք · և անուն կենացն յաւէտ պարգևեսցուք ։ Մանաւանդ է կենցաղս այս · և զոր ինչ վաճառէ որ սաստ երկամբք անձին զգործս վաստակոյ , զնոյն գտանէ ՚ի հանդերձելումն պատրաստական անձին եթէ բարի և եթէ չար ։ Ընկալք յաշխարհ և գնամք յաշխարհէս · և գործքն զհետ մեր լիցին , և ՚ի մնացօնս սատի կենացս լիցուք · և հողք հանդերձելոյն միայն նորագի ։

Արժանանեաց որք ՚ի մարմին , և հեշտացաւ ՚ի վայելս մարմնականս · փառաց հեանեացաւ , ընչից և ստացուածոց ծառայեաց · հեղգութիւ և գառարկութիւ զկեանս անցոյց , որովայնիւ շուայտեալ , և մտօք միշտ զբօսեալ ։ Նաւց ամ , ապականեացու և յուշինչ դարձաւ · և պատահմք պատուհասին կան և մնան յաւիտեան ։ Հուր բորբոքեալ , և որդն եռացեալ , և տարտարոս և խաւար յայժ սարսափելի ։ Իսկ եթէ որք զրկեաց կամ գողացաւ , խաբեաց կամ յափշտակեաց , բազմապատիկ տոկոսեօք հատուսցէ · մինչ զի պատուեալ գործոցն՝ ՚ի հաւատոյն եւս վրիպեսցի ։

Ո՜ ինչ սաստ զմախացողաց , զնախանձոտաց և զատեցողաց , զզրպարտողաց և զկեղծաւորացն · որք անբերելի տեղեաց հանդիպին ։ Ո՜ խորհրդ և խորագանչիւր գործքն բուսանին ՚ի համաշխարհական յարութեան եթէ բարի և եթէ չար ։ Նա գործունեայքն՝ ըստ արժանեացն ընկալցին , ոմն պատիժ և ոմն պսակ ։

Նա յայնժամ մեծ վիշտ անդ առաւել և սոսկալի վաղանդ զիպեսցի ։ Ո՜ի հարք և որդիք ՚ի միմեանց բաժանին · և հարազատ եղբարք որոշին · և մտերիմք յայժ հեռասցին , և համանմանութիւնքն ՚ի բաց քեցեսցին ։ Ո՜չ է ոչ փրկէ եղբայր զեղբայր · և ոչ հայր զորդի իւր զոր ծնաւ · և ոչ կարէ գթալ որք յընտանի անձին իւրոյ · զի անաչառ է դատաւորն և իրաւացի է դատաստանն ։

Ընդ ստասակապքին որք երևեսցի , և պղծալի անբաւ տիրեսցէ · և ողորմութին ձայնք յայժ լսիցին ՚ի դատապարտելոցն անձանց ։ Ո՜չ ոմն ՚ի հուր գեհենին մատնեսցի , ոմն ՚ի տարտարոսն դատապարտեսցի · այլ ոմն որդանց հրեղինաց կեր լինիցի , միւսն հրեղէն սրով միշտ աննջեսցի ։ Նա ամենեցուն ըստ իւրաքանչիւր չափու հատուսցի ըստ արժանոյն · զի անհունքն է տանջանն այն · անհեղ և զարհուրելի է հրապարակն · և անպատկառ քննութիւն իրաւանցն ։

՚Ի Թագաւորաց անդ ոչ առնու · ՚ի քահանայից ոչ հարկի · մեծամեծաց պատիւ ոչ դնէ · յալիս ծերոց ոչ գթայ ։ Որք ոչ արարին ողորմութիւն , և ոչ գտանեն անդ ողորմութիւն ։ Որք զարծաթն սաստուել սիրեցին քան զքեզ , և զձիս և զձորիս և զշուշս և զորդարեջին , և զաղքատն անտես արարին , անդ դատեսցին ՚ի քնէ և ՚ի հուր գեհենին մաշեսցին · բայց միայն արդարքն պսակին յարքայութեան նոյ ։

Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօքն քո, որ է օրհնեալ ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Կարգաւորութիւն հաստատելոյ աղօթից առաւօտեան ժամուն, որ կատարի ՚ի դէմս որդւոյն այ։ Եւ առ ի Ղևյար առաւօտու, և այլն որ ՚ի յաւիտենին · և ապա Երգ երից մանկանցն։

—

Մովսէսի քերթողահօր՝ ՚ի յերգս Երից մանկանցն։

Երեք մանկունքն օրինակ էին մարդկային բնութեանս, և հնոց հրոյն՝ հանդերձեալ հրոյն։ Իսկ զերգս երից մանկանցն հանապազ յառաւօտուն երգել յեկեղեցւոջ · զի որպէս նոքա գերեալք ՚ի բաբելոնական բռնաւորէն ՚ի հնոցն անկանէին, նոյնպէս և մեք ՚ի հնոցի կենցաղոյս գերեալք յաներևոյթ բռնաւորէն, ըմբռնեալք պէսպէս ախտիւք, և լուցեալք եղեալ յաւիտենական հրոյն, սատանայօր զօրացեալ իւր հրեշտակական ազդմամբ ՚ի թառամեցուցանօղ քնոյն զարթուցեալք, առաւօտ առաւօտ ընդ առաւօտն զերգս երից մանկանցն ՚ի բերան առեալ ասեմք, Օրհնեալ ես տէր ած հարցն մերոց · օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան։

Եւ որպէս նոքա ՚ի փրկութիւն անձանց խուռներանց առ խուռներանց փրկիչն մատուցեալ, և որպէս առ եղկիւս ՚ի հնոցէն ՚ի վեր գոչէին, յորդորելով զամ արարածս ՚ի փառաբանութիւն այ։ Ըստ նմին օրինակի և մեք խառն անդամք ՚ի մարմնոյ նոցա և յօծելոյն նմ, ՚ի վեր մեր և ՚ի մեզ բերելով զգալիսն, վերադարձեալ աղաղակեմք առ ընդհանուր ամենայն արարածս թէ, Օրհնեցէք ամ գործք տն զտէր։ Որք զի աղաչեալք ՚ի մեղացն՝ և աղօթութեամբ մերոյ հաղորդ լեալք ամ բնութիւնք արարածոց, հարկաւորին ամ իրաց և նոքա ընդ մեզ օրհնել և փառաւորել զած · զայն՝ որ աղօթէն զամենեսեան։

Բայց պարտ է նախ ապաշխարութեամբ ՚ի մեղացն սրբագործանել, և ապա հրաման առնուլ արարածոց գալ ՚ի փառաբանութիւնն այ։

Նախ ասել թէ, Մեղաք՝ անօրինեցաք յանցեաք։ Եւ ապա համարձակիլ և ասել թէ. Օրհնեցէք ամ գործք տեառն զտէր։ Նախկին թէ, * Ողորմեա ինձ ած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում, քաւեա զանօրէնութիւն իմ։ * Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. և ՚ի մեղաց իմոց սուրբ արա զիս։ Եւ ապա համարձակիլ և ասել, Օրհնեցէք զտէր յերկնից օրհնեցէք զնա ՚ի բարձանց։ Օրհնեցէք զնա ամ հրեշտակք նորա. օրհնեցէք զնա ամ զօրութիւնք նորա։

Յովհաննու Ճիճանեաց եպիսկոպոսի։

Որդ՝ ասէ եկեղեցի էյ հանապազ զփրկութիւն նախաստեղծիցն զոր արար որդին միածին. Նախ զարուին ՚ի ձեռն քառադեռնագեայն կենդանեաց և երից մանկանցն փառաւորութեան որդւոյն էյ. Բայց նախ ասելոյ պատճառն զօրհնութիւն երից մանկանցն քան զողորմեայսն ասեմս. զի նախ զարուին յառաջ բերել զփրկանաւորութիւն, վասն զի այս է գլուխ կենաց. յետոյ և զերդականին զազատութիւն. ոչ եա անօրէնութեամբ յղանալ և արամաւթեամբ ծնանիլ որդիս յանեծս։

Սպասն զի ըսէ բոլոր զատապաշտութեան, սրբուհեաց ամենայնին որդեծնութիւն և քանզի բարձաւ ամ պատճառք մահու որ յանիծից մեղքն, մարմնաւորապէս որդւոյն էյ տեառն մեռոյ յի քն և մահուամբ եւ յարութեամբ նորին. Ընդ նմին եղաք յարուցեալք ՚ի թաղմանէ մեղաց՝ որք ընդ նմա մեռաք մկրտութեամբ. նա և համարձակիմ ասել թէ ընդ աջմէ հօր նստաք պարկեալք։ Որպէս ասէ եկեղեցի սուրբ. և յառաջագոյն այսպիսի [illegible] որ առ մարդն եղև յայս, անդ [illegible] մատուցանէ զյառաջագոյն ասացեալ երգս երից մանկանցն և ըզգածութեան սաղմոսս։

Նախքան յառաջագոյն [illegible] որ քրիստոնեայքն եղև առ ՚ի բժշկութիւն [illegible] ողորմեայսն. վասն որդութեան և այլ զորդեգրութիւն ՚ի մեղ ընդունիլ։ Նայս երկրա հանրհրդածութեամբ ՚ի [illegible] կեաց ՚ի սրբութիւն։ Եւ ամ [illegible] հնազանդութեան երրեակ միութեանն մատուցանել [illegible] է, ամ քրիստոնէից զինի հարցին ՚ի դէմս [illegible]. և ողորմեայսն՝ ՚ի դէմս եայի։

Եւ ապա քարոզ՝ զինի երից մանկանցն՝ և մաղթանացն։

Ընկալեալքս ամենեքեան միաբանութեամբ ՚ի սուրբ կաթողիկէ և առաքելական եկեղեցի, աղաչեսցուք զմիածին որդին աստուծոյ զտէրն մեր և զփրկիչն յս քս։

Մեծին. Խոսրովու։

Զի՛մ ոչ զայն իսկ դնէ հրմն. զաղաչեսցուքն, այլ զգալոյն միաբան յեկեղեցին։ Խաւսի ինձ յորդորել այսպիսիւք զլսօղսն, զի առանց վհատելոյ՝ ՚ի խնդրելոյն զառաւելոյն յուսասցին։ Զի եթէ երկու որք միաբանիք զինչ և խնդրեսցեն յիմ՝ ասացէ նոցա․ որչափ բազմաց միաբանութեան ունկնդիր և առաւել հայցուածոցն լինի։ Կարծեմ և զմիաբանութեան յայս սակս եդ, զի առաւելութի բազմաց միաբանելոյն՝ քան զերկուցն ցուցցէ․ իսկ զեկեղեցին յիշելով, զկատարելութեան պատճառսն ցուցցէ։

Զի եթէ ՚ի հնումն օրէնսն ՚ի տաճարին այ զիւրաքանչիւրոցն հայցուածսն լսել և առնուլ յուսայր։ Եւ դաւիթ ինքն զկնդրէն ՚ի տաճարին զլսել խնդրուածոցն իւրոց հայցէ․ *Լուր ասէ տէր ձայնի խնդրուածոյ իմոյ յաղաչել ինձ առ քեզ, ՚ի համբառնալ ձեռաց իմոց ՚ի տաճար սուրբ քո։ Եւ եսայի ասէ, *Տէ՛ս ՚ի տաճարէ սրբոյ քումմէ և ՚ի փառաց քոց։ Եւ այն, զի անդ սեղանն զանասնոցն մատուցանէր պատարագ․ ապա որչափ գերակայ է օգտութիւն որ ՚ի նորումս՝ ՚ի տան այ զաղօթսն մատուցանել առաջի նր․ յորում վերայ արիւն անարատ գառինն դնի պատարագ։

Վասն այսորիկ և սուրբ կոչէ․ զի սրբոյն այ է բնակարան, և հրեշտակաց սրբոց բանակետղ, և արդարոց կատարելոց տեղի իջավանի յերկնուստ յերկիր երթևեկութե։ Քանզի ՚ի սմա տր ՚ի բազում բարձեալ լինի կրծիմն․ և երկիրս ընդունի զերկնայինսն, և երկնայինքն միանան ընդ երկրայինքս։ Եւ նմանեցեալ սուրբք՝ ընդ հաստատեալ կենդանիս․ զի եթէ հաստատունք եթէ տուն այ և բնակարան է եկեղեցի որպէս ինքն ասաց։

Եւ զինչ է կաթուղիկէն․ տիեզերական։ Զի ամ եկեղեցիք ուղղափառաց որ ընդ տիեզերս են՝ մի են․ մի քս յամ եկեղեցիս է որ ըստ առաքելոյն հաւատոյ շինի․ զոր և առաքելական կոչեմք։ Որ զի թէ և բաժանին՝ ըստ տեղեաց, այլ ոչ եթէ ըստ ժողովրդոց։ Զի ՚ի ծագաց մինչ ՚ի ծագս երկրի ուր և հաստատեսցէ ճշմարիտ հաւատացելոյն յեկեղեցիս ուղղափառաց՝ իւր եկեղեցի է․ և ոչ որպէս

գնա ; ոչ աշխարհն և ոչ լեզուաց օտարութիւն․ այլ ընդունի որպէս մայր 'ի գիրկս ստնտու սիրով։ Նա այսպէս իմ սուրբ անեղերական կուչի վասն անեղերաց հաւատացելոց զդրունս բանալոյ և զգիրկս ախտելոյ։ Նա արդ՝ ամս քանիօն զհարևացն ունի լինիլ ամէ։

Երկնայնոցն՝ դարձեալ ասեմ սա է տեղի՝ հանդերձ երկնաւոր Թագաւորաւն․ ազգակցաց մերոց սրբոց՝ 'ի սմա ընդ մեզ է խառնումն․ իմ հաւատացելոց որ յիմ երկրի՝ սա է մայր։ Մեղացն մերոց՝ և մերոց ննջեցելոցն աստուստ է քաւութիւն․ նաւերաց և մերոց պատարագաց առաջի այ ասս լինի դրութի։ 'Ի սմա զորդիանալն այ վերստին ծննդեանմբն ստանամք․ 'ի սմա կերակրեմք զանմահական և զանապականացու կերակուրն և որով ընդ քն միանամք։

Սա է սանդուղք յերկրէ յերկինս վերելութե․ և զխաչելութիւն քն և զգերեզմանն բաղձամք տեսանել, աստ զփափագն լնումք։ Քանզի ուր պատարագի քս, անդ է խաչելութիւն․ և ուր մարմինն սուրբ տեառն մարդկային նորա որդւոյն ցուցանի, այն է գերեզմանն նորին․ և ուր մեռելութիւնս մեր կենդանանայ, անդ հաւատամք կենդանութե որդւոյն այ։ Զի թէ և մահու նշանակ է հացն և բաժակն, այլ կենդանի և կենդանարար է․ զի ինքն ասաց, *Այս է հացն կենդանի որ յերկնից իջեալ է։

Բայց վայ ինձ վայ ամենայն ժամանակիս․ որ բառ մարգարէին կանխասացութե օտարացաք 'ի մօրէս․ և յայսչափ պարգևացս զմեզ օտարացուցաք։ Զի թէ և այլ ինչ չունէաք յանցումն, այս միայն բաւական էր մեղաւորս առնել զմեզ․ քանզի և աստանօր մարգարէս՝ ոչ վասն այլ իրիք, այլ վն 'ի հոգևոր մօրէս օտարանալոյ կոչեաց մեղաւորս։ *Օտար եղեն ասէ մեղաւորք 'ի մօրէ․ խաբեցան յորովայնէ․ այսինքն՝ յաւազանէն։ Քանզի վերին 'ի շնորհաց աւազանին, օտարացեալքն յեկեղեցւոյ․ և ատեցեալ լինին իբրև ըղխորթան վասն զնովաւ արհամարհանացն։

Նա զինչ է՝ խօսեցան սուտ․ զի ասեն, *Իբրև սիրելի են յարկք քո տէր զօրութեանց․ ցանկայ և փափագէ անձն իմ 'ի գաւիթս քո։ Նա դարձեալ ասեն, *Զմին խնդրեցի 'ի տեառնէ և զայն աղաչեմ բնակել ինձ 'ի տան տն զամ աւուրս կենաց իմոց։ Նա դարձեալ թէ, *Ուրախացայ ես ոյք ասէին ցիս 'ի տուն տեառն երթիցուք մեք։ Զայս և որ սոցին նման ասեն և մեծապէս ստեն․ զի անարժանի համարին յառաջինկայս ժողովել զժողովուրդ այ, քան բնակել 'ի տուն նորա։

Ա՛հ գործոյն և ողջունմ գործելեացն․ եկեղեցիք այ խրթնացեալ, և ժողովուրդք 'ի նոցանէ քեցեալք։ Բաս կամաց ուր և ինքեանց լաւ հաշուեսցին, անդ զեկեղեցւոյ փառս տան։ Նա որ եւ

դիմնդամին․ զի ոչ էր, այլ մարդոյ զհարցումն առնէին պարզաբար․ զի առ-ուածոյ զխորհուրդ ի պաշտօնն ժողովէին․ ոչ էր, այլ նոցա պարզաբանն առա-ջինն․ որպէս թէ զերկրաւորն նորա քան զամն լինէին, ... առաքեալն զանձն ստորերել, զնոցայն նախանձաւոր առնէին։ Այնչափ իբրեւ էր առել զաստուածութիւն բանին, *Երթայք առ զիշխանքն կայսեր, և զայն էր։

Զի որ ինչ աստուածոյն մնկէ պատուոյ, զայն աստուծոյ յաւակոյն տուեալ․ և դուք զպաշտօնն էր՝ յաստուածոյ պատուիրեցէք ասէ։ Մարդարէին համանման թէ, *Առաք օրհնեցէք զՏէր ծառայք մեր անուան զՏէր։ Իմաստնոյ և թագաւոր է, գիշերին երեկոյ ի տուն սնյոյն։ և այլոց ձայնատու լինել հրամայէ․ թէ ծառայք էք անուան, զաւ տէրն ձեր եկայք և ի տուն անուան ձերոյ․ և մի պատմեցէք գիշերաւ ի տուն՝ *Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն և օրհնեցէք զՏէր։ Այլ թէ ծառայ էք անուան, մի ընդ գիշերոյ կոչման անուան ձերոյ․ ապա թէ կոչէ և ոչ գայք, չէք նորա ծառայք։

Մարդարէին կոչէ զմեզ, և դու չանսաս․ ապա ուրեմն և պաշտօն կոչողին առ ի քէն չէ հաճելի․ եթէ *Ուխտս ընդդէմ է քան զպատարագ։ Ի վերայ մեր պատմառացե զոր ասացաք վասն քարոզիս բանի, խմանալի է և այս․ զի ի բանս հայեցեալ որ ասէս զզամն ի սուրբ եկեղեցի, խմացուք թէ չէր հնար աստուածորդւոյն յայլ տեղիս համարձակիլ ի պաշտօնն միաբանութեամբ, բայց միայն ի սուրբ եկեղեցիս։

Աղաչեցուք զմիածին որդին Այ զՏէրն մեր և զփրկիչն յի՛սուս քրիստոս․ որ էջ փառօք Հօր ի մէջ հնոցին և փրկեաց զերիս մանկունսն ի քաղդէացւոց անորի։

Քանզի չորս եռես նաբուքոդոնոսոր․ և ասէ, *Ո՛չ երիս արս արկաք ի հնոցն, և ես չորս տեսանեմ․ և տեսիլ չորրորդին նման է որդւոյն Այ։ Նաւուլէ յորդորէ քարոզիս բան թէ՝ նոյն ինքն որդին Այ միածին Տէրն մեր որ փրկեաց ի մոլորութէ զմեզ, նա էր որ յայնժամ Գ տղարկանսն իջեալ եկաց ի հնոցին․ և այժմ առ մեզ է։

Զի թէ ուր երկուք կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ լինի և նա ի մէջ նոցա․ ապա որչափ եւս առաւել ուր միաբանութբ ժողովուրդքս իցեն ի տուն Այ՝ լինիցի ի սմա։ Աղաչեցուք ասէ զնա այնպէս խոստովանութեամբ և պաղատանօք որպէս մանկունքն ի հնոցին․ զի որ յայնժամ պահեաց զնոսա ի հրոյն, պահեսցէ զմեզ ի մեղաց և ի ցանկութենէ աշխարհիս․ վասն որոյ և ասէ,

Յուսաւոր և սուրբ պահեսցէ զմիտս մեր․ զի մի երբեք խաբեսցուք մեք ի մեղաց և ի ցանկութէ աշխարհիս։ Միանգամ ներեք հրեղէնք ստանայի՝ խաւարեալցն տղետն․ իսկ լուսաւորեալցն մտաց՝

անզօրք են ըստ սաղմոսողին, *Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ո՛չ ՚ի նետէ որ թռչի ՚ի տուէ։ Վասնզի թէ արեգական արդարութեան ծագեալ տիւ առնէ՝ քոց մտացդ. աներկիւղ մնասցես յամ նետից. զի այն էր ՚ի խաւարի շրջի. յորժամ խաւարաւ դիւին ծածկին, և աւուր հասարակի լոյս զխաւարն զնա կործեն, զփափկութիւն աշխարհիս, և զցանկութիւն մեղաց։

Այնր ապագայ խրատէ խնդրել զլոյսն ածային, և զարքութի և զյստակութիւն մտաց. զի մի՛ իբրև լուսով խաբեսցուք մեզօք և ցանկութե աշխարհիս։ *Լարեցին առէ զաղեղունս իւրեանց յիրս դառնութեան, ձգել ընդ խաւար յայտնապէս որ ուղիղ են սրտիւք, յանկարծակի ձգեսցեն ՚ի նոսա։ Զի զիրս խաւարի և զդառնութե իբրև զնետս ինչ զան ձգել, և իբրև զքաղցր ինչ արկանել ՚ի սիրան. այլ ուղիղքն սրտիւք ո՛չ երկիցեն թէ յանկարծ և յանգէտս ձգի. քանզի լոյսն որ յուղիղ սրտին է, չտայ խաբել. այլ ծանուցանէ զդառն դառն՝ և զխաւարն խաւար, և անպատիր մնացեալ լինի։

Արժանի եղիցուք պահել զպատուիրանս նր։ Այս է ճշմարիտ և անխաբ լոյսն։ *Պատուիրանք տեառն լոյս են առէ և լոյս աչաց, առ ՚ի տեսանել զնետս բանսարկուին և խոյս տալ ՚ի չարէն։ Իսկ փոխարէն զոր գտանեմք պահելով զպատուիրանն, առա զանպատիր և զանմոլար կեանս, և անդ զպսակն անանց լուսոյն և անվախճան կենացն. որպէս և յարէ ՚ի նոյն։

Անուղ զպսակն լուսոյ և կենաց ՚ի յանձինս մեր զոր խոստացաւ սիրելեաց իւրոց։ Վասնզի նա է երանութիւնս այս. ասաի լոյս՝ անաի պսակն. և որ մեծն է քան զամ՝ սիրելի նոյ լինել. որ և ՚ի սանջանս քաղցր է և անզուգական փառք սիրելն ՚ի նմանէ, թող թէ ՚ի լուսոյ և ՚ի կենաց պսակն։ Եւ զի մի՛ թերահաւատ այսուիկ լինիցիս՝ դնէ առաջի զմեծագոյն յոյսն զճշմարտութե նոյ. որոյ՝ սուտթիւն ՚ի խոստմանն ո՛չ գոյ զի սուրբ և ճշմարիտ է. վասն այսորիկ առէ, Զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն ած։ Եւ առս յաղօթս փակէ զբանն։

Յս̃ քս̃ տէր մեր կեցո և ողորմեա։ Զնոյն ասեն և ժողովուրդքն՝ կեցո տէր։

*Բանալ զաչս կուրաց, և կանգնել զգլորեալս առնել։ Եւ յաւետա-րանին յայտնեցաւ 'ի մեռելոց՝ կատարել զխոստմունս աւե-տեաց մարգարէին։

Եւ անդէն աւետարանական բանիցն ընդ գեմ բերեն թէ, *'Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր 'ի սրբութիւն և օրհնեցէք զՏէր։ Որ լուաւ աղօթից մերոց, և յարուցեալ 'ի մեռելոց փրկեաց զմեզ, թագաւորելով համաշխարհական 'ի վերայ ամ ազգերաց։ Իսկ գի-շեր՝ ոչ եթէ զժամանակն ասաց, այլ զհրէական զանհաւատութիւն առակէ ըստ եսայեայ պանծալի մարգարէութեանն եթէ, *'Ի գիշե-րաց կանխէ հոգի իմ առաւօտ առնել առ քեզ աստուած։

Եւ ապա յայլ աւուրց կարգն եդանեն։ Եւ յետ Տէր յերկ-նիցն՝ փառք 'ի բարձունս, և զկնի՝ Եղիցի անուն. որ նկարագրէ զխորհուրդ խնամոց աշակերտաց ատեան։ Որ յետ յարութե տն աւուրն յարուցեալ 'ի մեռելոց. և ուրախութե հանդիպէին 'ի նա-ւարկութեանն իւրեանց 'ի տիեզերական ծովուն։ Որպ և գրեալ է 'ի պատմութեան աւետարանին, և 'ի գործս առաքելոցն։

Քարոզ՝ զկնի Մեծացուսցէն. Սուրբ զԱծածինն. և աղօթք՝ Ընկալ տէր։ Իսկ 'ի կիրակէի զկնի Մեծացուսցէն զայս ասեն։

Վասն սուրբ եկեղեցւոյս շինութե, և բարեկարգութե ուխ-տիս զՏէր աղաչեսցուք։ Սուրբ անուն ասէ եկեղեցւոյն. շինութի է յաջողութի ժողովրդոց, և որ 'ի ժողովրդոցն ուղղու-թիւնք ըստ խրատու գրոց սրբոց։ Զոր և 'ի պօղոսէ ուսանիմք ասել զառաքեալս և զմարգարէս և զաւետարանիչս, զհովիւս և զվար-դապետս. 'ի հաստատութիւն սրբոց, 'ի գործ պաշտաման, 'ի շինած մարմնոյն քի։ Եւ սուրբս կոչեաց զհաւատացեալսն. նոյնպէս և մարմին քի, որ շինի պաշտօնէութեամբ որ խրատեն զնոսա յուղիղ վարս։ Դարձեալ ասէ, *Իւրաքանչիւր ոք ընկերին հաճոյ լինիցի 'ի բարիս վասն շինութեան։ Եւ երբ զընտրութիւնս վասն լեզուաց օտարօք խօսելոյ ասէր, ոչ ինչ օգուտ կայ ասէ զի եկեղեցին շի-նութիւն առնուցու։

Նա յայտ կարևոր շինութիւն է որ 'ի խրատուց գրոց սրբոց լինի եկեղեցւոյն քի։ Եւ աղօթելի է նախ վասն սորա, և ապա վս յաջողութեան ժողովրդոց։ Իսկ ուխտս ասէ՝ որ ըստ քահանայա-կանին միաբանեալ են. վասն որոյ կարի առաւել աղօթելի է բարե-կարգաց քաղաքավարելոյ։ Որք եթէ 'ի բարեկարգութենէն սխա-

լեսցին, զքաղաք ժողովուրդն կորուսանեն. որպէս ասէն որ չար է, մեծ մարմնոյն խաւարին է։ Արդ խրատէ քարոզն՝ վասն եկեղեցւոյ շինութեան և վասն ժառանգաւորաց եկեղեցւոյ բարեկարգութեան։ Այսպէս գլխաւորելով զսա՝ և զառաջնոյն որ զնեղն՝ թէ զանէր աղաչեսցուք։

Աստն ժողովրդականացս որք միաբանեն ընդ դրունս սորա՝ զանէր աղաչեսցուք։ Զի մի ոք կորիցէ 'ի հօտէս, և արտաքս քան զփարախս զայս ելեալ գազանակուր լիցի։ Այլ զի և ուր և երթիցէ, բարի և քաջ հովիւն քս ինքն 'ի վերայ կայցէ. անմիջապէս պահեսցէ և ածցէ 'ի փարախս հաւաքեսցէ։

Յաղագս վայրի հօտացն զայնոսիկ որ յաւելեալ ասնցս ատենեն. ո՞չ են այս պատարագս մի որոց աղօթիցս խնդիրն են։ Հրամայեաց խնդրել պետերեցւոյն 'ի խաղաղութե և 'ի հաստատութե շինել, և եկեղեցականացն բարեկրօն լինել, և ժողովրդեանն փրկել։ Արդ ո՞ր է որ որքչն է յայսցանէ և պաշտօնեայ կոչի. բայց զի զուխան ոչ է կարացեալ գիտել եթէ ոյք են, և բնաւ զի մեր խնկ բանիւն չէ եղեալ, համարեցաւ որ զայն յաւելն 'ի զերկման զմնձակաւորսն. և զայն՝ պաշտօնէից անուանք կարգեաց։

Ա՟ զի ընդունելով զխնդրուածս սորաց միաբանելոց։ Զի միաբանեալ ամք ասէ 'ի խնդրուածս, աղաչեսցուք տալ զոր խնդրեմքս։

Պարձեալ ասեմ, պաշտօնէիցն այն զոր նոքայն ասեն, չեն միաբանեալ սորաց հայցուածքն ընդ այլսն. զի ուրոյն նոցայն յիշեն խնդրուածքն։ Յայտ է թէ յոյժ օգուտ է յաւելուածն. 'ի վերայ այսր բերէ թէ, գթասցի և ողորմեսցի։ Տեառնեն պչահ սորաց միաբանելոց. 'ի գութ և յողորմութի ածէ ասէ զամ ընդունելի ըղ հայցուածսն։ Եւ աւարտէ և զայս եւս 'ի գոհութի ատեանն ոյ և փրկչին մերոյ յս քի։

Քարոզ՝ զկնի Իւղաբերից աւետարանին.

Զուարճացեալքս անմեռքեան աւետեօք յարութեանն Տեառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի։ Յաւետարանէ անտի զաւետիս յարութեան քրիստոսի լսելով որ տէրն է և փրկիչն մեր՝ զուարճացեալք եղաք։ Յո՞ր ասես. նախ՝ զի տէր մեր է և փրկիչ որ յարեաւն։ Երկրորդ՝ զի այն ծննդեանն որ 'ի յարութիւնէն մարմնոց մերոց լինելոց է պտուղ՝ նախ անդրանիկ

եղև։ Մայր աղաղակաւ ասէ ոչ զուարճանամք միայն, այլ և մեծաւ ուրախութեամբ։

Ով եթէ ամուլ արգանդ երկրի որ զսերմանեալ մարմինս մարդկան ընկալաւ և անծնունդ էր առ ՚ի յարութեան պտուղ, ծննդական եղև։ Որ զտէրունական մարմինն զանապականն ծնանելով որ անապականութեան մերոյ եղև ծնունդ անդրանիկ. ապա յայտ է թէ ամլոյ արգանդին բանալով՝ չէր արգել զամ մարդկան առ վերստին ծնունդ յարութեան։ Եւ զինչ օրինակ եղև այսմ շնորհի որ յարեաւն ասէ ՚ի մեռելոց։

Յորովայնեաց ասէ զդրունս դժոխոց և եհաս զբռնութիւն մահու։ Յանցեաւ ադամ և զմահ տիրեցոյց նիզեան և որոց յիւրմէն. և բնակեցաւ մահ ՚ի մարդիկ։ Եւ որպէս դրամբք և նշգօք արգել ՚ի կենդանութէ, և բարձեալ էր յայս մարմնոյ նորագման՝ և հոգւոյ ՚ի նմա դարձ։ Ով թէ եղեն արդարք և սուրբք, այլ ոչ բնաւին ազնմերգք. վասն այսորիկ ոչ զեւրեանց և ոչ զայլ մարդկան զօրեցին բառնալ զմահ։

Յաղագս որոյ պէտք եղեն անքիծ արեանն առ ՚ի քաւութիւն ադամայ և ծննդոց նորա, և մեռանելոյ անարատ մարմնոյն քո որով մեռաւ մահ։ Եւ զարգելումն մարդկային հոգւոց ՚ի մարմնոց՝ խափանեաց մեռելութիւն քո՝ և հոգւոյ նորա առ ոգիս մարդկան գնացումն։ Որ և վերստեաց զնոսա ընդ իւր, և անխափան գործեաց զմիւս անդրէն իւրաքանչիւր ոգւոցն յանցնիւր մարմինս։

Քանզի որպէս յանցանքն ադամայ եմուծ զմահ, այսպէս արդարութիւն քո զկեանս շնորհեաց. որպէս ասէն առաքեալ եթէ, * Որպէս միոյն յանցանօք յամ մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս և միոյն արդարութեն յամ մարդիկ արդարութիւն կենաց։ Եւ դարձեալ թէ, * Որպէս թագաւորեցին մեղք ՚ի մահու անդ, նոյնպէս և թագաւորեսցեն շնորհօք ՚ի կեանսն յաւիտենից ՚ի ձեռն տեառն մերոյ յի քի։ Եւ զի կեանս յաւիտենականս շնորհեցաւ մեզ քո յարութեն, յայն սակս ասէ քարոզն։

Եւ ետ յայս հաստատուն վերստին նորոգումն կենդանութեան ամ մարդկան։ Հաստատուն ասէ, որ է անսուտ. և տես՝ զի ոչ վասն աստի ինչ իրաց ասէ առնել զայսն, այլ վասն հանդերձելոցն. զի ՚ի նորոգումն յաւիտենից կենացն է առնել զայսն։ Եւ ասէ յայս հաստատուն. որպիսի ինչ, վերստին նորոգումն կենդանութեան ամ մարդկան։ Վերստին՝ թէ միւսանգամ. եւ նորոգելն՝ զհնացեալն՝ և զապականեալ մարմնոյ նորանալն անապականութեամբ ցուցանէ։ Եւ զի՝ վասն այնորիկ պարգևի գոհանալ խրատեաց։

Խնդրեսցուք ՚ի փրկչէն մերմէ յսէ քսէ որ փրկեաց զմեզ ՚ի մահուանէ։ Նա զի՞նչ է զոր խնդրելն հրամայէ։ Զի արժանաւոր արասցէ յարութեանն իւրում կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց։

Տես զո՞րպիսի պարգև խնդրել վստահացուցանէ. այնպէս զմեր խոնարհ մարմինս փառաւորել, ոչ զտէրունական մարմինն։ Քանզի ՚ի յոյս յայս առաքեալն վստահացոյց ասելով թէ՝ *Նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ կերպարանակից լինել մարմնոյ փառաց իւրոց։ Այնպէս և պետրոս, *Հանդերձեալ փառացն որ յայտնելոցն է՝ հաղորդս զմեզ ասաց։ Նա յովհաննէս ասէ թէ, *Յորժամ նա յայտնեսցի այսինքն քս, նման նմա լինելոց եմք։ Այլ մեծի պարգևիս. եթէ ոք ունիցի իմացումն, խնայել յինչս կամ յանձն մարթիցի՝ այսպիսի ունելով յոյս։ Նա յարէ ՚ի նոյն աղաչանս։

Ամենակալ տէր ած մեր կեցո և ողորմեա մեզ։ Զայն զայս հայցելով յամենակալ տեառնէն և յամենակարօղ, զայն տպա և միջեան հայցեն՝ զկեցո տէրն ասելով։

Մաղթանք։

Ամենապայծառ և ճշմարիտ յարութեն քն այ մերոյ։ Զի ոչ եթէ առաքելոցն միայն, այլ և որ այլևս ընտրեալք էին յետ յարութեան տեառն, համայն շնորհօքն որ առաւ առաքելոցն՝ և նորօք աշխարհի, ամենեցուն պայծառ և ճշմարիտ քն յարութին երևեցաւ։ Յարութեան ասէ քն այ մերոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Քարոզ՝ զկնի Ողորմեային։

Նու նախ առաջին զայս կարեւոր համարիմ ուսանել եթէ զի՞նչ ազգաւ այլ քարոզքն ընդ ժողովրդեանն խօսին, իսկ սա ըստ աղօթից կերպի ընդ այ խօսս ունի։ Նա ոչ սա միայն, այլ և ՚ի պատարագին յետ յիշատակացն քարոզն է, և որ յերեկոյին ժամուն յետ օրհնութե ճրագացն. երեքին սոքա ընդ ած խօսին. զորս այսպէս իմանալի է։ Զի գոհութիւնք շնորհակալութե՝ այ

մատուցանին։ Սոյն՝ վասն ի գիշերին խաղաղութեամբ մտալ և հասանել յառաւօտին պաշտօն. և միւսն՝ վասն ի տունջեանն և յերեկոյին փառաբանութիւն խաղաղութեամբ գալոյ։

Իսկ որ ի պատարագին է՝ զայնմանէ գոհանալ և շնորհակալել, զի այնպիսի մեզ ուարգևեցաւ պատարագ և զենումն։ Վասն այնորիկ բարձր ձայնիւ սարկաւագն ասէ. որպէս զի ամենայն ժողովուրդքն հաղորդեսցին գոհութեանցն և մաղթանացն։ Նոյն յոլովք որ առ ծուլութեան շուտափեալք թողուն զքարոզս զայս, և յարեն յիրեարս զողորմեացն և զտէր յերկնիցն՝ երկուս մեծամեծս տանելով վնաս։ Մի՛ այն, զի զողորմեացն փառս տալով չասաղբեն որպէս կարգաւորութիւն է. և միւսն՝ զի զփառաւորութիւն որ ի բոլոր ժողովրդեննէն առ սուրբ երրորդութիւնն՝ ի բաց հատանեն. որպէս թէ ամի Ն ի վերայ բերանոյ եդեալ ամ ժողովրդեանն, զի մի՛ փառաւորեսցի սուրբ երրորդութիւնն ի ժողովրդոցն։

Պարծեալ որ վասն գիշերոյն պահպանութեան է շնորհակալութիւն փառաւորութեամբ, զի զայն մի՛ մոռասցեն այ։ Նա վասն էր զայս չար դևն խնդայ։ Գիտէ թէ՝ որ վասն անցելոցն խաղաղութեանցն շնորհակալ լինի, և յառաջիկայն պահպանութի գտանէ. վասն այսր՝ գիշերոյ պահպանութեան անշնորհակալս առնէ, զի տունջեանն դիւրամուտ առ ի յիւրն փորձութիւնքն լինիցին։ Ջի չէ՛ ընդ վայր ասացեալն, *Բերան գոհացօղ՝ պարտական ունի զԱծ։ Յաղագս որոյ առաքեալն ասէ, *Գոհացարուք յամ ժամ ի վերայ ամենայնի յանուն տեառն մերոյ յի քի։

Նա մեր զայն ամ խնացեալ, մի՛ պղերգասջուք գոհանալ զԱծ. այլ յուտել և յըմպել, և ի գործել և ի հանգչել, և ի ննջել և ի յառնել, և ի կատարման տունջեան և ի սպառել գիշերոյ, գոհութի այ մատուսցուք։ Նոյնպէս վարդապետեալ յառաքելոյ, *Թէ ուտիցէք, թէ ըմպիցէք, թէ զինչ և գործիցէք, ի փառս այ արասջիք։ Նոյնքն թէ՝ ընդ ամի փառս տասջիք այ. զի այսպէս այ խնամքն և պահպանութիւնն մեզ շնորհեսցի, և ամ պէտս մեր հոգասցի։ Բանզի և մարդկան այսպիսի սովորութի է. շնորհակալացն յօժարամիտ տան ողպարգևսն, և քանդագղինոս առ ոչ առնեն որք ոչն գոհանան։

Նաև յաւետարանին տեսանեմք այսմիկ վկայութիւն մեծ։ Ինն բորոտ յիսուսիէ և մի այլազգի, զի սրբեցան ի տնէ՝ ինունքն ոչ դարձան առ տէր փառս տալ նմա այ. և այլազգին ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱծ։ Վասն որոյ աշխարհախուպն մեղադրութիւն մինչև ցայսօր քարոզի յաւետարանին յեկեղեցի ընդ ամ աշխարհս. և միոյն գովութիւն յամենեսեան հռչակեալ։ Նա ոչ այսչափ միայն, այլ և ի կեանսն յաւիտենականս եւս զխաղաղութիւն առցէ։

Իսկ նոքա զրկեալ յայնցանէ եղեն. նմա ասաց տէրն՝ *Հաւատք քո կեցուցին զքեզ։ Ոչ ասաց թէ սրբեցին յախտէն. որ հասարակաց նոցա և այլոցն էր. այլ եթէ՝ կեցուցին զքեզ։ Զքեզն ասել՝ զառանձինն՝ նմա միայնոյ զպարգևեալն յայտնէ որ է յաւիտենից կենացն. որպէս ասէ, *Ե՛րթ ՚ի խաղաղութիւն։ Իսկ այս յատուկ անձին. զի ե՛րթ, և ոչ երթայք ասաց։

Տեսե՞ր արդեամբք զոր քանիւքն ասացի, թէ վասն այնր սատանայ խափանէ զգոհանալն, զի մի՛ այլ ևս պարգևս առցուք։ Տե՛ս և զայն թէ ո՛րչափ սամարացւոյ բերանն գոհացող, պարտական նմա զանձն կացոյց կենաց և խաղաղութեան։ Աստ որպէս և ես ասացից առ այս զոր սուրբն այն ասաց գրիգոր կոչեցեալն Աստուածաբան, թէ՝ *Լե՛ր մի՛ յիննունցն ապերախտից, այլ տասներորդին նմանեա՛ց և ասա՛։

Երկրպագեմք քեզ տէր Աստուած մեր՝ անցեալքս ընդ երկարութիւն գիշերիս և կանխեալքս ՚ի տեղի խոստովանութեան. մատուցանեմք քեզ զառաւօտու աղօթս մեր։

Արդ են վասն որոյ երկրպագել ասէ. զի պահեաց յերկարութեան գիշերին. և զի կանուխ գալ ՚ի սուրբ եկեղեցի արժանացոյց. և զի յառաւօտին պաշտօն ժամանեցոյց։ Տեսանե՞ս դարձեալ յեկեղեցւոջ զքարոզս լեալ, զոր սուրբ տեղի խոստովանութեան կոչէ, այսինքն գոհութեան. քանզի գոհանալ կամելով զտեղին ասէ թէ՝ վասն զքեզ գոհանալոյ աստ շինեալ է։

Յոր սակս և մարգարէն ասէ, *Մտէ՛ք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ ընդ յարկս նորա։ Իսկ վասն հնոց տաճարին ասէ, *Անդ ելանէին ցեղք ցեղք տեառն վկայութիւնք իսրայելի՝ խոստովան լինել անուան տեառն։ Իսկ դարձեալ թէ, *Երկիր պագից ՚ի տաճար սուրբ քո. և խոստովան եղէց յանուան քո. և գոհութիւն տայց անուան քում վասն ողորմութեան և ճշմարտութեան քոյ։ Իսկ թէ վասն զմեզ խոստովանելոյ յեկեղեցւոջ ոյ և թողութիւն հայցելոյ կոչէ զնա խոստովանութեան տեղի՝ ոչ սխալէ։

Զքեզ տէր օրհնեմք և փառաւորեմք և զքեզն տէր գոհանամք ՚ի վերայ այսր ամենայնի։ Յորոյ վերայ օրհնեալդ և փառաւորեալդ և գոհանալ. ասէ առաջիկայ բանն։

Որ արժանի արարեր զգիշերս խաղաղութեամբ անցուցանել և հասանել մեզ ՚ի ժամ առաւօտուս։ Ոչ եթէ մեք այսպիսի շնորհի արժանի էաք ասէ. այլ դու արարեր արժանի գթալով։ Նա զի՞նչ է զոր խնդրելն կամի։

Արժանիս արա՛ զմեզ Տէր երկնային խոստմանց քոց. զոր խոստացար տալ սիրելեաց քոց։ Որոյ զաստի կենցաղս գիշեր կոչեաց առաքեալն յասելն, *Գիշերն մերժեցաւ և տիւն մերձեցաւ։ Այսինքն՝ եկեալ է ՚ի սպառումն աստի կեանք. զոր մարգարէն ասէ, *Խոնարհ արար յերկրի զկեանս իմ ՚ի խաւարի։ Իսկ զի մերձ է արեգակն արդարութեան երևիլ, լուսաւորել զարժանաւորս։

Որդ՝ զոր խնդրէն՝ է այս. որք ՚ի գիշերոյն խաւարէ առաւօտիւս լուսաւորեցեր, նոյնպէս յայս խաւարէս կենաց այնու լուսով լուսաւորեսցես՛ որ ՚ի յերկինս է։ Ասեն այնորիկ երկնային խոստումն կոչէ, զոր խոստացար տալ սիրելեաց քոց Ճշմարիտդ աստուած. Խոստացար ասէ և անսուտ ես յո՛ քո՛ տէր մեր կեցո և ողորմեա՛։

Աղօթք։

Ողորմած մարդասէր և քաղցր տէր՝ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր։ Ըստ սաղմոսին զաղօթսն առնէ. զի անդ ասէ, ողորմեա՛ ինձ Ած ըստ մեծի ողորմութեան քում։ Իսկ աստ սոյնպէս զողորմութիւն և զքաղցրութի՛ և զմարդասիրութի՛ առաջին արկեալ, այնու զքաւութի՛ մեղաց հայցէ։ Իսկ արդ՝ զի որ առաջիկայ սաղմոսն փառաբանութեան, պարտէ արժանապէս զփառաբանութիւն զայն, և զոր այլ ևս մատուցանի առաքելոյ, և զհանապազորդն ՚ի նոյն յաւելու։ Որում արժանի ասէ փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Վասն օրհնութեանն՝ զկնի Տէր յերկնիցն։

Եւ յորժամ խէթ աչօք պղծեցեալ նայիցի ոք ընդ վճիռ ճառագայթս արեգականն առ ՚ի զննել զհանգամանս և զերգոյ վայելչութի՛ նորա, առաւել մթասի իսկ, քան թէ օգտեսցի։ Նոյնպէս ո՛րչափ ևս առաւել՝ յորժամ զիմանալին ակն ոգւոյ ոք նսեմացեալ ունիցի, և զանհետազօտելի լոյս արեգականն արդարութեան խիզախեսցի ոտնել, զոհակսի ոչ կրեսցէ մթասս։ Իսկ թէ այլում ումեք այս մթատակար է, ապա յոյժ մանաւանդ խնումս տկարումն. որ առաւել զառածեալս եմ մեղօք, և ոչ ճանաչելով զչափ անձին՝

կամ ունկն դնելով մարգարէին որ ասէ, *Մեղաւորին զիա՞րդ լիցի պատմել բնաւ զմեծութիւն փառացն քո։

Ո՛վ մեղսակամարդ մարդս և սնոտիմիտ ոգւով յայս յանդըգնեցայ, 'ի վեր քան զկար և զարժան անձին իմոյ համարձակեալ։ Մանաւանդ զի և 'ի կարգ սրբոցն բանից՝ իմս հոծեալ բերանոյ բանիցս յեռեալ, որ է յոյժ մանաւանդ լրբութիւն և եղկելի անձին իմոյ դատապարտութիւն։ Բայց քանզի գրաւեցեր եղբայր սիրելի Թէոդորէ ընդ կապով բանի զանձն իմ եղկելի, և անձողոպրելի զիս յայսմ արարեր փախստեան յուսոյ։ Զի սաստ սպառնալեաց անհնազանդութեան՝ ոչ տայ ինձ թոյլ այլ ազգ ինչ խորհիլ, այլ միայն հնազանդել։

Այս և աներևութական բանիցն հրաման 'ի սոյն յորդորէ, ամենայնի տալ խնդրողաց և մի՛ հեղգանալ։ Ո՛վ և սէր՝ յաղթօղ ամենայնի զանձի. և ոչ տայ թոյլ ումեք զիւրեաւ անցանել։ Ան որոյ մոռանամք այժմ զտկարութի անձին. մանաւանդ թէ և վստահանալով յողորմութիւն քո, և օգնականութեամբ աղօթից ձերոց բուռն հարցուք զիրէս, յուսով և հաւատով ձեռնամուխ լինիլ 'ի սոյն։ Նա աղաչեմք առաւել՝ ձեռն կարկառել մեզ առ 'ի յօգնականութի. զի թերևս արժանի գտցուք տեսութեան բանիս։

Օրհնութիւն՝ զկնի Տէր յերկնիցն։

Վերնագրութ բանիցս յայտնի ցուցանէ զանուն աղօթիցս. զի օրհնութի ասէ։ Այլ օրհնութի ըստ մեծին Դիոնեսիոսի՝ յայտնութիւն լսի. որ է պատմաբանել, կամ գովաբանել։ Այլ օրհնութի՝ յատուկ քո վայելէ. զի նա միայն է օրհնութեան արժանի որ արարիչն է ամենայնի, ըստ առաքելոյ։ *Օրհնեալ է նծ և հայր տն մերոյ յի քի։ Այլ մարգարէն ասէ, *Օրհնեալ է տծ որ ուսոյց զձեռս իմ 'ի պատերազմ։ և թէ՝ *Օրհնեա՛ անձն իմ զտէր, և ամ ոսկերք իմ զանուն սուրբ նր։ *Օրհնեա՛ և մի՛ մոռանար զամ առաջին նորա։ և թէ՝ *Օրհնեցից զտէր յամ ժամ, յամ ժամ օրհնութիւն նորա 'ի բերան իմ։

'Ի սոյն յորդորէ և զամենեսեան ասելով, *Օրհնեցէ՛ք զտէր ամ ազգք, գովեցէք զնա ամ ժողովուրդք։ Այլ ամենայնն ասելով, ոչ զոք եթող արտաքոյ բանիս. այլ զամենեսեան հրաւիրեաց յօրհնաբանութի արարչին, զհրեշտակս և զհեթանոսս, զայլազգիս և զբարբարոսս. նաև զտարերս ամ զանբանս և զանշունչս ևս։

Բայց և մանկանցն եկեղեցւոյ աւանդեալ է առ հրամանն՝ միշտ պարապիլ յօրհնաբանութիւնն այ առելով, * Օրհնեցէք մանկունք զտէր, և օրհնեցէք զանուն տեառն: Ապա և գեղեցկագոյն ՚ի պատերազմի կոչէ մանկունս. որք հանդիսացան ընդ դէմ բանսարկուին չարին: Զի թէ զմարտիրոսաց ասէ՝ և թէ զճգնաւորաց, ամենեքեան անուամբն այ յաղթեցին չարին խորհրդոց և զօրացան ՚ի պատերազմի որպէս մանկունք կոչեցան:

Նա և մարդկան ամփոփութի է զմէջս և զդրան պատերազմաց մանուկ կոչել. և հոգևոր մանկունք միշտ օրհնաբանք կոչին այ: Բայցէս և ամպհովանւոյս բան՝ օրհնութի միշտ պատարագս ցուցանէ զաստուածային և ղուրբեան: Իսկ որ ասէ թէ՝ զկնի տր յերկնիցն, ցուցանէ թէ և այն օրհնութի է այ. ՟ը որում և ՚ի բանիցն յայտնի:

Իսկ այս ինչ գլուխ և զարդ ՚ի վերայ ամենայնին եղաւ և կնիք ճշմարտութեան. զի բազմօրհնեան կոչի, և բարձրագոյն տեսութիւնս յինքեան ամբարձեալ ունի. զի հրեշտակական է այս օրհնութիւն, և փրկութեան մարդկան աւետիք. որ եղև ՚ի ձեռն միածնի որդւոյն այ: Որպէս ուսանիմք ՚ի սրբում աւետարանին, երևել հովուացն լուսատեսիլ հրեշտակին և աւետարանել եթէ * Ծնաւ ձեզ այսօր փրկիչ որ է օծեալ տէր ՚ի քաղաքի դաւթի: * Եւ որ եղև առ է յանկարծակի ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց. որք օրհնէին զած և ասէին, փառք ՚ի բարձունս այ և յերկիր խաղաղութիւն ՚ի մարդիկ հաճութիւն:

Վասն որոյ նմ օրհնութեամբքն որ յառաջ քան զաս զոր օրհնեն մարդիկ ընդ երկնաւորաց, ՚ի յերկինս են և ՚ի յերկիր օրհնեն: Իսկ այս օրհնութեամբ բարձրանամք յերկրայնոցս յերկինս. և ընդ երկնայինսն հայնեցելով օրհնեմք զամենասուրբ երրորդութիւնն: Եւ աստի ճանաչել պարտ է զմեծութիւն աղօթիցս, և զի իմաստիւք բարձրագոյն փառաբանութիւնս: Եւ առաւել խոհեմ մտօք և երկիւղածութեամբ յօրհնելն մտրում, ամենեքին զմիտս յերկրայնոցս ամբառնալ, և ընդ երգաբանել բանիւս՝ ՚ի բարձունս բարձրանալ մտօք, և ընդ բարձրագոյն զուարթնոցն օրհնել զամենեցունց ած,

Բայց են ոմանք որ առ տգիտութեան մտաց՝ շուրթափեալք խուռնաբանչիւրոք աւանդեն ՚ի միոյ երգելն զօրհնութիւնս զան-խնաբար. և յայժ մեղանչեն անմտութեամբ: Զի թէ ինքեանք չե-մանան զոր ասենն, այ որպէս ակն ունիցին ունկնդիր լինել: Եւ մա-նաւանդ զի հրեշտակական ունիմք զայս աւանդութի, միաբանութի և բարձրագոյն եղանակաւ երգել որպէս նոքա ՚ի ժամուն յայնմիկ:

Զի յօծանելական կանոնք և չերգեն սիրով լսել փառաբանութի

մեր, և մի ՚ի հարկէ, և մի երկմտութեամբ և սառնասառոյց սրտիւ․ այլ սիրայորդոր ջերմութեամբ և միամտութեամբ փութագարդ գեղապարելով։ Զի յայտնի լիցի ամենեցուն հաւատս մեր և դաւանութիւն և խոստովանութիւն ՚ի սուրբ երրորդութիւնն։ Զի որք տեսցեն՝ փառս մատուցանիցեն ամենակալին այ, Ճշմարտապէս զած ՚ի մեզ հաւատալ։

Իսկ զի՝ կարգեալ եղև սա յամենայն աւուր երգել յեկեղեցւոջ միաբան հաւատացելոց անխափան սովորութեամբ, ունիմք զայս հաւատամագոյն յաւանդութենէ սրբոց հարցն։ Որք երբեմն ՚ի մի ժողովեցան հրամանաւ հոգւոյն սրբոյ, զօրացեալ ՚ի քաջութեան աղանդոյ անվաւեր չարափառութեան․ որ զինեցան սրութեամբ հակառակելով ընդդէմ Ճշմարտութեան։ Որք երգեցին զփառաբանութիւնս զայս առ ՚ի հաստատութիւն հաւատոյ զկնի եկելոց․ որոց ՚ի հաւատամքն ՚ի ժողովն Նիկիական ընդդէմ մոլորութեանն արիոսի։

Վասն որոյ ՚ի վերայ հրեշտակական փառաբանութեանցն հիմնարկելով զօրհնութիւնս զայս, իբր զի հաստատագոյն յաւէտ լիցի շինուած հաւատոյ դաւանութեանս որոյ և եղև իսկ․ զոր յաւէտ ընկալեալ կաթողիկէ և առաքելական եկեղեցի սուրբ՝ երգէ միշտ օր ըստ օրէ հաւատով և յուսով իբր զածատուր պարգև և գանձ անկողոպտելի, և իբր զԹագ արքայական և մատանի դրոշմեալ աջոյն հայրական։

Զի սա մեզ կենաց աւիթ և պատճառ փրկութեան․ սա հաւատոյ խոստովանութիւն և Ճշմարիտ դաւանութիւն առ սուրբ երրորդութիւնն։ Սա դուռն կենաց մերձ առ ած, և ճանապարհ անսայթաք առաջնորդելով յարքայութիւնն․ սա սարսափելի օդային այսոցն, և երկիւղ սանդարամետականացն։ Սա պարծանք յուսոյ առ ած, և նշան քրիստոնէութեան․ սա ժառանգ անմահ կենացն, և Թոշակ ելից մերոց յերկինս․ սա ցանկալի հրեշտակաց, և քաղցրալի վերնոցն դասուց։ Սովաւ օրհնեմք զեռանձնեայ ածութիւն, և սովաւ փառաւորեմք զհամագոյ էութիւն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ զփառաւորեալն յամենայնի։

Օրհնութիւն՝ զնի Տէր յերկնից.

Փառք 'ի բարձունս այ։ Փառաւորել զնոյն ունի օրհնութեան գոյգ. որպէս ասէ, * Օրհնեսցուք զտէր զի փառօք է փառաւորեալ։ Նոյնպէս և բարեբանել և մեծացուցանել զմի. և զնոյն դիտաւորութիւն ունին սոքա ամենեքեան առ 'ի պատիւ այ. որպէս 'ի սաղմոսին ցուցանի. զի ասէ, * Յեկեղեցիս բարեբանեցէք զած։ և թէ՝ * Տուք փառս այ. տուք օրհնութիւն անուան այ մերոյ.

Եւ սրբուհի կոյսն ընդ մեծամեծի շնորհին և անհամեմատ պարգևացն զոր ընկալաւ, փոխարէն զայս մատուցանէր ասելով, * Մեծացուսցէ անձն իմ զտէր։ Այսինքն՝ օրհնեսցէ, գովեսցէ, բարեբանեսցէ, բարեհամբաւեսցէ, բարձրացուսցէ. զի զամենեսեան զսոսա և զսոցին նմանս միով բանիւն բովանդակեաց մեծացուսցէն ասելով։ Այսպէս և աղօթիցս բան 'ի փառաց սկսանի. զի այլ ոչինչ ունի մարդկային բնութիւն բարձրագոյն պատիւ մատուցանել այ, բայց միայն զօրհնութիւն և զփառս. վասն որոյ ասէ, փառք 'ի բարձունս աստուծոյ։

Փառացն բան հատուցանել եղև փոքր 'ի շատէ. իսկ 'ի բարձունս ասելովն, զմեզ խրատէ տիրապէս զմիտս 'ի յերկրայնոցս տերապէս 'ի բաց քերել, և 'ի վեր յերկինս ածել առ ած 'ի ժամ աղօթիցս. ուր բարձրեալն է փառօք, անդ բարձրանալ մեզ մտօք 'ի բարձունս. զի մի լիցի մեզ բանիւ և եթ առ բարձրեալն աղօթել, և մտօք զերկրաւորս խորհել։ Եւ լինիցի մեզ այն թէ, * Ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս, և սիրտք իւրեանց օտարացեալ են յինէն. զուր պաշտեն զիս և ոչ ճշմարիտ սրտիւ։

Զի որպէս անհնար է միով ակամբ զերկիր և միւսով զերկինս նկատել, այսպէս և ոչ երկրաւոր իրով հաճոյական աղօթս մատուցանել այ։ Զի սէր աշխարհիս թշնամութիւն է առ ած ըստ առաքելականին յովհաննու։ Եւ միով անձամբ՝ այ և երկրաւորաց չէ հնար 'ի միասին պաշտօնատար լինել։ * Զի զի՞նչ նմանութիւն է տաճարի այ և մեհենեաց. կամ զի՞նչ հաղորդութիւն է քի ընդ բելիարայ։ Զի հակառակ միմեանց տան հրամանս. ոմն զհոգւոյ կամս ասէ կատարել, և ոմն զմարմնոյ։

Այսոսիկ խրատէ զմեզ աղօթիցս բան. զի յորժամ ասիցէ ոք, փառք 'ի բարձունս այ, և յերկինս խոստովանի զած, զմտաւ ածել պարտի թէ՝ երկնայնոյն այ մատուցանէ զփառաբանութիւն. որում հրեշտակք ահիւ և դողութեամբ կան 'ի պաշտօն սպասաւորութեան։

Իսկ սերովբէքն և քերովբէքն թեւարկեալ ծածկեն զերեսս և զոտս իւրեանց, զեռահնչիւնեակ սրբասացութիւնն 'ի բարձունս երգելով։

Որք ըստ սրբոյն դիոնիսեայ, զերեսս ծածկելով յայտ առնեն եթէ բարձրագոյնք քո խորհուրդք անգիտելիք են մեզ։ Իսկ զոտսն ծածկելով, ծանուցանեն թէ խոնարհագոյնքն քո իմաստք՝ նոյնպէս անհետազօտելիք են առ 'ի մէնջ։ Իսկ միջնովքն թռուցեալք, զչափ բաւականին յայտ արարեալ, ընդունելով յինքեանս յամենայնից շնորհաբաշխութեանցն, և զհամեմատ կշիռ պատշաճաւոր ոլորտիցն։

Իսկ արդ՝ եթէ նոքա որ անմարմինքն և բարձրագոյնքն են՝ յայնպիսի զգուշութեան և զգաստութեն են և բազում երկիւղածութիւն բերեն յինքեանս, և ահիւ և դողութեամբ պաշտեն հանապազ, Ապա մեք որ անչափ միջոցաւ հեռի եմք 'ի նոցայն կարգաւորութէ, որչափ ևս առաւել պարտ է արթուն և զգաստ լինիլ մեզ 'ի ժամ պաշտամանն, և երկիւղիւ և զգուշութբ կալ յաղօթս. ըստ այնմ, * Ծառայեցէք տեառն երկիւղիւ, և ցնծացէք առաջի նորա դողութեամբ յօրհնաբանելն։

Իսկ յորժամ ասեմք, փառք 'ի բարձունս քո, ոչ թէ ըստ միջոցի երկնի և երկրի պարտ է զմտաւ ածել զանջրպետութի բարձրութեան. այլ՝ անչափ հեռաւորութբ և անհետազօտելի զօրութեանութիւն։ Զի բարձրն՝ բացարձակ բառ է. և զչափ իւրեք ոչ նշանակէ. և այս է՝ փառք 'ի բարձունս քո։

Իսկ բարձրելոյն քո ասելով, զատոյց 'ի պիտակ և 'ի սուտանուն աստուածոցն որք չեն իսկ ածք, այլ սուտ և անուանք և հակառակք քո, և խաբեբայք և պատճառ կորստեան մոլորելոց մարդկան։ Զի և ոմանք 'ի մարդկանէ կոչին աստուածք. բայց ոչ ճշմարտութբ, այլ առօրեայք և պիտակաբար. որպէս այն զի ասէ, * Ես ասացի թէ աստուածք էք։ Իսկ մովսէսի ասացաւ, * Եդի զքեզ աստուած փարաւոնի։

Սոյն որպէս 'ի բարձունս քո ասելով զփառս, զատոյց յայսմ ամենայնէ. և զարարիչն ամենայնի յայտ արար բանիւս։ Որ անճառ խոնարհութբ եկեալ յերկիր մեղաւորս և մեղաւորաց, մեռանող և մահապարտ. ըստ այնմ, * Լսել զհեծութիւն կապելոց զմարգարէիցն որ 'ի դժոխս. և արձակել զորդիս մահապարտաց 'ի կապանաց սատանայի և յաններելի նորին տանջանաց։

Իսկ դարձեալ՝ փառք 'ի բարձունս ասելով, այնպէս կային մտացն տեսութիւք, զի տէրն բարձանց 'ի հայրական ծոցոյ խոնարհեցաւ և էջ 'ի մեր բնութիւն միանալով։ Սուտի և զօրք բարձանց որ գիտակք էին անճառ տնօրէնութեն նորա, և նոքա իսկ արժանացան փառաբանութբ երգել և ասել, փառք 'ի բարձունս քո և յեր-

կիր խաղաղութե՛ն ։ Զի և ոչ սեպհական որդիք մարդկան համարձակին օրհնել՝ որ չև՛ ես են հաւատացեալ ճշմարտապէս և ճանաչեալ զնա , որ մարմնով երևեցաւ ՚ի բեթղեհէմ հրէաստանի իբրև զարեգակն արդարութեան որպէս և էն իսկ ։

Այս յերկիր խաղաղութիւն ։ Խաղաղութիւն ոչ զերկրաւորս ասէ և զմարմնոյ խաղաղութեն որ առօրեայ է և անցաւոր․ այլ զերկնային խաղաղութեն որ ՚ի վե՛ր է քան զամ միտս որ քս պարգևեցաւ մեզ․ զոր առաքեալ յայտ առնէ ։ *Արար խաղաղութեն արեամբ խաչին իւրոյ ։ Զի թշնամութիւն մեծ էր ՚ի մէջ այ և մարդկան պատուիրանազանցութեամբն ։

Վասն որոյ փրկիչն մեր քս զմիջնորմն ցանկոյն քակեաց խաչիւն իւրով սրբով , և զթշնամին մեր եսպան․ ըստ այնմ , *Որ կայր մեզ հակառակ՝ եբարձ զայն ՚ի միջոյ և բևեռեաց ընդ խաչափայտին․ մերկեաց զիշխանութիւս և զպետութիւնս ։ Այս դարձեալ թէ՝ *Մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ այ մահուամբ որդւոյ նորա ։

Այս յերկիր ասէ խաղաղութե ։ Այս դարձեալ՝ զի վրդովեալ էր ամ ոք ՚ի միտս իւր և զարհուրեալ յերկիւղէ մահու․ և տարակուսեալ տատանէր յինքեան թէ յետ աստեացս փոխարելոյ զինչ լինելոց իցէ ։ Նա և բազմաստուածութե մոլորութե զամ ոք ՚ի պատերազմ և ՚ի խռովութե շարժէր․ և չարիւ լցեալ ներքուստ և արտաքուստ , ընդ անձին և ընդ ընկերին բազում հակառակութք բերիւր ։

Իսկ եկեալ որդին այ խաղաղեաց զամ վրդովմունս արկածից բանսարկուին․ զճշմարիտն ած ծանուցեալ հաւատացելոց , և իւրով ճշմարիտ մահուամբն թեթևացոյց զերկիւղ մահու յոյս մարդկան ։ Խրախոյս տալով ամենեցուն , քաջալերեցարուք ասէ զի ես յաղթեցի աշխարհայնոյս․ և զիշխան աշխարհիս կոխան եսու սիրելեաց իւրոց ։ Այս զմահ մարդոյ հանգիստ ծանոյց և քուն անոյշ և յանմահութե փոխումն և պսակի և պատուոյ առիթ ։ Որով միաբանեալ հաւատացեալք որք ՚ի հրէից և ՚ի հեթանոսաց՝ գոչելով ասեն , *Ո՞ւր է մահ յաղթութիւն քո․ ո՞ւր է դժոխք խայթոց քո ։

Խաչիւն կործանեցար , քս յամօթ եղեր․ այսուհետև ո՞վ մեկնեսցէ զմեզ ՚ի սիրոյն քի․ ոչ մահ և ոչ կեանք և ոչ այլ ինչ պատճառք արոշօղք․ զի ծանեաք յետ մահու զկեանս և զանմահութիւն ։ Այս այսուհետև խրախացեալ ուրախ եմք յուսով հանդերձ․ զի թէ կեամք և եթէ մեռանիմք Տեառն եմք․ Այս է ,

Յերկիր խաղաղութե ՚ի մարդիկ հաճութե ։ ՚Ի նոյն միտս վերաբերի և այս․ զի խաղաղութե վասն հաճելոյ հաստատի և անսագոյ յաւաչ ։ Զի ընդ որս հաճի այ , առ նոյն և խաղաղութիւն

հատուածոյ. զայս ցուցանէ աղօթիցն բան ասելով, ՚ի մարդկան հաճու- թեան։ Որ եւս յայտ ՚ի մէջ բան զարմանս մեր, բառ անբաւականն հրամանին. * Հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւնն։ Եւ դարձեալ թէ, * Այնչափ սիրեաց Ած զաշխարհ, մինչեւ զորդին իւր միածին ետ ՚ի մահ խաչի վասն կենաց աշխարհի։

Զի է մարդկային բնութեան ոչ ինքնայօժար կամօք չարացեալ որպէս սատանայ, այլ դաւաճանութեամբ եւ պատրանօք բանսարկուին։ Այսպէս արդ ողորմութեամբ արժանի գտաւ յԱյ փրկութեան եւ որ- դեգր զաւակութեան. որք եւ յետ մկրտութեան՝ զզղջմամբ ապաշխա- րութեան գտին, որով հասանել կարացին փրկութեան։ Եւ այսու աստուածեալ հնարաւոր եղեւ եղեւ հաստատութեամբ բնութեան եւ խոնար- հութեան ...

՚Ի մարդկան հաճութեան։ Այսպէս զի մոլորեալ եւ դաւաճանեալ ...

Զի է այլ ոչ ...

Զի ...

Զի ...

շահի պիտոյից յիւրաքանչիւր ժամանակս խորով բարերարութեան և տուաւել մարդասիրութեան ՚ի փառս և ՚ի գոհութիւն անուանն իւրոյ սրբոյ։ Իսկ որ զմինի հետակայ բանս է՝ յառաջաբերեալն ասի երգեալ։

Օրհնութիւն քեզ ՚ի բարձունս։ Ա՛յ զի երգէին ևս յայսմ վայրի այսպիսի իմն՝ օրհնութիւն անուան ՚ի բարձունս. որ է այլ յարմար և պատշաճագոյն ըստ հրեշտակականի օրհնութեանն. որպէս թէ ուսանիմք ՚ի զուարթնոցն հրեշտակական փառաբանութեանցն, եթէ տուաւ ծննդեանցն քո յերկիր խաղաղութիւն և ՚ի մարդիկ հաճութիւն։

Զի սոյն որպէս երկնայինքն փառք երգէին ՚ի բարձունս այլ։ Ըստ նոյն և մեր ձայնակցելով երկնայնոցն ասեմք, օրհնութիւն անուան ՚ի բարձունս։ Որպէս թէ ասիցէ թէ՝ զինչ այլ ունիցիմք փոխարէն հատուցանել երախտեացն այն, քան թէ զոր ՚ի հրեշտակացն լուաք զփառաբանութիւն, ընդ նոսին և մեք օրհնութիւն ՚ի բարձունս այլ մատուցանեմք ընդ մեծամեծ պարգևացն որ առ մեզ։

Օրհնութիւն ասէ քեզ ՚ի բարձունս. օրհնեալ ես տէր Տէր մեր։ Որպէս մարգարէն ասէ, *Օրհնեցէք զտէր յերկնից. օրհնեցէք զնա ՚ի բարձանց։ Նոյնպէս և բան աղօթիցս զնոյն ցուցանէ թէ՝ օրհնութիւն քեզ երգեմք մեք ՚ի բարձունս. որ ես յանմարմնոց հրեշտակացն օրհնեալ ՚ի բարձունս. և ՚ի մէնջ մարմնաւորացս նոյնպիսի ձայնակցութեամբ բարեբանեալ տէր աստուած մեր վասն անճառ բարերարութեանց։

Զի թէ վասն մերոյ փրկութեան հրեշտակք ՚ի բարձունս օրհնեն զՏէր հանապազ ըստ որում ետես մարգարէն և Տէրն որպէս վկայէ մեծն Տէր ասած։ Նաև Տէրունական հրամանն յայս ասէ. *Ուրախութիւն է ասէ յերկինս առաջի հրեշտակաց այս ՚ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ։ Արդ որչափ ևս առաւել մեք ՚ի փրկութեան մերում պարտիմք ուրախութեամբ մեծաւ օրհնել զՏէր։ Զի արդարև, ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր. և ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ. այլ ըստ խորում առատ բարերարութեանն գթացաւ ՚ի մեզ։

Օրհնութիւն քեզ ՚ի բարձունս. օրհնեալ ես տէր Տէր մեր։ Նախ և այս՝ օրհնեալ եկեալ անուամբ Տեառն. որպէս թէ զոր հրեշտակքն առաջին՝ ծննդեան մեզ այսօր փրկիչ։ Նոյն օրհնեն և խաղաղ մանկտին եկեալ յանուն Տեառն ըստ խորում անուան բանին, *Եւ եկեալ յանուն Տեառն օր իմն։ Իսկ մեք դարձեալ զհայր օրհնեմք. և երկրպագեմք բարի են. զի ՚ի փառս անուան կատարեսցի զոր և ասէ որ։

Օրհնեալ ես տէր Տէր մեր։ Իսկ տէր և Տէր ասելովն, զմիասնական և զառաքելական անունն յայտ առնէ. զի տէր անունն աստուածու-

կան անուանեալ է. որ զարիւնն և զարդարութիւնս զատելն նշանակէ. ըստ այնմ, *Տէր թագաւոր մեծ ՚ի վերայ ամ(ենայն) երկրի: և թէ՝ *Գովեալ ես զժողովուրդ իւր: Իսկ ամ(ենայն) անուանն արքայական է, որ զնախախնամումն յայտ առնէ ըստ վիճակաւորի. և առ մեզ սատուցանելն թէ մատուցած զմեզ:

Ո՛վ է որպէս արքայութիւն յոյժ կեաց ՚ի լինելութեան եկած զեղեցկութեամբ, նոյնպէս և զթութեամբ միշտ խնամէ. զի սովորութիւն է արքային խնամ տանել ծառայիցն: Այսպէս որպէս թէպէտ և ամենեցուն է ամ(ենայն) և ամ(ենայն) արքայագործութեան և նախախնամութեան՝ սակայն սեպհական մեզ ասեմք օրհնեալ ես տէր ամ(ենայն) մեր, վասն առաւել սիրելոյն զմեզ: Արդ մարգարէքն՝ ամ(ենայն) խորայելի կոչէին զամենեցուն ամ(ենայն) վասն խնամոյն որ առ նոսին:

Օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ. խոստովանիմք առ քեզ. և երկիր պագանեմք քեզ: Պարծեալ կրկնէ զօրհնութեանս բանհանդերձ գովութեամբ և խոստովանութեամբ: Եւ էր վասն. զի առաջին իբր բացորոշակ խնդիր և անմիջ բառ, օրհնութիւն քեզ ասելով. և թէ՝ օրհնեալ ես տէր ամ(ենայն) մեր: Արդ եթէ այն զի ասէ՛ ՚ի սաղմոսին, *Քեզ վայելէ օրհնութիւն ամ(ենայն) ՚ի Սիոն: Իբր թէ ասէ, պատշաճ է քեզ տալ օրհնութիւն. նոյնպէս և այն որ ասաց, օրհնեալ ես տէր ամ(ենայն) մեր. իբր թէ յամենեցունց օրհնեալ ես յերկինս և յերկրի:

Եւ այս ոչ է առաւել մակբայութիւն ցոյցք. այլ որպէս թէ ասիցէ ոք առ ոք, թէ դու յամենեցունց պատուեալ ես: Եւ թէպէտ սովոր եմք զի նոյնու միշտ օրհնեմք զամ(ենայն) ասելով. օրհնեալ ես տէր ամ(ենայն). այլ առաւել սիրոյ բացայայտութիւն այս է, զի ասեմք, օրհնեմք զքեզ, այսինքն՝ պատմեմք երախտեացդ և առաւել տարածեալ յամենեսեան զքո բարերարութիւն. ոչ ծածկեմք զանճառ մարդասիրութիւնդ զոր առ մեզ բնութիւն ցուցեր. այլ միշտ օրհնելովն՝ ամենեցուն ծանուցանեմք:

Գովեմք զքեզ: Ըստ այնմ, *Գովեա Երուսաղէմ զտէր: Ըստ այսինքն՝ զմեծութիւն փառացն պատմեսցուք. զգործս նորա յայտնեսցուք: Մի՛ նմանիր ապերախտ ծառայից զլայօր երկրի փառաց տեառն, այլ բարերարին և հաստատողին պաշտօնեայց: որք մեծագոյն գովութիւն բարձրագոյնանն պարգեւաց տեառն խաւարին:

Խոստովանիմք առ քեզ, և երկիր պագանեմք քեզ: Ի նոյն միտս բերէ և այս բան մարգարէին. *Խոստովանեցարուք տեառն զի քաղցր է զի յաւիտեան է ողորմութիւն նորա: Արդ թէ ասէ՝ զքեզ միայն խոստովանիմք առ տէրանց և ամ(ենայն) աստուածոց, արարիչ երկնի և երկրի, և նախախնամիչ ամենեցուն. որ ցուցեր զամ(ենայն) բանին զօրութիւն քո արարող. և զանգործս մարդկային տեսանելեաց, և զքեզ

նաւապարհաց խուրեանց։ Այս դարձեալ՝ ամենակալ է զօրութիւն եւ այս- պէս · զի փակէ զգութ նախախնամութեանն յարարածոց, եւ ոչ ոք է որ բանալ կարիցէ։ Այս դարձեալ՝ իւրով առատ ողորմութեամբն բանայ զդրունս մարդասիրութեանն ի վերայ արարածոց իւրոց, եւ ոչ ոք է որ ընդդէմ փակել կարիցէ։ *Ասաց եւ եղեն հրամայեաց եւ հաստատեցան։

Այս յորժամ կամի փոփոխել, ունի զամ․ եւ հրամանի նորա ան- սայ ամ ինչ։ Ամենակալ զօրութիւն է որ հաստատեաց զհաստատու- թիւնն ի բարձունս · եւ ձգեաց զվերնայարկն ի վերայ քան զջուր։ Տարածեաց զօդ իբրեւ զառագաստ, եւ հաստատեաց զերկիր ի վերայ ջուրց · եւ կախեալ ունի զհիւսիսի զոչնչէ ի վերայ անուան իւրոյ եւ ի զօրութիւն ամենազօր տէրութեան։

Տէր եւ որդի հօր միածին յն քն։ Ասաց յառաջագոյն զնա հօր, տէր թագաւոր · նայեցեալ եւ աստ զնոյն զարժանական անունն ի վերայ որդւոյ ասելով, տէր․ եւ որդի հօր միածին · այսինքն՝ թէ նոյն տէրութեանն փառակից եւ պատուակից է։ Իսկ որդի հօր ասելով, զբնութենակցութիւնն ընդ հօր յայտ առնէ · զի ամ որդի հարազատ՝ զնմանութիւն հօրն բերէ յինքեան։

Այլ ի մարմնաւոր հարց եւ որդւոց մէջ բազում իրօք զանա- զանութիւն գտանի · առաւելութիւն, կամ պակասութիւն։ Իսկ աստ ոչ այնպէս · այլ՝ ամենայնիւ հաւասարակից է որդի հօր, ծնեալ իբրեւ անժամանակ ծնունդ · անճառապէս ծնեալ ի հօրէ յառաջ քան զյաւիտեանս։ Եւ յերկնային ծննդեանն իւրեան եւ հօր միայն գի- տելի, եւ ոչ ումեք հետազօտելի յերկնայնոցս ըստ տէրունական հրա- մանին։ *Ո՛չ ոք գիտէ ասէ զորդի՝ եթէ ոչ հայր · եւ ոչ զհայր ոք գիտէ՝ եթէ ոչ որդի։

Տէր եւ որդի հօր միածին։ Որդի ասէ հօր · զի անփոփոխական անուն է · որով զհաւասարութիւն յայտ առնէ ընդ հօր եւ զճշմարտու- թիւն ցուցանէ։ Զի որդի միշտ որդի է, եւ ոչ երբէք եղեալ հայր · որպէս հայր միշտ է հայր, եւ ոչ երբէք որդի լեալ։ Զի այս մարդ- կան է սովորութիւն եղականի, որ երբեմն որդի եղեալն, այլ երբեմն հայր լինի։

Իսկ ա̃ծային բնութիւն ոչ այնպէս · այլ միշտ մի եւ նոյն է ան- փոփոխելի · զի ոչ փոխարկեալ լինի հայր յորդի, կամ որդի ի հայր։ Այլ թէպէտ մի են բնութիւն հայր եւ որդի, սակայն անուանք որոշ են եւ զանազան։ Զի հայր ծնօղ ասի եւ ոչ ծնունդ · եւ որդի ծնունդ ասի եւ ոչ ծնօղ · եւ անպատճառ որդի, զի հայր ոչ եղեւ երբէք։ Որպէս եւ հայր անպատճառ ասի հայր, զի որդի երբէք ոչ է եղեալ · այլ

միշտ է Հայր՝ որպէս և որդի միշտ որդի է։

Տէր և որդի Հօր միածին։ Ըստ զմիածինն, զի յայտ արասցէ թէ՝ այլ ծնունդ ոչ գոյ Հօր. այլ նոյն և մին միայն ըստ միութեան Հօր և բնութեանն։ Նա եւս միածին և ծնունդ, որպէս և Հօր համաստուած և ոչ եկ նուաստագոյն. Զի թէպէտ և պատճառ է Հայր որդւոյ անժամանակ ծննդեանն, և որդի յառաջ եկեալ ի Հօրէ անքննաբար և անճառաբանելի, սակայն ոչ կարէ բնութիւն կամ նուաստութիւն երբէք ասել յորդի։

Այլ արդեամբ Հայր Հայր է, որդի որդի է. զի Հայր որդւոյ է Հայր, և որդի Հօր է որդի։ Նա միածին է, զի երկրորդ ոչ գոյ. ոչ ամենայնի ասէ, * Հօր առհամանի և բնին և շարժեցեալ կենաց վասն միածին զենլոյն։ Այլ այս մինչև ցայս վասն հայրական ծննդեանն փոքր ի շատէ ըստ մերում փոխանակի ասացուածոյս. զի ի սրբոցն յոլով և բարձրագոյն բանք գոն ասացեալ վն այսորիկ։ Իսկ հետակեաց բանիւս՝ զկենդանական ծննդեանն յայտ առնէ՝ յն քն ասելովն.

Այս քն առնէ, յերկրաւորականն ի մերս փրկիչ թարգմանի ըստ հրեշտակին որ առ յովսէփ. * Մի երկնչիր առնուլ առ քեզ զմարիամ կին քո. զի որ ի նմայն ծնեալն է՝ ի հոգւոյն սրբոյ է. Ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա յիսուս. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց։ Զնոյն և առ հովիւսն ասէր հրեշտակն. * Ծնաւ ձեզ այսօր ասէ փրկիչ որ է օծեալ տէր ի քաղաքի դաւթի։ Եւ յայտնի և զարդարեալ հայրն յայտնաբար. * Օրհնեալ տէր այն իսրայէլի ասէ որ յոյց եւ մեզ և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ. և յարոյց մեզ եղջիւր փրկութեան ի տանէ դաւթի։ և թէ՝ * Տալ մեզ առանց երկիւղի զփրկութիւն ի ձեռաց թշնամեաց մերոց։

Այս քն առնէ օծեալ կոչէ, այսինքն՝ այն և մարդ. զի բանն մարմին եղև ըստ աւետարանչին, և այնութեամբն եղև զմարմինն։ Զի քն ոչ առաջ մարդկութեանն է անուն և ոչ լոկ այնութեան. այլ այն և մարդ առի. այսինքն՝ յերկուց միացեալ անշփոթելութիւն և անճառապէս։ Ոչ որպէս ջուր ընդ գինի խառնեալ և շփոթեալ և յերկուցունցն զեղեալ բնութեանց. զի ոչ ջուր է և ոչ գինի ի խառնելն ի միասին։ Այլ այն այլքն բնութիւնքն ի միաւորելն ընդ մարմնոյն, զերկուցունց յատկութիւն անշփոթ պահելով որպէս հոգի մարդոյ ի մարմնի. թէպէտ և միաւորեալս ոչ է այլայլեալ։ Զի բանն այն մարմինն ընկերն ի վեր և քան զհամատարածութիւն մտաց, չքնաղ և զարմանալի խառնուածս։ Որպէս ասէ մեծն գրիգոր աստուածաբան. * Ով նոր խառնուածս. ով սքանչելի խառնուածոյս։ Այս ի բանէն և ի մարմնոյն՝ է՝ մի քն Յիսուսապատս, որպէս ի հոգւոյ և ի մարմնոյ մի մարդ. որո

առաքելալ ասէ, * Մեզ մի է ած հայր յորմէ ամ․ և մի տէր յս քս որով ամենայն։

Յայտնի լիցին երկաբնակքն․ զի առաքելալ որպէս մի ած զհայր ասաց առանց մարմնոյ, նոյնպէս մի տէր յս քս զորդի ասաց մարմնով։ Որով յայտ է թէ յետ անճառ միաւորութեն մի է և երկու ոչ ասի․ զի զոր առաքեալն մի ասէ, ո՞վ է որ յանդգնի յերկուս բաժանել։ Եւ տէրն առ Նիկոդեմոս ասաց, * Ո՛չ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ որ էն յերկինս։

Յայտ է թէ զբանն ասաց որդի մարդոյ․ զի բանն էջ յերկնից և ոչ թէ մարմինն։ Եւ հայր վկայէր ՚ի յորդանան և ՚ի թաբօր, դա է որդի իմ սիրելի և ոչ թէ որ ՚ի դմա․ որ զմիութիւն ցուցանէ և զերկու ասօղսն յանդիմանէ։ Զի յորժամ ած հայր՝ եզական անուամբ դա ասէ, որ յայտնապէս միոյ բնութեն է յայտնիչ․ ո՞վ է որ յանդգնի երկու ասել։

Եւ դիոնեսիոս ասէ, * Այս բաժանականս մեր ըստ բնութեան միոյ յառաջ եկեալ։ Եւ դաւրձեալ ասէ, * Մի բնութի և պարզութիւն և թաքնութիւն յս։ Եւ աղէքսանդրացին ասէ, * Զինուորքն զպատմուճանն ոչ կարացին պատառել․ իսկ հերետիկոսք զորդին այ պատառել կամեցան և բաժանել յերկուս, զայն որ միայն անբաժանելին է։ Եւ վկայութի միոյ բնութեանն քն յոլովք են ՚ի սուրբ գիրս ով կամիցի ուսանել․ իսկ առ այժմ այս բաւական է․ զի * Տուր ասէ իմաստնոյն պատճառս, և իմաստնագոյն լիցի ՚ի բարիս։

Եւ սուրբ որդի։ ՚Ի կէս օրինակս ՚ի աւեղիս յայս փոխանակ որդւոյ այսպէս ունելով բանքն, և սուրբ հոգի․ և այպս դարձեալ յորդի սկսանի, և ՚ի հոգի աւարտէ․ զի սկիզբն ՚ի հայր արար։ Այլ վասն դիւրահաս լինելոյ ընթացից բանիս, զորդի դիցուք ՚ի կարգին որպէս սկսեալն եղև։ Եւ երևի և այլ իմն պատճառ ՚ի բանիս թէ յորդի է և ոչ ՚ի հոգի․ զի ասաց՝ Տէր թագաւոր զհայր․ և Տէր և որդի հօր միածին յս քս զորդի։

Իսկ ասա աէր ոչ դոյ որով համառօտէր թէ ՚ի վերայ հոգւոյ է բանս հաւասար հօր և որդւոյ։ Իսկ ՚ի կատարածն յայտնապէս ասէ, Տէր և հոգին սուրբ որ ՚ի փառս ած ընդ հօր։ Ապա թէ փոխանակ տէր ասելոյն զորքն ասիցէ ոք բաւական համարեալ, չիք ինչ վնաս զոր և կամի ոք ընտրեսցէ։ Զոր և առաքեալն երբեմն ասէ, * Տէր է հոգին։ Եւ երբեմն ասէ, * Մի է հոգի սուրբ յորում ամենայն։ Ահա ասա զսուրբն եդ ՚ի վերայ հոգւոյն, և անդ զտէրն յառաջին կարգեաց․ և այս բաւական է վասն այսորիկ․ այլ մեք ՚ի կարգ բանին ընթասցուք։

Տէր ած գառն այ և որդի հօր։ Գառն այ կոչէ զՄիածին որդին, ոչ միայն վասն անմեղութեանն զոր ունէր զգառն անմեղ 'ի պատանդ վարեցաւ, այլ և գառն ասելովն՝ զխաչելն մեռանելոյն յուշ առնէ և զծառայութիւն մահն։ Զի թէպէտ ունէր զգառն պրկե-ցուս անմեղ մարմնովն 'ի վերայ խաչին, այլ 'ի խաչողացն ունէր զմա-հապարտ դատապարտութիւնն։ Եւ դարձեալ՝ որպէս գառնն ոչ վասն ան-ձին իւրոյ պատժապարտ մեռանի, այլ վասն այլոց օգտութեան։ Նոյնպէս և գառն այ ոչ վասն անձին իւրոյ յանցանաց մեռաւ 'ի վերայ խաչին, այլ վասն մերոյ փրկութեան։

Եւ որպէս սուր գառին զգեստ լինի և ծածկոյթ մերկութեան մարդկան, այսպէս և քո գառն այ՝ եղև մեզ ծածկոյթ և զգեստ շնորհաց։ Զի որք 'ի քս մկրտեցայք զքս զգեցայք և զարդարեցայք լուսով։ Եւ որպէս մարմին գառինն յորժամ զենանի՝ կերակուր լինի կարօտելոց, այսպէս և մարմինն գառն այ զենեալ միանգամ 'ի վերայ խաչին և հանապազօր 'ի վերայ սրբոյ սեղանոյն, զմարմին և զարիւն իւր պարգևեաց մեզ կերակուր և դեղ անմահութեան. Զի որք սրբ-բութեամբ ճաշակեն հաւատով սիրով և յուսով, զյաւիտենական մահն ոչ մեռանին, ըստ իւրում տեառն բանին թէ, * Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, զմահ մի տեսցէ յաւիտեան։

Տէր ած գառն այ ասէ և որդի հօր։ Որդի հօր ասելովն՝ ըզ համարձակութիւն առ հայր յայտ առնէ։ Ունիս ասէ համարձակու-թիւն իբր որդի առ հայր բարեխօսել վասն մեր զի հաշտեսցի ընդ մեղուցեալքս հեղմամբ սուրբ արեան քո, որ առաւել գոչէ առ ած հայր քան զհաբելին ըստ բանին պօղոսի։ Այսոյն և աւետարանիչն յովհաննէս, * Ունիմք բարեխօս առ ած զյս քս զարդարն և զանա-րատն. և նա է քաւութիւն մեղաց մերոց. և ոչ եթէ մերոցն միայն այլ և ամ աշխարհի։ Զի արդարև յորժամ տեսցէ հայրն երկնա-ւոր զմիածին և զսիրելի որդին իւր 'ի վերայ խաչին վասն մեր, հաշ-տեսցի տիրապէս ընդ արարածս և կենդանացուսցէ զմեռեալքս մե-ղօք վերստին։

Որ առեր զմեղս յաշխարհէ. ողորմեաց մեզ. բարձեր զմեղս աշ-խարհի. և առ ընկալ զաղաչանս մեր։ Դարձեալ զմարդեղութիւնն և զխաչելն ճառէ. որ առեր զմեղս յաշխարհէ, այսինքն զբովանդակ բնութիւն մեր զմարմին զհոգի և զմիտս։ Եւ այս վասն ապողինարի ասացաւ. զի մարդկային հոգի ոչ ասէր քի առեալ, այլ միայն զմար-մին. և 'ի տեղի հոգւոյ զածութիւնն ասէր ունել։ Զոր յանդիման առնէ առաքեալ ասելով, * Մարդն յս քս։ Եւ մարմին առանց հոգւոյ մարդ ոչ ասի. այլ մարմին և հոգի միաւորեալ, 'ի միասին՝

տայ է մարդ կատարեալ։

Եւ քո՛ ճշմարտապէս մարդ կատարեալ եղև՝ զամ զմիտս առ-
նլով․ զի թէ ոգի բանական ոչ ունէր, զխո՞րդ ասէր ՚ի ձեռս Հօր
աւանդել։ Եւ ՚ի դժոխս երթալ որո՞յ ասի քո և զնիգս փշրել․ զի
մարմինն ոչ էջ ՚ի դժոխս․ և առանց բանական հոգւոյ բանն՝ քո ոչ
ասի․ Այլ կայն և վերարու բանական հոգի ունել քո․ *Ո՛չ թողա-
ցուս ոգի նորա ՚ի դժոխս։

Եւ վասն մնացն պօղոս ասէ․ *Մեք ասէ զմիտս քո ունիմք։
Եւ հարքն սուրբք ևս յայտնապէս հաստատեցին ՚ի հաւատն նիկի-
ական, ունել բանին այսպէս․ *Ընաւ ասէ կատարելապէս ՚ի մարմնա-
նալ ...ոչ կուսէն հոգւովն սրբով․ որով էառ մարմին հոգի և միտս․
և զամ ինչ որ է ՚ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Այսն որոյ բան աղօթիցս զամ միով բանիւս բովանդակէ ա-
սելով, Որ առեր զմիտս յաշխարհէ․ այսինքն ՚ի մարդկային բնու-
թենէս։ Զի սովորութիւն է գրոց և զմարդ աշխարհ և երկիր կոչել,
որպէս զՀրեշտակս երկին․ զի առաւել երկիր թարգմանի․ և իմաստա-
սէրքն փոքր աշխարհ ասացին զմարդ․ Իսկ եկեղեցւոյ վարդապետք
մեծ աշխարհ ասացին զմարդ վասն բանականութեան և պատկերը
գոլոյ արարչին։

Որ առեր ասէ զմիտս յաշխարհէ։ Այսինքն թէ՝ յամ արարա-
ծոց զմիտս միայն ընտրեցեր բնութի, զոր առեալ միացուցեր ընդ
քում ածութեան։ Զի աշխարհ կոչի որ յերկինս և յերկիր և որ ՚ի
մէջս են վայելչութիւնք․ այսինքն՝ աստեղք, օդ, լուսաւորք, ամ-
պեր, ծովք, գետք, բոյսք, տունկք, գազանք, անասունք, թռ-
չունք, թաչունք, և որ այլ ևս․ նաև հրեշտակք ՚ի յերկինս։ ՚Ի յամ
ամենայնէ ասէ ոչ զոք ընտրեցեր առնուլ քեզ հաղորդակից, այլ
հանեցար միայն ՚ի մեզ խոնարհիլ և զմեզ բարձրացուցանել ՚ի վեր
քան զամ․ վասն որոյ փառք քեզ յաղագս ամենայնի։ Արդարև ոչ
այսպէս արար ամենայն ազգաց ուէր։

Ողորմեցար․ բարձեր զմեղս աշխարհի․ և արդ ընկալ զաղաչանս
մեր։ Ողորմեցար ասէ․ այսինքն՝ լոյս քոյին մեծութեան․ զի ողորմելին
անպահական և յառուկ ոչ է․ որ բնութեամբ է ողորմած, որոյ անապատ
է ողորմութիւն․ զի ողորմութեամբ արար զարարածս, և ողորմելով միշտ
նախախնամէ բստ իւր ամենատես բարերարութեան։ Զի ամ տեղեք
գիրք զած ողորմած կարդան․ որպէս Դաւիթ ասէ, *Ողորմած և առա-
տար է տր ած մեր։ և թէ՝ *Ողորմի և պահէ զաղքատս ՚ի մեղաց տրա
և թէ՝ *Ողորմեա ինձ ած ըստ մեծի ողորմութեան քում և ըստ բազ-
մութ գթութեան քում։ և թէ՝ *Զողորմութիւն քո տէր յաւիտեան
օրհնեցից։ և թէ՝ *Ողորմութեամբ անապատ լի են երկիր։ Եւ այժմ

[illegible] իմաստութեանն [illegible] :

[illegible] ասէ . * Աստուած հայրց և տէր ողոր-
մութեան [illegible] . * Գիտէի [illegible] զի ողորմած ես և գթած ,
[illegible] և զղջանաս ՚ի վերայ չարեաց մարդկան :
[illegible] ՚ի գեհեն [illegible] և անպատմելի
զողորմութիւնն [illegible] քարոզեն : Այս յայտնէ [illegible] բան ամե-
նայն [illegible] աշխարհի : Իսկ առաքելոյն որ ասէ ,
[illegible] և [illegible] : Մի՞ թէ ոչ կարող
[illegible] , [illegible] ձեռաց [illegible] գերելոյ ՚ի
[illegible] :

Եւ [illegible] և [illegible] ՚ի
մարդկան [illegible] հօր և
[illegible] . Բայց այսմ , * Հրաշ-
[illegible] ՚ի [illegible]
[illegible] , զնայն զչարաչար [illegible] ՚ի թունից կամակոր օձին , և
ապրեալս երկու , զոտն ադամայ ՚ի ծառն ընթացեալ : Ո՞ է անհնա-
[illegible] կարողութեամբ [illegible] . ընդ
[illegible] * Հայեցայ [illegible] ոչ որ էր որ
[illegible] ոչ որ էր որ ՚ի թիկունս հասանէր . [illegible]
[illegible] և [illegible] մեզ կենաց :

Աղաղակեցաք ասէ և բարձրեր զմեզ աշխարհի : Ա՛չ առաջ [illegible] ,
[illegible] թէ բարձրեր . այսինքն թէ՝ մերբազրուցեր սրբեցեր [illegible]
[illegible] կորուսեալ [illegible] : Ո՞ է ոչ [illegible] ՚ի նմա [illegible]
[illegible] . և [illegible]
[illegible] . և [illegible] : Ո՞ է [illegible]
[illegible] ոչ կարէ . [illegible] և [illegible]
[illegible] :

Բարձրեր ասէ զմեզ աշխարհի : Այսինքն՝ ոչ միայն զադամայ
կամ որք յետ նորա . զի [illegible] , այլ զմեզ [illegible]
որք [illegible] ՚ի կատարած աշխարհի և հասանեմք ՚ի հե-
[illegible] որ [illegible] ՚ի [illegible] , և ըստ հաւատոյն
[illegible] , [illegible] ՚ի [illegible] ընդ հօրն քո : Բա
[illegible] հրամանին որ առ հրեայսն . * Եթէ որդին ասէ զձեզ
ձեզ [illegible] , [illegible] լինիջիք : Այսինքն զ[illegible]
ազատութիւն ժառանգեցէք . զի եթէ ոչ էր աշխարհ [illegible]
[illegible] , ոչ լինէր հարկ [illegible] ույ : Այլ զի [illegible]-
[illegible] զօրութեամբ [illegible] աշխարհի [illegible] .
[illegible] հարկ եղև [illegible] բանին ույ զի բարձցէ զմեզ ան-
[illegible] , զի ոչ էր հնար այլ [illegible] :

Բարձեր առէ զմեղս աշխարհի․ և արդ ընկալ զաղաչանս մեր։ Վասն այսպիսի առատ գթութեանց և մարդասիրութեանց համարձակութիւն առեալ աղաչեմք զողորմած տէրդ զբարձօղդ մեղաց աշխարհի․ զի դարձեալ վերստին որսեցաք ի չար թշնամւոյն կենաց մերոց և ի դաւաճանողէն զմեզ, տկարացեալ մարմնով ոչ ժուժելով կալ ընդ դէմ մեքենայից նորին։

Վասն որոյ դարձեալ վստահացեալ ի քոյդ անբաւ մարդասիրութիւնդ և յանեղական գթութիւնդ, աղաչեմք տէր՝ որ բարձեր զմեղս աշխարհի, և արդ ընկալ զաղաչանս մեր։ Զի որչափ ի մարմնի գոլով մեղանչեմք և տկարանամք մեզք, դարձեալ զղջամք և առաջի քո անկանիմք խոստովանութեամբ և աղաչեմք զոր ուսաք ի սրբոց քոց պատուիրանաց․ զոր հրամայեցեր մարգարէիւն թէ․ *Ասա դու զմեղս քո զի արդարասցիս։ և թէ՝ *Յորժամ դարձցիս և հեծեծեսցես, յայնժամ կեցցես։ Վասն որոյ աղաչեմք կեցո զմեզ ըստ ողորմութեամբ քո։

Դու արդ՝ ընկալ զաղաչանս մեր։ Դու այժմ առէ՝ տէր, ընկալ զաղաչանս մեր և ըստ հրամանի քում զխոստացեալն կատարեա՛ զոր խոստացեր մարգարէիւն․ *Կարդասցես դու առ իս առէ յաւուր նեղութեան քո՝ ես փրկեցից զքեզ և դու փառաւոր արասցես զիս․ և թէ՝ *Կարդասցէ առ իս և ես լուայց նմա․ և առ նմա եղէց ի նեղութեան։ Բայց զկարդալն՝ հաւատով կամի և ոչ երկմտութեամբ․ *Խնդրեսցէ առէ առաքեալ հաւատովք և ոչ երկմտեսցէ․ և տէրն, *Զոր ինչ աղօթս արարեալ հաւատով խնդրիցէք, եղիցի ձեզ։

Տեսանես զի մեծի հաւատոյ պէտք են մեզ յաղօթս եւ զգուշաւոր խնդրուածոց և միամտութեան սրտի․ զի մի հողմն երկմտութեան ի ներքս անկեալ, զնաւ հաւատոյն խախտեսցէ, և փոխանակ պարգևի դատապարտութիւն կրեսցէ երկմիտ խնդրողն վասն իւրոյ թերութեան։ Նաև որք զղեակ հաւատոյն պինդ ունիցին՝ ոչ երբէք սասանին, այլ լսեն ի տեառնէ թէ՝ *Ըստ հաւատոց քոց եղիցի քեզ։

Զի չէ ինչ մեծ կամ փոքր յերկինս կամ յերկիր զոր հաւատով խնդրիցէ ոք՝ թէ ոչ առնուցու անդէն վաղվաղակի զպատասխանին։ Բայց թէ յամիցէ յառնուլն, մի կասեսցի ի յուսոյն, այլ առաւել ժրասցի երկայնամիտ լինելով և զմտաւ ածելով թէ՝ այնպէս են կամք տեառն զի յամելով տացէ։

Դու արդ՝ ընկալ զաղաչանս մեր։ Նաև զխոնարհութիւն եւս ուսուցանէ բանիւս աղօթողին և զհեզութիւն բարեմտութեամբ համանգերձ։ Որպէս թէ ասիցէ, այսօր միայն է զոր եկեալ կամ առաջի քո յաղօթս․ և այսօր սկիզբն արարեալ եմ աղօթից։ Ըստ մեծին եղիցի

որ ասէր , * Կենդանի է Տէր որոյ կացեալ եմ առաջի այսօր . և անկեղծ նորոգեալ բարեպաշտել տանս ։

Զայն և առաքեալ յայտնի առնէ ասելով , * Զյետոյսն մոռացեալ եմ , և յառաջադէմսն նկրտիմ . զհետ մտեալ եմ թէ հասից ։ Այսինքն՝ թէ զյառաջադէմն գործեցեալ բարիսն ոչինչ անձին համարիմ . այլ միայն առաջիկայիս ուշ եդեալ ընթանամ թէ կարացից զընթացս իմ բարւոք կատարել ։

Այս է բան խնդրեմ քեզնիս որ ասէ ։ Այս օրդ ընկալ զաղաչանս մեր ։ Այս այժմ ընկալ ասէ զոր այսօր մատուցանեմ պաղատանս առաջի քո Տէրութեանդ ։

Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր՝ ողորմեա՛ց մեզ ։ Սուրբ է Տէր Աստուած մեր որ բնակեալն է ՚ի բարձունս ըստ մարգարէին եսայեայ . որոյ ոչ ոք գտանի համեմատ սրբութեանն ։ *Զի ո՞վ իցէ ՚ի մարդկանէ որ անմնելին սբ իցէ . թէ և միօրեայ իցէ ՚ի վերայ երկրի ըստ յոբայ ։ Զի և երկինք չեն սուրբ առաջի նորա ըստ գրեցելումս . այսինքն՝ երկնային հրեշտակք . այլ նա միայն էանց ընդ մեր կերպ մարդկայինս բաց ՚ի մեղաց ։ Որպէս ասէր առ հրէայսն ինքն տէրն յաւուրս մարմնոյ իւրոյ , * Ո՞վ յանդիմանեսցէ զիս ՚ի ձէնջ վասն մեղաց ։ և թէ՝ * Գայ իշխան աշխարհիս այսորիկ և յիս ինչ ոչ գտանէ յիւրոց չարութեանցն ։

Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր՝ ողորմեա՛ց մեզ ։ Ընդ աջմէ Հօր ասելովս՝ զորդիական պատիւն յայտ առնէ . զի որդի նստի ընդ աջմէ Հօր , և հոգի ընդ աջմէ որդւոյ ՚ի փառս փառաւորեալս որ յառաջ է քան զյաւիտեանս ։ Զի նստիլն զհանգստենաւորութիւն յայտ առնէ և զտէրութիւն փառացն հայրենի . իսկ ընդ աջմէ Հօր ասելն , զյատկութիւն անձանցն ցուցանէ բաժանեալ յանբաժանելի Աստուածութենէն ։

Այլ զի որդի նստի ընդ աջմէ Հօր՝ և առաքեալ վկայէ . * Որ եղև ասէ ՚ի վերոյ քան զամենայն իշխանութիւն և զպետութիւն . և նստաւ ընդ աջմէ մեծութեանն ՚ի բարձունս ։ Զայն և դաւիթ եւս յայտնագոյն ցուցանէ . * Ասաց տէր ցտէր իմ նիստ ընդ աջմէ իմմէ , մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց ։

Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր՝ ողորմեա՛ց մեզ ։ Զի որչափ մեք միշտ մեղանչական եմք և զղջականք , դու միշտ ողորմած . վասն որոյ զնոյն հայցեմք զոր միշտ սովոր եմք առնել ։

Զի դու միայն սուրբ դու միայն . բարձրեալ ես դու միայն . տէրդ մեր յս քս ։ Զի դու միայն , այսինքն դու միայն միածին որդի բնութենակից , աթոռակից , փառակից և պատուակից Հօր ։ Զի մի է միածին որդին այ Հօր , և երկրորդ ոչ գոյ նմա . վասն զի

տէրութեան կցորդ և ա̃ծութիւնն գոլով մի ։ Իսկ թէ ընդէ՞ր սաս զորդի ոչ կոչէ, այլ միայն զհոգին ընդ հօր տ̃ր և ա̃ծ ՚ի փառս ասէ ։

Ճշմարիտն ինքեան միայն է գիտելի հոգւոյն սրբոյ ․ որ քըննիչն է ամենայնի ըստ առաքելոյ որ ասէ, * Հոգին զա̃մ քննէ և զխորս ա̃յ, և ինքն յումեքէ ոչ քննի ։ Զի ինքն է ամենայնի լցուցիչ և բացայայտիչ ․ և կամ որոց ինքն յայտնէ զգաղտնիս՝ և զծածուկս իմաստութե̃ն խորոց ծանուցանէ սրբոց իւրոց և հոգեբնակալ արանց, որպէս ասէ մարգարէն ։

Նա և մեզ վերջացելոց ՚ի գործոց բարեաց և վրիպելոց ՚ի հոգւոյն շնորհաց, զիա̃րդ լիցի յայս համարձակիլ և ասել թէ Ճշմարտութեամբ ՚ի վերայ հասաք բանիս կամ այս է զոր ստուգիւ իմացաք ։ Զի զայս և ոչ սրբոցն է համարձակելի ասել ․ թող թէ մերումս նուաստութեան ։ Նա և միայն այսչափ թելադրութի̃ւ ասացաք փափագողաց բանիս, թէ նախ քան զայս զորդւոյ համապատուութի̃ւ ընդ հօր ծանոյց Ճշմարտապէս, մի խոստովանելով ՚ի փառս տէրութեան զհայր և զորդի ։

Իսկ սոսա աւելորդ համարեցաւ դարձեալ երկրորդել և որոշաբար զորդի ևս ընդ հօր յիշել յայսմ վայրի ․ այլ միայն ՚ի կամս լսողացն առաջատան թողու իմանալ, թէ ա̃մ որ ինչ հօր է՝ նոյն և որդւոյ է ըստ տէրունական հրամանին ․ և որդւոյն՝ հօր է ։ Նայպէս և զայս պարզ է իմանալ թէ որ ՚ի փառս ընդ հօր ասաց զհոգին, նոյն և ընդ որդւոյ կոչեցի ։ Իսկ զի տէր է հոգին և պարգևատու և շնորհաբաշխ ․ և գիրք սուրբք վկայեն, որք և Սողոմոն յայտնապէս ցուցանէ ասելով այսպէս ։ * Ամենեցուն Ճարտարապետն ուսոյց զիս իմաստութի̃ ․ զի գոյ ՚ի նմա հոգի մտաւոր, սուրբ, միածին, բազմաբաշխ, նուրբ, դիւրաշարժ, պարզ, անարատ ․ և այլն ևս զոր ասէ ըստ կարգի ։

Տէր և հոգիդ սուրբ որ ՚ի փառս ա̃ծ ընդ հօր ։ Սուրբ ասելովն՝ զա̃ծ հոգին յայտ արար ․ զի հոգի կոչին և հրեշտակք, նաև մեր հոգիս հոգի անուանի ․ բայց սուրբ ոչ ասին սոքա ։ Նա և տէր հոգի միայն նա ասի որ ա̃ծութե̃ն փառակիցն է հօր և արարչակիցն որդւոյ ․ որ տէր հոգին է, որ անեղանելի բնութե̃ ՚ի վեր է քան զա̃մ եղականս, միայն ընդ հօր և ընդ որդւոյ հաւասարեալ ։

Որ աղբիւրն է ա̃մ բարութեանց, և պարգևիչն շնորհաց ․ որ մարգարէս յորդորէ, և առաքեալս ձեռնադրէ, և քահանայս և թագաւորս օծանէ ։ Որ յորդեգրութի̃ հօրն երկնաւորի զամենեսեան պատրաստէ վերստին ծննդեամբ սուրբ աւազանին, ինքեամբ և ջրով նորոգելով ։ Որ բարեխօսն է ՚ի հեծութիւնս անմռունչս ըստ առաքելոյ վասն հաւատացելոց իւրոց առ հայր ։

Որով և յն վկայեալ լինէր 'ի հօրէ ճշմարտապէս որդի անձին 'ի թաբօր և 'ի յորդանան. և վարեր յանապատ 'ի հոգւոյն և յաղթեր փորձողին: Որոյ զօրութեն դառնայր 'ի գալիլեա և զմեծամեծ-նշանսն և զսքանչելիսն հրաշագործէր. և համբաւն տարածեր յամենեցունց լսելիս: Նա ամենեքեան գային և լսէին և բժշկեալ լինէին յիւրաքանչիւր ախտից, և փառաւոր առնէին զնա: Զորոյ զհայհոյութիւն անթողլի ասէր տէրն աստ և 'ի հանդերձեալ աշխարհին: Նա վճիռ՝ հատանելով ասէր առ հրեայսն, * Եթէ հոգւովն այ հանեմ ես զդևս, ուրեմն հասեալ է 'ի վ(եր)ա ձեր արքայութիւնն այ:

Տէր և Հոգիդ սուրբ որ 'ի փառս ած ընդ հօր: Այլ և ասա յոմանց հակառակութիւն կրի թէ՝ ընդէ՞ր համառօտ և սուղ է եդեալ զբանս որ յաղագս հոգւոյն. և ոչ երկայնագոյն որպէս վասն հօր և որդւոյ մեկնաբանեաց: Զոր ոչ է խրատուցի զայս քննել, այլ միայն հաւատով ընդունել. զի յերեսին մի է ածութիւն. և երեքին մի՝ յորս ածութիւնն ըստ սրբոյ ածաբանին գրիգորի:

Զի հօր փառաբանութիւն և որդւոյ՝ և հոգւոյն համարեալ է. և հոգւոյն պատիւն՝ որդւոյ և հօր: Նա զհօր այ բարերարութիւն պատմեաց բանիւս, և զորդւոյ զանօրէնութիւնն. Իսկ հոգւոյն զի մարմին ոչ զգեցաւ, այլ միայն ներգործեաց 'ի անօրէնութի որդւոյն: Վասն որոյ երկայնապատում ոչ արար. այլ կարճ և համառօտ բանիւ էանց, բաւական համարելով առ 'ի հաւասարութիւն ած ընդ հօր դաւանեալ զհոգին ճշմարիտ:

Զի թերևս վասն ձանձրութեան ոչ երկայնեաց զբանս, այլ խնայելով յաղօթականսն կարճեաց. զի հանապազօրեայ է բանք աղօթիցս. և յետ բազում աշխատութեանց օրհնաբանի յաւուօտին ժամուն: Զի թէ կամեցեալ էր երկարել զբանս, գտյր առիթ ընդարձակութեան, յիշելով զէջումն հոգւոյն 'ի յորդանան և 'ի դաս առաքելոցն 'ի վերնատունն, և զերևումն 'ի թաբօրական լերինն լուսաւոր ամպով: Նա և զշրջելն 'ի վերայ ջուրց և արարչագործել 'ի սկզբանն. և զծնանելն մեզ 'ի ջուրս աւազանին, և զշնորհս և զպարգևս ամենեցուն տիրապէս բաշխել ըստ արժանւոյն: Նայց զի ոչ արար, վայելուչ է զոր պատշաճ համարեցաւ եդեալ համառօտ և լիապէս. որպէս ասէ,

Տէր և Հոգիդ սուրբ որ 'ի փառս ած ընդ հօր, ամէն: Ամէն ասելն 'ի վերայ եդեալ հաստատութիւն է և կնիք. զի յերբայականնէն 'ի մեր ամէնն՝ եղիցի թարգմանի. ասի և՝ է, և ստոյգ, և ճշմարիտ: Նա և համաձայնութի է ժողովրդականացն մանկանց եկեղեցւոյ. զի ամէն ասելովն կցորդ լինին ժողովուրդքն քահանայիցն. որպէս առաքեալն յայտ առնէ ասելով վասն այլալեզուացն թէ, * Զ. խորհ-

որպէս մի է ծնօղն, մի է եւ ծնեալն ՚ի նմանէ\ինքնեան։

Ո՛վ դու միայն սուրբ, դու մշտնջենաւոր, միայն ես երեւե-ցար մարմնով մեր ՚ի վերայ երկրի եւ ծառայաբար յանձն կրեցեր ամենայն. որով զամենեսեան սրբեցեր քոյին սրբարար սրբութեամբդ. եւ կոչես զմեզ ՚ի նոյն միայն մաքրութեան եւ սրբութեան. Որդւոյն միա-ծնին ընդ Հօր եւ միայն սրբարար ազդին՝ նա ինքն է մաքրութիւն ամե-նայնի։ Քանզի՝ *Ճաճանչ է նա զօրութեանն Այ, եւ ծագումն ճշմարիտ փառացն ամենակալին. վասն այսորիկ եւ ոչ մի ինչ պղծեալ խառնի ՚ի նա. քանզի նշոյլ է մշտնջենաւոր լուսոյն, եւ հայելի անարատ ընդ ազդեցութեանն եւ պատկեր բարութե նորա. մի է եւ ամենայնի կարող. կայ յինքեան եւ զա՛մ նորոգէ։

Նաեւ աւետարանիչն յովհաննէս զայն վարդապետէ այլով եւ-զանակաւ. *Մի ապաւինեսցի ասէ վս ձեր բարերարն Այ. զԹամն, ողորմածն, սուրբն, յաւէտն, անհասն, անհիւթն, միայնն, մին, անփոփոխն, սաստիկն, աննենգն, անըստգիւտն. որ ՚ի վեր է քան զամ ասելի եւ իմանալի անուն՝ Այ յս։ Բարձրեալ ոչ զօրեն մտաց իմա-նալ կամ ասել ինչ վասն նորա. զի ՚ի վեր է քան զամ խելացումն։ Նմա բառ կարողութիւն ունիմք ճառելն, միայն Այսրութեանն է բա-ցայայտիչ, եւ մարմնութեան յայտնութիւն. զի մի՛ անշնորհակալու-տացուածք երեւեցուք։

Ո՛վ դու միայն սուրբ, դու միայն. բարձրեալ ես դու միայն, Տէր մեր Յս Քս։ Բարձրեալ ես ասէ դու միայն. այսինքն՝ ոչ եղա-կանացս համեմատէ բարձրութիւն քո. այլ միայն ես գերազանցեալ, եւ ՚ի վեր քան զամ բարձրացեալ անսահման մեծութեամբ, ՚ի հրեշտակաց եւ ՚ի մարդկանէ. ՚ի փառս հայրենի մերով բնութեամբ միայն դու բարձ-րացեալ՝ Տէր մեր Յս Քս։ Որպէս առաքեալն ասէ, *Որ ելն զինչ է, եթէ ոչ զի էջ նախ ՚ի ստորին կողմն երկրի. որ էջն նոյն է եւ որ ելն ՚ի վերոյ քան զամենայն երկինս։

Բարձրեալ ես դու միայն Տէր մեր Յս Քս։ Նա այսու աւա-ետես յայս դնէ հաւատացելոց եւ վստահութիւն ուրախ է. զի Թէ բարձրեալ ես ասէ մերով բնութեամբ ընդ աջմէ Հօր, եւ մեզ խոստա-ցար ընդ քեզ բարձրանալ յարքայութեան քում ասելով, *Ուր եմ ես, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի։ Նա այսու յուսով առաւել ես վստահացեալ կարդամք զանուն քո։

Տէր մեր ասէ Յս Քս։ Նաեւ անուանէ զբանն դիտաւորութի որ առ որդի՝ անօրինական անուանիւք, պատմելով զմեծագոյն բա-րեգործութիւնն որ առ ազգս մարդկան. զի մի՛ մոռացմամբ ապե-րախտ լինիցուք. այլ միշտ յիշելով գոհասցուք զշնորհացն նորա։

Տէր և Հոգիդ սուրբ՝ որ ՚ի փառս ած ընդ հօր, ամէն։ Պանծ-այժմ արքական անուամբ կնքեալ և զհոգւոյն փառաբանութիւնն, յայտ առնելով զհաւասարութիւն և զփառակցութիւնն ընդ հօր։ Զի է յառաջագոյն ձայնեաց ճշմարտապէս վասն հօր ածութեանն և որդւոյ անձառ անօրէնութեանն որչափ հնար էր ասել բնութեան մարդկան յաղագս այս վճարել բանիւք։ Իսկ այժմ. ուսուցանէ ասենք բանիւս ՚ի հոգին սուրբ, ասէր զնա ասելով և ած խոստովանողաբար ճշմարտապէս փառակից ընդ հօր, որպէս որդւոյն սերելն ցուցանէ ուսու-ցել բանիւն։

Տէր և Հոգիդ սուրբ որ ՚ի փառս ած ընդ հօր։ Յայտնեցի՝ ոմն ասէր թագաւոր հայր և ած. ասէր և որդի հօր միածին օծեալն այս և փրկիչն մարդկան յոր քս աթոռակիցն հօր որդի. ցուցանէ ասէր և Հոգին սուրբ ած ՚ի փառս ընդ հօր արարչակից և պատուակից, և ներգործող ՚ի անօրէնութեանն որդւոյ։

Տէր և Հոգիդ սուրբ որ ՚ի փառս ած ընդ հօր։ Եթէ որ ՚ի փառս այս հօր ասեն, մի և նոյն է. զի որ ՚ի փառս այս հօր է, ած է ճշմարտապէս և հաւասար այս։

Տէր և Հոգիդ սուրբ որ ՚ի փառս ած ընդ հօր։ Յայտ ոչ միայն զհաւասարութի և զպատիւ յայտ առնէ ընդ հօր և ընդ որդ-ւոյ զհոգւոյն սրբոյ. այլ և զերիր անձնաւորութի ՚ի միում ածու-թեան ճշմարտապէս քարոզէ. և զուգել հաւասար և զանքիծ խոստո-վանութիւն՝ ամենեցուն ծանուցանէ։

Յամօթ լիցի սաբէլ և համախոհք իւր. որ ոչ խոստովանին զե-րիս անձնաւորութիւն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։ Ամաչեսցէ արիոս և նմանիք նորին. որք ոչ խոստովանին զորդի հաւասար փա-ռակից և պատուակից հօր. այլ նուաստ ասելով ոչ զարհուրին։ Կործանեսցի բերան նեստորի և հետեւողաց նորին. որք յետ անձառ միաւորութեանն՝ յերկուս բաժանեն զմարմնաւորութի որդւոյն այս։

Պապանձեսցի և ակիէս՝ ապողինար և համախոհք իւր. որք բանական հոգի ոչ առեալ ասեն քի. կամ միայն մարմնականս, կամ որ առ աչօք ասեն երևեալ քի։ Զմբռնեսցի մակեդոն և հոգեմարտքն նմ. որք զանէութիւն հոգւոյն ուրանան և ոչ դաւանեն։ Այլ է նշ և եղուկ է ՚ի նոսա. զի կորիցեն և ոչ կեցցեն։ Այլ մեք ՚ի քան ազօ-թիցս դարձցուք. և զանէութիւն հոգւոյն վերաձայնելով խոստո-վանեսցուք հաւասար ընդ հօր ասելով։

Տէր և Հոգիդ սուրբ որ ՚ի փառս ած ընդ հօր։ Յայտնեցի՝ որդի հայր ած ասէր է և ած. անեզանելի բնութի. անսկիզբն և ան-ժամանակ. արարիչ և հաստիչ բոլորից։ Յայտնէ և Հոգին սբ ընդ հօր այսմ ամենայնի զուգակից և պատուակից փառացն հայրոյ, և

տէրութեան կցորդ և ածութիւնն գոլով մի։ Եւ թէ ընդէ՞ր ասա զորդի ոչ յիշէ, այլ միայն զհոգին ընդ հօր տր և ած ՚ի փառս ասէ։

Ճշմարիտն ինքեան միայն է գիտելի հոգւոյն սրբոյ. որ քննիչն է ամենայնի ըստ առաքելոյ որ ասէ, * Հոգին զամ. քննէ և զխորս այ, և ինքն յումեքէ ոչ քննի։ Զի ինքն է ամենայնի լցուցիչ և բացայայտիչ. և կամ որոց ինքն յայտնէ զգաղտնիս՝ և զծածուկս իմաստութեան իւրով ծանուցանէ սրբոց իւրոց և հոգիընկալ արանց, որպէս ասէ մարգարէն։

Նա և մեզ վերջացելոց ՚ի գործոց բարեաց և վրիպելոց ՚ի հոգւոյն շնորհաց, զինչ՞ր լիցի յայս համարձակիլ և ասել թէ ճշմարտութեամբ ՚ի վերայ հասաք բանիս կամ այս է զոր ասացաք իմացաք։ Զի զայս և ոչ սրբոցն է համարձակելի ասել. թող թէ մերում նուաստութեան։ Նա և միայն այսչափ թելադրութիւն առցուք փափագողաց բանիս, թէ նախ քան զայս զորդւոյ համապատուութիւն ընդ հօր ծանոյց ճշմարտապէս, և խոստովանելով ՚ի փառս տէրութեան զհայր և զորդի։

Եւ ասա աւելորդ համարեցաւ դարձեալ երկրորդել և որոշաբար զորդի եւս ընդ հօր յիշել յայսմ վայրի. այլ միայն ՚ի կամս լսողացն թողատան արար իմանալ, թէ ամ որ ինչ հօր է՝ նոյն և որդւոյ է ըստ տէրունական հրամանին. և որդւոյն՝ հօր է։ Նոյնպէս և զայս պարտ է իմանալ թէ որ ՚ի փառս ընդ հօր ասաց զհոգին, նոյն և ընդ որդւոյ կոչեսցի։ Եւ զի տէր է հոգին և պարգևատու և շնորհաբաշխ. և գիրք սուրբք վկայեն, որոց և առաքեալն յանձնարարապէս ցուցանէ ասելով այսպէս։ *Ամենեցուն ճարտարապետն ուսոյց ինձ իմաստութիւն. զի գոյ ՚ի նմա հոգի մաքուր, սուրբ, միածին, բազմաբաշխ, նուրբ, դիւրաշարժ, պարզ, անարատ. և այլն եւս զոր ասէ ըստ կարգի։

Տէր և հոգիդ սուրբ որ ՚ի փառս ած ընդ հօր։ Սուրբ առաքեալն՝ զած հոգին յայտ արար. զի հոգի կոչին և հրեշտակք, նա և մեր հոգիս հոգի անուանի. բայց սուրբ ոչ ասին սոքա։ Նա և ած հոգի միայն նա ասի որ ածութեամբն փառակիցն է հօր և արարչակիցն որդւոյ. որ տէր հոգին է, որ անեղանելի բնութիւն ՚ի վեր է քան զամ եղականս, միայն ընդ հօր և ընդ որդւոյ հաւասարեալ։

Սա աղբիւրն է ամ բարութեանց, և պարգևիչն շնորհաց. որ մարգարէս յորդորէ, և առաքեալս ձեռնադրէ, և քահանայս և թագաւորս օծանէ։ Սա յորդեգրութիւն հօրն երկնաւորի զամենեսեան պատրաստէ վերստին ծննդեամբ սուրբ աւազանին, ինքեամբ և ջրով նորոգեալ։ Սա բարեխօսն է ՚ի հեծութիւնս անմռունչս ըստ առաքելոյ վասն հաստատելոյ իւրոց առ հայր։

Որով և յն վկայեալ լինէր 'ի հօրէ ճշմարտապէս որդի սիրելի 'ի Թաբօր և 'ի յորդանան . և վարիւր յանապատ 'ի հոգւոյն և յաղթէր փորձողին ։ Որոյ զօրութեն դառնայր 'ի գալիլեա և զմեծամեծնշանսն և զսքանչելիսն հրաշագործէր . և համբաւն տարածիւր յամենեցունց լսելիս ։ Նա ամենեքեան գային և լսէին և բժշկեալ լինէին յիւրաքանչիւր ախտից , և փառաւոր առնէին զած ։ Որոյ զհայհոյութիւն անթողլի ասէր տէրն աստ և 'ի հանդերձեալ աշխարհին ։ Նա վճիռ հատանելով ասէր առ հրէայսն , * Եթէ հոգւովն այ հանեմ ես զդևս , ուրեմն հասեալ է 'ի վն ձեր արքայութիւնն այ ։

Տէր և հոգիդ սուրբ որ 'ի փառս ած ընդ հօր ։ Բայց և ասա յամենայն հակառակութիւն կրի թէ՝ ընդէ՞ր համառօտ և սուղ է եդեալ զբանս որ յաղագս հոգւոյն . և ոչ երկայնագոյն որպէս վասն հօր և որդւոյ արտձաքանեաց ։ Զոր ոչ է խրատեցի զայս քննել , այլ միայն հաւատով ընդունել . զի յերեսին մի է ածութիւն . և երեքին մի՝ յորս ածութիւնն ըստ սրբոյ ածաբանին գրիգորի ։

Զի հօր փառաւորութիւն և որդւոյ՝ և հոգւոյն համարեալ է . և հոգւոյն պատիւն՝ որդւոյ և հօր ։ Նա զհօր այ բարերարութեն պատմեաց բանիւս , և զորդւոյ զանօրէնութիւնն ։ Իսկ հոգւոյն զի մարմին ոչ զգեցաւ , այլ միայն ներգործեաց 'ի անօրէնութե որդւոյն ։ Վասն որոյ երկայնապատում ոչ արար . այլ կարճ և համառօտ բանիւ էանց , բաւական համարելով առ 'ի հաւատարմութիւն ած ընդ հօր դաւանեալ զհոգին ճշմարիտ ։

Զի թերևս վասն ձանձրութեան ոչ երկայնեաց զբանս , այլ խնայելով յաղօթականան կարճեաց . զի հանապազօրեայ է բանք աղօթիցս . և յետ բազում աշխատութեանց օրհնաբանի յառաւօտին ժամուն ։ Զի թէ կամեցեալ էր երկարել զբանս , գոյր տեղի ընդարձակութեան , յիշելով զիջումն հոգւոյն 'ի յորդանան և 'ի դաս առաքելոցն 'ի վերնատունն , և զերևումն 'ի թաբօրական լերինն լուսաւոր ամպով ։ Նաև զշրջիլն 'ի վերայ ջուրց և արարչագործել 'ի սկզբանն . և զիջանելն միշտ 'ի ջուրս աւազանին , և զշնորհս և զպարգևս ամենեցուն առատապէս բաշխել ըստ արժանեացն ։ Բայց զի ոչ արար , վայելուչ է զոր պատշաճ համարեցաւ եդեալ համառօտ և լիապէս . որպէս ասէ ,

Տէր և հոգիդ սուրբ որ 'ի փառս ած ընդ հօր , ամէն ։ Ամէն ասելն 'ի վերայ եդեալ հաստատութիւն է և կնիք . զի յեբրայականնէն 'ի մերս ամէնն՝ եղիցի թարգմանի . ասի և՝ է , և ստոյգ , և ճշմարիտ ։ Նաև համաձայնութի է ժողովրդականացն մանկանց եկեղեցւոյ . զի ամէն ասելովս կցորդ լինին ժողովուրդքն քահանայիցն . որպէս առաքեալն յայտ առնէ ասելով վասն այլալեզուացն թէ , * Զիարդ

ասիցէ զամենն 'ի քում գոյութեանն որ կայցէ 'ի տեղի ազգին . յորժամ համաձայնութիւն ոչ իցէ միով բարբառով և լեզուաւ .

Արդ այսուհետև և մեր թարգմանիչք աշխատեցան մի գիւտ գրիս մերոյ և աղօթիւք խնդրեցին յԱյ մինչև ետես . զի ժողովուրդքն 'ի խաւարի մի մնասցէ . որոց քրիստոնեականն օրհնութեամբ եղիցի . Եւ այս մինչև ցայս վայր որ յառաջին ասացաւ՝ սրբոց արանց խնկ է աղօթք և դաւանութի 'ի սուրբ երրորդութիւնն կարճ և համառօտ բանիւ , առ 'ի համառօտութի ուղղափառ դաւանողաց , և զկնի եկեղեց վայելչութի և հաւատարմութի . Արդ որոյ և զամենն 'ի վերայ եդեալ կնքէ զբանս . որով ասացաւ բանիս յայս ամենեցուն լիցի . Որպէս թէ ասիցէ , փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն .

Եւ առա հանգիստ այսպէս է առնուլ , և երկար միջոցաւ դադարել . որպէս 'ի մէջ դաւթայնոյ սաղմոսացն յորժամ զօրհնութիւն և զփառս մատուցանեն . Ով իմ մի ոք յանդգնեսցի աղխատաբար խոտանելով . որպէս տեսանեմք յանուսումն և յանոպայ մարդիկ , որ զվերջին բան աղօթիցս 'ի հեռաւոր բանիցդ սկիզբն խառնեն . Եւ զայն , որ ոչ է յայսմ աղօթից , այլ անջրպետաւ որոշեալ և զատեալ , 'ի սմին յարելով չափաթեն զճշմարտութիւն .

Ով իմ լաւ է կոյր աչօք , քան թէ կոյր մտօք . զի կոյր մտօք՝ զճշմարիտն ոչ տեսանէ . այլ զհոգին 'ի խաւարի և 'ի սատանայ մահու միշտ ընկղմէ . և ոչ թէ 'ի լոյս իցէ՝ զլուսաւոր յորդորէ . ոչ և լսեմք այժմ 'ի աղխատաբարոց և յանձնահաճ մարդկանէ զի ասեն , Տէր և Հոգիդ սուրբ որ 'ի փառս Ած որ ընդ Հօր և ընդ Որդւոյ օրհնեալ այսօր և յամենայն ժամ .

Եւ կամ որ այլ իմաստունքն ձևանան , իբր քերելով իմն ասեն , Տէր և Հոգիդ սուրբ 'ի փառս Ած ընդ Հօր այժմ և յամենայն ժամ . Եւ ամենեքեան անպարտելի կեն և հանգիստ զայս առնեն անմտութեամբ . զհեռաւոր աղօթիցն սկիզբն , յառաջնոյ օրհնութեանցս վերջ և առաջն դնեն աղխատաբար և ոչ ամաչեն . Եւ որս առնել պարտ է . առանց աղխատութեան , երկուց կարութեան , վայ անուսումնութեան .

Ով իմ այնչափ հոգ ոչ առնէք զի 'ի գիրս նայիք և գտնեայ մարմնականն աչօք զգրեալսն տեսանէք . զի իբր զյովանակ ընդ մարս կալով , զճշմարտութիւնն ճանաչիցէք . այլ իբր զազգ կոյրկոյր զմի միչ ծանուցեալ , սակարաբար զնոյն պատուածէք . Ով իմ բաց յայնմ օրէ յորում 'ի մանկական ընթերցեալ են զգիրս աղօթից կամ սաղմոսաց . բնաւ այլ ոչ է փոյթ լեալ 'ի գիրս նայելոյ զի զճշմարտութի ուսցին .

Եւ թէ ուր առեք զոր ասեն զի սաղմոսարան կամ աղօթամատոյց ընթեռնուն , զարմանալով ասեն , զոր 'ի բերան ունիս՝ մի

եր գրոցն վարժելոյ․ ընթերցիր զայն զոր ոչ գիտես ՚ի բերանոյ։ Այլ ոչ իմանան թէ ուսանել այնք է պարտ հոգալ վարել, յաճախ ընթեռնուլ և ստուգել զոր ՚ի բերան մտաւուցանեմք այ երգելով ՚ի տուէ և ՚ի գիշերի առանձին և հասարակ․ Զի զոր ՚ի գիր ընթեռնու ոք, թերևս զսխալեալն՝ կրկնեալ անգամ ստուգեսցէ․ իսկ առանց գրոց ասացեալն ընդ ստորակուսանօք մնայ սխալանքն, եթէ միշտ առանձինն ՚ի վերայ գրոց ոչ ստուգեսցէ։

Սան որոյ առանձինն ՚ի գիրսն պարտ է նայել և զճշմարիտն ստուգել․ զի կարող լիցի ՚ի ժամ աղօթիցն զուղիղն երգել բերանով առանց գրոց։ Այլ զայս մի այնորիկ ասա երկարեցաք զբանս, զի զբազմաց սխալանս յաղօթիցս բան՝ ծանուցուք․ զի մի՛ ոք անփոտարբեր զերկուսեան աղօթս առանց միջոցի ՚ի միմեանս յարելով շփոթեսցէ զճշմարտութիւնն։ Այլ որպէս ասացաք՝ ՚ի վերջ ամենայնից աղօթից յորժամ ասէր զհոգւոյն սուրբ և ՚ի փառս ամ․ ընդ հօր դաւանէ և զամենն ասէ՝ միջոց և հանգիստ արարեալ փոքր ինչ լռութեամբ դադարեսցէ։

Զի բաժանեսցի առաջին աղօթքս միջոցաւն, և յանմեղեցուն յայտ լիցի թէ որ յառաջին իսկ էր ասացեալ օրհնութիւնս՝ նաւարտեցաւ աստ։ Այլ սոյս երկրորդական աղօթքս որ զկնի է՝ սկիզբն արարեալ իբրև նոր իմն երգոյ և նոր սկզբան․ Զի այդ որ զկնի է, յետոյ է ասացած յեփեսոսի ժողովոյն՝ իբր վկայութիւն և ձեռնարկ ամենայն օրհնութեանցդ որ ՚ի սորայն էր։ Որպէս այն որ ՚ի հաւատամքն են յաւելեալ ՚ի վերայ նիկիական ժողովոյն որ ասէ, իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր որդի։ և զ իսկ մեք փառաւորեսցուքն։

Զի և այն յետոյ է անդ եդած․ որպէս աստ ՚ի յայսմ օրհնութեանս այս երկրորդ բանքս յետոյ աղօթական ձևով ՚ի վերայ է յօդած։ Այլ այս բանական է որ միտս ունի և կամեցի լսել և հասնիլ կամ ՚ի միտ առնուլ։ Զի յանուր ակամբ ոչ է օգուտ ինչ երկայնաբանել, այլ զուր աշխատանք։ Իսկ իմաստնոյն պատճառս սուղ ինչ ասէ առուր, և իմաստնասցի առաւել ևս ամենայնիւ։

Յորդորակ։

Ո՜վ որդ՝ եկայք այժմ և մեք միաբան հաւատացեալքս ուղղափառ դաւանութե՛ ճշմարիտ խոստովանօղքս սրբոյ երրորդութեանն՝ փառաւորեսցուք զհայր և զորդի և զհոգին սուրբ,

ոչ միայն բանիւք, այլ և գործովք եւս խորհրդովք։ Ո՛չ իմանալի բնութիւն է ա̃ծ, և զգաղտնիս մարդկան տեսանէ. և ոչ եղեալքն և ոչ գործեցեալքն առ ՚ի մէնջ, բացայայտ են առաջի նորա։

Եւ կարգեաց օր, յորում դատէ զգաղտնիս մարդկան. և ոչ առնու ակն ամենեցուն տէրն, և ոչ խորշի յումեքէ. զի անաչառ է դատաւոր, և իրաւացի առնէ զդատաստանն։ Ողորմածացն է խոստացեալ ողորմութիւն. իսկ անողորմիցն տանջանք և դառնապարտութիւն որպէս մեծատանն։ Եւ զաղքատացեալսն հոգւով մխիթարէ յարքայութեանն որպէս զՂազարոս։

Եւ որք ՚ի սուգ աշխարհութեն տխրեցին, սփոփանս խոստացաւ և անվախճան խնդութիւն։ Որք սրբեն զսիրտս յախտից մեղաց, տեսեալ զՔս հայրական փառօք բերկրեալ ցնծան ՚ի յաւիտենական ուրախութիւնսն։ Ոչ սիրողաց զեղբարս՝ մարդասպանութեն պատանայ պատիժ. իսկ սիրողացն և զպատուիրանն պահողացն՝ զերկնական սէրն խոստանայ և զիւրն երևումն հանդերձ քաղցրագոյն սիրովն որ ոչ պակասի։

Եւ դու ով մարդ, զայս ամ գիտելով պատրաստեա՛ զքեզ ՚ի պատերազմ ՚ի կենցաղումս. զի ՚ի կեանս յայս՝ ՚ի ձեռս մուծաւ մարդ և յաշխատանս։ Եւ թէ կամիս ՚ի կեանս յաւիտենից հանգչել, աստ հանգիստ մի՛ խնդրեր. այլ մարտիր զաւուրս մարտն զի պսակեսցիս։ *Ո՛չ ոք պսակի ասէ առաքեալն, եթէ ոչ ըստ օրինին մարտիցէ։ և թէ՝ *Ո՛չ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան. այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս չարագոյն դիւացն և օդայինն այսոցն պղծոց։

Վասն որոյ նախ ուղղափառ հաւատով զքեզ զօրացո՛ ով սիրելի որպէս ուսար ՚ի սրբոց հարցն և ՚ի հոգեկիր արանցն։ Եւ թէ ՚ի վերայ յաւնէ պատերազմ ինչ՝ մի՛ երկիցես. այլ մարտիր հաւատով և յուսով ՚ի վերայ ճշմարտութեանն որպէս և հարքն առաջին. զի ա̃ծ ընդ քեզ է որպէս և էր ընդ նոսա։ Նա և թէ արքունական պատանալեաց պատուհաս և թագաւորական սաստից և իշխանական ատենի, մի՛ զարհուրեր և մի՛ թիւրեր զճշմարտութիւն։ Մի՛ ակն առնուր երեսաց, մի՛ ամաչեր, մի՛ պատկառեր և մի՛ զանգիտեր. այլ համարձակութեամբ ընդ Դաւթայ խօսեա՛ց զվկայութիւն ճշմարտին ա̃յ առաջի թագաւորի առանց ամօթոյ։

Ատեա՛ զփառս մարդկայինս, զի յայն ընկալցիս զյաւիտենական փառացն վայելս։ Եթէ հալածանաց հանդիպիս յաղագս ճշմարտութեան, յօժարութեամբ հալածեսցի՛ր ընդ Քի, զի ընդ նմին հանգիցես։ Եթէ նախատեսցիս կամ յընչից զրկեսցիս, նոյնպէս սիրով յանձն առ-

ցես. զի զանսպառ բարիսն 'ի քեզ ընկալցիս: Իսկ եթէ մեզ հաստանէ զկնովին մն հաւատոց, մեռեալ սիրով քո. զի ընդ նմին յաւիտենական թագաւորեսցես: *Զի ոչ են արժանի չարչարանք ժամանակիս առ հանդերձեալ փառսն որ յայտնելոց են 'ի մեզ ասէ առաքեալն: և թէ՝ *Զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ. և ոչ ել 'ի սիրտ մարդկան, պատրաստեաց ա̃ծ այնոցիկ, որ սրտիւ սիրեն զնա 'ի բոլոր սրտէ:

'Ի վերայ ամենայնի և նախ քան զա̃մ մի յանձն ապաստան լինիր. այլ 'ի սէր պարծեցիր և սերտմբ գործեսցես զա̃մ և ա̃ն շնորհ ունիցիս. զի առանց ա̃յ եղև և ոչ ինչ և ոչ այլ լիցի: Սան որոյ միշտ զխոնարհութիւն սիրեսցես և զհեզութի և զողջախոհութի և զանսասացուածութի և զկարեկցութի և զողորմածութի և զսէր և զգութ առ աղքատս և առ անանկս: Այլ թէ 'ի հալածանս իցես և 'ի տանջանս և 'ի նախատակութե, զպահս և զաղօթս և զճգնութիւնս մի մոռանար:

Եւ թէ մերձ ես 'ի մարտիրոսութե մեռանել, և կամ նշանս և սքանչելիս. գործիցես և մեռեալս յարուցանիցես, այսմ ամենայնի առաւել պէտք են հանդերձ խոնարհութեամբ և սիրով վճարել: Զի առանց սիրոյ և խոնարհութե 'ի զուր է ա̃մ բարեգործութի զինչ և գործեն ազգք մարդկան: *Թէ ունիցիմ մարգարէութիւն ասէ առաքեալ և գիտիցեմ զա̃մ գիտութիւն, և նշանս և սքանչելիս գործիցեմ, և զա̃մ ինչս իմ աղքատաց բաշխիցեմ. և այրիցիմ ես հրով վասն ա̃յ, և զեղբայրն ոչ սիրիցեմ ըստ պատուիրանին տեառն, ոչինչ օգտիմ յայսմ ամենայնէ: Այլ սողոմոն ասէ, *Տէր ամբարտաւանից հակառակ կայ. և խոնարհաց շնորհս պարգևէ: Այլ հայր սուրբն, *Պատարագ ա̃յ ասէ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ, և զհոգի խոնարհ ա̃ծ ոչ անգոսնէ: Այլ տէրն մեր հրամայէ. *Որ խոնարհեցուցանէ զանձն վասն իմ, ես բարձրացուցից զնա փառօք յերկինս և յերկրի: և *Ես յո՞ բնակեցայց. եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս և դողան 'ի բանից իմոց:

Այլ այլ ինչ բարձրագոյն փառս՝ քան ա̃յ ընդունակ և տաճար հանգստեան լինել և տեղի և բնակարան. ո՞ր փառք այսմ համեմատի, կամ ո՞ր մեծութի այսմ հանգունակ լիցի: Զի թէ զաւուրս մաթուսաղայի ոք լցցէ 'ի վերայ երկրի, և զա̃մ 'ի բարութե վայելիցէ, և 'ի մեծապայծառ ճոխութեան զուարճասցի, և զկնովին զթագաւորական ունիցի պատիւ, և 'ի փառացն ա̃յ զրկեսցի յետ ասակացս վճարելոյ, ողորմելի՛ է այնպիսին և քան զանբանսն ես՝ և քան զանշունչս: Զի նորա թէ և յարութեան յոյս ոչ ունիցին, և ոչ տանջանաց երկիւղ. իսկ սա՝ որ զաւուրս 'ի բարութե վայելեաց, և

ի մարդկանէ փառաւորեցաւ ըստ մարդկութեանն պատուոյ • կամ կեր-
ծառայութիւն ձեւացաւ բարի և իբրև զաւակ պատուեցաւ, և ոչ ոչ
պատշաճեցելոյ ծննդաբանութեամբ բարի ինչ որ զծառայական անուանէ • որ-
դւոյն մեծաց աստուածոց ակնկալեալ այնպիսին և գթութեան:

Եւ մի՛ ոք խաբեսցի որպէս ասեն ոմանք անմիտք, թէ գոյ տեղիք
որ միջոց է արքայութեան և դժոխոցն • որ թէ ոք ոչ յարքայութեանն
ոչ է, նա և ոչ ՚ի դժոխսն է, այլ ՚ի միջոցի անդ լիցի: Եւ սուտ է
այս կարծիք, մի՛ ոք հաւատասցէ • որպէս ընդ մահն և ընդ կեանս միջ
ոչ գոյ, այսպէս և ընդ դժոխքն և ընդ արքայութիւնն միջ ոչ կայ •
Որ ՚ի ցանկալի հանգիստ ոչ գայցէ, ՚ի ծով ընկղմեսցի • և որ յարքայ-
ութեանն չէ, ՚ի տանջանսն է: Զիմար կուսանքն որ արգելան յար-
քայութենէն, այլ տեղի ոչ գտին կալոյ • այլ լսեն ՚ի տեառնէ թէ՝
* Երթայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենից: Զորոց փրկես-
ցէ քս՟ ած՟ զհաւատացեալքս անուանն իւրոյ • և արժանի արասցէ
արքայութեան իւրոյ • Եւ ինքն եղիցի օրհնեալ ընդ հօր և ընդ հոգ-
ւոյն սրբոյ • այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Եւ այս ՚ի ժողովոյն Եփեսոսի ասացաւ:

Եւ յամ ժամ օրհնեմք զքեզ տէր • և գովեմք զանուն տէր
քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից:

Եթէ որքան մեծ են բանքս ասացեալ, որք մեզ նշկեն՝ ...
է յայտնի • այլ զի աթոռական բանիւ յօդեալ է յօրհնութիւն հարցն
ա՚ ՚ի միաբանութիւն հաստատութեան: Նոյն պարտ է ամենեցուն հոգ-
յանձին ունել և ուսուցանել զանձկալութիւն և զհրաշալի աթոռ-
թոց, զի մի՛ ոք ազգաբար մի աթոռք կարծիցէ զերկուսին • որպէս
անուանեմք ՚ի յոլով որ յառել զմարդաբանական և զաստուածածնեան
աթոռս, զվերջինս ունել զառաջնոյն վերջն միաւորեն • և զերկուսին
չփոթեն • զի ոչ առաջնոյն վերջն ճանաչի և ոչ վերջնոյս առաջքն: Սր
միաւորելով յերեսս առանց հանգիստ առնելոյ զանխառն անջատեն:

Զի ոմանք ոչ գիտեն բնաւ թէ երկու են աթոռք և ոչ մի • և
յայլ և յայլ ժամանակս ասացած յայլոց և յայլոց արանց: Եւ ոմանք
ոչ զառաջինն ճանաչեն թէ որոյ է, և ոչ զվերջինս թէ այլոց եւ է
և ոչ ՚ի նոյն կարգէ: Այսն որոյ աղաչեմ զամենեսեան, զի յաղօ-
թելն միջոց և հանգիստ առնիցէք ՚ի մէջ երկուց աթոռիցս, որպէս
ասացեալ եմք յառաջագոյն զի յայս լիցի ամենեցուն:

Այս յամ ժամ ասէ օրհնեմք զքեզ։ Զմարգարէին առնու ըզբան որ ասէ, *Օրհնեսցից զտէր յամ ժամ. յամ ժամ օրհնութի նր ՚ի բերան իմ։ Այսինքն՝ ՚ի տուէ և՛ ՚ի գիշերի միշտ գոհացայց զքեզ.

Այս գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Թէ զինչ է օրհնելն կամ գովելն՝ ասացեալ եմք յառաջին աղօթիցն մեկնութեան։ Իսկ զյաւիտեանսն՝ մեծին Խոսրովու յայս տարածեալ է երկայնապատում բանիւ։ Այլ մեք համառօտիւ զայս ծանուցանեմք թէ՝ յաւիտեան է ներկայս. և յաւիտեանս՝ սկիզբն հանդերձելոյ աշխարհին. և յաւիտենից՝ անսպառ և անծերանալի յաւիտեանն.

Արժանի արա տէր զօրս զայս խաղաղութե՛, և առանց մեղաց պահեա՛ զմեզ. օրհնեալ ես տէր ա՛ծ հարցն մերոց. գովեալ և փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս, ամէն։

Աստուածապատմութ՟բ Մովսէս զտիւ և զգիշեր ՚ի մի համար առնու և օր մի կոչէ. որպ՛ ասէ, *Եղև երեկոյ և եղև վաղորդեան օր մի։ Այլ զի սովորութի է մարդկան համառօտիւ բաժանել, և որչափ արեգակն ՚ի վերին կիսագունդս կայցէ, օր կոչել զերկոտասան ժամս միայն։ Նա և տէրն պնդէր զմիտս աշակերտացն ՚ի հրաժարեցուցանելն գնալ ՚ի հրէաստան. ասէ՝ *Ոչ երկոտասան ժամ է յաւուր։ Այսպէս և աղօթիցս բան ասէ,

Արժանի արա տէր զօրս զայս խաղաղութե՛, և առանց մեղաց պահեա՛ զմեզ։ Զի ՚ի տուընջեան առաւել սխալի դիւրագայթ բնութիւնս մեր, և անարգել լինի ՚ի մեղանչելն։ Վասն որոյ մաղթէ ըզխաղաղութե՛ անցուցանելն. զի ՚ի գիշերի է զօր քնով անցուցանեմք և նահանջեմք ՚ի մեղաց։ Այս է զօր նսեմութի խաւարին առագաստէ զբնութիւնս մեր և կաշկանդեալ կապէ քնոյ շղթայիւք անդամքս։ Զի ոչ զօրեն ներգործել զգայարանքն. այլ խափանին վասն լուսոյն պակասութե։ Իսկ ՚ի տուընջեան զամենեսեան պատրաստ ունին ՚ի գործ. և յոլովս մեղանչեն մարդիկ յորժամ զերկիւղն այ՛ պահապան ոչ ունիցին. սակս այսորիկ ասէ,

Արժանի արա տէր զօրս զայս խաղաղութե՛, և առանց մեղաց պահեա՛ զմեզ։ Այլ և օր կոչի կենդանեաց ընթացք որ արեգական բերմամբ չափի ըստ հասարակաց մինչ ՚ի կատարած, իսկ առանձին իւրաքանչիւր ումեք չափ կենաց։ Զի և յառաջ քան զմարմնով երևելն քո՛, գիշեր կոչէր կենդանեաց, որպէս ցուցանէ եսայի. *Ի գիշերոյ կանխէ հոգի իմ ասէ առաւօտ առնել առ քեզ ա՛ծ։

Իսկ յորժամ ծագեաց արեգակն արդարութե քո՛ ՚ի խաւարեալ բնութիւնս մեր և լուսով գիտութե ելից զտիեզերս, տիւ կոչե-

ցաւ կենցաղս այս ընդ խռովեալ ախտովն բանի։ *Ինձ պարտ է սակս գործել զգործս այնորիկ որ առաքեացն զիս մինչդեռ օր կայ։ և թէ *Մինչ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի։ Վկայէ և առաքեալն. *Որ խորհի սակս՝ զօրն Տեառն խորհի. և որ ոչն խորհի՝ զօրն Տն չխորհի ըստ անձնիշխան կամացն։

Նա յայսմ աւուր կենցաղոյս մեծաւ ուրախութեամբ ունիմք զսա-տանայ, որ հանապազ ջանայ որսալ զմեզ ՚ի կորուստ. որպէս գրէ գլուխ առաքելոցն պետրոս։ *Արթուն կացէք հսկեցէք, զի ոսոխն ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ. շրջի և խնդրէ թէ զո՞ կլանիցէ։ Մ՝ որոյ խնդրէ աղօթիցս բան՝ խաղաղութիւն և առանց մեղաց անցուցանել խնամոցն Տն։ Ո՛չ միայն զաւաշխէկայ հասանել օրս յորում եմք, այլ և զամ ժամանակս պանդխտութեան մերոյ ՚ի վերայ երկրի։ Նա ընդ մեծագոյն պահպանութեան խնամոցն Տն փոխարէնս մատուցանէ զհեշտակից բանս գոհութեան։

Օրհնեալ ես տէր ած հարցն մերոց. գովեալ և փառաւորեալ է անուն քո յաւիտեանս, ամէն։ Զերից մանկանցն առնու զօրհնաբանութիւն. որ յիշատակս նախնեացն ՚ի գութ ածէին զած։

Օրհնեալ ես սակ տէր ած հարցն մերոց։ Յայնիքն նահապետացն աբրահամու իսահակայ և յակոբայ. որոց հաւատոցն և մեք որդիք և ժառանգք կոչեմք։ Նա նոցին միջնորդութեամբ աղաչեմք զի թէպէտ և ոչ վասն մեր բարի ինչ գործոց, այլ գոնեայ վասն նոցին ողորմեսցի մեզ տէր. որոյ անուն քո սուրբ գովեալ է և փառաւորեալ, ոչ այժմ միայն, այլ և յաւիտեանս եւս։

Օրհնեալ տէր՝ ուսո ինձ զարդարութիւնս քո։ Երեքս կրկնէ զբան օրհնութեան ըստ սրովբէիցն սրբասացութեան որ միշտ օրհնաբանեն։ Նա ՚ի դէմս որդւոյ սակ զերիս օրհնեալն, որպէս զերիս սրբասացութիւնսն սրովբէքն. զոր վկայէ յովհաննէս եթէ եսոյր եսես զփառս որդւոյ՝ և խօսեցաւ վասն նր։ Նաև և կերպիւ աղեքսանդրացի և դաւիթ անյաղթն ՚ի դէմս որդւոյ առացեալ։ Նայպէս և սա աղաչէ իմաստ զարդրի՝ լուսաւորել զաչս մտաց՝ կարօղ լինել նայել ՚ի լոյս գիտութե օրինացն Տն։

Նմ և ՚ի խորհուրդ անօրէնութե քն որ արդարութե մեզ եղև, և արդարացոյց զանօրէնս ձրի շնորհօք ողորմութեան իւրոյ ՚ի ձեռն խաչին իւրոյ։ Նա խնդրէ զմեծագոյն երախտիսն և գոհանայ զառատ ողորմութե նորա. քանզի շնորհօքն քո եղաք արդարացեալք և ոչ անձին քաջութեամբ. զոր և մարգարէն սակ, *Արդարութիւն քո որպէս լերինք տէր ած մեր. և իրաւունք քո որպէս խորք բազում։ Ո՛չ անձին ոչ բանութե, այլ արդարութեամբ յաղթեաց թշնամւոյն մերոյ և արդարացոյց զմեզ։

Տէր ապաւէն եղեր մեզ յազգէ յազգ։ Նախամարգարէն Մովսէս կարդայ զանուն տեառն այ մերոյ՝ տէր ապաւէն. և ամենահայրն Դաւիթ առեալ դնէր յերգս սաղմոսին իւրոյ։ Խորհրդաբար զայնս պաղատեալ և մեք աղօթիցս քում, ապաւէն կարդամք հաւատացելոց զանէութի ամենակալին այ։ Զի ապաւէն եղև բնութեանս, և ի խաւարէ անգիտութե առաջնորդեաց ի լոյս ճշմարիտ աստուածգիտութե. յազգացն առաջնոց որ ի սկզբանէ՝ մինչև ի վերջինս որ քեւ լուսաւորեցաք. ապաւէն եղեալ մարդասիրապէս արարչական խնամօքն տէրն ի վերայ արարածոց իւրոց. և միշտ լինի մինչ ի կատարած։

Ես ասացի՝ տէր ողորմեա ինձ. բժշկեա զանձն իմ եւ մեղայ քեզ։ Զսաղմոսին առնու զբան. և հայցէ զողորմութի յողորմածէն, և զբժշկութի ոչ մարմնոյ խնդրելով, այլ զհոգւոյ։ Եւ ուսուցանէ ամենեցուն, զանձն օրինակ բերելով առաւել այսպէս աղօթել միշտ։

Յիշեա զմեզ տէր ողորմութեամբ քո, և զփրկութեամբ քո այց արա մեզ։ Արժանի արա աստ մտաց աչօք նայել ի սքանչելագործ ողորմութիւնս քո. որպէս աբրահամ իսահակ և յակոբ և մարգարէքն և առաքեալքն ամենայն։ Եւ մեծաւ գոհութե ի քէն միշտ զփրկութի ընդունել հոգւոյ և մարմնոյ, որպէս սովոր ես պարգևել որոց խնդրեն ի քէն։

Տէր ողորմութի քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի անտես առներ։ Անսպառ է ողորմութիւն քո առ է. և ես զի ստեղծուած ձեռաց քոց եմ, արարածս արարչիդ միշտ կարօտ գոլով ողորմութեան. վասն որոյ խնդրեմ, ոչ առնել անտես՝ այլ կեցուցանել միշտ զկարօտեալս։

Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի. ուսո ինձ առնել զկամս քո զի դու ես այ իմ։ Զոր յառաջն ասաց և աստ երկրորդէ, յիշատակելով զապաւէն առնելն յօգնականութի, շարժէ ակարացեալ բնութեանս զամենազօրն այ։ Զքեզ ասէ արարի ապաւէն և ոչ զայլ ոք. վասն որոյ պարտիս խնամարկել միշտ։ Եւ ապաւէն կոչէ՝ որ տեղի ապաստանի է սարսուցելոց և կարող է ի թշնամեաց փրկել. վասն որոյ ամենեքեան դիմեն առ նա։ Այսպէս և ես զքեզ միայն ինձ ապաւէն արարի աստ. և խնդրեմ զի ուսուցես ինձ զերծանիլ ի հնարից բանսարկուին, և հեռանալ միշտ կամաց անձ իմոյ է այ։ Զայս և աւետարանիչն յովհաննէս ասէ, *Ո՛ր որ գիտես զամ բուրեք զչարախօսին մերոյ զմեքենայսն. դու ծածկեա զամենեսեան ընդ հովանեաւ խնամոց քոց։

Ասա ինձ ասէ։ Մինչ զուսանիլն խնդրէ․ զի անյագ է բնութիւն մարդկան բառ սողոմոնի. *Ո՛չ յագեսցի ակն տեսանելով և ոչ ունկն լսելով։ Նա թէ 'ի զգալիս այսպէս, ո՞րչափ ևս առաւել յիմանալիսն։

Ի քէն է տէր աղբիւր կենդանութեան և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։ Զայս մարգարէն յառաջագոյն ասաց 'ի սաղմոսի անդ հոգւովն սրբով, և զանճառ ծնունդն որդւոյ 'ի հայրական ծոցոյ՝ և զանհաս բղխումն ամենասուրբ հոգւոյն յայս արար, այսպէս ունելով բանիւն. Ի քէն է տէր աղբիւր կենաց և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։

Հաւատացեալքս 'ի քո ընդունիմք զլոյս գիտութեան ամենայն շնորհացն, պայծառանամք 'ի շնորհացն մկրտութե աւազանին, և երեւք մտացս պայծառանան 'ի շնորհաց երեսացն քոց. բառ որում ասէ երգեմիւս, *Հոգի երեսաց մերոց տէր քս։ Նա և կենդանական զօրութե հոգւոյն սրբոյ միշտ ներգործէ յարժանաւորս և զանարժանս շնորհօք լնու։

Ողորմեա՛ զողորմութիւն քո որք ճանաչեն զքեզ տէր։ Ընդ լուսոյ առաւօտու և զգութ ողորմութե քո և զլոյս խնամոց մարդասէր կամաց քոց 'ի հաւատացեալքս ծագեա՛, առաքելով յամենեսեան որք ճանաչեն զքեզ տէր մեր և Թագաւոր։

Ողորմեա՛ ասէ զողորմութիւնս քո։ Ի յախնջն՝ զոր օրինակ 'ի ժամ առաւօտուն նշոյլք ճառագայթից արեգականն ծագեալ՝ ըզ նսեմութիւն խաւարին հալածական առնէ. այսպէս ողորմութե քո լոյս ճառագայթեալ 'ի բնութե մերում, 'ի բաց մերժէ զխաւար մեղաց և զանգիտութե. Նա մեք ծանուցեալ զզարի տէրդ մեր և զարարիչ, գոհացուք զառատ ողորմութե քումն։ Որ ես օրհնեալ գովեալ և փառաւորեալ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Զկնի ասելոյ զՓառք 'ի բարձունս.

Փառք պատիւ և գոհութիւն 'ի բարձունս հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Խորհուրդ։

Փառաւորեալ իւր անձամբ փառօքն, և պատուեալ ՚ի հրեշտակաց, և գոհացեալ ՚ի մարդկանէ մշտնջենաւորապէս․ վասն որոյ և մեք զնոյն նմա վերառաքեմք։

Ցուցմունս իմաստասիրի՝ վասն Առաւօտին երգոյն։

Երկուշաբաթին՝ ըստ առաւօտին պաշտաման խորհրդեանն կարգեալ է․ յորում ժամու միւսանգամ գալուստ փրկչին պատմի։ Վասն այնորիկ յառաւօտին աւուրն աղաղակեն ողբերգական ձայնիւ եթէ, *Լոյս տուր տէր աչաց իմոց, զի մի երբեք ննջեցից ՚ի մահ ըստ յիմար հինգ կուսանացն։ *Մի՛ ասասցէ թշնամին կենաց թէ յաղթեցի նմա․ կամ նեղիչք իմ ցնծասցեն թէ ես սասանեցայց ՚ի հուրն յաւիտենից՝ որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա։

Իսկ Երեքշաբաթին՝ ըստ երրորդ ժամու խորհրդեանն կարգեալ է․ յորում ժամու գալուստ հոգւոյն հեղաւ յառաքեալսն։ Որոյ զկենարար գալստեանն զփորձ առեալ մանկունք եկեղեցւոյ՝ առաջի անկանելով աղաղակեն եթէ, Ի քէն է տէր աղբիւր կենաց․ և լուսով երեւեալ քո գալստեանդ տեսանեմք զլոյս։ և թէ՝ Ծագեա՛ տէր զողորմութիւնս քո ՚ի պաշտօնեայս և յերկրպագուս ամենասուրբ երրորդութեանդ։

Իսկ Չորեքշաբաթին՝ ըստ վեցերորդ ժամու պաշտամանն խորհրդոյն կարգեալ է․ յորում ժամու հիւանդութիւն նախահօրն պատմի։ Եւ ՚ի նմին ժամու բժշկութիւն իւրոցն չարչարանօք խաչին տեառն մերոյ յի քի ըստ պիտառութեն յովհաննու աւետարանագրի յասելն եթէ՝ *Էր ժամ վեցերորդ և ուրբաթ զատկին, և հանին զնա ՚ի խաչ։ Եւ զայսպիսի զփրկական տնօրէնութեան խորհուրդ ծանուցեալ մանկանց եկեղեցւոյ, աղաղակեն գոհանալով եթէ, Ես աղաչեմ տէր ողորմեա՛ ինձ․ և բժշկեա՛ զանձն իմ ես մեղայ քեզ։

Իսկ Հինգշաբաթին՝ ըստ իններորդ ժամու խորհրդեանն կարգեալ է․ յորում ժամու ՚ի խաչին աղաղակէր զէլի էլի ասելով միածին որդին այ։ Եւ ՚ի նմին ժամու ընդ երեկս աւուրն զլուսաւորսն ՚ի խաւարէն փարատէր, ըստ մարգարէական ձայնին Նոր առաւօտ ծագելով նստելոցն ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու։ Վասն լու-

սատուորեալ մանկանց եկեղեցւոյ՝ աղաղակեն յառաւօտին յասելն թէ՝ Եւ առ քեզ տէր աղաղակեցի. առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։ Այս որ ՚ի կարգին։

Իսկ Ուրբաթին՝ ըստ տասներորդ ժամու պաշտամանն կարգեալ է. յորում ժամու ՚ի գերեզման իջեալ տէրն արարածոց. և խոնարհ անապական մահուամբն զանապականութիւն մեզ շնորհելով, ազատեաց ՚ի դժոխոց և ՚ի գերութենէն սատանայի։ Յորմէ փրկեալ մանկանց եկեղեցւոյ՝ աղաղակեն գոհանալով յասելն թէ՝ *Տէր ած փրկութեան իմոյ ՚ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո։ և թէ՝ *Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր։ Այս որ ՚ի կարգին յորմնորի պաղատանաց ըստն.

Իսկ Շաբաթին՝ ըստ հանգստեան աղօթից խորհրդոյն կարգեալ է. վասն զի շաբաթն հանգիստ ըստ եբրայեցւոց ձայնին է և կատարումն յաւիտենից։ Յորում և մարտիրոսացն հանգստից յիշատակն պատուի. *Որք զմարմինս իւրեանց ՚ի խաչ հանին կարեօք և ցանկութեամբք հանդերձ ըստ առաքելոյ. Խաչակից լինելով առաջին վկայքն ՚ի խաչ ելելոյն և զիս ժողովողին. յոր ապաւինեալ մանկանց եկեղեցւոյ ՚ի նոցա կարօղ բարեխօսութիւնն՝ աղաղակեն ողբերգակին ձայնիւ եթէ՝ Առաքեա տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո. զի նոքին առաջնորդեսցեն ինձ մոլելոյս ՚ի գիտութիւն ճշմարտութեանն. և հանցեն զիս ՚ի լեառն սուրբ և ՚ի յարկս քո. զանապատացեալս ՚ի գերակայ բնակութենէն ՚ի սորին նուաստութիւնս։

Եւ ապա առ Աստուածն, կամ այլն ըստ պատշաճի աւուր։ Խոստովանի վասն Փառքին՝ նախ քան զՍուրբ աստուածն։

Փառաւորեսցուք զամենակալն ած. զհայր տեառն մեր յի քի, գոհանալով զնմանէ որ պահեաց զմեզ խաղաղութք ՚ի գիշերիս։

Զի՞ս զի գոհացաւ նախկին, և դարձեալ այլ ևս գոհանալ հրամանն տայ, ուսուցանելով թէ վասն այսորիկ գոյացաք, զի հանապազ նը գոհութի մատուսցուք. և մի երբեք մոռասցին ՚ի մէնջ երախտիք նորա։ Զայն զայս և մարգարէն ասէ, *Օրհնեա անձն իմ զտէր և մի մոռանար զամ տուրս նորա։

Փառաւորեսցուք զամենակալն ած։ Ամենակալ ասի. զի զամ արարածս ունի ընդ իշխանութի իւրով. և չիք ոք որ կարէ ապստամբել ՚ի նմանէ։ Թէպէտ թողեալ հրեշտակաց և մարդկան անձ-

նեշխան լինիլ, այլ ոչ. թէ յորժամ կամիցի արգելուլ զնոսա 'ի կա-մակարութենէ իւրեանց՝ զօրասցին առնել զոր կամին։ Որ և հայր է տեառն մերոյ Յի Քի. այն որ բնութբ որդին էր նր, կամեցաւ վն որդեգրութեան որդի լինել մարդոյ. այսուհետև եղբայր է մեր։ Իսկ որ նորա բնութեամբ հայրն է, շնորհօք և մեր հայր է։

Իսկ արդ՝ ոչ միայն արարչական գթութեամբն խնամէ զմեզ, այլ և հայրականաւն. վասն այսորիկ ասէ փառաւորեսցուք զնա։ Զի որպէս զիւր ծնունդս ընդ հովանեաւ իւր ապրեցոյց զմեզ և խաղաղութբ պահեաց 'ի գիշերիս։ Իսկ ոչ միայն վասն յառաւօտի լուսս հասանելոյ գոհասցուք, այլ զի յև՛ս մեծագոյն լոյսն զմեզ եհան։

Ի մահուանէ 'ի կեանս. յապականութենէ յանապականութիւն. յանգիտութենէ 'ի գիտութիւն ճշմարտութեան իւրոյ։

Որ է լոյս ճշմարիտ՝ իւր սուրբ գիտութիւն. յորմէ զրկեալ եղաք անգիտութեան խաւարաւ։ Որ և ողորմեալ մզ հօր, առա-քեաց զմիածին զորդին իւր սիրելի, զի հանիցէ զմեզ 'ի խաւարէ 'ի լոյս և 'ի մահուանէն յաւիտենական կեանս. ցոր և ասէ մարգարէն, *Ետու զքեզ 'ի լոյս հեթանոսաց, հանել զկապեալս 'ի բանտէ և 'ի տանէ կապանաց որ նստէին 'ի խաւարի։ Իսկ ինքն տէրն վասն իւր ասէ, *Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք։ Ճանապարհ, որով 'ի խաւարէն 'ի լոյսն եկաք. ճշմարտութիւն, որով յանգիտութենէ 'ի գիտութիւն ճշմարտութեան հասաք. կեանք, որով 'ի մահուանէ 'ի կեանս փոխեցաք։

Իսկ յապականութենէ յանապականութիւն։ Նորոգումն զոր ա-ւազանաւն առաք. վասն որոյ ասէ պօղոս, թէ *Ըստ իւրում ողորմութեանն ապրեցոյց զմեզ 'ի ձեռն աւազանին վերստին ծննդեան, և նորոգութբ հոգւոյն սրբոյ զոր եհեղ 'ի մեզ առատապէս։ Զի արդարացեալք շնորհօք եղիցուք ժառանգորդք յուսով կենացն յաւիտենից։ Զայն վերստին ծնունդ յիշէ և պետրոս թէ, *Ծնեալք վերստին ոչ յապականութեան սերմանէն, այլ յանապակա-նացուէն, կենդանի և մշտնջենաւոր բանիւն այ։ և զի՝ *Ամենայն մարմին խոտ է։ և զի՝ *Ծնեալն 'ի մարմնոյ մարմին է, որպէս տէրն ասաց։ Զոր և երկրորդեաց առաքեալ։ *Եւ խոտ ապականացու է։

Վասն այնորիկ ասէ առաքեալ վերստին ծնանիլ. ոչ յապա-կանութեան սերմանէն զոր յադամայ ունիմք, որ մեղօքն ապակա-նեալ՝ զանապականութեան սերմն. ազգէ յազգ ծննդոց իւրոց սեր-մանեաց. այլ յանապականացուէն։ Այս ծննդեան սերմն՝ է կեն-դանի և մշտնջենաւոր բանիւն այ։ Իսկ ո՞վ է բանն կենդանի, Քս. որ մշտնջենաւոր է, և մշտնջենաւորն անապական է։ Արդ՝ ոչ

յապականացուէն ապականացու ծնաք ․ այսպէս և յանապականէն ծնանիմք անապականք։ Չեանե՞ր որ՞ հայրն երկնաւոր լոյս և կեանք անապական՝ և ճշմարիտ որդւովն առաջնորդեաց մեզ ՚ի խաւարէ ՚ի լոյս՝ ՚ի մահուանէ ՚ի կեանս՝ յապականութենէ յանապականութի՝ յանգիտութենէ՝ ՚ի գիտութիւն ճշմարտութեան իւրոյ։

Արդ՝ գոհացուք զնմանէ․ և փառաւորեսցուք զնա․ աղաչեսցուք և խնդրեսցուք, զի զերկարութիւն տունջեանս խաղաղութբ և մաքուր զուարթութեամբ արասցէ անցուցանել ՚ի մէնջ։ Վասն երկուց զբանս ասաց․ զի կարի կարևոր է խնդիրս՝ խաղաղութեամբ, ըստ մնաց դիւրի զուարթութեամբ զերկարութի աւուրն անցուցանել։ Վասն որոյ ոչ միայն խնդրել ասէ, այլ և սրտի մտօք աղաչել յաղագս այսորիկ։ Եւ լինի այս որպէս։

Եւ պարապեալ պահեսցէ զժողովուրդս իւր մեծ այն զօրութեամբն որ ՚ի վերայ ամենայնի բարերարութբ իշխանութի ունի։ Աստուածային ասէ զօրութի որ ՚ի վերայ ամենայնի բարերարութեամբ իշխանութի ունի, եթէ պարապէ զմեզ, խաղաղութիւն յոգիս մեր մնանէ և մի խռովութիւն հալածի ՚ի մտաց մերոց․ և դիւրութի նմա շնորհի որ զուարթ առնէ ըստ գրեցելումն, եթէ՝ *Սրտի բերկրեցելոյ երեսք զուարթք։ Արդ եթէ և շատ է երկայնութիւն տունջեան և բազմորոգայթ, համայն զպատրաստ օգնութի խնդրել և գտանել ՚ի տեառնէ՝ խնդամիտ զօրն կատարեսցուք։ Վասն որոյ քարոզն թողեալ որ ընդ ժողովուրդսն՝ զխօսսն յամ՞ զբանն աւարտէ։

Ամենակալ տէր մեծ մեր կեցո՛ և ողորմեա՛ց մեզ։ Եւ ժողովուրդն առ հասարակ ասեն՝ կեցո տէր։ Զի և յամ՞ իսկ բարեաւ սովոր եմք ասել թէ՝ կեցայք բարեաւն զուարճացեալք։ Զայն աստ աղաչեմք զի ընկալեալ զբարիսն զոր խնդրեցաք՝ կեցցուք։

Մեծին խորհրդոյ՝ ասկս Աղօթիցն, որ ասի նախ քան զՍուրբ աստուածն։

Ըստ խրատու քարոզին՝ սկիզբն առնէ գոհանալ զերկուց լուսոյ՝ զզգալւոյս, և զիմանալւոյն։ Զգալի է արեգական լոյս որ երևի ամենեցուն հաւասարապէս․ իսկ իմանալի լոյս է որ յոգիս մաքրեցելոցն ծագէ և զիմանալիսն լուսաւորէ։ Զոր ՚ի լուանալ աւազանին զգալ ոգւոյն՝ ՚ի սրբեալն զներքին մարդն՝ ՚ի

քանզի զաներևոյթ աստուածեղէն, ծագեն փառքն այ անշիջանելի լուսովն 'ի սմա, և լուսաւորի անձառ լուսովն։ Զորմէ ասէ առաքեալ, *Աստուած որ ասաց 'ի խաւարի լոյս ծագել։

Զի 'ի սկզբանն որ մինչ խաւարն էր 'ի վերայ անդնդոց և ասաց ած եղիցի լոյս, և եղև լոյս. զայն դարձեալ մեզ խաւարելոց ասէ յիւրմէ լուսոյն արար։ Զբանն յառաջ բերէ առաքեալ այսպէս, *Աստուած որ ասաց 'ի խաւարի լոյս ծագել, որ և ծագեաց 'ի սիրտս մեր զլուսաւորութիւն փառացն այ 'ի դէմս քի։ Նայեաց ինչ է զոր ասէ եթէ, ծագեաց 'ի սիրտս մեր լոյս, որովք անսահմանք զփառս նր զոր ունի առ էրն մեր քս 'ի վերայ դիմաց իւրոց. քանզի աստուածի սուրբ երրորդութի մարդկելոցն մօտ։ Որպէս և յառաջ կոյս առաքելական բանս և յայտնապէս ասէ, *Այլ մեր ամենեցուն բացաւ երեսօք զփառս տեառն իբրև ընդ հայելի օրինակաւ տեսեալ, 'ի նոյն պատկեր նորոգիմք փառաց 'ի փառս որպէս 'ի տեառնէ հոգւոյ։

Քանզի որպէս մարդկայինն հոգի՝ մարմնոյ աչաց զանսահմանելի տայ ուրքան իցէ 'ի մարմնի, այսպիսի օրինակաւ և ածայինն հոգին՝ ցուցանէ յոգիս մեր բնակէ, զաստուածոյին մեզ երևեցուցանէ։ Նա տայ տեսանել մեզ զած և զհրեշտակս և զսրբոցն ժողովն, և զայն բարիսն զոր խոստացաւ ած սիրելեաց իւրոց։ Իսկ որք վասն մեղաց ամայացեալ 'ի սուրբ հոգւոյն, ընչաւոր մարդիք կոչին՝ զմարդկայինս միայն ունելով զհոգի. և զայս որպէս զանասնոյ։

Վասն որոյ շունչ և ոչ հոգի կոչի. վասն զի հաւասարեալ է անասնոց անբանից և նմանեաց նոցին, զմարմնաւորս և եթ խնդրելով, զկերակուրս և զըմպելիս և զխառնութիւնս և որ այլ ևս մարմնաւոր հեշտութիւնք, զրկեալք 'ի հոգևորացն։ *Քանզի շնչաւոր մարդ՝ ոչ ունի զհոգւոյն այ, զի յիմարութիւն է նմա ասաց առաքեալ։ Յիմարեալ ասաց և անդէտ հոգևորացն. այլ մեզ ասէ յայտնեաց ած հոգւովն սրբով։

Զի որպէս հոգի մարդոյ զմարդոյն գիտէ, նոյնպէս և այ հոգին զաստուածոյն գիտէ, և գիտել տայ յորում բնակէ. սոյնպիսեացն ասէ առաքեալ, *Այլ մատուցեալ էք 'ի սիոն լեառն և 'ի քաղաք այ կենդանւոյ յերուսաղէմ յերկինս և 'ի բիւրաւոր բանակս հրեշտակաց. և յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս և առ դատաւորն ամենեցուն ած. և յոգիս արդարոց կատարելոց. և 'ի նորոց կտակարանաց միջնորդն յս և 'ի հեղումն արեան նորա։

Նյս ածմ մօտաւոր տեսանի սրբոցն սրտից. որոց երանի տայ տէրն վասն տեսլեանն։ Նաև արդարև երանելիք. զի ստէն յարքայութեանն են անդր մատուցեալքն որպէս ասաց առաքելական բանս. բան այսմ և մարգարէն ընդ այ խօսեալ ասէր, *Երանի որոց օգ-

նութիւնն իւր 'ի քէն է. ելս եդ 'ի մահ 'ի հոգւոյս արդարութեան։ Եւ զի յայտնագոյն բանս լիցի՝ հողիս արդարութեան երկիրս է. վասն որոյ ասացաւ Ադամայ, * Տրտմութեամբ կերիցես զհաց քո զա̄մ աւուրս կենաց քոց։

Արդ՝ երանէ մարգարէն զայնս որք մնացն աստի ելք առնեն յերկինս. յոր առողիս զուխան աղօթից կարգէ։ Այնպիսին զօրհնութիւն ասացի, զի օրէնսդիր եղեւ իւր անձինն եւ այլոց. գնասցեն 'ի զօրութէ 'ի զօրութիւն, յառաքինութէ յառաքինութի, որ զօրացուցանէ զնա որո̄ յաստիճանէ յաստիճան զգնացսն փոփոխելով, մինչեւ ելցէ 'ի վերինն սիոն. զորմէ ասաց պօղոս մայր լինել մեզ։ Եւ ասա զինչ. երեւեսցի ա̄ծ հրեշտակօք իւրովք 'ի սիոն։

Տեսանեմ զհամեմատութի մարգարէական եւ առաքելական եւ աւետարանական բանիցս։ Այսպիսի լոյս է նոցա. որք զաւազանին շնորհն մաքուր եւ նորոգս պահեն յինքեանս։ Իսկ որ 'ի ներքս մեղաց զանձինս ընկենուն արտաքսել յայնմ լուսոյ, խաւարաւ ծածկին, եւ ասաէն յարտաքին խաւարին են։ Սորա կուրացեալ է առաջնորդականն, եւ 'ի խաւարի շրջին. որո̄ ասէ աւետարանիչն յովհաննէս թէ, * 'Ի խաւարի է եւ ընդ խաւար շրջի եւ ոչ գիտէ յո՞ երթայ. զի խաւարն կուրացոյց զնա։ Սոյն եւ տէր իմքենին ասէ օրինակաւ մարմնոյն։ * Ճրագ մարմնոյ ակն է. յորժամ ակն առատ է, ա̄մ մարմինն լուսաւոր եղիցի. եւ երբ ակն չար է, ա̄մ մարմինն խաւար եղիցի։ Իսկ եթէ լոյսդ որ 'ի քեզ է՝ խաւար է, խաւարն որչափ եւս։ Սմացն խաւարմանէ ասէ զայս։

Այլ վայ մեզ. զի այնչափ օտարացաք 'ի լուսոյն որ լուսաւորեաց զմեզ, մինչ զի եւ գիտեմք իսկ ոչ՝ եթէ 'ի լոյս ծնեալ եմք յաւազանէն. եւ ոչ զգալ անգամ խաւարիս ունիմք։ Այլ որո̄ 'ի ծնէ կոյրքն այսմ լուսոյ անտեղեակք են, այսպէս եւ մեք ճշմարիտ լուսոյն անհմուտք. եւ նստիմք 'ի խաւարի եւ 'ի ստուերս մահու. որո̄ եւ որք անընդունակքն աւետարանին լուսոյ։

Արդ՝ գէթ անուգան եղբարք՝ դիմեսցուք առ լոյսն մեր քս̄ եւ աղաչեսցուք զնա. զի բացցէ զաչս սրտից մերոց եւ լուսաւորեսցէ զոգիս մեր. ասասցուք, * Լոյս տուր տէր աչաց մերոց զի մի՛ երբեք ննջեսցուք 'ի մահ։ Զի որք ասաէն ոչ լուսաւորին, անդ զզղջանալ ունին. ասելով զայն որ յառակին իմր յերեսաց ամբարշտելոցն գրեալ է թէ, յորժամ զարդարոցն տեսանեն զփառս եւ անհնարին երկիւղիւ խռովին եւ ասեն բանս երկայնս, յորոց եւ է այս. Մոլորեցաք 'ի ճշմարտութեան ճանապարհէն. եւ լոյսն արդարութե̄ ոչ լուսաւորեաց զմեզ. եւ արեգակն արդարութե̄ ոչ ծագեաց 'ի սիրտս մեր։

Այլ մեզ մի՛ լիցի անդ սգալ զառագանս լուսոյ. այլ լսել

տէրունեան ձայնին որ ասէ, *Ես լոյս յաշխարհ եկի. և որ գայ զկնի իմ, ՚ի խաւար մի՛ գնասցէ. այլ ընկալցի զլոյսն կենաց։ Որ արժանացուք և մեք ընդունիլ և լինել որդիս լուսոյ և որդիս տուըն-ջեան. զի այնպիսեացն երանէ մարգարէն ասելով, *Երանի ժողովր-դեան որ գիտեն զօրհնութիւս քն տէր. ՚ի լոյս երեսաց քոց գնաս-ցեն զօրհանապազ։ Նախնիքն՝ թէ լուսով երեսաց քոց տեսցեն գնալ ուղիղ. և յանուն քո ցնծասցեն զօրհանապազ։

Տեսանեմ՝ զի արքայութիւն բերկրանք են տանէն. արդարոցն զամ օր յոյս երեսացն լուսոյն լուսաւորեալք և ՚ի գնացս իւրեանց անմոլարք և անխափք ՚ի չարէն, բերկրին միշտ անուամբքն այ. ընդ այն՝ զի նորա կոչին հանապազ՝ ուրախալիցք են։ Իսկ զի՞նչ լինիցի ըստ մարգարէ. *Յարդարութեան քում ասէ բարձր եղիցին։ Բարձրա-նան ասէ և ոչ արդարութեամբ քով. այլ առաւել յարդար դա-տաստանին քում բարձրանան, յորժամ ըստ արդարութեան իրաւանց քոց զվաստակս նոցա բարի առաջի ամ հրեշտակաց և մարդկան յարդարանօք ցուցանես. և անեղծ պսակօք զնոսա պսակես։ Բայց մեզ զի չափաւորապէս վասն իմանալի լուսոյն ասացաւ, սկիզբն արար-ցուք ՚ի բանս աղօթից։

Աղօթք՝ նախքան զՍուրբ աստուածն։

Գոհանամք զքէն տէր ած մեր։ Տէրդ գթով է գոհութեան նախաշաւիղ. զի զհասարակաց տէրն՝ սեպհական մեր և առաւել մերձաւոր ցուցանէ։

Տէր ած մեր, որ երևելի լուսով քո զուարճացուցեր զամ արարածս քո։ Քանզի ծագումն լուսոյն զուարճացուցանէ զամ կենդանեաց ազգ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և աճելականք ևս բոյսք և տունկք և սերմանք լուսովս այսու զիւրեանց պիտանութիւն ցու-ցանեն և զուարճալի ՚ի տեսողսն լինին համդերձ երկրաւ և ծովուք։

Իսկ իմանալի լուսով պատուիրանաց քոց՝ լուսաւորեցեր մեզ զամենեսեան զհաւատացեալս ՚ի քեզ։ Այս են պատուիրանքն այ և լոյս ասեն աչաց պատուիրանապահացն, ըստ այնմ զոր ասացն։ Քանզի սէրն այ պատուիրանապահութեամբքն ճանաչի. և պատուի-րանապահն փոխադարձի յայ սիրել և զնա տեսանել. ըստ ասելոյն տեառն, *Եթէ ոք սիրէ զիս, զբանն իմ պահեսցէ։ Եւ դարձեալ

թէ՝ *Որ ունէ զպատուիրանս իմ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս ։ և որ սիրէն զիս, սիրեսցի 'ի հօրէ իմմէ ։

Տեսե՞ր զլոյսն ճշմարիտ որ լուսաւոր առնէ զմիտ մարդոյ որ գալոց է յաշխարհս, որպէս ցուցանէ զինքն պատուիրանապահաց իւրոց ։ Բայց թէ ասիցէ ոք թէ՝ աղօթիցն բան ոչ վասն պատուիրանապահացն է, թէ ասաց թէ լուսաւորեսցէ. այլ վասն բովանդակ հաւատացելոց ։

Ասացաք և մեք թէ՝ 'ի հաւատալն և 'ի մկրտելն մաքրեալ լուսաւորին ամենայն հաւատացեալք. ապա յետոյ որք աղտեղեն մեղօք, գործեալ խաւարանան ։ Վասն որոյ և տէրն ասէ, *Մինչդեռ ընդ լոյսն ունիք՝ գնասջիք ընդ լոյսն. զի մի՛ խաւար ձեզ հասցէ ։ Զի պատուիրանապահացն է լուսոյ ուղղումն ասէն յաղօթիցս լոյս. զի յետ գոհանալոյն՝ զիմանալի և զերևելի լոյս ասէ ։

Զօրացո զմեզ տէր 'ի պահպանութիւն պատուիրանաց քոց յաստուածաշունչ գրոց, 'ի տունջեանս յայսմիկ և յամենայն ժամանակի. որպէս զի լուսաւորեալ մտօք միշտ զհաճոյս քո արասցուք ։

Այդպէս ուսուցանէ թէ՝ 'ի պահպանութենէ պատուիրանացն Աստուծոյ լուսաւորին միտքն. վասն որոյ խնդրէ զօրանալ 'ի պատուիրանապահութիւնն և զլոյսն առնուլ ։ Եւ զի յոյժ է զօրանալն՝ լուր մովսէսի որ ասէ, *Մի՛ ասիցես եթէ զօրութիւն իմ և ուժգնութիւն սրտի իմոյ արար ինձ զզօրութիւնս զայս մեծ. այլ յիշեսցես զտէր Աստուած քո. զի նա ետ քեզ ոյժ՝ առնել զօրութիւն ։ Եւ յոբ ասէ վասն Աստուծոյ, *Նորա է զօրութիւն և ուժգնութիւն. նորա է հանճար և իմաստութիւն ։ Եւ տէր ինքնին՝ *Առանց իմ ոչինչ կարէք առնել ։

Եւ մեք զայս իմացեալ՝ խոնարհ մտօք խնդրեսցուք զօրութիւն 'ի բարձանց ։ Սուրբ և առաքելոցն առաւ հնչիւն յերկնից եկեալ. յորմէ և զօրութիւն էր ։ Եւ զոր ինչ և ուղղեցեմք, Աստուծոյ շնորհացն համարեսցուք 'ի մեզ. որպէս և առաքեալն՝ *Զվաստակն որ աւելի քան զամենեսեան վաստակեցայ ասէ՝ ոչ եթէ ես՝ այլ շնորհքն Աստուծոյ որ ընդ իս ։

Զօրացո զմեզ տէր 'ի պահպանութիւն պատուիրանաց քոց ։ Մանէր յաւել և զայն թէ՝ յաստուածաշունչ գրոց. զի իմասցուք և զայն թէ հոգի աստուածային կայ 'ի գիրս. քանզի և ոգւոյ յոլով անգամ գիրք շունչ կոչեն ։ Բայց կենդանիք են գիրք պատուիրանացն Աստուծոյ հոգւով աստուածայնով որ 'ի նոսա, զոյն և 'ի նախավկայէն ստեփանոսէ ասէր զմովսէսէ թէ, *Ընկալեալ զպատգամս կենդանիս տալ մեզ ։ Զի թէ չէին կենդանի, մեզ զիարդ զկենդանութիւն տալ կարէին ։ Բայց զի սոյն կենդանութիւն՝ նախ մովսէս ասէ զօրինացն. *Որ արասցէ զայն՝ կեցցէ՛ նովաւ ։ Նոյն և տէր ասէ, *Որ ըղ-

բանս իմ պահեսցէ, զմահ մի՛ տեսցէ յաւիտեան։ Եւ դարձեալ ասէ, *Որ առաքեացն զիս, նա՛ ես ինձ պատուէր զինչ ասացից և կամ զինչ խօսեցայց, և գիտեմ զի պատուէրն այն կեանք են յաւիտենականք։ Եւ զի կենդանի և կենդանարար է՝ ամենաշնորհ կոչի. և յայն զօրանալ՝ ոչ վասն ուրուք միայն խնդրէ, այլ ասէ, 'ի տունջենիս յայսմիկ և յամ ժամանակի։ Զի յաւուրս յայս և յամ ժամանակս կենաց մերոց պահեսցուք զամենաշնորհ գրոց պատուիրանս։

Որպէս զի լուսաւորեալ մնասցուք միշտ զհաճոյս քո արասցուք։ Մասնիկ կերերոք օգնեն մեզանց. համապազորդել 'ի պահպանութի պատուիրանացն՝ անխափան զլուսաւորութի մտացն պահէ. և լուսաւորեալ միտքն միշտ զհաճոյսն ՟ոյ առնել աղդեն մեզ. որով և երկնից ժամանեմք զոր հանդերձեալ բարի կոչեմք։ Եւ հանդերձեալ կոչեմք, վասն զի անընկալութե սպասեմք առնուլ զառաջիկայն՝ հանդերձեալ կոչեմք։ Եւ է այսպէս զոր կից աղօթիցն ունի բանս։

Եւ հանդերձելոց բարեացն արժանաւոր լիցուք ընդ ամ սրբս քո։ Բանիծն ասացից ուրախութիւն լինել այնմիկ, որ առաջի ՟ոյ ընդ հրեշտակացն և ընդ արդարոցն բազմութեան յանպատում բարեացն վայելել և նոցուն հաղորդակցել 'ի գոհութի զբարեաց առաւելեն զաստուածոյ. զի այս է զոր ասէ,

Եւ ընդ նոսին փառաւորեսցուք զամենասուրբ զերրորդութիւնն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ յետ աւելոյն զխաղաղութիւնն՝ ասէ։

Խաղաղութի մեր և կեանք որ 'ի հօրէ առաքեցար միածին որդի ՟ոյ տէրդ մեր և փրկիչդ յս քս։

Զքեզ ասէ մեզ խաղաղութիւն և կեանք 'ի հօրէ առաքեալ գիտեմք, զոր յերկնից քո յերկրի ծննդեամբ՝ օրհնաբանեին հրեշտակք ասելով, փառք 'ի բարձունս ՟ոյ և յերկիր խաղաղութիւն։ Եւ զքէն քո առաքեալ ասէ, *Նա՛ է խաղաղութիւն մեր որ արար զերկոսեան մի, զհրեշտակս և զմարդիկ, զհրեայս և զհեթանոսս։ Տէրդ՝ զի խաղաղութի մեզ առաքեցար և ասացեր, *Զխաղաղութի զիմ թողում ձեզ. զխաղաղութիւն զիմ տամ ձեզ։

Տուր մեզ զքո խաղաղութիւնդ, զոր շնորհեցեր սրբոց քոց առաքելոցն փչմամբ քո 'ի նոսա զկենդանացուցիչ և զամենազօր հոգիդ քո սուրբ։

Զի կեանք ես և խաղաղութի. և 'ի քո սուրբ առաքելոցն յերեսս փչեալ և ասացեալ առէ՛ք զՀոգին սուրբ, տուր նց̃ Հոգւովդ կենդանարարաւ կենդանութի ա̃ծային, և խաղաղութի, որով անդորր արարեր սրտից նոցա. զնոյն տուր և մեզ տուր.

Որպէս զի և մեք խաղաղացեալ լիցուք յա̃մ աշխարհական սահեցմանց՝ լիցուք տաճար և բնակութիւն սրբոյ երրորդութեանդ. Զի որ 'ի մեղաց կամ յաշխարհական հոգոց ալէկոծին ոգիքն՝ ոչ կարեն ընդունարան սրբոյ երրորդութեանն լինիլ. Վասն այնորիկ աղաչեմք տալ զքո խաղաղութիդ. որ զա̃մ մրրիկ մեղացն փարատեսցես 'ի սրտից մերոց, և զալիս աշխարհական զբաղմանց. Եւ մեք մաքրեալ 'ի հոգւոյդ սրբոյ՝ լիցուք տաճար և բնակութի սրբոյ երրորդութեանդ. Եւ այսմ մեծի պարգևի արժանի եղեալ՝ իջևանս սրբոյ երրորդութեանդ լինելով՝ զի՞նչ արիտուր հատուսցուք. այլ գոհութիւն և փառաբանութիւն. վասն որոյ և ասէ,

Եւ գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զորդի և զսուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Զկնի Սուրբ աստուածին՝ ասի Մաղթանքն և Քարոզն, և ապա Մանկունքն, և զկնի մանկանցն՝ Աղօթս.

Սուրբ ես տէր ա̃ծ մեր հզօր և փառաւորեալ. որ նախ 'ի կառս քերովբէականս և լոյս ծագես յարարածս քո.

Չի՛ք ինչ ախորժական ա̃յ և զուարճալի մեզ՝ քան զընտանութի ունել առ նմա և մեր ա̃ծ կոչել. Քանզի որոյ իւր են երկինք և երկիր., հաճեցաւ յա̃մ ազգաց երկրի առնուլ իւր ժողովուրդ սեպհական զհաւատացեալս 'ի քս̃ և եղև մեզ ա̃ծ, որ ամենեցուն է ա̃ծ. որպ̃ յառաջագոյն ասաց մարգարէին, * Ես եղէց նոցա ա̃ծ, և նոքա եղիցին իմ ժողովուրդ.

Արդ ասեմք՝ Սուրբ ես տէր ա̃ծ մեր, հզօր և փառաւորեալ. Ի բնութէ ունելով զսրբութի և զփառաւորութի, և հզօր ես յամենայնի. 'ի մեծութէ, 'ի զօրութէ, յարարչութէ, յանմահութէ, յանապականութէ, յիմաստութէ, 'ի գիտութենէ. և որ սոցին նման զօրութիւնք.

Որ նախ 'ի կառս քերովբէականս ըստ մարգարէին տեսութեան. այլ ա̃ծ անկարօտ է կառաց և անբովանդակելի. Եւ լոյս

ծագես յարարածս քո։ Երկնաւորացն 'ի քէն ծագես լոյս եւ 'ի փառաց քոց. իսկ երկրաւորացս՝ լուսաւորօք հրամայես տալ լոյս։

Լուսաւորեա՛ զմեզ տէր 'ի ժամ առաւօտուս։ Ո՛չ զլուսոյ զգալւոյ, որ տուեալ է ասէ, այլ որ զհոգւոյն լուսաւորէ։

Որպէս զի 'ի ծագել լուսոյ առաւօտուն՝ ծագեսցի 'ի մեզ ողորմութիւն գթութեանց քոց։ Քո ասէ մարմին եւ հոգիս մեր՝ ստեղծուած է։ Արդ՝ որ մարմնոյս զառաւօտուն ծագեցեր զլոյս, ծագեսցես 'ի մարդասիրութենէդ եւ 'ի գթութենէդ քումմէ զանանց լոյս ոգւոցս։ Այս է ողորմութիւն եւ գթութիւն քո, լուսաւորել զմեզ քո երեւմամբդ. որպէս զի դու ինքնին ասացեր զքեզ սիրողին, սիրել 'ի հօրէն եւ 'ի քէն, եւ քո երեւմանդ արժանաւորիլ։

Հեռացո՛ 'ի մէնջ տէր զխաբէութիւն սատանայի. եւ զբռնութիւն նորա խորտակեա՛ աղօթիւք եւ բարեխօսութեամբ ամենայն սրբոց։ Քանզի զերկիր եւ որ ըստ մարմնոյ կեանք՝ իբրեւ քաղցր բանսարկուն ցուցանէ, եւ 'ի բաց տանի զմեզ 'ի քո լուսոյդ, զատանի խաւարս իբրեւ զլուսով փարել պատրէ։ Զի որպէս խաղալեօք զմանուկ, այսուիկ զմեզ խաբեալ զրկեսցէ 'ի քո բարեացդ. եւ իւր խաւարին հաղորդս արասցէ։ Այլ դու զքո գթութիւնդ եւ զմարդասիրութիւնդ զմեօք ծագեալ՝ հալածեա՛ եւ հեռի՛ արա զնորա խաբսն 'ի մէնջ։ Զի թէ եւ մեք անարժան եմք, վասն աղօթից արդարոցն, որ կան յերկրի՝ եւ վասն բարեխօսութեան սրբոցն որք յադամայ, գթասցիս 'ի մեզ։

Արա՛ եւ զերկիրս պաղաբեր 'ի սնունդս ծառայից քոց։ Քանզի ո՛չ ծառայք 'ի տերանց իւրեանց ողջէաս իւրեանց հայցեն, այսպէս եւ մեք հայցեմք քո ծառայքս 'ի քէն։ Եւ զոր օրինակ նոքա հրամայեն շտեմարանապահաց իւրեանց զծառայակցացն իւրեանց տալ զկերակուրս. ըստ նմին նմանութեան եւ դու քո ծառայիս երկրի՝ մեզ սորուն ծառայակցացս հրաման տացես պատրաստել ողորմանաց մերոց պէտս, զի սնուսցէ զծառայքս եւ զփառաբանիչս։ Որ աստ եւ 'ի հանդերձեալսն փառաբանիչ քո եմք եւ լիցուք։ Այս է զոր ասես,

Յորոց հանապազ գովեալ փառաւորի 'ի բարձունս ամենասուրբ երրորդութիւնդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Զկնի աւուր Սրբոց զի լուիցէ, կամ Բանից ինչ, և մաղթանքն՝ Փրկչատառ ասացեալ, ասի Փառքն։

Սուրբ ճգնաւորքն աղաչեսցուք զտէր. որք զչարին պարտեցին. նեղութեանցն համբերեցին. լուսանալեն և երկնաւոր պսակացն արժանի եղեն. աղօթիւք նոցա և բարեխօսութեամբն մեզ ողորմեսցի. ամենակալ տէր ած մեր կեցո և ողորմեա։

Սուրբքն կոչին որք ըստ հաճոյիցն այ քաղաքավարեցան, և կամ վկայական մահուամբ և արեամբ զմահ ընկալան. և ճգնաւորք ասին, զի ընդ դէմ սատանայի պատերազմեալ ճգնեցան, և յաղթեցին համբերելով զանազան վշտաց և նեղութեանց վասն անուանն աստուծոյ։

Աղօթիւք նոցա սաէ և բարեխօսութեամբն մեզ ողորմեսցի. ամենակալ տէր ած մեր կեցո և ողորմեա։ Եւ թէպէտև վասն մերոց գործոց ոչ ունիմք համարձակութիւն ինչ աղաչել զամենազօր տէրութիւնդ քո, այլ նոցին աղօթիցն միջնորդութեամբ և բարեխօսելովն կեցո զմեզ և ողորմեա մեզ։

Աղօթք Թագաւորաց։

Պահպանիչ սրբոց, որ պահես զսուրբս քո. և տեսանես զկամս երկիւղածաց քոց. և հայիս սիրով և քաղցրութեամբ յարարածս քո։

Պահակ խնամոց տեսողիս որ եդեալ լինի ՚ի գլուխս թագաւորաց յորժամ օծանեն. և տէր ՚ի վերայ երկրի և դատաւոր կացուցանեն, որ բարձրագոյն է. քան զամ պատիւս որ է յաշխարհի։ Զի թագաւոր զնմանութիւն այ բերէ յինքեան ՚ի վերայ երկրի, իշխանութիւն ունելով կործանանել և կեցուցանել. զայս սակ աղօթիցս բան։

Պահպանիչ սրբոց որ պահես զսուրբս քո։ Այսինքն թագաւոր տեսանես զամենեսեան որք հաճոյ եղեն քեզ, և որք թագաւորեցին ՚ի վերայ աթոռոյ ՚ի կեանս յայսմիկ. և իշխանաբար սպանին յոգիս իւրեանց զիգական և զհեշտասէր բարս և զընդունակս մեղաց. և զարուեստական բարեգործութիւնս քաջապէս ապրեցուցին։ Արդարև զայսպիսին ընդ քեզ թագաւորեալ պահես ՚ի հանդերձեալ և յանվախճան կեանսդ յաւիտենական փառօք։

Եւ տեսանես զկամս երկիւղածաց քոց. և հայիս սիրով և քաղցրութեամբ յարարածս քո։ Որք երկիւղիւ քեզ ծառայեն և ըզ

զխնդրուածս ըստ հաճոյից քոց առնեն, դու ունիս աղօթից նոցա։ լսես և վասն նոցին սիրես զարարածս քո և քաղցրութեամբ խնամես։

Տուր մեզ յերկնից 'ի սրբութենէ քումմէ, բարեխօսութեամբ սուրբ ծնածնին և առաքելոցն ամ սրբոց քոց։ Տուր մեզ աւեր և ողորմեա. ներեա քաւեա և թող զմեղս մեր։

Զի թէպէտ երկրաւոր գոլով մեք և յերկրի աղօթեմք, այլ դու երկնաւոր աէրդ յերկինս կարող ես լսել զաղաչանս մեր, և 'ի բարձանց այտի 'ի սրբութենէ քումմէ զխնդրուածս մեր կատարել. Իսկ մանաւանդ յորժամ զանձն պատուական և զմիջնորդն ամ աշխարհի զորդին հայրն և զամ սուրբս քո բարեխօս առ քեզ ունիմք, հաւատամք թէ լսես հայցուածոց նոցա և ներես սխալանաց մերոց և քաւես զյանցանս։

Որում արժանի անդադար փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Մեծագոյն պատիւ է ծառային, յորժամ բարեփառ տեառն գովող և փառաբանիչ լինիցի. և մանաւանդ թէ և վարձ եւս զայն ինքեան ընդ մեծագոյն աշխատանացն համարի։ Ապա որչափ եւս առաւել բարձրագոյն պատիւ որք համարեսցի գերագանց քան զամ փառս, յորժամ ամենեցուն տեառն և բոլորից արարչին լիցի օրհնաբանիչ։ Վասն որոյ բան աղօթիցս խնդրէ արժանի լինել միշտ 'ի փառաբանութիւնն այ պարապիլ. ուր ասէ, Անդադար փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աղօթք Առաքելոց, Մարգարէից, Հայրապետաց.

Որ ընտրեցեր և ընկալար զերանելի վկայսն քո քս այ մեր, և հաղորդս արարեր զնոսա կամաւոր չարչարանաց քոց։

Որպէս ասէ առաքեալն թէ՝ *Ընտրեաց զմեզ այ յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ սուրբս և անարատս առաջի նր սիրով։ Զոր օրինակ թագաւոր որ գիտելով ծառայից իւրոց զիւրաքանչիւր զքաջութի և զուժոյ կարողութիւն, նա և զպատշաճ պիտոյից գործառնութիւն ըստ ժամանակի և ըստ երի՝ և առեալ կարգեսցէ զնոսա ըստ արժանեացն. զոմն 'ի զինուորութի ընտրելով, զմիւսն 'ի դատաւորութի. զայլ ոմն գաւառապետ կարգելով, և զմիւսն գլուխ զօրաց կացուցանելով. զմին 'ի դուռն արքունի կարգեալ, զմիւսն 'ի

18

վերայ խորհեցն ։ և զայլ ումն մատուռակ և սպասաւոր իւրոյ թագաւորութեանն ընտրեալ։

Նախկին իմն և ամենաթագաւորն մեծ՝ ըստ իւրում նախատես գիտութեան ընտրեաց զամենեսեան ըստ իւրաքանչիւր պիտոյից յիւրաքանչիւր գործս և ժամանակս ըստ արժանաւորութե։ Որպէս յայտ առնէ երանելին պօղոս առաքեալ թէ, *Զնա եդ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս առ ՚ի հաստատութիւն սրբոց, ՚ի գործ պաշտաման, ՚ի շինուած մարմնոյն քի։ Նոյն դարձեալ թէ, *Զորս եդ այ յեկեղեցւոջն այս է, նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս, ապա զզօրութիւնս, ապա շնորհս բժշկութեան, օգնականութիւնս, վարիչս, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց։

Զի այլ պէտք էին նոյեան դարուն, և այլ պէտք և ընտրութիւն աբրահամեան ժամանակին։ Նա և այլ կոչումն էր մեծին մովսէսի, և այլ խորհրդածութիւն մարգարէիցն, այլ ընտրութիւն առաքելոցն, և այլ հրաւիրումն հայրապետացն։ Նմա եղանակ էր ընտրութե մարտիրոսացն, և այլ սրբոց կուսանացն և ճգնաւորացն դասուց։ Նոյն յառաջախնամ գիտութիւնն այ զամենեսեան յառաջագոյն սահմանեալ և կնքեալ պահէր ՚ի գանձի իւրում։ Նա և զմեր լուսաւորիչ ընտրեալ մովսիսաբար և պահեալ պատշաճեցուցանէր իւրում ժամանակին հանդերձ իւրովքն ամենայնիւ առ ընկալեալ ըստ յետին մշակացն հաւասարելով։ Ոչ միայն յօժարական կամօք, այլ և երկոքեանք վաստակոց ՚ի վարձ առաջին ընտրելոցն։ Նոյն թէ ումեք յանդգնութեամբ բանս ոչ թուեսցի, և ոդդեգրական անուամբ եւս առաւել գերազանցեալ քան զառաջինս։ Նա և ընտրութիւն ըստ իմում բանիս զոր աղօթիցս բան ցուցանէ։

Որ ընտրեցեր առէ և ընկալար զերանելի վկայսն քո քս մեր, և հաղորդս արարեր զնոսա կամաւոր չարչարանաց քոց։ Զի այս անուն հասարակ է, զի առաքեալքն վկայութե քարոզելին, մարգարէքն վկայութե գուշակելին, և նահատակք և կուսանք և ճգնաւորք իբր վկայ քի ճգնելին հաւատալով, թէ հատուցանօղ է իւրաքանչիւր գործոց այ։ Նոյն յորժամ առէ թէ՝ որ ընտրեցեր զերանելի վկայսն, զամենեսեան ընդ բանիւս փակէ։ Նորդարև՝ որ չարչարանացն կցորդին առեալ, և փառացն հաղորդ լինելոց են ըստ առաքելոյ։ Նոյն ըստ անկրուանական հրամանին՝ որք ըմպեն զբաժակ չարչարանաց փրկչին յօժարական սիրով որոց ոտքին զերբեթկայ ։
ընդ նմին յաջորդութեան պատուեսցին։

Որք՝ բարեխօս առ քեզ ունիմք որք աստ և ընդ ա̃մ տեղերս սուրբք իցեն. զի աղօթիւք նոցա և բարեխօսութեամբ փառաւորեցուցես զկենցաղավարութիւնս մեր, փրկելով յերևելի և յաներևոյթ թշնամեաց։

Բարեխօս ևս ունիմք առ քեզ զոր յա̃մ տեղիս և որ առ մեզ սուրբք իցեն. զի միշտ յիշատակ արեանց ՚ի գութ ածէ զքեզ ՚ի վերայ մեղուցելոց. որպէս այն զի ասէր, *Վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ վասն իմ և վասն Դաւթի ծառայի իմոյ. և պահապան եղէց դոցա յաւիտենայնի։ Զայս ցուցանէ աղօթիցս բան թէ՝ յա̃մ տեղիս ուր սուրբք իցեն, և մեք զյիշատակս նոցա կատարեմք յուսով և սիրով. դու տէր յիշեսցես զնոցին չարչարանս և զնեղութիւնն զոր վասն քո յանձն առին, և վասն նոցին բարեխօսութեան՝ մեզ ողորմեսցիս, փրկելով զմեզ յանմարմին դիւաց որ միշտ որսան ՚ի կորուստ. և ՚ի մարմնականաց գազանաց որ հակառակին ընդ կեանս աշխարհիս։

Շնորհեա մեզ տէր ըստ օրինակի նոցա կեալ. և զվախճանն մեր կնքեա ուղղափառ խոստովանութեամբ ՚ի յոյս կենացն յաւիտենից։

Թէպէտ զնոցին քաղաքավարութիւն ոչ կարեմք ասէ բերել յանձին, այլ գոնէ ըստ նոցին օրինակի շնորհեա սիրել զքեզ, և յուսով և հաւատով ըստ կարի մերում քեզ ծառայել. Նաև ՚ի վախճանին ևս արժանի լինել ուղիղ խոստովանութեամբ զկենին թոշակն ըստ պատշաճի ընդունել առ հաւատչեայ յաւիտենական կենացն։

Զի և մեք արժանի լիցուք մտանել յերկնային խորանսն լուսոյ և ժառանգել զպատրաստեալ ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարքայութիւնդ։

Խորան լուսոյ զվերին մայրաքաղաքեն է իմանալ ըստ պօղոսի. զոր և յովհաննես յիշէ ՚ի յայտնութեանն։ *Զորոյ զյօրինուածն ասէ ՚ի սուրբ և ՚ի սպիտակ ապակւոյ. և դրունք երկոտասանք յերկոտասան մարգարտաց։ Եւ ճրագ ասէ ՚ի նմա զգառն ա̃յ զտէր մեր յ̃ս ք̃ս փոխանակ արեգական որոյ գիշեր ոչ լինէր երբէք, այլ միշտ առ լցեալ լինի լուսով ծաւալին ճառագայթիցն։ Այս է զոր ասէ խորան լուսոյ որպէս ինձ թուի։

Վասն որոյ աղաչէ բան աղօթիցս մտանել և ժառանգել զպատրաստեալն զայն լուսեղէն յարկ ընդ սրբոցն դասուց։ Զի թէ աստ ըստ կարի մերում հետևիմք հետոց նոցա, ապա հաւատամք թէ և անդ ընդ նոսին յարքայութեանն առնումք զխոստացեալ բարիսն, երգակցելով միշտ ընդ նոսին յօրհնաբանութիւն, որպէս հետևեալս ցուցանէ բանս։

Այս ընդ նոյին փառաւորել զամենասուրբ զերրորդութիւն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Իսկ յաւուրս պահոց զկնի ասելոյ՝ Խաչ քո եղիցի մեզ ապաւէն, առ ի Քրիստոս։

Աղաչեսցուք զամենակալն Տր՝ զի պահպանեսցէ զժողո-վուրդս իւր ընդ հովանեաւ սուրբ և պատուական ամե-նազօր խաչի իւրոյ ՚ի խաղաղութեան։

Ախորժելի է յաւէտ միշտ՝ ծառայի խօսակից լինել տեառն. մանաւանդ յորժամ վասն խնդրուածոց իւրոց պաղատիցի և հայցեսցէ ծնգաւորական և ամէն ունիցի առնուլ ես զոր խնդրէն, առնուլ են յօժարական սրտիւ թախանձիցէ։ Արդ յայս մանաւանդ առ ամե-նակալն և արարիչ զայս պարտիմք առնել, որ Տր պարգեւեսցէ բաշ-խիչ և զամենեսեան միշտ խնամէ։ Զայսմ հրաման և քարոզիս բան, աղաչել միշտ ջերմեռանդ սրտիւ զամենակալ ամենառատ տէրն. զի կեցուսցէ զանձինս մեր որպէս և յաղօթս բանս ցուցանէ։

Ամենակալ Տր Տծ մեր կեցո և ողորմեա։ Զի մեք միշտ կարօ-տիս ըղձամբ ընդունել ՚ի քէն զողորմութիւն. և դու տէր միշտ և հա-նապազ առատել սրտիւ յօժար ես ՚ի տալն. վասն որոյ զնոյն հայ-ցեմք հանապազ։

Աղօթք Պահոց։

Օգնեա մեզ Տր փրկիչ մեր վասն փառաց անուան քոյ։ Օգնութիւն՝ ցուցանողաբար զի թէ բազմապատիկ և կա-րեկից լինելոյ. զի զով սիրէ որ՝ նմին և ողորմի և ՚ի նեղութեան օգ-նական լինի։ Այս դարձեալ զի ակարի և զօրէլոյ է պէտք օգնութեան յաղօթած և ՚ի բարերար աներանց և յայժ խնամակելոյ, յորժամ աս-սանէ յանկեալս զօրեալ և յաղթահարել։ Զայս մեզ ուսուսցէ բանս ՚ի սկիզբն աղօթիցս օգնութիւն խնդրել յոյժ յամ իրողութիւն։

Զի որչափ եմք ՚ի մարմնի՝ և ՚ի կեանս յայս աստանօրիմք, միշտ հակառակամարտ ունիմք զթշնամին կենաց մերոց։ Այս նա հին ծառ-մանակեալ և խորամանկ և հնուս պատերազմի է. անմարմին բնութի

և սրբութեամբ և թափանցեալ յամէն · վասն որոյ միշտ խոստովանիմ ՚ի վերայ մեր, և ջանիւք յաւէտ կլանել զմեզ։

Իսկ մեք տկարք և երերկոտք, ունայն և թափուր ՚ի հանճարոյ, և ընդ մարմնոյ անկեալ թանձրութեան և կարօտութեան · վասն որոյ ՚ի քո զօրութիւն միշտ ապաւինիմք ով տէր բարերար, և զօգնութիւն խնդրեմք · օգնեա՛ տէր, այսինքն՝ ձեռն կարկառեա՛ և զօրացո՛ տէր յամենայնի։ Որ փրկեցեր զմեզ յամ մեքենայից խարդախողին մերոյ, և ետուր օգնական և զօրավիգ տկարացեալ բնութեանս մերոյ · և այժմ և հանապազ յաւէտ զնոյն մաղթեմք։ Ո՛չ վասն մերոց ինչ արժանաւորութեան, այլ վասն անուան քոյ փառաւորելոյ, որպէս ասէ ՚ի կարգին։

Տէր փրկեա՛ զմեզ և քաւեա՛ զմեղս մեր վասն անուան քոյ սրբոյ · պարսպեալ պահեա՛ զժողովուրդս քո ընդ հովանեաւ ամենազօր խաչի քոյ։

Զի վասն մեղաց մատնեցաք ՚ի ձեռս թշնամւոյն և անկաք ՚ի նեղութիւնս և ՚ի վիշտս և ՚ի ցաւալից և ՚ի բազմածուփ կենցաղս յայս։ Այլ թէպէտ և միանգամ պատուական խաչիւ քոյ բարձեր զմեղս ամենեցուն, սակայն մեք օր ըստ օրէ հանապազ մեղանչեմք · և ընդ նոյն ծառայութիւն մեղաց միշտ անկանիմք ըստ ա͞ծային քո անսուտ հրամանիդ, թէ *Որ առնէ զմեղս՝ ծառայ է մեղաց։ Զի որով իւիք յաղթահարեսցի մարդ՝ նմին և ծառայէ ըստ առաքելոյ։

Այլ արդ տէր՝ մեք տկարք և դիւրասահաւ բնութիւս, ՚ի ծովածուփ կենցաղոյս և ՚ի պատրանաց որսողին միշտ մեղանչեմք և հանապազ մեռանիմք յանցանօք։ Վասն որոյ անդադար աղաչեմք զանոխակալ և զմարդասէր տէրութիւն ամենաբարի արարչիդ մերոյ, զի ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում, և քաւեսցես զյանցանս մեր։

Զի թէ արժանի արասցես զմեզ թողութեան մեղաց հասանիլ, հաւատամք թէ և փրկութեան շնորհացն հանդիպիմք։ Այլ միշտ ընդ հովանեաւ ամենազօր խաչի քոյ տաղաւարիմք հաւատացեալ ժողովուրդս քո, և գինք պատուական արեան քոյ սրբոյ · յա͞մ վտանգաւոր որկածից անկասկած մնալ և միշտ ՚ի խաղաղութեան վայելել ՚ի փառս քո ք͞ն ա͞ծ մեր։

Փրկեա՛ տէր յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ Զի երկկին գոլով մարդկային բնութիւն՝ հոգի իմանալի և մարմին անասնեղէն · վասն որոյ և երկկին ունիմք թշնամիս, իմանալի և զգալի · և յամենեցունց մաղթէ բանս փրկել և ազատացուցանել։ Այլ յաւէտ յիրաւի · զի որք ընծայեցաւ մարմին ընդ հոգւոյ յարարչէն ՚ի պէտս բարեգործութեան, այսպէս և փրկութեան պէտք է · զի միշտ ընդ

նմա յօրինել զարժանն։ Զի գործնական առաքինութիւն՝ առանց մարմնոյ կցորդութեան ոչ վճարի. այլ ծանկցաւն միշտ կատարին գործական բարեզարդութիւք ամ ըստ արարչին սահմանի։ Որով արժանի լիցուք միշտ փառաւորել զամենասուրբ զերրորդութիւն, զոր և հետագայ բանս ցուցանէ։

Նաև արդ ասէ արժանի անդադար փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Նա զի մարդ լեալ հնար մարդոյ ընդ մարմնոյ կարեօք կապեալ՝ անդադար ՚ի փառաբանութեան ոչ դադարել։ Զի հարկին բռնադատէ և կարիքն սահեալ. երբեմն հանգչել, երբեմն զրուցատրել, երբեմն ճաշակել և ննջել, և այլ երբեմն յայլ պէտս զբաղիլ։ Նաև այս ամ և այնպիսիք՝ խափանումն են փառաբանութեանն ոչ. և յակամայ կամս լուեալ առն մեզ յանօթից և ՚ի կարդալոյ առ Աստուած. այլ զի մարդ խմասցուք զբանս որով Ճշմարտին գրեալքն ամ։ Նաևբեալ լուծանէ ըզ տարակոյս ասելով այսպէս, * Եթէ ուտիցէք՝ եթէ ըմպիցէք՝ եթէ զինչ և առնիցէք, զամենայն ՚ի փառս Աստուծոյ արասջիք և մի՛ ըստ մարմնոյ։ Նաև տէրն յայտնապէս հաստատէ զնոյն բանիւ իւրով աստուածային հրամանաւն. * Տեսցեն ասէ զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է։

Արդարև տիրական և աստուածային ճշմարիտ և անսուտ հրամանք, որով յայտնի ճշգրտի բանիս տեսութիւն. զի գործով փառաւորել զԱստուած անդադար է։ Զի յորժամ ստանայ ոք զառաքինութիւն, որով հրաշանան մարդիկ ՚ի տես և ՚ի լուր, ամ ուրեք ՚ի բերան առեալ ՚ի դուռս և ՚ի փողոցս, ՚ի տան և յեկեղեցւոջ պատմելով միմեանց փառաւորեն զԱստուած՝ ասելով այսպէս, Օրհնեալ է Աստուած, գոհութիւն և փառք Աստուծոյ, որ այնպիսի կարողութիւն և շնորհս պարգևէ սիրելեաց իւրոց։

Նաև ահա յայտնի եղև ստուգապէս թէ ճշմարիտ է բանս. և է տիրապէս հնար անդադար փառաւորել զԱստուած գործովք առաքինութեան։ Զի գործօնեայ գործոյն թէ ճաշակիցէ՝ թէ զինչ և առնիցէ, սքանչելի վարք նորա ամ ուրեք պատմին, և Աստուած փառաւորի. ըստ այնմ, * Աստուած փառաւորեալ է ՚ի խորհուրդս սրբոց իւրոց։ Նաև այս ոչ միայն ՚ի կենդանութեան, այլ և յետ մահու լինիցի զի անդադար փառաւորի Աստուած ՚ի սուրբս իւր։ Զի ո՞վ ոք լուիցէ զվարս մեծին յովհաննու, զհանդերձն ՚ի ստևոց ուղտու՝ և զմարախս կերակրելն՝ և զանօթեայ լինելն, և ոչ փառաւորեսցէ զԱստուած։ Կամ ըզ պօղոսի զ[illegible] լինելն, և ոչ սքանչասցի և մեծապէս փառաւորեսցէ զԱստուած։

Սքանչելին Անտոն յանապատին երբեմն ճաշակէր, երբեմն ննջ-

ջէր ։ և զգանչելի վարք նորա և մեծամեծարութիւն ընդ գիւղացն միշտ յաղէքսանդր և 'ի հռոմ հռչակեալ լինէր ․ և ամենեքեան իբրև զերդ 'ի բերան առեալ փառաւորէին զնա նմ ուրեք ։ Նա և մերն լուսաւորիչ և մեծն և գովելին 'ի հայրապետս սուրբն գրիգորիոս՝ յետ անասանելի չարչարանացն և բնակութեան վիրապին , քառասուն ըզ պահքն լուծանելոյ , որպէս վկայէ մեծ քարտուղարն ագաթանգեղոս թէ * Սուրբն գրիգոր յոլով ամս զանխլացեալ 'ի լերինս սեպուհոյ յայրն մանեայ բնակէր ․ և իբր վիրապին և համբաւ սքանչելեացն իբրև զձայն ճայթման յերկինս վերանայր և զաստուած փառաւորէր ։ Այսպ ուրեմն նմանեցին հարքն սուրբ ճգնաւորքն առաջինք ․ և հրաշալի գործք նոցա յիշատակին մինչ 'ի կատարած աշխարհի ․ և Ած փառաւորի նոքօք հանապազ ․ և փոխանակ բերանոյ՝ գործք նոցին աղաղակեն անդադար 'ի փառս աստուծոյ ։

Այսպիսի իմն էին սուրբքն նմ ․ այսպիսի քաղաքավարութիւն բարուոք և գեղեցիկ սոցան 'ի կեանս իւրեանց ․ և այսպիսի անուն բարի թողին յաշխարհի , և օրինակ բարի զինքեանս տալով ամենեցուն , և անդադար փառաւորելոյն նմ ։ Զայսպիսիս ես կոչեմ անդադար փառաբանութիւն ․ զայսպիսիս գովեմ և պատուեմ և յոյժ սիրեմ ․ թէպէտ և անձամբ վերջացեալ գտանիմ ։ Զոր օրինակ 'ի ծնէ կոյր՝ թէպէտ զգայութեամբքն ոչ վայելէ 'ի լոյս արեգականն , սակայն 'ի բնութենէ և 'ի լոյս հաստատեալ գիտէ՝ եթէ գեղեցիկ և վայելուչ և յոյժ պիտանի են ճառագայթք լուսոյ արեգականն ։ Այսպիսի իմն և ես բնութեամբ իմանամ և 'ի գրոց լսեմ և յելից իրացն ճանաչեմ , եթէ չիք ինչ համեմատ 'ի կենցաղումս գործոց առաքինութե ։ Եւ հաւատամ՝ թէ նշոյլ է սա ճառագայթից իմանալի արեգականն արդարութեան ։

Այլ վայ է ինձ և եղուկ եմ ես թէ ուր վարէ զիս բանս ․ զի զայս պատմելով , 'ի մէջ լուսոյ՝ 'ի խաւարի նստիմ ։ 'Ի մէջ աղբերաց՝ ծարաւի գտանիմ ․ 'ի մէջ ակնոց պատուականաց և անգին մարգարտաց՝ իբրև յաղքատի փշալից և արիւնռուշտ շրջիմ ։ 'Ի մէջ վայելուչ անուշահոտութեանց՝ իբր զխոզ գարշահոտ 'ի տղմի թաւալիմ ․ 'ի մէջ օրինաց և պատուիրանաց՝ իբր անկարգ և անկանոն թիւրիմ ․ նա և բնաւ երբէք յուղիղն զիս ոչ գիտեմ ։

Այլ զայն զինչ արարից , զի զայլս ուսուցանեմ , և զիս ոչ խրատեմ ․ այլոց քարոզեմ , և ես ոչ առնեմ ․ զայլս զարթուցանեմ , և ես 'ի խոր ննջեմ ․ զայլս յորդորեմ , և ես հեռագ նստիմ ։ Բայց սրբոցն երանի անձանց՝ զի ճոխացան ․ երանի վարուց՝ զի պայծառացան ․ երանի գործոց՝ զի բարձրացան ․ երանի կենաց՝ զի կենդանացան ․ երանի յիշատակին՝ զի յիշեցան 'ի գիրս սուրբս և անջինջ գրեցան 'ի յի-

շատակարանի առաջի նդ․ երանի փառացն՝ զի փառօք խոստանոյց ան-դադար փառաւորեսցին զփառաւորիչն աստուած ։

Զի սուրբքն և ընտրեալքն մինչ յաշխարհի էին և ՚ի մարմնի՝ միշտ փառաւորէին զԱծ, յօրէնս աստուծոյ խոկալով ՚ի տուէ և ՚ի գի-շերի։ Արդ և ՚ի վերս հարանցն պատմի Թէ ոմն ՚ի ճգնաւորացն ՚ի ճաշակելն՝ զմի ձեռն ՚ի վեր ամբառնայր և ՚ի միտս առօթէր առ Ած․ Այս և յանուրջս տեսլեամբք և խորհրդովք ընդ նդ լինէին․ զորոց ոչ է դանդաղելի ասել Թէ և ՚ի վայելչականսն եւ ոչ կասէին ՚ի բար-ւոք խորհրդոց, այլ զմիտս միշտ շարժէին յօգուտ․

Նա և անդադար աւելի փառաւորել զԱծ, զմեր հեղգութիւն զարթուցանէ յարիութի։ Զի գիտասցուք Թէ անդադար պարտ է լինել փառաբանիչ նդ բանիւ և գործով և խորհրդով ըստ որքն ամե։ Այլ Թէ ոչ իբրև զնոսա, գոնեայ ՚ի ծուլութենէ և ՚ի Թմրութէ և ՚ի մտաց զբաղմանէ զարթիցուք և արխասցուք։ Զի և նոքա մար-դիկ էին իբրև զմեզ, և չարչարելի մարմնով անդադար փառաւորե-ցին զԱծ․ զի որ անդադար նախախնամէ զարարածս, անդադար փառաւորութեան է արժանի յարարածոց․

Յորդորակ։

Ջանասցուք և մեք ՚ի գործս բարիս, և զԹմրութի մտաց մերոց զարթուսցուք յերկիւղ և ՚ի սէրն նդ։ Զանցեալ ժամանակն բաւական համարեսցուք ունայնութեան կենցաղոյս և խաբեբայ պատրանաց սորա․ զի արդարև նանիր և կամ սուտ է կենցաղս այս, և ՚ի զուր ամբոխի ամ մարդ ՚ի ցանկութի անձին բարոյ։ Զի Թէ գոյր հնար համբերել զմեծութիւն կենացն յաւիտենից առ սուտ վայելս կենացս այսորիկ, քան զանուրջ և զերազ զարթու-ցելոց եւ վաղԹարագոյն լինէր։ Զի որ ետեսն Ճշմարտապէս՝ ու-նայնութիւն ունայնութեանց ասաց, և սնոտեաց սնոտեաց և ոչնչու-Թիւն ոչնչի։ Այս որք խաբեցան՝ զղջացան և ոչ զուարճացան․ և պատմեցին․ տխրութեամբ արտասուօք և հառաչանօք յօգուտ և ՚ի շահ զկնի եկելոց զի մի՛ խաբեսցին։ Արդ և ինքն սողոմոն ՚ի կարգ-ադրեալ բանիւ՝ մանրամասնաբար պատմէ զամենայն։

Զի ո՞վ այլ ոք իբրև զնա որ վայելեաց և զփորձ էառ ամե-նեցուն․ ոչ միայն զգալի կերպք խնդացեալ, այլ և գիտութեամբ և իմաստութեամբ անգիտացեալ։ Այս պատմէ մեզ բան մեծի զոր առաջ․

զխտհիցն զանազանութիւն․ զմատուռականցն բազմութիւն․ զբուրաստանացն վայելչութիւն․ զկոյս երամականցն և հօտիցն․ զզանազան պարարտութիւնս յարկացն․ և զոսկւոյն և զարծաթոյն՝ որոց ոչ էր համար։ Այլ ՚ի վերայ ամենայնի զունայնութիւն քարոզեաց․ և գոչէ յամենեցունց լսելիս և իմանալ տալ որոց միտս ունին իմացական, եթէ սնոտի է ամ․ և ոչ օգնեսցեն ինչ յաւուր բարկութեան արդարոյ դատաւորութեանն Այ․ այլ արդարութիւն միայն է որ փրկէ յաւիտենական մահուանէն և յաններելի տանջանացն։

Այլ մեք զայս ամ գիտելով եղբարք՝ փութասցուք ստանալ զառաքինութիւն․ զի արժանաւոր վարս ըստ Այ յանձինս մեր ընկալցուք․ և համարձակ լիցուք ասել ընդ առաքելոյն եթէ՝ * Ո՞վ մեկնեսցէ զմեզ ՚ի սիրոյն Քի․ նեղութիւն, եթէ անձկութիւն, եթէ հալածանք, եթէ սով, եթէ սուր, եթէ վիշտ, և այլն։ Զի արդարև նեղ է դուռնն և անձուկ ճանապարհն որ տանի ՚ի կեանսն յաւիտենից։ Այլ մեծագոյն հոգս պարտ է բերել յանձինս, զի արժանի լիցուք այնմ ուրախութեանց։ Զի զպատրաստութիւն անտի կենացն անճառ ասէ առաքեալ․ և ոչ պարտ վարկաւ յունկն մարդոյ խօսել․ և ոչ տեսանելի և ոչ լսելի և ոչ իմանալի տալոց զպատրաստութիւն այնմ բարեացն։

Վասն որոյ նախ քան զամ՝ սիրեսցուք զԱծ որ սիրեաց զմեզ․ սիրեսցուք և զեղբարս որ է օրինակ սիրոյն Այ․ զողորմածութեան զհետ երթիցուք․ զօտարասիրութեան և զաղքատասիրութեան։ Պահօք պնդեսցուք, աղօթիւք ծրարեսցուք․ զաւուրս պատուեսցուք․ զվկայս փառաւորեսցուք․ զտօնասիրութիւն միշտ զհետ երթիցուք․ զնահատակաց և զճգնաւորաց զյիշատակս յուսով կատարեսցուք։ Մի՛ օտարանդիք լիցուք զի մի է ամ․ և սէրն և յոյսն է գովելի առ Ած և առ սուրբս իւր․ մի՛ սիրեսցուք զաշխարհ և մի՛ որ ինչ յաշխարհի է։ Մի՛ զփառս․ մի՛ զմեծութիւն․ մի՛ զարծաթ․ մի՛ զստացուածս և զինչս։ Այլ զամ փոխանակեսցուք սիրոյն Քի․ զի երկնից արքայութեանն արժանի լիցուք, փառաւորել զՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Արդարութիւն հասարակաց աղօթից Արեւագալի ժամուն, որ կատարի 'ի գեղմ հօտոյն։ Եւ առ՝ Եղիցի անուն Տեառն օրհնեալ, և այլն որ 'ի ցուցակին։

Տեառն Յովհաննու հայոց կաթողիկոսի՝ եթէ զինչ խորհուրդ ունի Արեւագալին աղօթքն։

Այս աղօթքս զմիւսանգամ գալուստն քո նշանակէ, և ըզ յարութիւն մարդկան 'ի գերեզմանացն յաւուր միաշաբաթոջ յառաւօտին ժամուն։ Վասն զի յայնմ ժամու լինելոց է յարութիւն մարդկային բնութեանս. թէպէտ և գիշերի առի ըստ աւետարանական առակին։ Բայց նա է առաւօտ և սկիզբն ծագման արեգականն արդարութեան. և լինելոց է այն յառաւօտին ժամուն մեծի աւուրն։ Վասն զի յայնմ ժամու վարկանիմ ստեղծեալ զմարդն առաջին, յորում ժամու միւսանգամ կենդանանան 'ի գերեզմանէն։ Բայց խորհրդով բաղումք վարին 'ի ներկայումս, ակն ունելով առաքելական խոստմանցն, եթէ * փող հարկանի և մեռեալքն 'ի քս յարիցեն յառաւօտուն. և մեք նորոգեսցուք այլովքն հանդերձ։

Ըստ նմին օրինակի և իմ պատկաւորն և հայրապետն սբ Գրիգոր ըստ աւետարանական առակին, զյարութիւն մեռելոցն՝ բուսոց և անկոց օրինակէր, 'ի գարունն բուսաբեր դալարանալ մարդկան 'ի գերեզմանաց։ Բանզի յետ անցանելոյ ձմերայնոյն և լինելոյ գարնայնոյն և հաւուցն լինելոյ մերձ յառաւօտն, ձայնքն զյարութիւն մարդկան նշանակեն։ Վասն այսորիկ սթափեալ 'ի ժամուն յայնմիկ աղօթեն, ակն ունելով վերստին նորոգման յարութեանն մեռելոց։ Եւ զուարթաթռիչ լուսով ձեռպեալք 'ի հանդիպումն ամպովք երեւեցելոյն և հատուցանողին զիւրաքանչիւր ումեք զարժանն։

Վասն այնորիկ կարգեցան 'ի ժամուն յայնմիկ աղօթք, իբրև արժանի լինիլ մեծի առաւօտի լուսոյ ծագմանն, և զՏէրն փառաց առանց ամօթոյ տեսանել։ Որ յաւիտենին 'ի կատարումն եօթներեկին 'ի նախնի ութերորդ դարուն մտելոյ՝ յամեցելոյ փեսային 'ի վերջնումն գիշերին, 'ի որոշիլ օդեացն և այծեացն, յընտրման որոմանն և ցորենոյն։ Որ օրն մեծ և երեւելի 'ի մարգարէիցն գուշակեալ, յորում յանդիման լինիլ մեզ կայ առաջի բեմին քո. զի ընկալցի իւրաքանչիւրոք իւրով մարմնովն զոր յառաջ գործեացն եթէ բարի և եթէ չար։ Յորում աւուր փայլէն արդարքն որպէս զարե-

գալն յարքայութեան երկնից . որոց կայ ած ՚ի մէջ աստուածացելոց և թագաւորեցելոցն , որոշելով և բաժանելով զարժանաւորութիւն անար երանութեանցն։ Որոց և մեք արժանի լիցուք հասանել խոստացելոց բարեացն շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ յի քի , որում վայելէ փառք իշխանութի և պատիւ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն.

Մեծին Խոսրովու՝ վասն քարոզին Աւետարանին։

Յարևելից մինչև ՚ի մուտս արևու ընդ ամ տեղիս քրիստոնէութեան որք կարդան զանուն տեառն սրբութբ , տէր յաղօթից նոցա և ՚ի խնդրուածոց մեզ ողորմեսցի։

Յուսադրէ զժողովուրդն՝ թէ մի՛ վհատիք աղաչել զած . զի թէ և յանձանց չունիք համարձակութի , համայն վասն սրբոցն բարեխօսութեան՝ և աղօթից ամ քրիստոնէից որ յարևելից մինչև ՚ի մուտս արևու աղօթս առնեն ՚ի վերայ հաւատացելոց , ողորմի մեզ մարդասէրն ած։ Քանզի ամենեքեան պատուիրան և կարգադրութիւն ընկալաք յառաքելոցն և՚ի սուրբ հարցն՝ վասն ամ եկեղեցեաց որ ընդ ամ տիեզերս վասն բոլոր հաւատացելոց աղօթս առնել . զի միոյ գլխոյ ամենեքին մարմին և անդամք եմք։ Իսկ եթէ մեք սրտի մտօք ՚ի վերայ եղբարց մերոց աղաչեսցուք զած , յամ եղբարց աղօթից և մեք ողորմեալ լիցուք։

Ուխտիւք զած աղաչեսցուք։ Վասն զի աղօթիցն օգնականք են ողորմութիւնքն և նուէրքն . որպէս և կոռնելիոսին ողորմութիւն և աղօթքն ելին յիշատակաւ առաջի այ , և զհրեշտակս իջուցին փրկութիւն աւետարանել նմա։ Ըստ այսմ և քարոզն աւետարանէ , զի նուիրօք յեկեղեցիս և՚ի քահանայս և ողորմելով ՚ի կարօտեալս՝ դիւրահաշտ լինի ած և առատապարգև յաղօթականն . որպէս և աստ իսկ քարոզին բան։

Զի նա փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց և ՚ի ցանկութէ աշխարհիս . ընկալցի զուխտս և զխնդրուածս սրտից մերոց . և արժանի արասցէ զմեզ հաւատոց և պատուիրանաց իւրոց։

Փոխադարձէ զփրկութի ՚ի մեղաց և ՚ի ցանկութէ աշխարհիս , որք գեհենին առիթ լինին . և արժանացուցանէ հաստատուն կալ ՚ի հաւատս . և զօրացուցանէ ՚ի պահպանութի պատուիրանաց իւրոց . Այս է զոր ասէն՝ Արժանի արասցէ զմեզ հաւատոց և պատուիրանաց իւրոց , ամենակալ տէր ած մեր կեցո և ողորմեա մեզ։

Նորին Խոսրովու՝ վասն աղօթից Արեւագալին:

Յարեւելից մինչեւ ՚ի մուտս արեւու օրհնեալ ես տէր: Ընդ ամ տեղերս յարեւելից մինչեւ ՚ի մուտս արեւու ասէ ծանուցաւ անուն քո ըստ մարգարէից նախագուշակութեան, և օրհնի յամենայն ազգաց · քանզի քարոզեցաւ յամենեսեան աւետարան արքայութեան:

Այլ եղիցի անուն քո օրհնեալ յաւիտեան մինչեւ յաւիտեան: Օրհնեն ասէ յարեւելից մինչեւ ՚ի մուտս արեւու · և եղիցի օրհնեալ ոչ միայն այժմ, այլ անխափան յաւիտեան մինչեւ յաւիտեան: Մինչ՝ ոչ սահման ինչ դնէ օրհնութեան սուրբ անուանն իւր · այլ զանսահման և զանհաս յաւիտենին զմշտնջենաւորութիւն յայտ առնէ: Այս զի արժանի է միշտ օրհնութեան՝ ասէ զբարերարութիւնն որ ՚ի նմանէ:

Որ բարձեր զխաւարն կուրութեան և ծագեցեր ՚ի մեզ զլոյս ածգիտութեան ՚ի յիմարեալ սիրտս և ՚ի մահկանացու մարմինս մեր: Որդւովն կուրացեալ էաք անգիտութեամբ խաւարաւն և զրկեալք յածանօթութենէ, որոլորեալ մեզ ով՝ քարոզութեամբ սուրբ աւետարանին՝ փարատեաց զխաւարն մոլորութեան · և զյիմարութիւն ագիտութեան ՚ի բաց եբարձ ածային լուսովն, որով ծանեաք զմեր զերրորդութիւնն ած և կեցուցիչ և արարիչ ամենայնի: Այլ մահկանացու մարմինք մեր ընկալան զառհաւատչեայ անմահութեան՝ քն անօրհնութեամբն · զի ՚ի մահ նորա մկրտեալք՝ ընդ նմա յարեաք և ընդ նմա կենդանի մնալոց եմք յանանց յաւիտեանս:

Այլ այժմ աղաչեմք և խնդրեմք ՚ի բարերարութենէդ քումմէ, արա՛ արժանի սրբութեամբ տեսանել զճառագայթս արեգականն: Ընդէ՞ր յաւելու թէ ՚ի բարերարութենէդ քումմէ խնդրեմք: Զի բարերարութիւն քո ասէ փրկեցեր ՚ի խաւարէ մոլորութեան և լուսաւորեցեր զոգիս մեր, ծագես նովին բարերարութեամբդ զարեգակն՝ և զմարմինս լուսաւորես · նոյն բարերարութիւն և զմեր զանարժանութիւնս արժանացո ՚ի սրբութեան մնալ և տեսանել զզգալի արեգակն: Զի թէ զայս սրբութիւն տեսանել լիցի, ոչ զրկեալք ՚ի տեսանելոյ զարդարութեան արեգականն որ յիմանալին ծագէ և լուսաւորէ: Այլ զի որպէս յոլով անգամ ասացաք, թէ բազում են փորձութիւնք և խռովութիւնք որ հասանեն մարդկան ՚ի տուէ և ՚ի գիշերի · վասն այնորիկ աղաչէ զընդերկայնութիւն տուընջեանն անփորձ անցուցանել՝ այսպէս ասելով,

Խաղաղութեամբ անցուցանել զերկայնութիւն տուընջեանս, և հասանել 'ի պաշտօն երեկոյին յերկրպագութիւն և 'ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանդ։

Զի հասեալք ասէ յերեկոյն խաղաղութեան՝ երկիր պագցուք և փառս տացուք սուրբ Երրորդութեանդ։ Ուր, տէր, ուրեք ուր և երթայցեմք՝ ընդ մեզ լինելով պահապան մեր և աջողիչ գործոց մերոց և լցուցիչ պիտոյից մերոց, հասուցանես յերեկոյին պաշտօնն։ Ապա ասէ, Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Առաջի քո տէր և առաջի փառաց քոց և առաջի մեծի տէրութեանդ քո խոնարհեցուցանեմք ծառայք և աղախնայք զգլուխս մեր։

Ասեմք զայս ցած զի զարթուսցուք զմիտս մեր թէ ո՛յր առաջի երկրպագեմք, կամ ո՛ր փառաց և ո՛րպիսի մեծի տէրութեան խոնարհեցուցանեմք զգլուխս. զի լիցի ահ մեծութեան նորա յոգիս մեր։ Եւ որչափ 'ի կարի մերումն է՝ նմանեսցուք երկնաւորաց բանականացն որ մեծաւ երկիւղիւ զայս մեծութիւն պաշտեն։ Եւ ըստ մարգարէին՝ *Երկիւղիւ երկիր պագցուք առաջի ահաւոր և անչափ փառացն աստուծոյ։

Դու տէր ած մեր ձգեա զամենազօր աջ քո և օրհնեա զմեզ։ Ոչ եթէ ձեռն և աջ գոյ այ՝ յայն սակս զայս ասեմք. և կամ պէտք ինչ են ձգել 'ի մեզ և այնպէս օրհնել զմեզ. զի այսպիսի անդամք անմարմին բնութեան չեն պէտք, ոչ այ և ոչ հրեշտակաց։ Այլ զի զածավայելուչն զխորհուրդ են չկարեմք իմանալ և կամ ասել, այլ 'ի մերոցս աստի առնումք օրինակս. որպէս մեք սովոր եմք առնել, զի ձեռն դնեմք և այնպէս օրհնեմք։ Այլ միտքն այս է, զգթալ և խնամարկել և օրհնել. զի զոր ած օրհնէ, երանելի է յերկինս և յերկրի. ասէ,

Օրհնեա և պահպանեա տէր զմեզ. զի յամենեցունց յամ ժամ փառաւորեսցի 'ի ծառայս և յաղախնայս ամենասուրբ անուանդ քո։

Արդարև ծառայի և աղախնոյ մտերմի և տիրասիրի գործ այս է, ոչ զիւր ինչ խնդրել, այլ զտեառն. որպէս և սոյն աղօթիցն բան ասէ՝ ոչ յերկնից և ոչ յերկրէ խնդրել ինչ, այլ զի փառաւոր լիցի

անուանն Այ մերոյ: Այնպէս ասէ կարօղս այսմ զմեզ քում օրհնելովդ, զի այնպիսի ունիցիմք վարս որով սուրբ անուանդ քո փառաւորեսցի: Եւ քեզ զօրհնութիւն և զփառս տացուք հօր և որդւոյ և սուրբ հոգւոյն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Զկնի ասելոյ զմաղթանսն՝ Աղաչեմք ողորմեաց, ասէ Քարոզն:

Սուրբ ճգնաւորօքն աղաչեսցուք զՏէր: Այս քարոզս և աղօթքս և առաւօտուն՝ մի են բանք. բայց կրկին եղաւ աստ, զի միշտ զյիշատակս սրբոցն և զերախտիսն անմոռաց 'ի մտի ունիցիմք. և նոցին միջնորդութեամբն զԱծ աղաչեսցուք, զի հաշտեսցի ընդ մեղուցելոյս, և կեցուսցէ զմեզ ողորմութեամբ իւրով. որպէս ասէ, Ամենակալ Տէր Ած մեր կեցո՛ և ողորմեա՛:

Աղօթք:

Սուրբ ես Տէր և 'ի սուրբս հանգուցեալ: Զմարգարէին առնու զբանն որ ասէ, *Սուրբ է Տէր Ած մեր որ բնակեալն է 'ի բարձունս: Եւ զոր 'ի դիմաց մեր բարբառի. *Եղերուք սուրբք ասէ զի ես սուրբ եմ Տէր Ած ձեր: Եւ թէպէտ ոչ է հնար մեզ՝ նման լինել նմա սրբութեամբ որպէս և ոչ այլով իւիք, այսինքն՝ անեղ բնութեամբ կամ անսկզբնութեամբ կամ անփոփոխմանութեամբ. սակայն ըստ կարի մերում որչափ և գոյ հնար՝ զգուշանալ պարտ է սրբութեան:

Սուրբ ես Տէր ասէ. Այսինքն՝ անհաս յամենեցունց անհասմանս և անհետազօտելի և 'ի վեր քան զամ իմացման և զիմանութիւն՝ գերազանցեալ սրբութեամբ.

Եւ 'ի սուրբս հանգուցեալ: Կրկին է միտք հանգչելոյն զոր բանս ցուցանէ. զի առաջին հանգիստ կամացն լրումն է հաճոյիցն Այ. որպէս այն զի ասէ, *Հանգեաւ Ած յամ գործոց իւրոց զոր արար: Այսինքն՝ թէ զամ զոր արար՝ եւես զի բարի են և կամքն կատարեցաւ 'ի նոսա: Եւ Տէրն 'ի խաչին ասէր, *Ամենայն ինչ կատարեալ է: Այսինքն՝ տնօրէնութեան խորհուրդն 'ի կամաց իւրոց լրումն և 'ի մեր փրկութիւն:

Իսկ երկրորդ հանգիստ այն է՝ զի 'ի սուրբս և 'ի բարեգործս

յորս հաճի կամօքն և հաճոյիւ, որք ՚ի տաճարի բնակէ ՚ի նոսա շնոր-
հօք․ բաց այնմ, *Ես յոր բնակեցայց, եթէ ոչ՝ ՚ի հեզս և ՚ի խո-
նարհս և որք դողան ՚ի բանից իմոց։ և թէ՝ *Դուք տաճար էք կեն-
դանւոյ էք որպ ասաց Տէր թէ բնակեցայց ՚ի նոսա և հանգեայց ՚ի
նոսա միջի․ և եղէց նոցա Տէր, և նոքա ինձ սուրբ ժողովուրդ և
հաճոյ և կամարար։

Արդ մեք սուրբ վկայիւքս աղաչեմք զքեզ․ բարեխօսութեամբ սբ՟
ածածնին և աղաչանօք ամ՟ սրբոց քոց, մի՛ մերժեր զմեզ յողորմու-
թենէ քումմէ․ այլ կացո զմեզ առ ոտս սրբոց քոց։

Սրբոյ կուսին սէ բարեխօսութեամբն, և չարչարանօք և
հեղմամբ արեան սրբոց քոց վկայիցն՝ մի՛ զրկեսցուք ՚ի փառաց երե-
սաց քոց ողորմած Տէր։ Նաև առ ոտս սրբոց քոց միշտ դեգերել
զմեզ արա, և նոցին միջնորդութեամբն խնդրել ՚ի քէն զողորմութիւն
որպ ՚ի բազմագութ և յանսպառ անուանէ․ զոր և ասէ,

Զի դու ես բազումողորմ Տէր․ և քեզ վայելէ՝ փառք իշխա-
նութիւն և պատիւ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Փոխ և Մաղթանք, և ապա Քարոզս։

Փառաւորեսցուք զամենակալն Տէր որ ծագեաց զլոյս առա-
ւօտու յարարածս իւր, ծագեսցէ և այժմ զառատ ողոր-
մութիւն իւր ՚ի վերայ փառաբանչաց անուան իւրոյ․ ամենակալ
Տէր մեր կեցո և ողորմեա։

Խրատէ զամենեսեան փառաւորել զՏէր ՚ի վերայ զգալի լուսոյ
ընդունելութեան․ որպ զի նախընծայ փառաւորութեամբ յորդորեսցուք
զբարերար Տէրն մեր, զի ընդ առաւօտեայ և անցաւոր լուսոյ
ծագմանն՝ ծագեսցէ և զառատ ողորմութիւն ՚ի փառաբանիչս անուան
իւրոյ սրբոյ և կեցուսցէ զմեզ․ որ ասէ, Ամենակալ Տէր մեր
կեցո և ողորմեա։

Աղօթք։

Զառաւօտու աղօթս և զբանաւոր պաշտօնս ընկալ ամենա-
կալ ամենամեծդ աստուած ՚ի քո անապական և յերկ-
նային խորանդ։

Բաւում ոչ միայն զգալի այլ և իմանալի պարտ է գիտել զզգայան ժամուն, յորում առաւել լսէ Ած · ըստ մարգարէին, *Ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում: Այս բանաւոր պաշտօն ասէ, վասն զի գայ և անբան պաշտօն · որպէս և է սէրն և ողորմութիւն, հեզութիւն, պահքն, խոնարհութիւն, անոխակալութիւն, ժուժկալութիւն և համբերութիւն 'ի չարչարանս և 'ի վիշտս: Նաւալեւ հիւանդաց, հիւր ընկալելն, ընդ վշտացելոյն ախորժելն, և ընդ բերկրելոյն ցնծալն: Բայց Ած և այնպիսիքն անբան պաշտօն կոչին զոր կատարէ մարդ վասն այ: Վասն որոյ աղօթիցս բան՝ զբանաւորն յաւել 'ի պաշտօնն որ է երգովք փառաբանութիւն · զոր և ասէ,

Ընկալ ամենակալ ամենամեծդ Ած 'ի քո անապական և յերկնային խորանդ: Զվայելչութիւն երկնային խորանի քո անեղծ և անապական ասէ խոստովանիմք, և բարձրագոյն քան զէս Ած: Վասն որոյ աղաչեմք ընդունել զպաղատանս զոր մատուցանեմք առաջի մեծագործ տէրութեանդ քոյ, և յառատաձիր շնորհաց քոց հեղուլ յարարածս քո · որպէս և կարգ բանիս ցուցանէ:

Նագեա՛ 'ի մեզ զիմաստութիւն և զարդարութեան զլոյս քո: Զմտացն լուսաւորիլն կոչէ իմաստութեան լոյս · որով զմեծագոյն երախտիսն այ ճանաչել կարեմք, և նովին շնորհիւն զարդարութիւն ըստանալ · որով պայծառանայ իշխանականին առաջնորդութիւն առ 'ի յընտրութիւն ճշմարտութեանն:

Արա՛ զմեզ որդիս լուսոյ և որդիս տուընջեան: Զի որպէս զգալի լուսոյս ծագումն առաւօտուն զգայարանք յատակապէս ընդունին, այսպէս մտաց մերոց տեսութիւն մաքրեալ յախտից՝ զիմանալի լոյս գիտութեանն ճանաչէ · որով ճշմարտապէս որդի լուսոյ կոչեսցի:

Որպէս զի 'ի գալ աւուրց երկիւղածութեամբ վարեսցուք զկեանս մեր, և առանց գայթակղութեան կատարեսցուք: Միշտ ասէ 'ի շնորհագործութեան արեգականս և յօր ըստ օրէ ծագելն և 'ի լուսաւորելն զարարածս, արժանի արա զմեզ յերկրպագել յերկիւղ քո և 'ի սէր, և զլոյս գիտութեան քոյ միշտ առաջի մտաց աչաց ունելով, զոր ոչ գիշեր փոխանակէ ըստ իմաստնոյն · որով առանց գայթակղութեան քաղաքավարիցիմք 'ի կենցաղումս: Այլ այս լիցի քո օգնականութեամբ ողորմած Ած մեր · որպէս և հետակայ բանս ցուցանէ:

Զի դու ես բազումողորմ Ած · և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Փոխ և Մաղթանք, և այլ Քարոզ։

Աղաչեսցուք զամենակալն Տէր զի յաղօթելով ուղղեսցէ ըզ ճանապարհս ծառայից իւրոց ՚ի բարի և ՚ի խաղաղութիւն. ամենակալ Տէր Տէր մեր կեցո և ողորմեա։

Յաղօթել՝ զհրեշտակն առն և զօգնական լինելն ասէ. և բարի և խաղաղութիւն կոչէ զաւուրց սայթաքելոյ կատարելն զերկնաւոր ըն-թացս կենաց մերոց ըստ ներքին և արտաքին մարդոյս. որպէս ասէ առաքելոյն, * Որով կեցցուք ոչ միայն այժմ, այլ և ՚ի հանդերձեալ կեանս։

Աղօթք․

Առաջնորդ կենաց և պարգևիչ խաղաղութեան Քրիստոս Տէր մեր. առաջնորդեա մեզ գնալ ՚ի ճանապարհս քո արդարութեան, և խաղաղութեամբ ժամանել ՚ի նաւահանգիստ փրկութեան շնոր-հօք ողորմութեան քոյ։

Առաջնորդ է կենաց, զի յոչ էից ՚ի լինելութիւն էած. և կեն-դանի բանաւոր և մտաւոր առեղծագործեաց զմեզ։ Եւ յորժամ մեռաք մեղօք և պատուիրանազանցութեամբ, դարձեալ վերստին նորո-գեաց և կենդանացոյց չարչարանօք խաչին իւրոյ և կենդանարար յա-րութեամբն իւրով. ասելով, * Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, զմահ մի՛ տեսցէ։ և թէ՝ * Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք։ Եւ պարգևիչ է խաղաղութեան զոր խոստացաւ առաքելոցն սրբոց ասելով, * Զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. զխաղաղութիւն զիմ թողում ձեզ։ Եւ զի ինքն է ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք, ստուգապէս զնոյն հայցէ և բան աղօթիցս։ Արդարութեամբ ընթա-նալ ըստ հաճոյից նորա. և խաղաղութեամբ ՚ի կեանս և յաւարտ ժամանել շնորհօք և ողորմութեամբ փրկչին մերոյ և նորա. որպէս ասէ,

Զի դու ես օգնական և փրկիչ մեր. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Զի զայս միշտ սովոր է բնութիւս փոխարէն մատուցանել նորա զփառս և զպատիւ. զի այլ մեծագոյն ար[illegible] ոչ կարէ գտանել զոր տայ մարդ նմա, քան զօրհնութիւն և զփառս. ըստ այնմ, * Տուք փառս նմա. տուք օրհնութիւն անուան նորա մերոյ։ Զի նա է փառաց և պատուոյ արժանի փառաւորեալն յաւիտեան։

Աղօթք։

Օրհնեալ ես Տէր ած փրկիչ մեր որ յամ ժամ ընդ մեզ ես և ոչ երբէք թողուս 'ի ձեռանէ քումմէ զայնոսիկ, որք հաւատով և ճշմարտութեամբ կարդան առ քեզ։

Ո՞ւր է տէրն հրամայեաց թէ *Զամենայն ինչ վասն որոյ հաւատով աղօթս մատուցեալ խնդրիցէք՝ առնուցուք։ Ո՞ւր է հաւատն ըմ-կից լինի աղօթիցն և թևարկեալ յերկինս ելանէ. և առաջի այ մատուցեալ զխնդրուածս ճշդիւ պահանջէ իբր 'ի պարտականէ յուսմն-նէ։ Մատուցի առ Տէր բոլորով սրտիւ և հաւատով զաղօթս որպէս հրամայեցեր. տուր զոր խոստացար, զոր անհնար է թէ ոչ առնուցու։

Աղաչեմք և խնդրեմք 'ի քէն Տէր, ճանապարհորդակից լեր ծառայից քոց քոյին ներակայութեամբդ պահելով 'ի խաղաղութե։ Եւ առաջնորդեա մեզ խաղաղութբ և խնդութբ հասանիլ յիւրա-քանչիւր բնակութիւնս 'ի քս յս 'ի Տէր մեր։ Որում վայելէ փառք իշխանութի և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ըստ հրամանի քում առէ հաւատով աղաչեմք և խնդրեմք զքոյ ներակայութիւն և զճանապարհորդակից լինելն, և խաղաղութեամբ զիւրաքանչիւր ճանապարհ կատարել, թէ մարմնաւոր և թէ հոգևոր։

'Ի քս յս 'ի Տէր մեր ասէ։ Ամէն զի ինքն է սկիզբն ամենայնի և կատարած. որպէս ասէ 'ի յայտնութեանն յովհաննէս, *Ես եմ այբ և ես եմ քէ։ Եւ նմա փառք ընդ հօր և ընդ հոգւոյն սրբոյ. որ զամ յամենայնի լնու և նախախնամէ ըստ իւրում առատ բարերարութեանն։

Յորդորակ։

Օրհնեսցուք և մեք հանապազ զամենօրհնեալ և զբարերար Տէրն մեր. և գոհասցուք միշտ զառատ ողորմութե նորա։ Խնդրեսցուք մանաւանդ զայս խնամոյն շնորհացն ծագել 'ի սիրտս մեր, և ճառագայթարձակ փայլմամբ զամ զգայարանս մեր լուսաւորել։ Ո՞վ է յարևելից մտաց մերոց մինչև 'ի մուտս արևու թանձրացեալ մարմնոյս՝ զի գացէ ինչ նսեմացեալ։ Նաև առաջնոր-

դութեամբ Հոգւոյն սրբոյ ճանապարհորդեսցուք միշտ յերկիր աւետեաց։ Ո՛չ ունելով զհին խմորեալ ինչ որ է քացախուտ մաղձ չարութեան, և ծանրացուցիչ պատապատումն վայրապարանց կենցաղոյս, և ուսուցիչ մերացումն թեթևամտութեան աճեցեալ յամենայն անառակս չարութեան։

Եւ մովսիսաբար զայլեալ ունելով ՚ի մախաղի մտաց մերոց զոսկերսն յովսեփայ, որ է նշխար պատուականաց փրկչին մերոյ յի։ Նու մեծաւ հոգաբարձութը ընթասցուք զառաջնոր կենցաղոյս, զի մի՛ ծառայութեամբ անշրժման մեղացն կիզեսցուք զըկեալք ՚ի կենդանի ջրոյ ածային պատուիրանացն, լեալ և դառն ունելով ջուր՝ պղծ ուսումն սուսայօղ պատմութեանց, զոր ոչ կարիցէ ածատես միտք ըմպել։ Մանաւանդ թէ խաւարելոցն մտօք և զրկելոցն ՚ի ճշմարտութենէ՝ դառն թուի ածային օրինադրութի և անախորժ ճաշակ։ Մինչև խաչին շնորհիւ մեկուսացեալ մաքրեսցին ճաշակելիք մտացն յաղտից, և իմասցէ զքաղցրութի պատուիրանացն այ։

Զայն որոյ կօշկօք առաքինութի և հաւատոյ ամրութը զառա մտաց մերոց պնդեսցուք, զի մի՛ ՚ի խարդախանաց օձիցն խաբեսցիմք։ այլ ՚ի քաջարութի բեմի ձողակերպ խաչին սեղանոյ միշտ ակնակառոյց եղեալ յառեսցուք։ Որով զայն տեսեալ փրկիմք ատրապաւս և կենդանանամք զանմահ կենդանութիւնն։ և յապագային արժանի լիցուք լսել եթէ՝ *Եկա՛յք օրհնեալք հօր իմոյ՝ ժառանգեցէ՛ք պատրաստեալ ձեզ զարքայութիւնն։

Որոյ լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին յի քի։ Ընդ որում հօր և սուրբ Հոգւոյն վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից երրորդ ժամուն, որ կատարի 'ի դէմս յիշման հոգւոյն սրբոյ: Եւ ասի՝ Օրհնեալ հոգիդ սուրբ ած ճշմարիտ, ևայլն որ 'ի կարգին:

Մեկնութիւն հայոց կաթողիկոսի և իմաստասիրի՝ վասն երրորդ ժամու աղօթիցն:

Իսկ աւանդեցան որոշեալ սահմանք ժամու աղօթիցն, այդ-պէս յանցման ժամու նախահօրն հեշտասիրութե՛ և մեղացն. և 'ի նմին ժամու բժշկել զյանցանան չարչարանօք խաչին տեառն մերոյ Յի Քի: *Զի որպ՞ ադամաւն ամենեքին մեռանին ասէ, նոյնպէս և Քիւ ամենեքին կենդանասցին իւրաքանչիւրոք յիւրում կարգի: Եւ 'ի յորում ժամու յանցեաւ ադամն առաջին՝ և յետ յանցանացն յամեցաւ 'ի դրախտին, նոյնչափ և Քս եկաց 'ի չարչարանս խաչին 'ի բժշկութիւն մերոյ նորին:

Իսկ յերրորդ ժամու աւուրն կարգել զժամ աղօթիցն, քանզի յերրորդ ժամու ասաց մարկոս 'ի խաչ ելանել միածնի որդւոյն Այ: որով յայտնի է թէ՝ և 'ի նմին ժամու ընդունել եղև Եւայի զհրապուրանս բանսարկուին և ցանկական պտղոյն ճաշակմանն: Իսկ յայսժամ եկեալ միածինն մերովս բնութե՛ զծառայութի մեղաց մերոց բառնայր, երթայր 'ի դրախտն՝ զի զանկեալսն վերացուսցէ: Մեռեալ զմահն և զձեռամն յաղագս յանդուգն դնացերցն 'ի ծառն. և զի՝ ըղձեռագիր յանցանացն խափանեսցէ: Եւ զառաջեցն ապականութի՛ որ յայնժամ օձաջամբ պատուիր գլդեալ՝ խաղաղացուսցէ խաչով մարդասիրական չարչարանօքն:

Իսկ յովհաննէս ժամ վեցերորդ ասէ. ոչ զժամ խաչելութե՛ն, այլ զժամ ձաղանացն որ 'ի հրէիցն եղև: Իսկ 'ի խաչն յերրորդ ժամուն բարձրացաւ. բազկն տարածեալ զթևսն ըստ յորդոյ անշարժ դիւանը ընդ հօրն, յափշտակելով զմեզ 'ի մահուանէ 'ի կեանս: Զոր աւաղ անսեալ մարգարէական ակամբ երանելւոյն դանիէլի, յերրորդ ժամու աւուրն զպատուհան տանն իւրոյ բանալով ընդ արևելս ընդ դէմ երուսաղէմի աղօթէր վասն դարձի գերութեանն, տեսանելով զմիածին որդին Այ բազկատարած 'ի խաչին, որ յերրորդ ժամու աւուրն ճշմարիտ աւետումն գերելոցն արար:

Նոյ ապա յետ այսր յոբելինի՝ տեսանեմք յերրորդ ժամու ըզ շնորհս հոգւոյն սրբոյ հեղեալ յառաքեալսն, զհեռացեալսն յաղա-մայրին բնութենէս յաղագս ոչ 'ի դէպ ժամու ճաշակմանն. Սոյն այսր ամենայնի ասեմք յերրորդ ժամու գլորեալ զմարդն առաջին. յորում ժամու զբժշկութիւն վիրացն և զբարերարութիւն ընկալաւ. Արդ յիրաւի յայսմ ժամու աղօթից՝ աղաչեմք զնա՝ առաքել զհոգ-ւոյն օգնականութիւնն առաջնորդ լինել մեզ յերկիր բարի ուստի զրկեցաք մախանօք չարին. Այս է պատճառ երրորդ ժամու աղօթիցն.

Մեծին Խոսրովու՝ վասն Քարոզին.

Միաբան ամենեքեան գոհացարուք զմարդասիրէն այ և ըզ փրկչէն յսէ քսէ, որ ազատեաց զազգս մարդկան 'ի դատապարտութենէ անիծիցն. և եբարձ զմեղս աշխարհի 'ի ժամու յայսմիկ խաչիւն իւրով սրբով.

Հրաման տայ միաբանութեամբ գոհանալ զքէն. զի յերրորդ ժամուս տէ յայսմ՝ ազատութի շնորհեաց ազգի մարդկան 'ի դատապարտութենէ անիծիցն. Վասն զի յերրորդ ժամուն ստեղծաւ ադամ որոյ յայտ առնէ ներհանջէն երեք ժամն յաւելեան յաւելադրեալ. Նաեւ զի անոյշ զպատուիրանաւն 'ի պտղոյ փայտին ճաշակեալ, անիծիւք մահու դատապարտեցաւ. Նոյն սակս ըստ ժամու ստեղծմանն մարդոյն և տէրն մեր 'ի խաչափայտին բեւեռեալ եբարձ զմեղս և զանէծս ինքն անէծք եղեալ. քանզի յօրինացն անիծեալ էր ըզ փայտէ կախեալն.

Նա և զմեզ՝ աստուածային մարմնովն ընդ խաչափայտին բեւեռեալ ազատեաց զմեզ փայտիւ, փայտիւ զփայտ որբեալ, և մարմնով զմարդկան մարմինս յանիծից և 'ի կապանաց արձակեալ. Նաեւ 'ի նոյն ժամու յորում յադամ զհոգին սուրբ փչեաց զի եղիցի մարդն յոգի կենդանի, հոգւոյն սրբոյ ստեղծագործեալ զմարդկային հոգի, անդանօր զհոգին սուրբ եհեղ յերանելի առաքեալսն զի կենդանասցին ըստ այ հոգւով, և կենդանացուսցեն վերստին ծննդեամբ զազգս մարդկան. քանզի և վասն այսր եւս քարոզն խրատէ գոհանալ՝ ասելով.

Նա շնորհեաց առատապէս զպարգեւս 'ի հոգւոյն սրբոյ երանելի առաքելոցն: Առատապէս ասէ, զի ոչ որպէս 'ի մարդկանէ. այլ առաւելապէս եւ բնականապէս եւ առանց մեկնելոյ. ըստ տէրունական ասացեալ խոստմանն թէ՝ *Ընդ ձեզ բնակեսցէ յաւիտեան.

Խնդրեսցուք հաւատով, զի զմեզ զամենեսեան արասցէ հաղորդս մեծամեծացն, և անծայրին բարեացն այնոցիկ։

Որո՞ց մեծամեծաց բարեաց։ Որ խաչիւն և չարչարանօքն քո՛ շնորհեցաւ մաքրութիւն ՚ի մեղաց և զերծումն յանիծից։ Այլ զի հոգի սուրբ ընկալցուք ՚ի սմին ժամու ընդ առաքելոյն. և զի մի՛ ոք զրկեսցի յայսմ շնորհաց, վասն այնորիկ ասէ, խնդրեսցուք հաւատով, այսինքն առանց երկմտութեան. զի զամենեսեան զմեզ արասցէ հաղորդս այնպիսի բարեաց։

Վասնզի և այսու իսկ պատճառաւ զայն ժամն աղօթիցն սահմանեալ եղեալ է. և չասաց ՚ի միաբանելոցն հայցուածս միայն ապաւինիլ, այլ և զաղօթս կենդանեաց սրբոց և զբարեխօսութիւն վախճանելոց սիրողաց ոչ յօգնականութիւն կարդալ. վասն որոյ և ասէ իսկ.

Աղօթիւք և բարեխօսութեամբ ամ սրբոց, որք աստ և ընդ ամ տիեզերս։ Որք առ մեզ ասէ և որք յամ երկրի. թէ ՚ի մարմնի և թէ ՚ի բաց գնացեալ ՚ի մարմնոյ։ Նաե ասա և զոր ինչ օգտիցեմք. խաչին և հոգւոյն շնորհաց հաղորդեալք։

Որո՞վ զի անարատ վարուք և ճշմարիտ առաքինութեամբ կացեալք ըստ կամաց նորա յայսմ աշխարհի, մասն և վիճակ ժառանգութեան ընկալցուք ընդ ամ սուրբս նորա զերանութիւն յաւիտենական երկնային խորանացն։

Նա ասէ ՚ի մեղացն արատոյ զերծանիցեմք մեք վարք՝ խաչին պարսպելով. և առաքինութիւնքն ճշմարտիցեն՝ հոգւոյն սրբոյ գիտութիւն և զօրութիւն առլով մասն և վիճակ ժառանգութեան ընդ սուրբս ևս ընկալցուք զերանելին յերկնից խորանսն, որ յաւիտենականքն են. զոր և խոստացեալ իսկ է քն այնոցիկ, որ սիրեն զնա։ Այլ զի անսուտ են խոստմունք նորա, վասն այնորիկ յաւելու զայն թէ, Զոր խոստացաւ տալ սիրելեաց իւրոց ճշմարիտն ած յն քն տէր մեր. կեցո և ողորմեա։

Աղօթք։

Որ ՚ի քրովբէական և յանպատում հանգուցեալ ես աթոռ, և այցելու ես մեզ յարարածս քո։

Անպատում աթոռ ածութեան ասէ զքրովբէսն. վա զի հանգչին առ ած քան զամենայն զօրս երկնայնոցն որոց ասէ մեծն դիոնէսիոս. և անընդմիջաբար առնուն յայ զհեղումն շնորհաց գիտութե

և իմաստից . և ինքեամբք յայլն անցուցանեն ։ Նու զի յաւէտ կամաբարք զատնին քան զամենեսեան՝ մեծի աէրութեն առատն . վասն որոյ և հանգչել ՚ի նոսա բանս ցուցանէ առաւել քան յամենեսեան ։

Որ ՚ի քրովբէական աստ և յանպատում հանգուցեալ ես աթոռ ։ Ո՛չ եթէ յօդաւոր անդամք գոն այդ, որովք յենուլ կարօտանայ և հանգչել յաշխատութեանց . զի անմարմին զհամբոյր յենու, կամ որպէս կրէ աշխատութիւն անաշխատ բնութիւն ։ Այլ միայն մարդկօրէն ձևացուցանէ զբանն, որով հասու կարասցուք լինել . և զկամաց լրումն աստ հանգիստ որպէս ասասցուք ։ Վասնզի այս և մարդկան է սովորութիւն, զկատարումն ախորժակացն հանգիստ կոչել, զոր և բազում անգամ ասացեալ եմք ։

Նու այցելու ես աստ միշտ յարարածս քո ։ Այլինքն խնամես, և ըստ իւրաքանչիւր պիտոյից զարմանես զամենեսեան զբանաւորս և զանբանս, զկենդանիս և զանկենդանիս ։

Որ և ՚ի ժամուս յայսմիկ հեղեր յերանելի առաքեալսն զշնորհս հոգւոյն սրբոյ ։ Որովք վրիպեցաւ բնութիս պատուիրանազանցութեամբքն, վերստին ընկալաք աստ անօրէնութեամբն քո այդ մերոյ առաստաղէս զամենասուրբ հոգւոյն պարգևս և զշնորհս . և հրաւիրեցաք յորդէգրութիւն հօրն երկնաւորի վերստին ծննդեամբ աւազանին ։ Որոյ նախ ընդունակ եղեն յետ քո երանելի առաքեալքն ՚ի վերնատունն, և նոքօք յընդհանուր հաւատացեալս տարածեցաւ մկրտութեամբ սուրբ աւազանին ։

Դու տէր յառաջինկայ ժամէս և ևս յաւէտ մինչև ՚ի կենցաղոյս աւարտումն պատուորեալ միայն զմեզ ընդ ամ բարեգործութեան յորդորմունս ։

Զի յետ ընդունելութեան հոգւոյդ շնորհաց՝ այլ և՛ լցի մեզ ըմբռնիլ ՚ի յաղթս բանսարկուին և ՚ի ցանկութիւն պատրանաց կենցաղոյս . այլ միշտ յորդորեալ լիցուք յամ բարեգործութիւնս և ՚ի հանդէս առաքինութեան ., որոց փոխարէնս հայցէ զոր հետակայս ցուցանէ բան ։

Նու խոստացելոց բարեացդ հաղորդս լինիլ զմեզ արժանի արա տէր մեր և փրկիչդ յս քս . որ ես օրհնեալ ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Զի թէ աստ բարեյորդոր կենօք քաղաքավարիմք ըստ հոգւոյդ սբյ առատաձիր պարգևացն, հաւատամք աներկբայս թէ և յերանաւէտ և յանվախճան կեանսդ ժառանգեմք զխոստացեալ բարիսդ, փառաւորելով զհայր և զորդի և զսբ հոգիդ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Որ էիր յառաջ քան զյաւիտեանս բանդ ած․ էակից հօր և արարչակից սուրբ հոգւոյն։

Յառաջ ասէ քան զյաւիտեանսն ծնեալն հօր զմիածին որդին․ ոչ միայն քան զլինելն աշխարհի և զներկայս յաւիտեանս, այլ և քան զանբաւ և զանսահման և զանհաս յաւիտեանս որ ինքեան միայն է գիտելի։ Որ զէութիւն ընդ հօր միշտ ունի․ և արարչակցութիւն հոգւոյն սրբոյ արար զարարածս ամ՛ յոչէից․ և զարդարեալ նորոգեաց և միշտ նախախնամէ տիրապէս։ Որ զնախաստեղծին պատուիրանազանցութիւն պարզոյն ճաշակմամբ՝ նշանաւ ամենազօրեալ խաչի քո ՚ի ժամուս յայսմիկ ենթարկեալ ՚ի կենդանութիւն փրկեցեր․ և զանօրէնութիւնս մեր ՚ի նմին բեւեռեալ, կեանք անապական և նորոգումն կենաց յուսացելոցս ՚ի քեզ խոստացար։

Ընդ փայտին գիտութեան զխաչ քո ասէ շնորհեցեր․ և ընդ նախաստեղծիցն հեշտալի պտղոյն ճաշակման, որով և զմահութիւն ասրածեցաւ ՚ի վերայ մարդկայինս բնութեան, բարերար տէրդ մեր փոխանակ ամենեցուն զլեղին դառնութեան ՚ի վերայ խաչին ճաշակեալ, զպարգևութիւն մեզ շնորհեցեր, կենդանագործելով ՚ի մեռելութենէ մերոց։ Այլ նորոգութիւն և անապական կեանս յետ աստեացս վճարելոց խոստացար․ որք հաւատով և բարի գործովք ՚ի քեզ յուսան և ակն ունին մխիթարութեան ՚ի հանդերձեալ կեանսդ։ Որոց հայցեմ կցորդլինիլ ՚ի բարիսն որպէս և ասէ,

Որոց մասնաւորիլ և զմեզ արժանի արա տէր մեր և փրկիչ յ͞ս ք͞ս․ որ ես օրհնեալ ընդ հօր և սուրբ հոգւոյդ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ի սկզբանն էակից հօր դաւանեաց և արարչակից հոգւոյն․ և ՚ի կատարածս ընդ հօր և ընդ հոգւոյն սրբոյ օրհնաբանեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Այլ Սաղմոս և Մաղթանք, և զկնի Քարոզ։

Խնդրեսցուք հաւատով ՚ի տեառնէ վասն ձեռնադրողհայրապետաց հարց և եղբարց մերոց․ որք ընդ ծով և ընդ ցամաք գընացեն․ որպէս զի առաջնորդեսցէ նոցա խաղաղութեամբ․ և տարեալ

հաստուսցէ յիւրաքանչիւր անձիս առ ած մեր։

Նմանայն հաւատացելոց հրամայէ աղօթել, որք յիւրաքանչիւր ազգաց ՚ի մի եկին հաւատ և ՚ի գիտութիւն ճշմարտութեան. զի որք ՚ի քն մկրտեցան, միոյ աւազանի ծնունդ և միոյ մօր եկեղեցւոյ որդիք՝ և հօրն երկնաւորի ժառանգք՝ եղբարք կոչին ամենքեան։

Նա վասն ամենեցուն հրամայէ բան քարոզիս՝ աղօթս մատուցանել հաւատով և յուսով. և հարս կոչէ ոչ միայն զզգալի հասակաւ ծերացեալսն, այլ որք գիտութեամբ և իմաստիւք ուսուցիչք և դաստիարակք եղեն. և ծնեալ քաղուած որդիս, ոչ միայն մկրտութեան աւազանին, այլ և բանիւ վարդապետութեան և խրատով պատուիրանի տեառն վարժելով և ուսուցանելով։ Որոց վասն աղօթել պատուիրէ սիրով և յօժարութեամբ, զի ՚ի նոյն զօրասցին և յառաջադէմ լիցին։ Զի և Պօղոս գրէր և պատուիրէր աշակերտելոցն եթէ՝ * Աղօթս արարէք և վասն իմ. զի և ինձ տացի բան ՚ի բանալ բերանոյ։ * Զի պարապին զմիմեանց հոգալ անդամքն ըստ նորին դարձեալ բանի։ Նա ոչ միայն այս, այլ և զի ՚ի այն կարգեցան դասք քահանայից՝ զի հասարակ ՚ի վե ամ հաւատացելոց աղօթեսցեն։ Նա յաւէտ յիրաւի. զի հայր է քահանայն հոգևոր՝ և մայր ող կոչի հասարակաց։

Խնդրեսցուք աստ վասն ամ ճանապարհորդաց։ Ասն զի ճանապարհ կոչի ոչ միայն որ ըստ մարմնոյն են ընթացք, այլ և որ ըստ հոգւոյն բազմադիմի և զանազան ճանապարհիւք ընթանան ՚ի կենցաղումս։ Վասնզի ճանապարհ կոչի և օրինաւոր ամուսնութիւն, և կուսութիւն. միայնութիւն, և առանձնական կեանք, և օտար ընկալութիւն, և բարւոք վերակացութիւնք. այսպէս ամենքեան և սոցին նմանք ճանապարհք ասին։ Նա պէտս ունին ամենքեան աղօթից օգնականութեան, զի խաղաղութեամբ հասցեն ՚ի կէտ կատարման իւրաքանչիւր ընթացից. սոյն և ՚ի հակառակէն ճանապարհ որք չարաւ ընթանան։ Որպս վասն որդւոցն հեղեայ ասէ գիր, * Երթալով երթային և չար էր ճանապարհ նոցա։

Նա թէ ոք ծովագնաց ճանապարհորդ զմեղաւորս ասէ որք ՚ի ծով կենցաղոյս թաթաւին ՚ի մեղս, և ցամաքընթաց զարդարսն, ոչ ինչ մեղանչէ։ Նա վասն ամենեցուն պարտ է աղօթել և խնդրել հաւատով ՚ի տեառնէ. զի մեղաւորք ՚ի զղջումն եկեալ զգաստասցին. և արդարք ՚ի նոյն զօրացեալք յառաջադէմ լիցին։

Ասն զի նա ինքն է առաջնորդ կենաց և յոյս փրկութեան, որ յաջողէ ծառայից իւրոց խաղաղութեամբ հասանել ՚ի նաւահանգիստ փրկութեան։

Կենաց առաջնորդ ասի վասն կենարար գոլոյն, և յոյս փրկու-

թեան՝ վասն յաւիտենից յուսոյն։ Զի ամ փրկեաց յօրինիչ ամ է. և նորա վերակացութեամբ մեզ նախախնամեալ անօրինին յուսացեալքն ՚ի նա. և ողորմութեամբ և շնորհօք նորին ամ որք զընթացս առաջարկութեն ըստ բարւոյ մասին աւարտէ, թէ ըստ հոգւոյ և թէ ըստ մարմնոյ որք ընթացցի ՚ի կենցաղոյս ընթացս. որոց վասն խնդրէ ասելով, Ամենակալ տէր ած մեր կեցո և ողորմեա։

Աղօթք։

Առաջնորդեա մեզ տէր ած մեր, և ուսո մեզ գնալ ՚ի ճանապարհս քո արդարութեամբ։ Ուղղեա համաձայնի և աղօթից քոց. և ըստ հրամանի նորին խնդրէ զի՛ առաջնորդութիւն յամ իրս, և զարդարութիւն գնալ ՚ի ճանապարհս նը. և արդարութիւն կոչի՝ ոչ յայլ խոտորիլ և ոչ յանհետել։ Զի թէ փառասիրութեամբ որք զպատիւ գործէ կամ առ մարդկան ակնածութեամբ, կամ զօշաքաղութեամբ, ամբարտաւանութեամբ, կամ հպարտութեամբ մեծաբանելով ՚ի վերայ ումեք, չէ՛ այնպիսին արդարութեամբ ընթացեալ զճանապարհս օրինացն ատեան։

Բայց զինչ է որ ասէ թէ՝ զքո ճանապարհս ուսո մեզ գնալ արդարութեամբ։ *Զի ամ ճանապարհք տեառն ողորմութեամբ և ճշմարտութեամբ են ասէ դաւիթ։ Այս ինքն է որ ՚ի ճանապարհի ամ կացէ և արդար ոչ լինի. այլ թուի թէ զարարչութիւն է բանս, զի արարչագործութեամբն նոյ ածաք յաշխարհս յայս, և յոչ էից ՚ի լինելութիւն եկաք։ Այլ ամ ճանապարհք զոր ըստ հոգւոյ և զոր ըստ մարմնոյ անձնիշխանն կամօք ընթանան մարդիկ, նոյ են պարգևք. զոր պարտ է ամ որք յիւրաքանչիւրսն արդարութեամբ ընթանալ որպէս ասէ։

Ուսո մեզ գնալ ՚ի ճանապարհս քո արդարութեամբ. Որպէս թէ ասիցէ, զաստուածային և զմիջնակս ճանապարհի քո զոր ՚ի քէն ընկալաք, թէ առաջնորդութիւն, թէ վերակացութիւն, թէ քահանայութիւն, թէ թագաւորութիւն, թէ զօրավարութիւն, թէ դատաւորութիւն, թէ կուսութիւն, թէ ամուսնութիւն, թէ զինչ և իցէ, քո խնամելովդ առաջնորդեա և ուսո գնալ արդարութեամբ ըստ քո կամացդ։ Նմա և զուգին հաւատան ասէ ճանապարհ նոյ, զոր խնդրէ շնորհիւն նոյ անսայթաք գնալ և արդարապէս միշտ։

Պահեա ՚ի խաղաղութեան զեկեղեցի մեր և զգնացս։ Երբեմն և յանխորհուրդ թշնամւոյն զընթացս կենաց մերոց ասէ առաջացն և խաղաղութեամբ յաջողեա, զի անսայթաք վարեսցուք զընթացս կենաց մերոց։

Ի հաճոյս քո ժամանեցի զհոգևոր և զմարմնաւոր ընթացս ծառայից քոց անարատ ճանապարհաւք յաւիտենական 'ի կեանս ։ Ընդ որում ճանապարհ զքեզ ասէ բանն իւրում աւետարանին . *Ես եմ ասէ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք ։ Արդ ըստ հաճոյից ոչ խնդրէ հասանիլ յաւուրս և 'ի կեանս հոգևոր և մարմնաւոր ընթացիցն . և այս լինի շնորհիւ և ողորմութեամբ փրկչին մերոյ յիսուսի քրիստոսի .

որպէս ասէ ,

Շնորհօք միածնի քո , աստուած մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի . որ եղև մեզ առաջնորդ կենաց և յոյս փրկութեան ։ Առաջնորդ կենաց եղև՝ զի զմեռեալս մեղօք կենդանացոյց , և հրաւիրեաց յերկնից արքայութիւնն ասելով , *Օ՛ն արիք գնասցուք աստի ։ Ի յերկինս՝ յանկմանէ մեղաց և 'ի մեռելոց գործոց յառնել հրամայէ , և կենդանականն և լուսաշաւիղ վարուք յերկինս վերանալ ։

Եւ յոյս փրկութեան ասէ ։ Ով որք 'ի խաւարի և 'ի ստուերս մահու անյուսութեամբ նստէք , լոյս ծագեաց ճառագայթարձակ մարմնով . և յոյս և փրկիչ եղև գերելոցս 'ի բանսարկուէն , ասելով՝ *Քաջալերեացարուք զի ես յաղթեցի աշխարհասէր թշնամւոյն ։

Վասն որոյ ասէ յաւուրս բանիս ,

Ընդ որում օրհնեալ ես հայր ամենակալ՝ հանդերձ կենդանարար և ազատիչ սուրբ հոգւովդ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Քարոզ ։

Պահպանելով աղաչեսցուք զբարերար հոգին աստուած , և խնդրեսցուք զողորմութիւն 'ի նմանէ . զի անցուսցէ 'ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբ իւրով . ամենակալ տէր աստուած մեր ։

Ով զբարերարն ոչ զհոգւոյն սրբոյ միշտ գոհանալն է վայելուչ , որով առատապէս վայելեսցուք 'ի պարգևսն ։ Վասն որոյ և խնդրել հրամայէ զողորմութիւն 'ի նմանէ . զի նա միշտ զերծուսցէ զմեզ 'ի պատուհասէ սխալանաց մերոց , որ բարերարն է . կարէ և կեցուցանել մաղթէ ։ Ամենակալ տէր աստուած մեր կեցո և ողորմեա ։

Աղօթք։

Ողորմութիւն քո՛ Հոգիդ սուրբ ած որ 'ի վեր է քան զամ միտս եւ զխորհուրդս, մխիթարեսցէ զանձինս ծառայից քոց ընդունելով զաղաչանս մեր։

Որպէս առաքեալն ասէ, *Խաղաղութիւն այ որ 'ի վեր է քան զամ միտս, պահեսցէ զձեզ ամբողջս եւ անարատս։ Զայն հայցէ եւ աղօթիւքս բան․ զի միշտ 'ի խաղաղութեան քաղցրութի վայելեսցուք եւ մխիթարեսցուք հոգւովդ․ վասն զի մխիթարիչ է հոգին սուրբ որպէս վկայէ։ *Իսկ մխիթարիչ հոգին սուրբ ասէ զոր առաքեսցէ հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամ։ Վասն որոյ ասէ,

Մխիթարեա զանձինս ծառայից քոց։ Այսինքն՝ որք սուգ ունին 'ի վերայ մեղաց․ թէ անձանց եւ թէ օտարաց, եւ տրտմութբ եւ հեծութբ եւ յոգւոց հանելով միշտ 'ի վշտի մաշեն զանձինս իւրեանց, որպէս այն զոր եզեկիէլ պատմէ։ *Դիր նշան ասէ 'ի ճակատս արանցդ, որ հեծեն եւ 'ի յոգւոց հանեն վերայ անօրէնութեց գործելոց 'ի դմա։ Եւ դաւիթ՝ *Տրտմութի կալաւ զիս 'ի մեղաւորաց ասէ։ Արդարեւ այսպիսիքս ոչ միայն մխիթարին 'ի շնորհաց սուրբ հոգւոյն, այլ եւ երանելի եւս լինին բստ հրամանի փրկչին մերոյ։ *Երանի ասէ սգաւորաց զի նոքա մխիթարեսցին։ Զայսպիսի մաղթէ աղօթիւքս բան մխիթարել եւ զպաղատանս ընդունել։

Մերժ 'ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց․ ներեա քաւեա եւ թող զմեղս մեր։

Զի մեք մեղաք ասէ եւ դառն բարկացաք, եւ պատուհասի արժանի գտանեմք զանձինս․ այլ ներեա տէր, քաւեա տէր, ջնջեա զյանցանս մեր քոյով մարդասիրութբդ․ զի բաց 'ի քէն զայլ ոչ գիտեմք մարդասէր տէր ողորմած եւ քաղցր։ Վասն որոյ աղաչեմք՝ ներեա քաւեա եւ թող զմեղս մեր․ արժանի արա գոհանալով փառաւորել զհայր եւ զորդի եւ զսուրբ հոգիդ․ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Յորդորակ աղօթօրէն։

Եւ մեք մատուսցուք յամ ժամ գոհաբանութի ամենասրբ երրորդութեան բոլորով սրտիւ եւ ուղիղ հաւատով․ պատմեսցուք զամ սքանչելիս նր, եւ ուրախութբ սաղմոսեսցուք առաջի նր։

Աղաչեսցուք զմարդասէր Հոգին ա՟յ և խնդրեսցուք զմխիթարութի՟ն միշտ 'ի նմանէ. պաղատեսցուք առ նա յա՟մ ժամ ասելով, Հոգիդ ս՟բ ա՟յ. Հոգի հեզութե՟. Հոգի ողորմութե՟. Հոգի իմաստութե՟ և հանճարոյ. որ զա՟մ յամենայնի լնուս և նորոգես ըստ հաճոյից կամաց քոց: Հոգի խորհրդոյ և զօրութե՟. որ զտգիտութիւնս մեր բազում գիտութբ՟ լնուս, և զտկարութիւնս մեր զօրացուցանես: Հոգի գիտութեան և ա՟ծպաշտութե՟, որ զա՟ծութիւնդ քո միշտ վարդապետես խնդրողաց քոց օրհնել սիրով և պաշտել զտէրութիւնդ քո յարաժամ աներկբայելի հաւատով. որոց և զանմահութի՟ շնորհես և զանվախճան խնդութի՟: Հոգի սուրբ՝ բարուք երկիւղի. զոր շնորհես սիրողաց քոց յանձին կրել իբր զթագ արքայական և զկնիք ա՟ծային, ա՟մ բարեաց սկիզբն և առաջարկութի՟ զնոյն ունելով: Հոգի արարչական, որ միշտ արարչագործես զեղեալս ա՟մ ըստ կրկնակի ծնընդեան յարգանդի մօրց, և 'ի ջուրս հոգևոր սուրբ աւազանին: Հոգի անեղ և համագոյ հօր և որդւոյ փառակից և պատուակից, արարչակից և նորոգող. որ 'ի սկզբան լինելութեանն 'ի համաշխարհական գոյացութեանն 'ի վերայ ջուրցն շրջելով արարչագործէիր և կենդանածնէիր զգոյակս ա՟մ: Եւ այժմ միշտ նախախնամես և առաւել հրաշազարդեալ յօրէնս, և զհողանիւթեայ բնութիւնս մեր անճառ ա՟ծութեանդ քում յարդարես: Առաքեալս ձեռնադրես. աւետարանիչս կարգես. մարգարէս յօրինես. քահանայս և թագաւորս օծանես. երգեցողաց բանս շնորհես: Ամենեցեան քրիստոնէայս քոյին շնորհիւ առնես. ճգնաւորաց և կուսանաց ժուժկալութի՟ պարգևես: Վասն որոյ օրհնեմք զքեզ Հոգի ս՟բ ա՟յ, որ զա՟մ յամենայնի ես առաւել բարեգործես որոց ոչ գոյ թիւ. մխիթարեա զանձինս ծառայից քոց ա՟ծային շնորհիւ քով: Եւ արժանաւորեա զնշխարս կենաց մերոց 'ի հաճոյս քո միշտ կատարել և ոչ երբէք խոտորիլ 'ի պատուիրանաց քոց. այլ ցնծալ և բերկրիլ 'ի փառս քո հանապազ, ատել զաշխարհ և որ ինչ յաշխարհի է, և զկամս աշխարհասիրին կոխել միշտ՝ և ընդոտնել զա՟մ պատրանս նորա և զդաւաճանութիւնս, զնախանձ, զատելութի՟, զոխակալութի՟, զհպարտութի՟ և զամենայն չարիս: Եւ 'ի ձեռն բարի գործոց և առաքինի վարուց փառաւորել զՀայր և զորդի և զսուրբ Հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից վեցերորդ ժամուն, որ կատարի 'ի դէմս Հօր Տր. Եւ ասի, Օրհնեալ հայր սուրբ ած ճշմարիտ, և այլն որ 'ի կարգին.

Տեառն Յովհաննու հայոց կաթողիկոսի՝ վասն վեցերորդ ժամու աղօթիցն.

Իսկ վեցերորդ ժամու կարգեալ աղօթքն յայտնի է. զի ադամն առաջին որ 'ի վայելս դրախտին փափկանայր, 'ի նմին ժամու անցանէր ընդ սահման պատուիրանին և ճաշակէր 'ի պտղոյն. և 'ի դրախտէն և 'ի պատուիրանէ օրհնադրին ունայնանայր 'ի վեցերորդ ժամուն: Վասն որոյ զեօթանասնեկին եօթն ժառանգէր ըզտրտմութին. և ընդ բազում ցաւոց անկանէր ազգս: Կայր իբրև 'ի ջերման հիւանդութե, և քաղէին ոգիք նր, լուծեալ յօդք ոսկերցն և ձեռացն 'ի բարեացն շարժմանէ. կայր լեզուն անշարժ 'ի խոստովանութիւն աստուածպաշտութեան:

Իսկ զորօրինակ մեռեալ ոք անզգայ յամ շարժմանէ, այն օրինակ և մարդն առաջին պարփակեալ 'ի միջօրէին իբրև 'ի մէջ գերեզմանի կայր 'ի տարակուսի և քաղէին ոգիք նորա: Վասնզի 'ի կարճմտութենէն ըմբռնեալ յանօրէնութեան խորխորատն անկանէր. անկեր զմահ քան զկենդանութին իւր: Իսկ յիշատակ տէրունական պատուիրանին ևս առաւել խոցոտէր. և մահուն երկիւղն որ սպառնայր թէ մեռանիս, և ոչ գիտէր թէ զինչ գործէր: Վասն որոյ փրկութեան միածինն Հօր 'ի վեցերորդ աւուր 'ի վեցերորդ ժամուն կայր 'ի ջանս ցաւոցն. և տրտմութեն զտրտմութին հալածէր. և ցաւովքն զցաւսն բառնայր: Իսկ համախմբելով ընդ փայտին անշնչապէս, զաւ 'ի փայտէն բառնայր զպատուհաս մեղացն ադամայ:

Իսկ փոխանակ քաղցր ճաշակման մեղացն, ճաշակեաց զքացախն ընդ լեղի խառնեալ՝ 'ի բժշկութի պտղոյն ճաշակման դառնութե: Իսկ միանգամայն կարեօք և կամօք յանձնառնլով լուծանէր զպատիժս պատուհասից նախնի մարդոյն. և ածական խոնարհութեամբն իւրով պայծառութի առնէր արարածոց իւրոց, և զխաւարն անելով 'ի միջօրէի որ գրեալ է յաւետարանին թէ, *'Ի վեցերորդ ժամէ անտի խաւար կալաւ 'ի վր երկրի մինչև ցինն ժամն: Նոյնու խաւարաւ յանդիմանէր զկարծեալ ճաճանչ լուսաւորացն որ 'ի պաշտամունս արարածոցն ածք յօրինէին: Իսկ զլոյս ածգիտութեն 'ի սերտս

ամ մարդկան անկեր ճանաչել զճշմարիտն ած և զողորմածն, որ բժշկեաց զախտս հոգւոց և մարմնոց:

Վասն որոյ յիրաւի յայսմ ժամու աղօթից՝ պատուիրէ արթուն լինել և զգուշանալ ՚ի հանձրութեանց դիւին միջօրէի. որ դժնդակագոյն է քան զամ դևս, որ յոլով մեղկութը ՚ի վերայ հասանէ և գողանայ զմիտս մեր յիւրն միտելով կամս. և անգիւտ կորստեանն ուղևորս կացուցանէ: Վասն այսորիկ կարգեցան վեցերորդ ժամուն աղօթքն՝ իբրև օգնականութի մարդկային բնութեա ընդդէմ հակառակամարտ զօրութեցն, և յիշատակ անօրինաբար բժշկութեանն չարչարանօք տեառն մերոյ յի քի: Այս է պատճառ վեցերորդ ժամու աղօթիցն:

Խորհուրդ՝ սակս քարոզին:

Արթուն միտք և անզգաստ խորհրդով, ահիւ և դողութեամբ կացցուք յաղօթս առաջի տեառն մերոյ և փրկչին յի քի:

Զինչ է միայն արթնութիւն և անզգաստութիւն խորհրդոց. չզբաղմուլ ՚ի հոգս և ՚ի ցանկութիս երկրաւորս, այլ յերկինս ընթանալ և զվերինն խորհիլ զոր ինչ այ և ածայնոցն: Զի որպէս որք ննջեն՝ չկարեն լուսոյ տեսօղք լինիլ և ոչ այլ իրիք թէ և մերձաւոր իրքն կայցեն: Այնպէս և միտք մարմնաւորօք ցնորիւք թմբրեալք՝ ոչ կարեն տեսանել զլոյսն անշիջանելի փառացն այ որ զոգիս լուսաւորէ. և ոչ որ ինչ այնու լուսովն յերկնայնոցն տեսանի մաքրոց ոգեացն. այլ խաւարանայ ոգին և սիրտն, և օտարանայ ՚ի կենաց անմահ աստուծոյ:

Արդ զգուշացուցանէ քարոզն զարթնուլ և զահ և զերկիւղն այ յոգւոյն ընդունել և ամենեքին զգաստանալ յորժամ աղօթեն: Զի թէ հողեղէն և մահկանացու թագաւորի ահիւ և դողութը կան առաջի ծառայքն, և մանաւանդ եթէ յանցաւորք ևս իցեն. որչափ ևս առաւել անմահին այ արարչին երկնաւոր զօրացն և ամենեցուն արքայի ահիւ կալ առաջի պարտ իցէ և դողալ առաւելապէս: Մանաւանդ զի հանապազ յանցաւոր այ գտանիմք, և այն յայտնի լինի ամենատես աչացն այ. զիարդ ապա ոչ բազում երկիւղիւ պարտիցիմք կալ առաջի նորա:

Հաւատով խնդրեսցուք ՚ի Նմանէ զհրեշտակ խաղաղութե պահապան անձանց մերոց: Հանապազ քարոզութիւքդ պատուիրեն հաւատով խնդրել. քանզի այսպէս ուսուցին առաքեալքն և տրն ինքնին

գլխովին · քանզի այսպէս ասէ , *Համբառնալ զձեռս 'ի վեր առանց բարկութեան և երկմտութեան ։ Նոյն յակոբոս թէ՝ *Խնդրեսցէ հաւա-տով և մի՛ երկմտեսցի · քանզի որ երկմտեանն է՝ ասէ վասն նորա , մի՛ ակն կալցի մարդն այն առնուլ ինչ յՏ՟է ։ Նաև տէրն ասէ , *Զամ՟ ինչ վասն որոյ աղօթս արարեալ և հաւատայցէք թէ առնուցուք , տացի ձեզ ։ Այսու որոյ 'ի գութ ողորմութեանն Այ վստահացեալ զօգտակարն մեր խնդրեսցուք · և յուսացեալ թէ առնուցումք 'ի պատշաճ ժամու ։

Զհրեշտակ խաղաղութեան հրամայէ խնդրել պահապան · և յարէ 'ի նոյն թէ , Որ եկեալ բանակեսցէ շուրջ զմեօք և աներկիւղ պահեսցէ զմեզ յամ՟ հրեղէն նետից սատանայի ։ Բանակելով ասէ շուրջ զմեօք յոր կողմ և ձգեսցէ սատանայ զնետսն , նա ոչ թողցէ հասանել 'ի մեզ · այլ անդէն յինքն դարձուսցէ և աներկիւղս արասցէ զմեզ ։ Հրեղէն կոչեաց զնետսն սատանայի · զի խորս բորբոքեն զմեզ 'ի ցանկութիւս աղտի աղտեղիս և 'ի ցասումն և յայլ ևս ախտս ։

Նաև զինչ է ասելն թէ որ թռչի 'ի տուէ , *Յիրէ որ շրջի 'ի խաւարի 'ի գայթակղութէ դիւին 'ի հասարակ աւուրն ։ Համեմա-տապէս խաւար է որպէս ասաց աւուրքն այն և լոյս կեղծաւորի · չար է , և բարի կարծեցուցանէ · դառն է , և քաղցր թուեցուցանէ · զի յորժամ տեղի գտանիցեն 'ի մեզ նետք նորա , յայլ ազգ զախոր-ժակսն շրջեն ։ Քանզի այսպէս և մարմին որ յախտէ ինչ վտանգի , զվնասակարսն բաղձայ և ոչ զօգտակարսն ։ Նոյն զայն զայս և 'ի խոցմանէ նետին սատանայի յոգիսն , թռանիլն՝ զանկարծն և զա-րագն յայտնէ · և զի՝ աներևոյթաբար հասանի և չերևի թէ ուրկէ ։ Բայց թէ ոք զՀոգին ունի լուսաւոր , նա տեսանէ և զգայ զնետս չարին ։

Յորժամ զգուշութ՟ պահելով աղօթիւք և բարեխօսութեամբ ամ՟ սրբոց որք աստ և ընդ ամ՟ տիեզերս ։

'Ի հրեշտակէ ասէ զգուշութ՟ պահել վասն աղօթից և բարե-խօսութեան ամ՟ սրբոց · զի թէ և մեք անարժանք եմք հրեշտակաց պահպանութեան , սակայն 'ի սրբոցն աղօթս ապաւինեալ և 'ի բարեխօ-սութիւս հաւանեցուցանեմք նոքօք զԱծ՝ շնորհել մեզ 'ի վերին զօ-րութեցն պահապանս ։ Որովք ամրացեալք 'ի նետից բանսարկուին , կարասցուք կեալ առաքինութ՟ ըստ կամաց նորա յայսմ աշխար-հիս · զի խորհուրդքն անմերձենալի լեալ խաբէութեան չարին , կարա-ղանամք յամ՟ առաքինութիւնս ըստ կամացն Այ յայսմ աշխարհիս ։

Այս ուրեմն են առաքինութիւք որ չեն ըստ Այ կամացն , այլ ըստ մարդկան հաճոյից · և կամ 'ի մասցն հաճութ՟ որովք ամբարտա-

ւանուԹիւնք յոգիան զօրանան 'ի չարին ազդմանց։ Իսկ յորժամ 'ի նորա խաբեացն փրծանիմք և առաքինուԹիւ կատարեմք, ըստ հաճոյ-իցն ԱԾոյ տանեմք, որովք մեք օգտիմք, և զանուանն ԱԾոյ փառաւոր առ-նեմք. քանզի և զայն իսկ յաջորդն յայս առնէ։

Ի փրկուԹի անձանց մերոց, 'ի պատիւ և 'ի փառս կենդանա-րարիչ անուան նր։ *Արդար առէ յորսողաց փրծանի. արդարու-Թիւն փրկէ 'ի մահուանէ։ Ողորմութիւն յամ վտանգէ փրկէն առա-քինացեալսն. *փրկէ տէր պահեմնա ծառայից իւրոց։ Եւ որպէս մե-ղաւորքն հայհոյի անուանն ԱԾոյ վասն չար գործոց նոցա, նոյնպէս և յառաքինեացն գործոց որպէս ասէն առէ՝ փառաւորի պատուել և պատուի կենդանացուցիչ անուանն ԱԾոյ. որ կենաց մարմնոյ և կենացն հոգևորաց և կենաց հանդերձելոցն է կենդանացուցիչ։

Այս հաղորդուԹն ընկալցուք 'ի յայտնուԹն մարմնոյ որդ-ւոյն ԱԾոյ, կերպարանակից առնել զմարմին խոնարհուԹն մերոյ ըստ նմանուԹն մարմնոյ փառաց իւրոց։ Ոասն զի զայս խոստացեալ է, մեծ և անճառելի շնորհս պարգևել սիրելեաց իւրոց Ճշմարիտն ԱԾ։

Երբ զառաքինուԹի գործիցեմք, հաղորդիմք յուսոյ հանդեր-ձելոցն. քանզի զԱԾ անսուտ գիտելով՝ հաւատամք առնուլ զոր խոստացաւ առաքինեացն զմեծն զայն և զանճառելի խոստումն զոր ծչ ըսկէ ոք ասել։ Օ ի զԹագաւորի ուրուք զփառս անկարանաց պատմել լեզու, ապա զայն զիարդ կարասցէ պատմել զկերպարա-նակից լինելն մարմնոյ փառաց որդւոյն ԱԾոյ։ Եւ յայսպիսի յոյս խըն-դացեալ հանապազ ասաէն իսկ հաղորդիմք անտի խնդուԹեանցն։

Օ ի Թէ ոք հաւատայր գիտէր եԹէ Թագաւորեալց է երբ և իցէ, ոչ արդեօքէն և նախքան զԹագաւորելն վստահուԹբ հաղորդէր յուրախուԹի ապագայիցն։ Եւ Թէ երկրաւորքս և ապականացուքս որ ընդ մահու են մերձակեայք և ծչ են 'ի յաւէտ և 'ի արամնուԹենէ և 'ի հոգւոց ազատք՝ մեծ խնդուԹբն յուսացեալ իւրեանց գործեն, ապա որքան յոյս հանդերձելոցն որ յերկինս է առանց հոգւոց և ցաւոց և արամնուԹեանց կերպարանակից փառացն քի լինել բերկրել պճուա-ռացեալսն։ Նաև մերն ԱԾոյ ես խնդամիտ առնէ ուրախացուցանէ և անսուԹի մահուն զմարքրեալսն. զի ըստ մարգարէին՝ անճառելին աչ-սօղ լինի յայսինքն՝ ԱԾոյ և հրեշտակաց և սրբոց և նոցունց փառաց։ Եւ այսպիսի առ հաւատալեաւ ԹէԹևանայ և քաղցրանայ լուծն երա-բեան որ վասն քի. ապա յաղօԹս զայսն փակէ, զի արժանացուք այսպիսի յուսոյ հասանել. քն յս տէր մեր կեցո և ողորմեա մեզ։ Եւ ժողովուրդն՝ տէր ողորմեա։

Նորին խորհրդով՝ առ Աղօթիցն.

Զգեցո մեզ տէր ած մեր զէն արդարութեն, զօրաւոր և յաղթօղ լինել ընդդէմ սատանայական պատերազմաց: Խրատեաց քարոզն աղօթս առնել զի պաշտպանեսցիմք հրեշտակաւ այ ՚ի նենգից սատանայի. և ամրացեալք՝ զօրաւորք յառաքինութիւն լիցուք: Արդ յառաջ կացեալ քահանայն զնոյն ամբոխութիւն հայցէ յայ. եւ տալ զի և զինուքն արդարութեն վառել հայցէ ասելովն թէ՝ Զգեցո մեզ տէր ած մեր զէն արդարութեան:

Զի որպէս ՚ի մարմնական մարտս մարմնականքն ամրացուցանեն սպառազինութիւնք, սաղաւարտ, զրահք, և վահանքն, և այլն. Այնպէս և ՚ի հոգեւորսն՝ առաքինութեան վառեն զէնք. որովք և սպառազինել հրամայէ զզօրականսն հաւատացելոց՝ պօղոս այսպէս ասելով, *Զօրացարուք տերամբ և կարողութեամբ զօրութեն նորա. և զգեցարուք զսպառազինութի այ. զի կարօղ լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի: Զի ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ ընդ այսս չարութեան որ ՚ի ներքոյ երկնից. Թուէ ապա մի ըստ միոջէ որովք վառելն պարտ է: *Պնդեալ ասէ զմէջս ճշմարտութեամբ զճշմարտութեան հաւատոյն գօտի ածել և զգեցեալ զզրահն արդարութեն. և ագուցեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան: Եւ ՚ի վերայ ամենայնի՝ *Առէք զվահանն հաւատոյ որով կարօղ լինիջիք զամ նետս մուխս չարին շիջուցանել: Եւ առէք զսաղաւարտն փրկութեն և զսուսեր հոգւոյն որ է բանն այ: Եւ ՚ի վերայ բերէ թէ՝ *Զօրաւոր և յաղթօղ լինելով ընդդէմ սատանայական պատերազմաց:

Եւ զամ հրեղէն նետս նորա շիջուցանելով անկասկածք լիցուք յերկրաց ՚ի խաւարային գայթակղութեց դիւին հասարակ աւուր:

Զօրաւոր լինել ընդդէմ բանսարկուին՝ և յաղթել նո պատերազմացն՝ զէնք արդարութեն առնեն. որովք և շիջանին ամ հրեղէն նետք սատանայի: Եւ ՚ի շիջանել նոցա՝ ոչ երբէք կասկած լիցի ումեք յերկրաց խաւարային գնացից. զի լուսովն այ պայծառացեալ ոգիքն՝ գիտեն գնալ ընդ արդարութեան շաւիղսն և ոչ գայթակղին որոգայթիւք դիւացն, որք զխաւարեալսն ոգւով և ՚ի հասարակ աւուր գայթակղեցուցանեն: Զի ոչ տայ այս լոյս առ ՚ի գիտել զնոցա որոգայթսն. բայց արդարոցն լոյս անշէջ է յոգիս նոցա. և ՚ի տուէ և ՚ի գիշերի անսայթաք գնան ՚ի ճանապարհս առաքինութեն. քանզի զայս և յառաջիկայն մաղթէ աղօթիցն բան:

Զի զգաստացեալք վայելչական տունջենիւս։ Ո՞ր է վայելչական այն. որ 'ի քնէ յարդարութեան արեգականէն ծագեցաւ մեզ լոյս, և զգիշեր մեղացն մերժեաց և այլ առաւ։ Գոչէ պօղոս, * Գիշերն մերժեցաւ և տիւն մերձեցաւ. 'ի բաց արասցուք այսուհետև զգործս խաւարին և զգեցցուք զզէնն լուսոյ. եւ բնաւ 'ի տունջեան զգաստացեալ շրջեսցուք։ Զայս խնդրէ աղօթիցն բան զգաստանալ վայելչական տունջեանս. քանզի երկրորդումնք կազմի առաքինութիւն, և Աստուծոյ տալովն և մեր ջանալովն. վասն այսորիկ զոր քարոզն ասաց՝ զնոյն յաստուածոյ խնդրէ։

Առաքինութիւն կացցուք յայսմ աշխարհիս 'ի փրկութիւն անձանց մերոց։ Նոյն սուրբ երրորդութիւնդ փառաւորեսցի. զի և վայելէ իսկ քեզ փառաւորութիւն. վասն որոյ 'ի նոյն յարէ,

Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Երկնաւոր խաղաղութիւն քո պարսպեալ պահեսջիր զանձինս մեր տէր զօրութեանց։ Վասն զի անխռովք են երկնաւորքն, և չիք անդ մուտ սատանայական վրդովմանց, և ոչ մարդկային խարդախութեանց. այլ ամենայն ուստեք անխռով խաղաղութիւն, և հոգևոր ուրախութիւն։ Զնոյն մաղթէ լինել և յերկրի աղօթիցս բան. զի որպէս յերկինս յամենայն վրդովմանց պարսպեալ պահեսցուք։

Զի դու ես ամենայն խաղաղութիւն. և բաց 'ի քէն զայլ ոք ոչ գիտեմք. և զանուն քո անուանեմք զօրհանապազ։

Զի 'ի քէն է ասէ երկնայնոցն խաղաղութիւն. և մեք քո եմք որդիք և նոքայն։ Վասն այսորիկ ասէ, զայլ ոք ոչ գիտեմք. և զանուն քո անուանեմք զօրհանապազ։ Հանապազ ասէ զքեզ կարդամք յօգնութիւն, և քո ժողովուրդ անուանիմք, և 'ի քո անուն քրիստոնեայք կոչիմք։

Նայեաց տէր յերկրպագութիւն մեր ամենեցուն, և շնորհեա մեզ առնել զճշմարտութիւն արդարութեան առաջի քո յամենայն ժամ։ Վասն զի ոչ ամենեցուն է առնել զճշմարիտ արդարութիւն, բայց որոց ամենայն վարդապետեալ են։ Զի պահեն և աղօթեն և ողորմին բազումք, բայց ոչ ըստ Աստուծոյ. այլ ըստ իւրեանց մտաց և ըստ մարդկան հաճոյից. վասն այնորիկ սուտ է արդարութիւն այն և ոչ ճշմարիտ։ Յաղագս որոյ և սողոմոն ասէ, * 'Ի միտ առնուլ զարդարութիւն

ճշմարիտ։ Եւ պօղոս ասէ, * Որ յիս արդարութիւն է. Արդ երկիր-պագանելով խնդրէ զայս և ասէ։

Նայեաց յերկրպագութիւնս մեր ամենեցուն, և շնորհեա՛ մեզ առնել զարդարութիւն ճշմարտութեան առաջի քո յամենայն ժամ։ Ո՛չ առաջի լինել արդարութեանցն և ոչ ՚ի ցոյցս մարդկան. և մի՛ դադարել երբէք յայնմ արդարութեանցն, այլ յամենայն ժամ յարդարութեան վաստակել. զի ծառայքն ՚ի ծառայութիւն տերանցն անդուլ խոնջին։ Եւ եթէ հողեղէն տէրութիւն միշտ զվաստակս պահանջէ յանդիման տերանցն, ապա որչափ երկնային և անմահ արքային պատիւն հարկ առնէ առանց լքանելոյ գործել զարդարութիւն ծառայութիւն։ Արդ փոխարէնն է ոչ յերկրէ միայն որպէս յերկրէքս շնորհեն, այլ առաւ բազմապատիկ՝ և ՚ի հանդերձեալն անպատմելեացս։ Հանդերձեալ ասի որ լինելոցն է չև ևս լեալն. զոր և ասէ,

Եւ հանդերձելոց բարեացն արժանի լիցուք ընդ ամենասուրբս, և ընդ նորին գոհութիւն փառաւորեսցուք զհայր և զորդի և զսուրբ հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Քարոզ.

Վասն հիւանդաց և ամենայն վշտացելոց աղաչեսցուք զփրկիչն մեր քս, զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում և բժշկեսցէ զախտս և զհիւանդութիւնս հոգւոց և մարմնոց ծառայից իւրոց։

Աղօթք սրբոց յոյժ զօրաւոր են յօգնականութիւն. ոչ միայն զմարմնոյ բառնալ զցաւս, այլ և զհոգւոյ. որ հաւատով և յուսով հայցեն, ըստ մեծին յակոբայ որ ասէ, * Հիւանդանայցէ ոք ՚ի ձէնջ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն և արասցեն ՚ի վերայ նորա աղօթս. և աղօթքն հաւատով փրկեն զաշխատեալն. և թէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցի նմա։ Եւ զի ասէ՝ * Օծցեն իւղով յանուն տն։ Այս ՚ի վերայ նորադունեցն ՚ի հաւատս զի առաւել հաստատեսցին ՚ի սէրն այ. և զի զգալի մարմին զգալապէս և զնիւթ բժշկութեան սիրէ ըստ թանձրութեան մարմնոյն։

Այլ և ՚ի միւս՝ իւղն յօրինակ շնորհաց հոգւոյն սբյ առաւ. որ անհրաժեշտաբար զներքին մարդն մաքրէ, և յայտնապէս արտաքին մարմնոյն առողջութիւն պարգևէ որք հաւատով յուսան։ Բայց և զայն տեսանել պարտ է, զի և զիւղն աղօթքն զօրաւոր առնէ և

դեղ բժշկութեան կատարեալ։ Սման որոյ թէ երկուքեան լինիցին՝ բարի է. և թէ վասն ծուլութեան կամ այլ պատճառի իւիք օծութիւն իւղոյն խափանի, աղօթիցն լինիլ պարտ է առանց ամենայն պատճառի. զի կարևոր է և յամ իրս ախտանի, և յամ ժամու խնդրէ պատրաստ լինիլ ըստ առաքելականն հրամանին։ Զայն և քարոզիս բան հրամայէ աղաչել զփրկիչն մեր քն, ոչ միայն վասն մարմնոյ հիւանդութեանց, այլ և վասն հոգւոյ ևս որ մեծագոյնն է և կարևորն։

Զի ողորմեսցի ասէ ըստ մեծի ողորմութեան իւրում և բժշկեսցէ զախտս և զհիւանդութիւնս հոգւոյ և մարմնոյ ծառայից իւրոց։

Բարձրեալ մեծ է ողորմութիւն այ և ՚ի վեր քան զամ հասողութիւն և խելացուցանն մտաց. որ ըստ առատ բարերարութեան իւրոյ միշտ նախախնամէ զերկրաւորս մեր, և ըստ կրկնակի ախտայից մերոց զամենեսեան լնու առատապէս յամ ժամ։ Այլ ՚ի ձեռն արժանաւոր աղօթից և սրբոյ հաւատոց բժշկէ հանապազ զախտս հոգւոյ և մարմնոյ ծառայից իւրոց՝ որպէս Ջերմաբարապէս(?) տէր և արարիչ և մարդասէր։

Այս կատարեալ առողջութեամբ հասուսցէ զամենեսեան ՚ի մշտնջենաւոր և յանախտ կեանսն։ Կատարեալ առողջութեան զայն երկոսին ասէ, զհոգւոյ և զմարմնոյ, այլ և զամենեցուն մարդկան յախտից և զանդրմնականն(?) դարձեալ ՚ի նոյն անեառ(?) վշտաց. որով արժանի լիցուք յետ մահուան զմշտնջենաւոր և զանախտ կեանսն ժառանգել։ Այս այս լինի ամենայնապէս(?) շնորհօք և ողորմութեամբ մարդասէր փրկչին մերոյ յն քն, զոր հայրն երկնաւոր առաքեաց մեզ ՚ի փրկութիւն. զոր և յաջորդ բանս ցուցանէ։

Որ առաքեցաւ ասէ ՚ի հօրէ ՚ի բժշկութիւն ազգի մարդկան մեղսծին(?) որդին այ տէր մեր և փրկիչ. յն քն կեցո և ողորմեա։

Զի յայն ասել առաքեցաւ՝ զի կեցուսցէ զմարդսանեալս(?) առատապարգև ողորմութեամբ իւրով. զոր միշտ հայցեմք կեցուցանել յամենայն ժամ։

Աղօթք։

Փարատեցո զցաւս և բժշկեա զհիւանդութիւնս ՚ի ժողովրդենէ քումմէ տր ած մեր. և շնորհեա ամենեցուն զկատարեալ առողջութիւն նշանաւ ամենայաղթ խաչի քո. որով բարձեր

ղեկարութիւն ազգի մարդկան և դատապարտեցեր զԹշնամին կենաց և փրկութեան մերոյ.

Փառաւորեցայ ասէ Յիսուս. այսինքն՝ ապաքինեալ և 'ի բաց մերժեալ. որպէս զզրգանչին պետրոսի, և զՀարիւրապետին մանկանն, և զկնոջն տեառնատեսի, և զդստերացն և զայլոցն ամենեցունց. զորս կենդանարար բանիւ քով բժշկեցեր 'ի ճշմարիտ մարդեղութեան քում. Այս այժմ զնոյն հայցեմք բարերար տէր. զի սովոր ես ըստ իւրաքանչիւր հաւատոց առ առողջութիւն. ոչ միայն մարմնոյ, այլ և հոգւոյ. Որոց նախ պահանջէիր 'ի սկզբան զԹելադրութիւն հաւատոց առ 'ի յընդունելութիւն շնորհաց. և ապա իբր ճշմարտապէս բժիշկ՝ զզօրութիւն ամենազօր ամծութեանդ առ 'ի բժշկութիւն 'ի կիր արկանէիր ասելով, *Ըստ հաւատոց քոց եղիցի քեզ. և Թէ՝ *Հաւատք քո կեցուցին զքեզ երթ 'ի խաղաղութիւն. Արդարև մեծ խաղաղութիւն. զի ուր հոգւոյ և մարմնոյ վիշտ ոչ իցէ, անդ է ճշմարիտ խաղաղութիւն. Զի ուր խաղաղարարն քո բնակէ, ամ արկածք խռովութեանց 'ի բաց մերժին որպէս 'ի տանց սիմոնիցն ձկնորսին և բորոտին. Այս զայն մաղթէ աղօթիցս բան ասելով,

Շնորհեա ամենեցուն զկատարեալ առողջութիւն նշանաւ ամենայաղԹ խաչի քո. որով բարձեր ղեկարութիւն ազգի մարդկան և դատապարտեցեր զԹշնամին կենաց և փրկութեան մերոյ. Ի ձեռն պատուականն և ամենազօր խաչի քո ասէ, որով զյանցանս մեր բարձեր և զմեռեալս մեղօք կենդանագործեցեր, և փոխանակ մեր՝ զմեր Թշնամին և զՀակառակորդն կենաց մերոց 'ի մահ դատապարտեցեր. Այս այժմ տէր բարերար զվէրս հոգւոց և մարմնոց մերոց բժշկեա. և շնորհեա կատարեալ և մշտնջենաւոր առողջութեամբ յանախտ կեանս ժամանել.

Դու ես կեանք մեր և փրկութիւն բազումողորմ ամծ. որ միայն կարող ես Թողուլ զմեղս և մերժել զախտս և զհիւանդութիւնս 'ի մէնջ. որում յայտնի են պէտք կարեաց մերոց, պարգևեա զառատ ողորմութիւն քո 'ի վերայ արարածոց քոց ըստ իւրաքանչիւր պիտոյից. Բաց 'ի քէն զայլ ոք ոչ գիտեմք ասէ փրկիչ և կեցուցիչ. և կամիլդ քո գործ է կատարեալ. որում և յայտնի են պէտք կարեաց մերոց. որ ոչ կամիս զմահ մեղաւորին ըստ մարգարէին, այլ դարձապէս կեալն և զճշմարիտ առողջութիւն. Զոր և աղաչեմք պարգևել արարածոց քոց ըստ իւրաքանչիւր պիտոյից ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ 'ի փառս և 'ի գովութիւն ամենասուրբ երրորդութեանդ. Որ և ասէ իսկ,

Յորոց հանապազ փառաւորեալ գովի ՚ի բարձունս ամենա- սուրբ երրորդութիւն ։ Յամենայն արարածոց քոց տէ յերկնաւո- րաց և յերկրաւորացս զորոց զպէտս առատապէս լնուս, բարձրա- ցեալ տէրութիւն քո փառաւորի ․ այժմ և միշտ և յաւիտեանս յա- ւիտենից, ամէն ։

Քարոզ ։

Խնդրեսցուք հաւատով ՚ի տեառնէ վասն քաւութեան մե- ղաց և թողութեան յանցանաց, փրկելով զմեզ ՚ի վշտաց և ՚ի նեղութեանց, իջանելով ՚ի վերայ մեր ողորմութեան և գթութեան տեառն մեր ․ ամենակալն տէր կեցո և ողորմեա ։

Զի ամ տուրք բարիք և պարգեւք կատարեալք ՚ի վերուստ են իջեալ և միշտ իջանեն ՚ի հօրէն լուսոյ, որ աղբիւրն է առատաբաշխու- թեան բարութեանց ։ Որ հայրական սիրովն միշտ նախախնամէ զարա- րածս իւր և զարմանէ ըստ պատշաճի ․ որ գթայ հայրաբար յարա- րածս իւր և ոչ առնէ անտես զգործս ձեռաց իւրոց որպէս տէր և արարիչ ։ Վասն որոյ և քարոզիս բան յորդորէ զամենեսեան հա- ւատով միշտ խնդրել զքաւութիւն մեղաց և զթողութիւն յանցանաց ․ զի առանց հաւատոց ունայն և զուր է աղաչանք, և ոչ է հնար առ- նուլ զխնդրուածսն ։ Իսկ որ կատարեալ հաւատով խնդրեսցէ, ան- հնար է թէ ոչ առնուցու, թէ և բարձրագոյն իցէ խնդիրն ։ Զի անհնարինքն հնարաւորք լինին առ ամենութեան հաւատոյն ըստ տէրունական հրամանին, որ կեցուցիչն է ամենեցուն և զօրացուցիչ ։
Ամենակալ տէր ած մեր կեցո և ողորմեա ։

Աղօթք ։

Հայր գթութեանց և ած ամ մխիթարութեանց ․ որ մխի- թարես զմեզ յամենայն նեղութիւնս մեր ։ Հայր ամե- նայնի՝ մեզ վստահութիւն տուր և յորդորէ՝ որդիաբար և մտերմու- թեամբ միշտ աղօթել, և հաւատալ թէ յորժամ ջերմեռանդ սր- տով իբրև որդի առ հայր մաղթեմք, և աղերսեմք գողարիկ և խան- դաղատական բանիւք, ճշմարտապէս առնումք զխնդիրն իւր ՚ի գո-

րովանդակութ հօրէ. իսկ ա՛ծ ամենալին, ողորմածական փառացն զմի-
խութիւն յայտ առնէ։ Ոչ է մի՛ միայն ՚ի հայրական գութն վստահա-
ցեալ յանհոգս լեցուք, այլ և զարդարութեան պատուիրան գիտելով՝ ահիւ
և դողութեամբ միշտ կացցուք առաջի նր։ Նա զի հայր է գթութեանց.
և ա՛ծ ա՛մ մխիթարութեանց, գիտէ զա՛մ պէտս մեր յառաջ քան ըզ-
խնդրելն մեր ՚ի նմանէ և պատրաստ է միշտ առատապէս։ Այլ կամի
զի մեք միշտ սիրով զնովիմբ գայցեմք և աղերսելով ժտիցեմք ՚ի
նմանէ, ոչ զերկրաւոր և զդիւրանցանելի փառս, այլ զանանցն և
զմշտնջենաւոր։

Լուր և այժմ ձայնի պաղատանաց ծառայից քոց, ընդունե-
լով զաղաչանս մեր. անցո ՚ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց
մերոց. փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամեացն։

Լուր և այժմ ասէ ձայնի պաղատանաց ծառայից քոց, այ-
սինքն՝ կատարեա՛ ՚ի բարի զաղաչանս մեր. զի՛ մինչև առնել զոր
խնդրեմք։ Նա ա՛ծ զձայնի ձայնի զհամրը լսէ, որոյ յօդաւոր մա-
ստունք անդամոց ոչ են. Նա և միջոցս երկնի և երկրի կարի երկայն
իմն և հեռաւորն է, և ձայն բարբառոյ մերոց ոչ զօրեն յերկինս
ելանել։ Այլ կերպարանք բանիս զայն յայտ առնէ թէ՝ ընդ զձայնի
ձայնիս՝ և զմտացն յօժարութի պարտ է կալնել, որոյ ա՛ծ առաւել
լսէ և զաղաչանան կատարէ. որպէս մովսէսի ասէր, * Զի՞ գոչես առ իս։
Քանզի և շշնջիւն ձայնի ոչ էր, այլ լռութեամբ աղօթէր։ Նաև
եղիայի ոչ էին բանք բարբառոյ և ոչ արտաբերութիւն խօսից. այլ
միայն զգլուխն յերկիր խոնարհեցուցեալ ՚ի վերայ երկուց ծնգացն,
զբազմօրեայ ամլութի երկնի և երկրի ՚ի ծննդականութի փոխարկէր։
Այլ մեք զի յոգնախոհ միտուք մտաց զբեկցայք, հարկեմք զձայնի ձայ-
նիս պաղատել. թերևս ընդոստուսցուք զթմրութի մտաց մերոց զինի
ձայնիցն, որով խոնարհեսցի ա՛ծ յաղաչանս մեր. զոր և աղօթիցս
բան մարթէ։

Ընդունել ասէ զաղաչանս, և անցուցանել զցասումն պատու-
հասի յանցանաց մերոց, և փրկել յերևելի և յաներևոյթ թշնամ-
ւոյն։ Ոչ է թէպէտ մեք միշտ մեղանչեմք առ բարերար և գթոս-
ընութեանս մերում և ն՛ պատուիրանաց բանաւորկուին, և զանբարկանալի
ընութիւնդ ՚ի ցասումն շարժեմք ՚ի վերայ մեր։ Այլ դու բարերար
և ողորմած ա՛ծ մեր՝ բստ հայրական գթութեանց քոց լուր ձայնի աղա-
չանաց մերոց. ամենայն առնելով զխնդրուածս մեր. և անցո՛ զցասումն
բարկութեան քո ՚ի մէնջ. և փրկեա՛ զմեզ ՚ի յայտնի և ՚ի յանյայտ թշ-
նամեաց։ Ոչ է միշտ ՚ի փառաւորութեան քում կացցուք, գոհանալով
զմեծամեծս և զբազմապատիկ առատանեդ. զոր և յաջորդս ցուցանէ։

Արժանաւորեա՛ անդադար փառաւորել զՔեզ ընդ Որդւոյ և ընդ Հոգւոյդ Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Յորդորակ։

Զարթիցուք և մեք ՚ի թմրութենէ մտաց. և զխմանալի ակն ոգւոց մերոց յառեսցուք առ Տէր ած մեր։ Ասասցուք օրհնեալ մեզ ած բարեաց զաւուրս ած և զառաւօտին ընծայեալն, մանաւանդ աղօթից և մաքրութեան մտաց։ Որք հաճոյական խնդրուածովք զերկինս բացցեն. զծով բաժանեսցեն. հուր անձրևեսցեն. զջուր դևս հալածեսցեն. զախտս փարատեսցեն. զմեռեալս յարուցեն. և զայլս բազումս հրաշագործեսցեն, որոց ոչ գոյ թիւ։ Աղաչեսցուք զՀայրն երկնաւոր ասելով հանապազ, * Հա՛յր մեղաք յերկինս և առաջի քո. և ոչ ևս եմք արժանի կոչել որդիք քո. վասն զի մեղօք մեռեալք բարկացուցաք զՔեզ։ * Դարձո՛ առ մեզ ած փրկիչ մեր և դարձո՛ զողորմութիւնս քո ՚ի մեզ։

Եւ այս ո՛րպէս լիցի։ Եթէ ՚ի չարեաց դադարեսցուք. եթէ զմեղս խոստովանեսցուք. եթէ արտասուօք անկցուք առաջի նորա. և աղաչեսցուք զերեսս նորա հանապազ հաճոյական աղօթիւք. և խնդրեսցուք միշտ զողորմութիւն ՚ի նմանէ։ Խորշեսցուք մեղանաց զյանցանս. զի և մեք արժանի լիցուք թողութեան ՚ի հօրէն գթութեանց և ողորմութեանց. որով և հանդերձելոց բարեացն արժանի լիցուք հասանել, փառաւորելով զՀայրն երկնաւոր և զՈրդին միածին և զՀոգին Ճշմարիտ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից իններորդ ժամուն, որ կատարի 'ի դէմս աւուրն տյ: Եւ ասի՝ Օրհնեալ որդին տր ած ճշմարիտ, և այլն որ 'ի կարգին:

Տեառն Հովհաննու հայոց կաթողիկոսի՝ վասն իններորդ ժամու աղօթիցն:

Իսկ յիններորդ ժամուն կարգեալ աղօթս, այս վասն անդարձ խոստովանութեան մեղաւորացն ասացեալ. յորում ժամու դատապարտեալ եղաւ 'ի դրախտէն: Եւ 'ի նմին ժամու աղաղակելով աւանդեաց զհոգին փրկիչն աշխարհաց, և զաւազակն եհան 'ի դժոխոց: Եւ զիններորդ ժամու զխորհուրդն առեալ եմք բարձրագոյն աւանդութիւն քան զայլսն պատուեալ յառաքելական դասուցն. քանզի *Պետրոս և Յովհաննէս ասէ ելանէին 'ի տաճարն յիններորդ ժամու աղօթիցն. և 'ի նմին ժամու բժշկեցին զկաղն որ նստէր առ դրան տաճարին: Եւ արդ՝ քանզի մեծ է խորհուրդ ածպաշտութեան ըստ առաքելոյ որ 'ի քս կարգեալ է. զի ընկալցի ճշմարտութիւն 'ի հնոյն և 'ի ստուերականացն: Ի քահանայութեանցն առեմ և զկատարածացն զզանազան կենդանեացն արեանցն հեղմանց, 'ի մատնել աղանուաղունի յուսոյն որով մերձենամք առ ած, որով փարատեցաւ խաւարն անգիտութեան 'ի կատարել ժամանակիս:

Որ յառաջին միջօրեայն եղև նսեմ նախնի մարդոյն յանցանօք. իսկ երկրորդ նորաստ յերկնից գալով՝ բարձր բարբառով 'ի վեր խաչին աւանդեաց զհոգին յինն ժամուն: Արձակեաց զախտաբերս 'ի բանտէ և 'ի տանէ կապանաց զազգս մարդկան, որք նստէին 'ի խաւարի և 'ի ստուերս մահու. և 'ի նմին ժամուն զլուսաւորսն 'ի խաւարէն փարատէր ըստ մարգարէական ձայնին *Ընդ երեկս աւուրն լոյս առնելով աշխարհի: Եւ ինքն էնն ած մերով բնութեամբս 'ի խաչին աղաղակէր զԷլիէլին ասելով. այսինքն՝ *Աստուած ած իմ նայեաց առ իս ընդէ՞ր թողեր զիս: և թէ՝ *Հեռի եղէ 'ի փրկութենէ իմմէ վասն բանից յանցանաց իմոց:

Այս է որ եկն 'ի խնդիր աշխարհին կորուսելոյ 'ի հօտէ իւրմէ. թէ ո՞ւր ես ադամ. և լուաւ զապիրատ պատասխանին զկնին բերելով պատճառ: Այլ վասն որոյ բանից արտաքս ընկեցաւ 'ի կենաց տեղւոյն ինքնակամ ընտրութեամբն. ուրանօր լուաւ թէ՝ *Հողեղէն և 'ի հող

պարծցին ։ Այնպէս և ՚ի նմին աւուրն լուաւ ՚ի ձեռն սուրհանդակին թէ՝ *Ընդդէմ եղեւ էր այսօր ՚ի դրախտին ։ Իսկ եղև ՚ի նմին ժամու ինններորդի արձակումն ՚ի մահուանէ ՚ի կեանս, և մնալ կենաց ճանապարհին ՚ի ծառն կենաց ։ Յորում ժամու ընդ երեկս աւուրն տրտմութեան ընկեցաւ ՚ի կենաց անդուստ, ՚ի նմին ժամուն կանգնեցաւ ՚ի դրախտին ։ Իսկ մարգարէական յառաջագոյն աւետաւոր գուշակութեանցն է թէ՝ *Յաւուրն յայնմիկ ոչ եղիցի լոյս, այլ ցուրտ և սառն եղիցի օր մի ․ և օրն այն յայտնի առաւօտ ոչ տիւ իցէ և ոչ գիշեր ․ և ընդ երեկս եղիցի լոյս յիններորդ ժամուն ։

Զոր և յաղթողն յայս ասնէ յասելն եթէ, *Յաւուր յայնմիկ բղխեսցէ ջուր կենդանի յերուսաղեմէ՝ ՚ի խաչելոյ մարմնոյն արեան և ջրոյ ․ մին՝ ի բէլս զմարդոյ, և միւսն՝ սաստել քան զմարդոյ ։ Այս նորա ՚ի ծոցն որ աստուծոյ, ՚ի հին ժողովրդեան որ ակն ունէին մխիթարութեան եղեալ օրինադիրք և հայրապետք և մարգարէք ․ և կէս նորա որ ՚ի ծոցն որ յետոյ ՚ի նոր ժողովրդեանս, որք առաքելական քարոզութեամբ ժողովեցան ՚ի մեղացն թափառմանէն ․ և լուսաւորեցան ջրով կենդանութեան բղխելոյն յերուսաղեմէ խառնեցեալ ՚ի կեանս յաւիտենից ․ և եղեն նոր ժողովուրդք և նոր եկեղեցի ։

Այսր խորհրդոյ յիշատակք յամ ժամու կատարին ․ վասն զի ամ է փրկութեան մերոյ աւարտումն ․ և ՚ի նմին ժամու կատարեցան ամ․ գրեալքն յօրէնս և ՚ի մարգարէս ։ Այսու խորհրդով համբարձեալ ՚ի մերս աստուածն ազատութեան մահացուն ․ և ընկալաք զաստուածութեան շնորհս ընդ երեկս աւուրն բանխին կենաց ։ Արդ կարասցուք յամ ժամ պաղատել մնալ կալ առաջի նորա, և համապատ յիշել զերախտիս մարդասիրութեան նորա, և զկամաւոր չարչարանսն զոր կատարեաց յայսմ ժամու վասն մերոյ փրկութեան ։ Այս է պատճառ իններորդ ժամու աղօթիցն որ կատարին ։

Խորհուրդ՝ երեկոյի ժամուն ։

Սուրբ սրբոց և հայրապետացն հաստատեալ, աշխ և դաղութիւն կարգեցուք յաղօթս աստուծոյ առաւօտ մերոյ և փրկչին մերոյ ։ Համապատ զայս զգուշացուցանեն քարոզքն ․ երբեմն ասեն առթուն մնալ և անդէն խորհրդով կարգեցուք յաղօթս, երբեմն սուրբ սրտիւ ։ Վասն զի որդութիւն սրտին լեալ բարի է խօսս ասնել ընդ աստուծոյ ․ իսկ սրտին զբաղեալ ՚ի գործս աշխարհականս՝ ընդունայն կարգացուցեալ բերանոյն լինին ։ Եւ և այլ անմարթու-

թիւնք սրտի , նախանձ , ոխակալութիւն , ցանկութիւն ընչից , ցանկութիւն մարմնոյ . և հարկ է զամ արքել 'ի սրտէն՝ որ աղօթիցեն էոյ , այլ և համառօտաբան լինել 'ի հաւատս : Երկրորդումբք սպառեսցուք միշտ է աղօթել ըստ առաքելական բանին որ ասէ , * Հաստատուն աղօթան է ալիմ որ մերձենայն առ ԱԾ թէ է ԱԾ : Այս առաջին հաւատս . երկրորդ թէ՝ որ խնդրեն զնա՝ լինի վարձահատոյց , որ քաջալերէ առնէ 'ի յաջողուածս : Այնպէս փութանակի յառնուլ որպէս որդի 'ի քաղցս կամ 'ի ծարաւ կամ 'ի մերկութի , 'ի գոյաւոր հօրէ զայրացուցանէ մեծամեծ յանցանօք . նա՝ փութով է օրհնել : Այսպէս զի որդին է զօրաւորեալ աւետարանի աւանդեն՝ որ քաղաքս խաղաղութեան օրհնակ . արդ զոր զօրաւորն առ մեզ գթութեամբ պայման՝ յայն հանգչեսցեք :

Վասնզի որդւոյն անկար է մարդ քան զԱԾ , այնպէս անկար է մարդկային գթութիւն քան զայնն : Իսկ արդ՝ եթէ քաղցրասէր՝ 'ի հօրէն զհայրն զառանցել ոչ հաստատէ , մի՝ արդեօք են անգթութեամբ պատարագաւն գնէ հօրն՝ եթէ պատճառք չկայցեն 'ի մէջ սրբոց ընդ երեսսն : Այսպէս և մեք զօգտակարն մեր հայցելով և ոչ յուսալով առնուլ , տարակոյս նորա անհնարին բարերարութեան լինիցիք . վա որոյ ասէ զայս աւետարան քարոզեցն առնեմք և խոստանամք հաստատուն զառնուլն :

Իսկ աշխոյժ և զգաստութեամբ հրամայեաց կալ յաղօթս , այլ և փորձել զառաջին մեծի և հզօրի կամ՝ տրտմել և աղաչանօք մեր բնութեան : Զի նմանութիւն զի և անձնատուր խնդիր 'ի զօրաց մերոյ եմք . և 'ի յիշատակ զալով մերոյ յանցանաց՝ երկնչել և զղջալ և զարհուրել պատերազմին յաղթել զօրութեան մեծին էոյ , ձեռնել զմեծամեծս նորա և զանցեալ չարութիւնս : Այսպէս մեծամեծ են և ոչ չափիլն բանիւք կամ խոնարհութեամբ շնորհեալք 'ի ժամանակս յայսմիկ . զոր մեզ հրա-մայէ : Զ հանդերձութեան կենդանաւ խորհրդն և զկենդանի աղօթիցուցէք արտասուս նորա , և զարդարն նմանն զոր յայսմ ժամու փոխ մեր մեղաւորացս կեցուց նա :

Զի յայսմ ժամու ապաշխարութեան մերոյ եղև սկիզբն . և զդատաւոր փայլուն հաշտեցեալ՝ նախամեծար քան զամենայն հանդերձ ցոյցս , մինչ խրատուն խոստովանութեամբ . Այսպէս մերկացաք 'ի փառացն և մահու դատապարտեցաք . և զանձինս ընկալեալ կեանս , և ընդ մեղաց Թագաւորութեանն անկեալ եմք . և յանկարծակի դրախտին ընկեցեալ ապականութեանն զարհուրել և 'ի սա դատաւոր պատուաւորեցաք : Խոստովանաւ առնել որ յայսպիսին սիրով զանազանելով առաջի մարդկան ըստ ծննդոց և մեղաց և ապաշխարութեամբ , և պատուաւորեալք բարձրութեանն :

Իսկ որք յայսպիսեան 'ի Քրիստոսութեանն և սրբութեամբ կեանք և մահ զգեցեալ . և որ 'ի հանդերձեալն հանդերձեալ կեանս անհնարին և անհանդուրժելի և անապական աւետիսն : Զիարդ յանձնեցաւ փոխել

զմեզ հաւանեցեալ փրկիչն ՚ի սոյն յայսմ ժամու յանձն իւր եդեալ զպատուհասն։ Մերկացաւ, զի զմերկութեան յինքն առեալ զամօթ՝ զզգեստ լիցի մերկութեան մերում։ Այլ խաչեալ ՚ի փայտին՝ զի զդրախտն որ փայտիւն՝ պատուհասեալ փայտիւն բացցէ․ և բևեռեալ ձեռօքն՝ զձեռացն մեղան հատուսցէ, և ձեռն զձեռն տարածեսցէ։ Այլ կերակուր լեղւոյն՝ զկերակրոյն սխալանաց սրբեսցէ․ և մահ զմահ լուծցէ, և անէծք զանէծս եղծցէ․ և աւազակն ՚ի նմին ժամու դրախտին բնակիչ լինի․ Այս որդւոյն անդրանիկ հեղեալ՝ մարդկութեան յանօրէն որդւոց աշխարհի պարգևեսցէ․ մանաւանդ թէ ընդ որդւոց հօրն դրախտի ասասցի։ *Շիթք դուզնաքեայ արեանն՝ զաշխարհս վերստին սատակմանէն․ և լինին իբրև խանձոց կաթին նոր մարդկան՝ ՚ի միասին զմեզ կապելով և ժողովելով, մանաւանդ թէ ազատելով զմեզ յամ պարտուց իւրով պատարագաւն։ Եւ ՚ի սրբութեան որդւութեանցն մնասցուք մեք առաւել կատարելապէս, և յորդիս նա ոչ զմեզ կարգեաց, ջնջելով զանօրէնութիւն մերոյ զպարտամուրհակութիւն պարտուց։ Զայս և որ տօնելոց նմանն է՝ յիշել հրամայէ զմեծամեծս և զանչափ շնորհս․ և յարէ ՚ի նոյն։

Այլ մեք զայս ամ զմտաւ ածելով՝ սրբեսցուք ՚ի մեղաց զխորհուրդս զմիտս և զգործս․ Զի ոչ զմերոյ հատուցեալ պարտիս՝ և մեր դարձեալ ՚ի նոյն լինիլ պարտիս՝ կարի յանդգնութիւն է։ Այլ զի ոչ միայն գործքն մեր ՚ի մեղաց մաքուր լիցին, այլ և խորհուրդք և բանք սրբեալ լիցին։ Զի թէ ոչխարանցն արիւնն՝ զպղծեցելովքն սրսկեալ սրբէր ՚ի մարմնոյ սրբութիւն, առաւել քն արեանն յորժամ մեր սրսկեալ՝ զխիղճ իշխեսցուք այն ոչ զաղծութիւն ընդունելն ամ․ այլ զինչ, ասէ։

Սպառեսցուք զսրբութիւն անձանց մերոց աչօքն ոչ։ Սպառեալ արտաքսեսցուք ասէ զորգիս մեր յամ սրբութենէ․ զի մի ինչ արատ յորդիս լինիցի, այլ յամ բծէ մաքրեալ լիցի։ Յամբարշտութէ․ ՚ի մեղխանաց․ յոխակալութէ․ յագահութէ․ ՚ի ցանկութէ չարաց․ յամբարտաւանութէ․ ՚ի սնոտութէ․ ՚ի փառամոլութէ․ յապերախտութէ․ ՚ի յանդգնութէ․ և բոլորովին յամ սխալանաց։ Այս զի ամ արդարութէ առաւելեալ լիցուք մերովն ոչ և միով եղելոց․ և այսուհետև ամի երկիւղն ոչ է արտաքս․ վասն որոյ և ասէ իսկ,

Սպառեսցուք զսրբութիւն անձանց մերոց աչօքն ոչ։ Այսպ թէ կամ իցէ ասել ամենայն թէ անհնարին կացեալ եմ ցանկ, արդ զխիղճ կարկցեմ սրբութեան առաւել։ Այլ այսուհետև ձանապարհ սրբութեան ցուցանէ զամպարտութիւն և զապաշխարութիւն․ վասն որոյ և

ասէ իսկ, մի՛ յապաղեսցուք խոստովանիլ նմա զմեղս մեր, և խնդրել զթողութիւն մեղաց մերոց. զի մի՛ կորիցուք անապաշխար զյաւիտենական կորուստն:

Բանսարկուն սովոր է հեղգ առնել և յապաղեցուցանել զխոստովանութիւն և զապաշխարութիւն. այլ մի՛ յապաղեսցուք մեք, և առ սակաւ սակաւ յապաղմամբքն ՚ի չարէն զօրացեալ լիցուք ըստ ասացելումն. այլ որպէս խրատ տայ իմաստունն՝ * Մի՛ օր ՚ի յօր առներ դառնալ առ Տէր: Նոյն երանելին Գրիգոր Աստուածաբան ասէ, * Հեղգ լեր առ ՚ի չարութիւնսն ով մարդ, և արագ առ ՚ի բարեգործութիւնս: Եւ սոյն զայս քարոզն խրատէ փութալ խոստովանութեամբ յապաշխարութիւն, զի մի՛ մահն արգելեալ անապաշխար հանցէ յաշխարհէ աստի, և յաւիտենականաւն կորնչեսցուք կորստեամբ, այսինքն անսպառաւն:

Այլ մինչդեռ ժամանակս ՚ի ձեռս է, գործեսցուք զբարիս ՚ի կեանս յայսմիկ: Տէրն ասէ, * Գայ գիշեր յորժամ ոչ ոք կարէ բարիս գործել: Այն յաւիտենական խաւարն մեղաւորացն գիշեր է. յորժամ ոչ ոք կարէ բարիս գործել, և ոչ ապաշխարութեամբ քաւութիւն առնուլ: * Զի ոչ ոք է որ ՚ի մահու յիշէ զքեզ ասէ. կամ ՚ի դժոխս խոստովան առնի առ քեզ: Եւ է անօգուտ և անդ խոստովանութիւն և զղջումն. և ոչ կաշառս կամ բարեխօսէ փրկութիւն է գտանել՝ ըստ գրեցելումն: * Եղբայր ոչ փրկէ և ոչ փրկէ մարդ, և ոչ տայ Այ զփրկանս իւր և ոչ զգինս փրկանաց անձին իւրոյ: Այլ վաստակեաց յաւիտեան և կեցցէս ՚ի սպառ և ոչ տեսցես զապականութիւն:

Իսկ ո՞ր իցեն յաւիտենական վաստակքն. մի՞թէ երկրիս հարստութիւնք և համբաւք, քա՛ւ լիցի. այլ առ Ած սէրն և պատուիրանացն պահպանութիւնք, որոց փոխարէն կեցցես իսպառ և ոչ տեսցես զապականութիւն: Ապականութիւն է տանջանքն անհատ. որ անշէջ հրովն այրեն և անմահ որդամբքն գիշատեն զմեղաւորացն զմարմինս. և անմահ ապականութեամբ ապականեն և ոչ սպառեն: Իսկ որ վաստակին աստ յարդարութեան, անհատս և անսպառումն ստասցին և հանապազորդս. այս է իսպառ:

Օրինակ վարուց մերոց ունելով զամ սուրբս և զախոյեանս և զյաղթօղ նահատակս: Եւ եթէ արդիւլ կամի ոք, ազգի ազգի օրինակս գտանէ ՚ի սրբոց ըստ իւրաքանչիւր կարգի. աղքատաց և ճոխից. իշխանաց և ռամկաց. գիտնոց և տգիտաց. արուեստաւորաց և անարուեստից. զօրաւորաց և տկարաց. հիւանդաց և առողջից. տերանց և ծառայից. արանց և կանանց և ամ չափոյ հասակի: Այլ մեղաւորաց գտանին յաճախ օրինակք քաւութեան այնց. և մարթիմք ըստ իւրաքանչիւր վարուց ՚ի նոցանէ օրինակս գտանել. որք յաղթօղքն եղեն սատանայի, նահատակեալ ընդ դէմ նորա: Ա՛հ յանա-

պատահի միայն ; այլ և յաշխարհի · ոչ կուսութեամբ յատուկ , այլ և ամուսնութեամբ · ոչ 'ի քահանայից և եթ , այլ և 'ի զինուորականաց ։ Որք ոչ օրինակք միայն և քաջալերիչք մեզ են , այլ և օգնականք աղօթիւք և բարեխօսութեամբ են մեզ ․

Ո՜վ Թեկղէ և Նիքեանք զբարւոք պատերազմ պատերազմեցայք և զընթացսն կատարեցիք , առկայն մեզ որ դեռ ևս պատերազմիմք՝ խրախ եղբայրս հայցեն ձեռնկալութիւն յԱստուծոյ · և մարտակից լինին ճգնութեան իւրեանց ։ Մանաւանդ թէ մեք զգաստասցուք և զգուշասցուք իւրեամբ և զնոսա 'ի թիկունս գալ հայցեսցուք ։ Որոց անունն մինչև ցայսօր պակուցումն է թշնամեաց · քանզի ահագին վէրս Տր նոցանէ առեալ են ։ Որոց մինչև ցայսօր յիշումն դողացուցանէ զդնոսա , և անզօրս առնէ 'ի պատերազմ որ ընդ դէմ · քանզի և Տէր խնկ նոցա բարեխօսութեամբ ղաղաւինեալն 'ի նոսա զօրաւոր առնէ առ դիւացն մարտս , և քաջայս առ բարեացն հանդէս · վասն որոյ և քարոզն ասէ ,

Որոց աղօթիւք և բարեխօսութեամբ շնորհեսցէ մեզ մարդասէրն Տէր՝ զհաճոյսն իւր և զօգուտն մեր խորհիլ միշտ և առնել ։

Քանզի որք ըստ մարմնոյ խորհին կամ առնեն , թշնամութիւն Աստուծոյ խորհին և առնեն և մեռանին անձամբ · իսկ մեք աղօթիւք սրբոցն արժանասցուք զհոգևորսն խորհիլ միշտ և առնել որ է հաճոյ Աստուծոյ և օգուտ մեզ · մանաւանդ թէ օգուտն մեր է հաճոյ Աստուծոյ ։ Որ ոչ սոսկ միայն օգուտ է մեզ յաղօթս և քաջանուէս առնելով , այլ և անպատում պսակօք անդ զմեզ պսակէ ։ Ո՜վ որքան սոսկ քաջ նահատակացն յերկրաւոր թագաւորացս եղծանելին պարգևին պսակքն , նոյնպէս առ հանդերձելոցն՝ անեղծ և անթառամ և անպատում պսակքն պատրաստեալ են ըստ անսուտ խոստմանցն Աստուծոյ ճշմարտի առ իւր սիրելիսն որք սիրեցինն զնա և սիրեցանն 'ի նմանէ ։ Քանզի զայս յայտ առնէ քարոզն յասելն , Եւ անպատում պսակացն հաղորդս զանձինս զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն Տէր Յիսուս Քրիստոս · որ մեր կեցի և ողորմեսցի ։

Նորին խրատուն՝ սակս Աղօթիցն ։

Տէր զօրութեանց , այսինքն՝ վերին զօրացն · որ կամաւոր մահուամբդ քով 'ի ժամուս յայսմիկ , վասն զի յիններորդ ժամուն աւանդեաց զհոգին Տէրն 'ի խաչին կամաւ եդեալ զանձն ։ * Իշխանութիւն ունիմ ասէ դնել զանձն իմ , և իշխանութիւն ունիմ

առնուլ զնա. և ոչ ոք հանէ զնա յինէն. այլ ես դնեմ զնա անձամբ իմով։ Որ և յայտնի իսկ երևի զկամաւոր մահն, զի յառաջագոյն բարբառեաց անգամ կանխեաց առնել զնա և ել ՚ի ձեռաց նոցա։ Այլ ՚ի գիշերին յորում մատնէր զանձն, կալաւ զաչս նոցա ՚ի չճանաչել զնա։ Այլ ինքն ասաց թէ՝ ես եմ զոր խնդրէքդ, յետս յետս անկեալ զարկեալ զգետնի։ Այլ ՚ի ձեռս առեալ զինքն՝ ասաց թէ վասն լնլոյ զգիրս մարգարէիցն, յանձն առեալ զմահանութիւնն. վասն որոյ և աշակերտացն սասանեալ որ զունկն ծառային եհատ. և մատուցեալ բժշկեաց զունկնն։ Այլ մինչև հասանէր կատարեալ զգուշացուցանէ վասն իւր՝ ոչ եհան զոգին. յաղագս որոյ և ասաց ծարաւի եմ։ Այլ զմատուցեալ քացախն հանդերձ լեղովին՝ առեալ և ասէ, արդ ամ ինչ կատարեալ է. և ապա խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին։

Ո՛չ առ սակաւ սակաւ զօրութիւն լքեալ այնպէս ամ մարդկան, այլ ուժգին ձայն արձակեալ և ասացեալ՝ Հայր ՚ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։ Յորժամ հարիւրապետն և որ ընդ նմա էին՝ զիշխանութիւն մեռանելոյն տեսեալ, խոստովանեցին Աստուծոյ որդի զնա լինել։ Քանզի և ձայնն այն զերկիր շարժեաց, զվարագոյր տաճարին եհերձ, զվէմս պատառեաց, զգերեզմանս եբաց, և զբազումս ՚ի ննջեցելոց սրբոց յարոյց. զի ամենեցուն յայտնի լիցի թէ վասն զմեր մահ սպանանելոյ մեռաւ, և յաղագս զմեր պարտականութիւնս առնելոյ եդ զանձն։ Քանզի և զլուսաւորսն խաւարեցուցանելով յայտ արար թէ արարածոց արարիչ է. և կամաւ և ոչ ակամայ կրէ զոր ինչ կրեացն։ Զի որ զվէմս հերձեաց, ոչ անկարողութեամբ զխաչահանուացն պայթել. և որ ՚ի գերեզմանացն զմեռեալսն վերածեաց, ոչ անկարողութեամբ զբեւեռսն թօթափել և իջանել ՚ի խաչէն։ Այլ և ոչ սատակութիւն ցաւոց արգել մեռուցանել զամենեցուն կենդանատուն. այլ զի ըստ եսայեայ յառաջաձայնութեան *Վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, և պատժեցաւ վասն մերոյ անօրէնութեան։ Ինքն առ է վէրս և պատիժս յանձն էառ կամաւ և ոչ բռնադատեալ ուրուք։

Արդ՝ և մեք ՚ի սոյն ժամու յորում դատապարտութիւն մեր քարձաւ, և մեղքն լուծան, և անէծքն եղծան, և մահ մեռաւ, և մեք կենդանացաք. և դրախտն վերստին բացաւ. և յերկինս ես ճանապարհ մեզ հորդեցաւ։ Գոհացողութի և մաղթանս առ ած մատուցանեմք և ասեմք, Տէր զօրութեանց որ կամաւոր մահուամբդ քո ՚ի ժամուս յայսմիկ կենդանացուցեր զմեզ ՚ի մեռելութէ մեղաց մերոց։ Զի սքանչելագործին զօրութեանց առեր ոչ երբէք զօրէր մեռուցանել մարդկանս ակարութե. այլ զի յերկաւ մահուց կենդանութե մեզ շնորհեսցես՝ կամաւորապէս մեռանիլ յանձն առեր. զի զկնու-

Թեանս մերոյ զմահ և զմեղացն բարձցես 'ի մէնջ, անմեղէք և անմա-
հէք զմերն մեռանելովդ մահ.

Դու բժշկեցեր զմեզ դատապարտութենէ մերոյ 'ի խաչի քում։ Զի 'ի մեղանչական մարմնոյս մերոյ առեալ էր մեր մարմին և բևեռեաց ընդ խաչին։ Դու քանզի անձական դատաստանաւն, իբրև դատակնքաւ մարմինս մեր ունէր զդատապարտութիւն խաչին և բևեռացն. զապականին զոր ունէր առեալ մարմին՝ 'ի նա բևեռեաց, զմերն դատապարտութեն 'ի բաց բարձեալ 'ի մէնջ։ Քանզի որ ոչն արար մեղս՝ մարմինն դատապարտեալ ած մարմնոյ ազատութեն շնորհեացէ. վասն որոյ և ասէ իսկ աղօթիցս բան։

Դու շնորհեցեր ազատութեն ազգի մարդկան 'ի ծառայութենէ ապականութեան յազատութեն փառաց հեղմամբ արեանդ քո սրբոյ։ Զի 'ի ձեռաց աղանդոյ էր ապականութիւն վասն ուտելոյ 'ի փայտէն գիտութեան զպտուղն. և ապականեցան մարդկան ոգիք մեղացն ախտիւք։ Դու մարմնովք ցուցեր մարմնով վաղանգիւք 'ի հող դառնալ և յերկիր ապականել վճարեցան։ Զոր և երկրաւորական ձեռացն բևեռօք հոսեալ արիւնն ջնջեաց զապականութեն յոգւոց և 'ի մարմնոց մարդկան. և ազատութեն յերկուց ախտից շնորհեաց։ Ոչ միայն յայնցանէ ազատեաց, այլ և փառաւոր արար. վասն այնորիկ առաց, շնորհելով ազատութիւն փառաց։ Քանզի ասէն առաքեալ, *Զորս կոչեաց՝ զնոսին և արդարացոյց. և զորս արդարացոյց՝ զնոսին և փառաւոր արար։ Արդ գոհացեալ զպարգևացն քո որ յոյժ ժամու՝ աղաչէ այսպէսի բանիւք։

Ընկալ և այժմ և զաղաչանս մեր և յաջողեա մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք կալ յայսմ աշխարհի։ Որ զայնչափ ասէ սէր առ մարդիկ ցուցեր 'ի ժամուս այս զգեց մեզ եղեալ պարապահապոյց, խոնարհեալց 'ի սոյն ժամու պարգևատուութեանս ընդունել զաղաչանս մեր. և աջողեա մեզ հաստատուն կալ յուղիղ հաւատս, և սիրել և գործել զառաքինութեն։ Զի սիրելն զառաքինութիւն՝ զանձն է սիրել. և որ սիրէ զմեզ՝ ասէ զանձն բառ գրեցելումն, զի մեռանէ զինքն մշտնջենաւոր տանջանացն։ Իսկ որ զառաքինութեն սիրէ՝ սակաւ ինչ աշխատեալ, առս յուսովն զուարճանայ, և անդ յաւիտենական բարեաւն հրճուի ընդ սուրբ հրեշտակն և ընդ արդարսն. քանզի և զայս յաջորդն յայտ առնէ։

Դու յաւիտենական ուրախութեանցն արժանի լիցուք ընդ ամ սուրբս, և ընդ նոսին փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ո՞ր միտք իմանալ կարէ՝ կամ լեզու ասել բաւէ զուրախութիւնն զայն ․ յորժամ սուրբքն փառաւորին անձամբ փառօքն ․ և ինքեանք վասն անձանց և հրեշտակք վասն նոցա փառս տան փրկողին և պատկողին զնոսա միաձայնութեամբ վեր առաքեն ։ Յորժամ ած ընդ նոսա՝ և ինքեանք ընդ ած և ընդ ինքեանց բերկրին ՚ի փառս տան, յապականութէ և յանարգութէ և ՚ի մահուանէ յանապականութիւն փոխեալ և ՚ի պատիւս անպատումս և ՚ի կեանս ․ ուստի մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք ։ Քանզի ոչ միայն այնց տեսութիւն և իւր ինքեան փառաւորութիւն բերկրէ զիւրաքանչիւրսն, այլ և ամ սրբոցն փառազարդութի, զիւրաքանչիւր ոք առանձինն ոչ զիւրսն բերկրէ ։ Զի որպէս ասաց առաքեալ, *փառաւորութեան միոյ անդամոյն՝ բոլոր անդամոցն բերէ զխնդութիւն ։

Պարծեալ և հրեշտակացն փառացն տեսութէ, նոյնպէս որպէս զանձինս բերէ սրբոցն զբերկրութիւն անճառական յայն կեանսն ․ ուր սուրբ երրորդութիւն ամենից ցուցանի թագաւոր և պարգևատու և ուրախացուցիչ ։ Եւ ամենեքեան ՚ի մի ակամբ լուսոյ աղբիւրէն առլցեալք՝ գոհութիւնս մատուցանեն ամենապարգև տէրութեանն ։ Քանզի զայս փափագումն ունել մարթէ աղօթիւքս բան ոչ միայն անդ, այլ մինչդեռ ՚ի մարմինս եմք փառաբանակից լինել սրբոցն ․ այսպէս ասելով, Ընդ նոսին ։ Նոյնքն ընդ սուրբսն՝ փառաւորեսցուք զհայր և զորդի և զսուրբ հոգին ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Բազումողորմ ած և հաստիչ խաղաղութեան՝ հաստատեա՛ զանձինս մեր քով խաղաղութեամբք ․ որով ունիս յիւրաքանչիւր կարգի զամ արարածս քո ։

Վասն զի ողորմութեամբ կրեաց զոր ինչ կրեաց տէրն մեր ․ այսինքն զմարմնանալն և զխաչելն և զմեռանելն ։ Քանզի եաես զմեզ ընդ անիծիւք և ընդ մեղօք և ընդ մահուամբ և ապականութեամբ, և ողորմեցաւ և փրկեաց կամաւոր չարչարանօքն և խաչիւ և մահուամբ ։ Վասն այնորիկ անուն անուանէ բազումողորմ ած ասելով ․ և խաղաղութեան կոչէ ՚ի նոյն միտս հաստատիչ ։ Քանզի ասէ առաքեալ *Արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի ։ Արդ նոյն ողորմութեամբն ասէ և ՚ի մեզ գթասցիս ։

Որով ունիս յիւրաքանչիւր կարգի զամ արարածս քո, և ուղիղ հրամանաւդ մատակարարելով ։ Որպէս զամ արարածս քո ուղիղ հրամանաւդ ՚ի կարգի ունիս և ոչ տաս թոյլ ըստ իւրաքանչիւր սահմանն

անցանել։ Նոյնպէս և զմեզ քո խաղաղութեամբդ հաստատեա՛ անխռովս մնալ յերևելի և յաներևոյթ փորձութեանց. զի մի՛ առ քեզ և մի՛ առ մարդիկ ամբոխեսցուք ինչ. և մի՛ այլոց դրժանք՝ զմեզ ձգեսցեն։

Վասն զի այդ խոկ են կամք քո՝ խաղաղական և հոգևոր սիրով կալ մեզ յայսմ աշխարհիս։ Զի խաղաղութիւն ունիցիմք առ միմեանս և առ հոգևոր. և զայն խաղաղութիւն խոստացար տալ առաքելոցն ասելով, *Զխաղաղութիւն զիմ թողում ձեզ. զխաղաղութիւն զիմ տամ ձեզ։ Նա վասն սիրոյ պատուիրեցեր թէ՝ *Յայսմ ծանիցեն ամենեքեան թէ իմ աշակերտք էք՝ թէ զմիմեանս սիրեցէք։ Արդ տուր մեզ զքո զաշակերտութեանդ ծանօթութիւն զսէրն. զի առանց քո ոչինչ կարեմք առնել։ Նոյնպէս և զխոստացեալ խաղաղութիւնդ ընդ աշակերտաց քոց և մեզ շնորհեա՛։ Զի խաղաղութեամբ և սիրով առ միմեանս կացեալք՝ քո գալստեանդ սպասեսցուք արթնութեամբ. զոր և յայս առնէ յանէն,

Նա սպասել արթուն մտօք յայտնութեան մեծին այ և փրկչին մերոյ յի քի։ Զի և մի՛ աշխարհական հոգւովք թմբրեալք ում քնով՝ անփոյթ արասցուք հոգալ վն ահագին աւուրն յորում դու յայտնիս մեծդ ած և փրկիչ մեր։ Այլ որպէս պատուիրեցեր մեզ արթուն կալ և սպասել քում գալստեանդ, և զնոյն արասցուք. զի ընդ պատրաստական ընդ առաջ քեզ ելցուք։

Որում արժանաւորք եղիցուք համարձակիլ ամպովք ընդ առաջ տեառն յօդս։ Քանզի ի գալստեանն տեառն հրեշտակքն ժողովեն զընտրեալ սուրբսն, և յափշտակեն ամպովքն վերացուցանել յօդս ընդ առաջ տեառն։ Արդ՝ հայցէ աղօթիցս բան՝ զի յընտրելոցն լիցուք և ամպովք ընդ առաջ տեառն վերասցուք։

Զուարթերես կացցուք յաջմէ քումմէ ընդ ամ սուրբս և սիրելիս անուան քոյ։ Զի ի կացուցանողէն որոշին օդիքն և այծիքն. և կան ձախակողմեանքն ամօթով. զի ամ գործք չար զոր գործեալ իցեն՝ կերպանան ի նոսա և յանդիմանեն զնոսա առաջի ահեղ ատենին քո։ Իսկ աջակողմեանքն զուարթերես կան առաջի քո, պարծեցեալ ի փառսն՝ զոր իւրեանց վաստակօքն ստացեալ իցեն։ Արդ՝ հայցէ աղօթիցս բան՝ յայսպիսեաց լինել մեզ ի սրբոց և սիրելեաց քրիստոսի։

Ժառանգեսցուք զպատրաստեալ ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց ուրախութիւնդ։ Վասն զի ի սկզբանէ աշխարհի արդարոցն պատրաստեալ է անպատում բարութիւնքն. զոր յաւիտեանս յաւիտե-

նից վայելելոցն են ընդ քեզ անմահ կենօք. զոր հանապազ աղաչել և խնդրել պարտիմք յՔէն և այնմ ժառանգութեան բաղձալ միշտ. զի հասանել կարասցուք ընդ որբոցն, և ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՀոգին Սուրբ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Քարոզ։

Աղաչեսցուք զԱմենատուր Փրկիչն մեր Քս որ կամաւոր խոնարհութեամբ իւրով զարարածս փրկեաց, և հեղմամբ արեան իւրոյ զթողութիւն շնորհեաց յուսացելոց իւրոց։

Աղաչեսցուք ասէ. այսինքն՝ սրտի մտօք պաղատեսցուք և՚ի խորոց սրտէ զաղօթս առաջի ամենատեառն մատուսցուք. առանց որոյ՝ լեզուի աղաղակ ընդունայն է։ Նա զի Փրկիչ է մեր յերևելեաց և յաներևոյթ Թշնամեաց. այլ և կամաւոր մահուամբն որ ՚ի վերայ խաչին՝ փրկեաց զտիեզերս ՚ի մեղաց և զյաւիտենից կենդանութիւն մեզ պարգևեաց։ Նա սուրբ արեանն հեղմամբ զհաւատով յուսացեալս մեծապէս Թողութեան արժանի արար, զոր միշտ հայցել հրամայէ ամենեցուն բան քարոզիս։ Նա ինքն ՚ի նոյն յորդորել ասէ՝ Ամենակալ տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

Աղօթք։

Զնկեալ առաջի քոյ բարերար և բազումողորմ Աստուած, աղաչեմք Քեզ սրտիւք մերովք. որպէս խոստացար ծառայից քոց և ասացեր թէ, *Ամէն զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն որդւոյ ՚ի հօրէ՝ տացի ձեզ։

Նկատեա ոչ միայն զմարմնոյ խոնարհումն կոչէ զոր երկրպագեմք դիմօք որք առաջի Քոյ անկանիմ, այլ և զհաւատով ՚ի նա անկանիլն և զնա տէր և Աստուած խոստովանիլն. ըստ Դաւթայ՝ *՚Ի քեզ անկայ եւ յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ դու ես Աստուած իմ։ Զոր թէ ըստ մարմնաւոր ծննդեանն և թէ ըստ աւազանին շնորհացն առնուցուք՝ ոչ մեղանչեսցէ։ Նաև յոբ ասէ, *Իբրև զկաթն կթեցեր զիս և իբրև զպանիր մածուցեր յորովայնի մօր իմոյ։

Ընկեա՛լ առաջի քո ասէ. Որպէս թէ ասիցէ, հանդէպ առաջի ամենատեսիդ աչաց քոց անկեալ զմտաց իմոց զհառաչանս. և միշտ առ քեզ պաղատիմ. որ բարերար և բազումողորմ տէրդ ես. որ բարեգործեցեր մեզ 'ի սկզբանէ. և միշտ բարեգործես յամենայնի առատապէս։ Որ և վասն բազում ողորմութեան քո խոստացար ճշմարտապէս՝ պարգևել ծառայից քոց զամ հայցուածս, որք հաւատով յանուն քո խնդրեն։ Ո՜վ 'ի ամ ուրեք հաւատոց պէտք են. և սերտ և պինդ հաւատոց, որ հիմն և հաստատութիւն է ամ բարեպաշտութեան։ Այս հաւատ է 'ի ծովու կենցաղոյս, որ ոչ տայ ընկղմել յալէկոծութեանց սորին. այլ բարւոք նաւել և 'ի նաւահանգիստն ժամանել։ Այս զի ասէ, Ցանուն որդւոյ՝ 'ի հօրէ տացի խնդրողաց ամենայն խնդրուածքն։ Իսկ ոչ եթէ որդի անկարանայ պարգևս տալ ումեք, այն որ ասաց կուրին, *Զինչ կամիս թէ արարից քեզ։ Եւ որդւոյ այրւոյն՝ *Պատասխանի դու քեզ ասեմ արի։ Եւ աշակերտացն, *Զիշխանութիւն զիմ տամ ձեզ։ Եւ այլս բազումս այսպիսիս։ Գ.մէ այսու զհամակամութիւն յայտ առնէ զերից անձնաւորութեանցն։ Նաև մեծացուցանէ զերախտիս որդւոյ 'ի վերայ բնութեանս. զի 'ի ձեռն որդւոյ իջանեն ամենայն պարգևք 'ի հօրէ յարարածս։

Շնորհեա՛ և այժմ հաւատացելոցս 'ի քեզ, և կատարեա՛ 'ի բարի զխնդրուածս մեր. զի 'ի քեզ եմք ապաւինեալ. և քո առատ ողորմութեամբդ մխիթարեա՛ զմեզ 'ի կեանս յայսոսիկ. և առաջնորդեալ հասո՛ յանձառ երկնից արքայութիւնդ 'ի փառաւորութիւն։

Շնորհել ասէ, և ոչ թէ ըստ արժանեաց ինչ պարտիս հատուցանել. զի ամենայնքն ամ պարգևք են և աւելք և ընծայք. զոր շնորհէ տիրաբար ծառայից իւրոց. զի ըստ գործոց ոչ ունիմք համարձակութիւն խնդրել ինչ. այլ միայն 'ի հաւատն ապաւինիմք։ Վասն որոյ և զբան հաւատոյ միայն բերէ առաջի ասելով, Շնորհեա՛ և այժմ հաւատացելոցս 'ի քեզ։ Որպէս թէ ասիցէ, զոր խոստացար պարգևել միշտ հաւատով խնդրողաց՝ և այժմ զնոյն հայցեմք զի շնորհեսցես հաւատացելոցս 'ի քեզ. որք զքեզ ճշմարտապէս որդի խոստովանիմք բնութենակից հօր։

Վասն որոյ աղաչեմք զի զամ խնդրուածս մեր 'ի բարի կատարեսցես. այսինքն՝ զի թէ մեք ագիտաբար խնդրեմք զայն ինչ որ ոչ է բարի, դու տէր ըստ քում մարդասիրութեանդ 'ի բարի կատարեա՛ զամենայնն. զի զայլ որ աղաւէն և յայս օգտակարութեն ոչ ունիմք բաց 'ի քէն տէր։ Վասն որոյ հայցեմք միշտ զի 'ի ձեռն առատ պարգևաց քոց մխիթարեսցես զմեզ հանդէպ յայսմ աշխարհիկ ժամանակաւոր կեանս։ Եւ քոյին առաջնորդութեամբդ ժա-

մնասցուք 'ի քո անճառելի և երկնային Թագաւորութիւնդ ։ Ո՛վ Տէր արժանի լիցուք և յանվախճան կեանսդ զքեզ միշտ փառաբանել ընդ ամենայն սուրբս քո և ընդ երկնային զուարթունս ․ զոր և յա-ջորդս յայս աւուր ,

Ի փառաբանութիւն և 'ի պատիւ ամենասուրբ երրորդու-թեանդ ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Քարոզ ննջեցելոց ։

Վասն հոգւոցն հանգուցելոց աղաչեսցուք զփրկիչն մեր քս զի զնոսա ընդ արդարոն դասեսցէ , և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ ։

Հրամայեաց քարոզս յառաջագոյն աղօթս առնել վասն կենաց ընթացից մարդկան , և վասն վշտացելոց 'ի ցաւս և 'ի հիւանդութիւնս ․ որք դնեն 'ի կենցաղումս աստանօրէն ․ որոց և զքաւութիւն մեղաց խնդրել հրամայեաց , և զհիջումն ողորմութեան յոյս առատապէս յարա-րած ։ Իսկ այժմ մաղթել հրամայէ վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ հաւատով 'ի քս ննջեցին զի զնոսին դասաւորեսցէ 'ի լուսեղէն խորանս ընդ սուրբս իւր ․ և զմեզ կեցուսցէ միշտ ողոր-մութեամբն իւրով ․ որպէս ասէ քարոզիս բան ,

Ամենակալ տէր աստուած մեր կեցո՛ և ողորմեա՛ ։ Կեցո՛ 'ի վտանգէ նեղութեանս , և ողորմեա՛ վշտացելոցս 'ի չարեաց հարուածոց ․ որք հա-ւատով կարդամք առ քեզ տէր աստուած մեր ։

Աղօթք ։

Քրիստոս որդի այ անախտակալ և բարերարութ , գթա՛ 'ի հո-գիս հանգուցելոց մերոց ։ Յիշեա՛ և ո՛յց արա 'ի փա-ռաւոր միւսանգամ գալստեանդ քո ․ դասաւորեա՛ պայծառացեալ ընդ սուրբս քո ․ զի դու ես տէր և արարիչ ամենեցուն , դատաւոր կենդանեաց և մեռելոց ։

«Քրիստոսդ անուն՝ ոչ սոսկ մարդկութեան է անուն և ոչ լոկ աստուածութեան ․ այլ օծեալ թարգմանի , այսինքն աստուած և մարդ ․ վասն զի աստուածութեամբն էօծ զմարդկութիւն ։ Նա և աւետեաց է անուն ․ իբրու թէ՝ քս յոյս քրիստոնէից ․ որով յուսով փառահացաւ բնու-թիւնս կոչել զաստուած հայր ․ զի ժառանգակից եղաք միածնի որդւոյ

նորա ըստ առաքելոյ. Թէպէտ նա բնութբ որդի, իսկ մեք շնորհօք։
Ո՞ր որդի ոչ ասէ անոխակալ և բարեգութ, գթա՛ ՚ի հոգիս հանգուցելոց մերոց։ Զմեծ գթութիւն ո՞չ յիշատակէ և զանոխակալութիւնն, զոր եցոյց առ ազգս մարդկան մարդասէր տէրն։

Զի թէպէտ և յանցեաւ բնութիւս պատուիրանազանցութեամբն ՚ի դրախտին, և մինչեւ գրաւեցաւ ըստ արդարադատ հրամանին, սակայն բարերար և քաղցր տէրն ոչ արար անտես զստեղծուածս անձեռաց իւրոց. այլ գթածաբար զմերս զգեցաւ մարմին կամաւ հօր և հաճութբ սուրբ հոգւոյն։ Ակս որդ ասէ, ո՞չ գթացար ՚ի մեղօք մեռեալքս և կենդանագործեցեր վերստին, և այժմ տէր բարերար գթասցիս և ՚ի հոգիս հանգուցելոցն որք հաւատով յանուն քո ննջեցին. և ողորմեսցիս նոցա ըստ մեծի ողորմութեն քում. որպէս և հեստակայս ցուցանէ բան։

Երեւեա՛ և այց արա ՚ի փառաւոր միւսանգամ գալստեանդ քո։ Փառաւոր ասէ զերկրորդ գալուստն. զի առաջինն խոնարհութբ էր և ծառայական կերպիւ. իսկ զմիւսն՝ հայրական փառօք հանդերձ ձեալէ գալ իւրն տէր և դատաւոր. վասն որոյ ներումն խնդրէ յանցանաց, և այցելութի ՚ի քն ննջեցելոցն։ Իսկ այց առնել՝ ըզ խնամարկելն ասէ և զանուանել կոչելն. զոր և յաջորդս ցուցանէ։

Դասաւորեա՛ պայծառացեալ ընդ սուրբս քո։ Ի յափինքն ընդ աբրահամեանցն և ընդ պետրոսեանց գլխաւորութեանցն դասակարգեա՛ ընտանադարդեալ պայծառակերպութբ։ Զոր օրինակ Թագաւորք երկրի ըստ արժանեաց բաշխեն զպատիւս. և կարգաւորեն զդասս գլխոցն զհարիւրաւորսն և զհազարաւորսն և զայլսն ամ։ Ի յափինն իմն աղաչէ բանս ասելով, դասաւորեա՛ զհոգիս հանգուցելոց մերոց ընդ երեսնաւորսն ընդ վաթսնաւորսն և ընդ հարիւրաւորսն, շնորհելով յառատ բարեաց բարերար կամացդ։ Ոմանց զերկուց քաղաքաց ունել զիշխանութի, ոմանց զհնգից, և ոմանց զտասանց. որպէս բարերար և արարչական կամքդ դատեսցեն. զոր և ասէ բանս։

Զի դու ես տէր և արարիչ, դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Որոյ այլ ոք ոչ գոյ արարիչ բաց ՚ի քէն՝ այսպէս և ոչ այլ դատաւոր։ Զայլ ոք ոչ գիտեմք, որ կարող է կորուսանել և կեցուցանել, և ըստ իւրաքանչիւր գործոց հատուցանել ամենայնի, այլ միայն զմարդասէր տէրդ. որում չէք այլ ինչ փոխարէն հատուցանել, բայց միայն զգոհութիւն և զփառս։ Յոր և զգօթիւս բան աւարտէ ասելով,

Այս քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ. այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Յորդորակ։

Փառաւորեսցուք և մեք զբարերար տէրն․ զանոխակալն և զանյիշաչարն․ զգթածն և զմարդասէրն․ զերկայնամիտն և զբազումողորմն․ զներօղն և զքաւիչն․ Որ ոչ ըստ մեղաց մերոց առնէ և ոչ ըստ անօրէնութեանց հատուցանէ․ այլ՝ ներելով միշտ և երկայնմտութեամբ կոչէ յապաշխարութիւն։ Նա և յանձնէ ևս տայ օրինակ ամենեցուն յառաջադէմ լինել հանապազ ՚ի գործս բարիս։ *Ուսարուք յինէն ասելով զի հեզ եմ և խոնարհ և անյիշաչար առ ամենեսեան։

Վասն որոյ աղաչեմ, պատկառեսցուք յօրինակէն․ ամաչեսցուք ՚ի դաղափարէն․ զարթիցուք ՚ի թմրութենէ ծանրութեան չարին․ սթափեսցուք յարբեցութենէ որ ոչ ՚ի գինւոյ․ փախիցուք յօձէն կամակարէ․ ատեսցուք զչարն․ ատեսցուք զմեղս․ դարձեսցուք ՚ի սիրոյ աշխարհիս․ փախիցուք ՚ի բելիարայ․ դիմեսցուք առ ա՟ծ սիրով և յօժարութեամբ․ փառաւորեսցուք զնա ՚ի գործս բարիս․ զի *Զփառաւորիչս իմ ասէ փառաւոր արարից․ և որ սիրէն զիս՝ սիրեսցի ՚ի հօրէ իմմէ։ Նա և զիւրն ևս խոստանայ զսէր և զերևումն որ ՚ի վեր է քան զարժան և զչափ մեր։ Յաղագս որոյ ասէ մարգարէն խաւարելոցն յայսպիսի ամենարժեայ տիրական սիրոյ և հարելոցն ՚ի սէր աշխարհիս․ *Որդիք մարդկան մինչև յե՞րբ էք խստասիրտք․ ընդէ՞ր սիրէք զնանրութիւն և խնդրէք զստութիւն։

Վասն զի ա՟մ ոք իւրում ուռկանի զոհէ․ և զիւրն ախտ աստուածացուցանէ, ամբոխելով իւրաքանչիւր ոք ՚ի կամս մտաց իւրոց։ Ոմն զփառաց փութայ լնուլ զփափագ․ ոմն զագահութիւն և զընչասիրութիւն․ ոմն զարբեցութիւն և զպոռնկութիւն․ ոմն զվաշխոյ և զտոկոսեաց․ ոմն զզրկանաց և զկաշառակերութիւն․ ոմն խաբէ և գողանայ։ Բայց ոմն ցանկայ և ոչ հասանէ․ այլ ոմն ամբոխի յորժամ ՚ի կամացն վրիպի․ միւսն կրճտէ զատամունս և մոլեգնի․ այլ ոմն հառաչէ և յոգւոց հանէ․ հաշի և մաշի և ՚ի նեղութենէն ածգունի․ և եղուկ զինքն ասէ և վայ անձին կարդայ։ Իսկ յորժամ զայլս ոմանս բարւոյ իմիք դիպեալ տեսանէ, մախայ և ասէ․ և ոխերիմ մտօք միշտ հայի․ զանձն միայն համարի զրկեալ ՚ի բարեաց և զամենեսեան ՚ի փառս վայելեալ։ Իսկ թէ նեղութեան իմիք պատահէ, կարճամտէ տխրի և նեղասրտի․ և ո՞չ թողեալ ՚ի ձեռաց զինքն կարդայ։

Բայց վայ է ինձ և եղուկ եմ ես․ զի անձամբ զանձին կիրս գրեցի․ և անձամբ զանձն իմ դատապարտեցի․ և զոր բանիւ զայլս

պախարակեսցի , գործով զնոյն եւ կատարեսցի ։ և այժմ 'ի գլուխ արձա-
նացուցանելով 'ի կորուստ և 'ի դատապարտութիւն անձին ։ Նմին ա-
ղաչեմ զամենեսեան և ժտելով հայցեմ յամենեցունց , դարձջիք առ-
աէր սրտի մտօք ։ և խնդրեսջիք զողորմութիւն 'ի բարերարէ տեառնէ
մերմէ 'ի դէպ ժամանակի ։

Զի՛ պարտ ումէք յուսահատ լինել վասն բազմութեան մեղաց կամ հեղգանալ յապաշխարութենէ ։ զի քաղցր և ողորմած է տէր ա̅ծ մեր ։ Միայն մինչդեռ ժամանակս 'ի ձեռս է՝ դիմեսցուք առ նա զղջմամբ և արտասուօք , խոստովանելով զմեղս և աղաչելով զերես ։ նորա հանապազ ։ Զի * Յորժամ հեծեծեսցես՝ յայնժամ կեցցես ասէ մարգարէն ։ Եւ առաքեալն ասէ , * Այս է ժամանակ ընդունելի ։ այս է օր փրկութեան ։ Մինչդեռ ժամանակս 'ի ձեռս է և 'ի շնորհաց աթոռն է թագաւորն և բաշխէ խոստովանելոց զպէտս որք խնդրեն հաւատով և յուսով ։ Զի յետ աստուստ վճարելոյ՝ միայն դատաստան է և քննութիւն ճշդիւ՝ և հատուցումն գործոց ։ և որք աստի անզղջ և անապաշխար գնան առանց խոստովանութեան , նոցա ոչ է թողութիւն թէ և բազում անգամ լան և հառաչեն ։ Եւ յայտ 'ի յիմար կուսանացն է և 'ի մեծատանն կրից ։ զի խնդրեցին և ոչ առին ։ Վասն որոյ փութասցուք յաջակողմեան դասուն հանդերձեալ , և ընդ նոսին գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին ։ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից երեկոյի ժամուն , որ կատարի 'ի դէմս որդւոյն ա̅յ ։ Եւ ասի՝ Եւ առ ա̅ծ կարդասցի , և այլն որ 'ի կարգին ։

Երանելւոյն Խոսրովու՝ վասն երեկոյին ժամուն ։

Վասն քան զերեկոյին պաշտամանն զքարոզս և զաղօթս մեկնել՝ կարեւոր համարիմ զոր ասելոց եմ ։ Լոյս յոյս կոր-եալ՝ և զօրութիւն որ 'ի նմանէ և խնամատարութեամբն 'ի գործ կամ 'ի ձեռնարուեստս կամ 'ի զբօսանս ինչ զօրն կատարեալ , 'ի նմանէ կերակրեալ և 'ի նմանէ արբեալ և նովիմբ պահպանեալ , զիա՞րդ է զի առ նորա փառաբանութիւն ։ պղերգանան բազումք , և ոչ գային երկրպագանել և փառս տալ բարերարութեանն ն̅ր ։ 'Ի մարդոյ սակա-

ինչ երախտիս գտեալ՝ եթէ ոչ յոլով շնորհակալութիւն հատուցա-նեմք, ամաչելի գտանիմք. և զպարգևատուն ցասուցանեմք. և զառա-ջեկայն արգելումք զառ 'ի նմանէ բարերարութիւնս. Որպա ա͞մծ որ-քան բարկանայցէ 'ի վերայ այնոցիկ՝ որ 'ի նորա բարիսն վայելեսցեն և անշնորհակալ լինիցին.

Մանաւանդ զի և բազում և զանազան մեղօք զպարգևատուն ցասուցանեմք. և չար ընդ բարւոյ հատուցանեմք. զիմարդ ոչ փու-թասցեմք հաշտեցուցանել զնա նախ քան զգիշերին 'ի վերայ հասա-նելն. Եթէ ընդ ընկերին բարկութեան հրաման տայ յառաքելոյն չտալ արեգականն մտանել, քանի՞ն է հաշտ առնել զա͞ծ՝ փութալ նախ քան 'ի բաց գնալ նորա 'ի լուսոյ. Այլ կամ վասն է՞ր իսկ եղաք բանաւորք և մտաւորք և զարդարեալս ա͞յ ծառայեցուցանեմք. մի թէ զի ուտիցեմք և ըմպիցեմք և ցանկութեամբք մարմնոյ վարիցիմք. Այլ վասն այսորիկ զիմա՞րդ առաւել պատուեցիմք քան զանասունս. զի այս և նոցա ևս է. Այլ ապաքէն զի զա͞ծ ճանաչիցեմք և նմա ծառայիցեմք և նորա փառաբանիչք լինիցիմք, վ͞ս այնորիկ ա͞մի արարեմք.

Երկինք երկիր՝ ծով և ա͞մ որ 'ի նոսա՝ վասն մարդկան եղեն և մարդկան պիտոյից վասն. և մարդս՝ ա͞յ վ͞ս ամենեցուն պարապական. Այլ չառնէ ինչ փոյթ՝ սակաւ մասն յաւուրն 'ի նորա անցուցանել ծառայութիւն. և զիմարդ ակն ունիմք զառաւել վայելել և զանախեն առնուլ. Ո՞նցաւ օրն զքև խաղաղութեա͞. կերակր. արբեր. վառա-կեցեր. 'ի հանգիստ գիշերոյն մերձեցար. Յայդորիկ ամենեքեան ո՞չ ապաքէն 'ի խնամոց 'ի գթութեանցն ա͞յ պարգևեցան քեզ.

Որդ՝ էկ 'ի միտս քո ով մարդ. և առ այն յորժէ զա͞մ բարիսն քո գտանես՝ ժամանեա՛ հանապազ. մանաւանդ յիրիկնան աւուրն և 'ի կատարածի գոհացիր զպարգևատուէն. Եթէ յանցեար ինչ՝ նմա խոստովան լե՛ր. առաջի անկի՛ր. աղերսեա՛. հաշտ արա ընդ քեզ. և մի՛ տար գիտել թշնամւոյն թէ 'ի խռովութե͞ն է ընդ քեզ պահապանն քո. Զի մի՛ յարձակիցի 'ի վերայ քո համարձակեալ. իբրև թէ թողեալ իցես 'ի ձեռացն ա͞յ. Այլ կամ թէ ո՞չ զբազումս 'ի քուն կամ յար-թուն սպան իսկ. և զքեզ արասցէ նոյնպէս. Շնորհակալ լե՛ր զի պահեցար. և աղաչեա՛ զի յառաջիկայսն պահիցիս.

Զանքուն ակն 'ի պահպանութի͞ն հայցեա՛, և անհոգութե͞ ննջեցես. զամենայն օր այն վերակացու արա, և համարձակ և աներկիւղ իցես 'ի նստիլ 'ի տան 'ի գնալ 'ի ճանապարհի, 'ի վաստակ և 'ի հանգստեան. Զբարձրեալն արա՛ ապաւէն, և ոչ երկիցես յերկիւղէ գիշերի. և ոչ 'ի նետէ որ թռչի 'ի տուէ. Զարքայական այն 'ի ձեռքն օգ-նական առցես, և զա͞մ զոր ինչ առնիցես յաջողեսցի քեզ. և ընդ-ամենայնի գոհացի՛ր զա͞յ. Չայն սակս և հայրքն մեր կարգեցին յա-

առաւօտս եւ յերեկոյս ժողովիլ, եւ 'ի միասին միաբան աղօթս եւ զգո-
հութեամբ առ Ած մատուցանել, միմեանց օգնական լինել եւ նախանձա-
մատոյց առ Ած. Ո՛վ եղբարք զօրաւորք լերուք, թէ եւ յանձանց
անհամարձակք եւ տկարք իցեմք։

Երանելւոյն Յովհաննու Օձնեցւոյ։

Իսկ յերեկոյին միայնութեան աղօթելն՝ գոհութիւն է. վասն
զի տիւն կատարելով ժամօքն լցեալ ըստ ժամուց, նաեւ
պատճառիցն հասեալ 'ի խոնարհ լուսոյն մեծի, աւելի փոյթ ունին 'ի
լռութիւն որովայնին յաղագս պահպանութեան գիշերոյն։ Վասն որոյ
զխափան գիշերոյն զմտաւ ածեալ աղօթէ եկեղեցի ըստ մարգարէին
ասելով, * Ես առ Ած կարդացի եւ լուաւ ինձ։ Ի մի ժամանակի
ասէ կարդացի՝ եւ յերեկոյին լուաւ ինձ. յերեկոյս՝ յայսմ աշխարհէ,
զի կարճեալ է օրս. 'ի վաղորդեան՝ 'ի յարութեանն. 'ի հասարակ
աւուրս՝ յորժամ դատաստանն դնի անստուեր լուսով երրորդու-
թեանն, եւ սասանեսցի տարրն յանցաւորաց։ Որոյ զօրինակն առա
կարգեցին աղօթք 'ի դէպ 'ի սկիզբն աւուրն, եւ ճաշու պատարագին
'ի հասարակն երթայ երբ օրինօք լինի. եւ 'ի կատարմանն հայցել բա-
րիս, եւ ապա գոհանալ զանցեալսն։ Իսկ մերոցս մտաց կերակուր՝
լռութիւնն է իմանալի առաքինութեան զոր կատարեմք աղօթիւք 'ի
սկսման աւուր, 'ի միջօրէի, եւ ընդ երեկոյս. յերիս հատուածս կենաց
մերոց ըստ շրջաբերութեան ժամանակաց։

Ուստի համառօտ սկսմանս՝ եւ ութսներորդ հինգերորդ սաղ-
մոսն կանոնեալ է խորհրդաբար. Խոնարհեցո Տր զունկն քո եւ լուր։
Որդք կնոջն յանցաւորի ծնունդ՝ հիւանդ գոլով բնութիւս 'ի թու-
նաւոր օձին խածմանէ, աղօթեալ աղերսեմք զբնութեանս մեր կարօ-
տիջն։ Յաւուր նեղութեան կարդացի. եւ մեծ եղեւ ողորմութիւն քո.
անօրէնք յարեան 'ի վերայ իմ Ած. եւ կեցո զորդի աղախնոյ քոյ
զեւայի. եւ արա առ մեզ նշան բարի զդարձման նշանի քոյ. զոր տեսցեն
ատելին չար եւ պատկառեսցեն 'ի զօրութենէն անպարտելւոյ, զամօթն
յաւիտենից զգեցցի. Իսկ եւ օգնեալ 'ի քէն տէր մխիթարեցայց
յաւիտեան։

Իսկ ճլթ սաղմոսն 'ի դէմս նախահօրն աղօթէ. Ապրեցո զիս
տէր. եւ զգաստացուցմ վտանգից աղբերաց յիշատակ։ Իսկ ճխ սաղմոսն.
Տէր կարդացի առ քեզ. եւ հայցէ պատարագ երեկոյի զհամբարձումն
ձեռացն լինել, եւ խունկ ընդունելի զաղօթսն։ Յիշել զհամբառա-

ինչ երախտիս գտեալ՝ եթէ ոչ յոլով շնորհակալութիւն հատուցա-նեմք, անօրդի գտանիմք. և զպարգևատուն ցասուցանեմք. և զառա-ջիկայսն արգելումք զառ 'ի նմանէ բարերարութիւն։ Ապա տէր որ-քան բարկանայցէ 'ի վերայ այնոցիկ՝ որ 'ի նորա բարիսն վայելեցին և անշնորհակալ լինիցին.

Մանաւանդ զի և բազում և զանազան մեղօք զպարգևատուն ցասուցանեմք. և չար ընդ բարւոյ հատուցանեմք. զի մինչ ոչ փու-թայցեմք հաշտեցուցանել զնա նախ քան զգիշերին 'ի վերայ հասա-նիլն։ Եթէ ընդ ընկերին բարկութեան հրաման առաք յառաքելոյն չտալ արեգականն մտանել, քանզի ոճ է հաշտ առնել զտէր՝ փութալ նախ քան 'ի բաց գնալ նորա 'ի լուսոյ։ Եւ կամ վասն էր իսկ եղաք բանաւորք և մտաւորք և զարդարածս տէր ծառայեցուցանեմք. մի թէ զի ուտիցեմք և ըմպիցեմք և ցանկութեամբք մարմնոյ վարիցեմք։ Եւ վասն այսորիկ զինչ աւելի պատուեցաք քան զանասունս. զի այս և նոցա ևս է։ Այլ ապաքէն զի զտէր ճանաչիցեմք և նմա ծա-ռայեսցեմք և նորա փառաբանիչք լինիցիմք, վն այնորիկ տէր արարեալ։

Եկեսցուք երկիր՝ ծով և տէր որ 'ի նոսա՝ վասն մարդկան եղեն և մարդկան պիտոյից վասն. և մարդս՝ տէր վն անձնեցուն պաշտօնէին։ Եւ յառնէ ինչ փոյթ՝ սակաւ մտան յաւուրն 'ի նորա անցուցանել ծառայութիւն. և զինչ տէր ունիմք զաւուրս վայելել և զամենայն առնուլ։ Մնցա օրն գքեւ խաղաղութեա. կերար. արբեր. վաստա-կեցեր. 'ի հանգիստ գիշերոյն մերձեցար։ Արդ երբեք անձնեքեան ոչ ապաքէն 'ի խնամոց 'ի գթութեանցն տէր պարգևեցան քեզ։

Արդ՝ եկ 'ի միտս քո ով մարդ. և առ այն յորժէ զտէր բարիսն քո գտանես՝ ժամանեա հանապազ. մանաւանդ յերկրորդն աւուրն և 'ի կատարածի գոհացիր զպարգևատուէն։ Եթէ յանցեալ ինչ՝ նմա խոստովան լեր. առաջի անկիր. աղերսեա. հայցեա արա ընդ քեզ. և մի՛ առր գիտել թշնամւոյն թէ 'ի խռովութեան է ընդ քեզ պաշտպանն քո։ Զի մի յարձակեսցի 'ի վերայ քո համարձակեալ. իբրև թէ թողեալ իցես 'ի ձեռացն տէր։ Եւ կամ թէ ոչ զբաղեալս 'ի քուն կամ յար-թուն սպան իսկ. և զքեզ արասցէ նոյնպէս։ Շնորհակալ լեր զի պահեցար. և աղաչեա զի յառաջիկայսն պահիցիս։

Զանքուն ակն 'ի պահպանութեն հայցեա, և անհոգութեամբ ննջիցես. զամենազօր աջն վերակացու արա, և համարձակ և աներկիւղ իցես 'ի նստիլ 'ի սան 'ի գնալ 'ի ճանապարհի, 'ի վտանգս և 'ի հանգստեան. Զբարձրեալն արա ապաւէն, և ոչ երկիցես յերկիւղէ գիշերի. և ոչ 'ի նետէ որ թռչի 'ի տուէ։ Զարարչական աջն 'ի ձեռն օգ-նական առցես, և զտէր զոր ինչ առնիցես յաջողեսցի քեզ. և ընդ ամենայնի գոհացիր զտէ։ Զայն սակս և հայրքն մեր կարգեցին յա-

առաւօտս եւ յերեկոյս ժողովելոյ, եւ ՚ի միասին միաբան աղօթս եւ զգած հութիս առ ա՜ծ մատուցանել, միանգամայն օգնական լինել եւ նպաստամատոյց առ ա՜ծ։ Ո՜վ իմ եղբարք զօրաւորք լիցուք, թէ եւ յանձանց անհամբերձակք եւ տկարք իցեմք։

Երանելւոյն Յովհաննու Օձնեցւոյ։

Իսկ յերեկոյին միայնութեան աղօթելն՝ գոհութիւն է. վասն զի տիւն կատարելով ժամօքն լցեալ ըստ ժամուց, նաեւ պաշտօնից հասեալ ՚ի խաւարն լուսոյն մեծի, ուսեալ փոյթ ունին ՚ի լռութիւն որովայնին յաղագս պակասութեան գիշերոյն։ Վասն որոյ զխափան գիշերոյն զմտաւ ածեալ աղօթէ եկեղեցի ըստ մարգարէին ասելով, * Ես առ ա՜ծ կարդացի եւ լուաւ ինձ։ ՚Ի մի ժամանակի ասէ կարդացի՝ եւ յերեւելին լուաւ ինձ. յերեկոյս՝ յայսմ աշխարհի, զի կարճեալ է օրս. ՚ի վաղորդեան՝ ՚ի յարութեանն. ՚ի հասարակ աւուրն՝ յորժամ դատաստանն գնի անաւուեր լուսով երրորդութեանն, եւ սաստկանայ այսն յանցաւորաց։ Ո՜րոց զօրինակն պատ կարգեցին աղօթք ՚ի դէպ ՚ի սկիզբն աւուրն, եւ ճաշուք պատարագին ՚ի հասարակն երթայ երբ օրինօք լինի. եւ ՚ի կատարմանն հայցել բարիս, եւ ապա գոհանալ զանցելոյն։ Իսկ մերոյս մտաց կերակուր՝ լռութիւնն է իմանալի առաքինութեն զոր կատարեմք աղօթիւք ՚ի սկսման աւուր, ՚ի միջօրէի, եւ ընդ երեկոյս. յերիս հատուածս կենաց մերոց ըստ շրջաբերութեան ժամանակաց։

Ունի համառօտ սկսմանս՝ եւ ութներորդ հինգերորդ սաղմոսն կանոնեալ է խորհրդաբար. խոնարհեցո տր զունկն քո եւ լուր։ Որ՜ կնոջն յանցաւորի ծնունդ՝ հիւանդ գոլով բնութիւս ՚ի թունաւոր օձին խածմանէ, աղօթեալ աղերսեմք զբնութեանս մեր կազմչյն։ Յաւուր նեղութեան կարդացի. եւ մեծ եղե ողորմութի քո. անօրէնք յարեան ՚ի վերայ իմ դեք. եւ կեցո զորդի աղախնոյ քո զնայի. եւ արա առ մեզ նշան բարի զդարձին նշանի քո. զոր ատեցե ատելին չար եւ պատկառեալ ՚ի զօրութենէն անպարտելւոյ, զամօթն յաւիտենից զգեցցի. իսկ ես օգնեալ ՚ի քէն առ մխիթարեցայց յաւիտեան։

Իսկ ձ՜թ սաղմոսն ՚ի դէմս նախահօրն աղօթէ. Աղբերցի զիս ակր. եւ զբազում վասնզից արարեալ յեչատակ։ Ես ձ՜ի սաղմոսն. Տէր կարդացի առ քեզ. եւ հայցէ պատարագ երեկոյի զհամբարձումն ձեռացն լինել, եւ խուն ընդունելի զաղօթսն։ Յիշել զհամբառ-

նալ ձեռացն տեառն և 'ի հօրէ խնդրել զԹողութի՛ն խաչահանողացն զոր պարտիմք առնել և մեք ։ 'Ի դնել պահապան բերանոյ և դուռն ամուր շրթանց , և ոչ խոտորել սրտիւ 'ի բանս չարս ։

Այս արդ Տ՛էրն սաղմոսն . Զայնիւ խմբել եմ առ ամէր կարդացի . և հեղում առաջի տեառն զաղօթս 'ի նուաղել հոգւոյն պարգևաց . յերևելի և յաներևոյթ թշնամեաց կեցի . հան 'ի բանտէ զանձն իմ , զհոգիս 'ի չարաց . և սպասել արդարոցն հատուցման ։ Սրբիւք սաղմոսիւք հայցէ եկեղեցի յերից մտածութեանցն զփրկելն ։

Յաղագս օրհնութեան երգոցն ։

Օրհնեալ ես տէր բնակեալդ 'ի բարձունս . և օրհնեալ են փառք մեծութեան քո . որ հաստատեցեր զլուսաւորս 'ի բարձունս . յերկնից լոյս ծագեցեր ընդ ամ՛ տիեզերս ։

Ամենք յովհաննու մկրտչի տանէ ասացեալ զաղօթս և յայտ առնեն . և այլք ոմանք ասեն թէ ոչ է նորա , և Տ՛շմարիտ ասեն . զի ոչ ունի ղիմմնութի՛ ։ Բ.Ա.Լ թէ յովհաննու ձեռագրականութեան է որպ՝ և այլ աղօթքն և քարոզքն , և թէ այլ ումեք , չէ՛ յայտ ։ Այս քան այսպիսիկ չէ՛ պարտ 'ի տարակոյս անկանել . այլ մեք զանուանութի՛ բանիս առաջի արկեալ քննեսցուք ։

Օրհնեալ տէր բնակեալդ 'ի բարձունս ։ Եւ սուրբ երրորդութիւնն է բանք մաղթանաց և յօրհնութենէ առնէ զսկիզբն . զի օրինակ 'ի տեառնէ ունիմք 'ի վերայ մեծամեծ բարեաց գոհանալ զնմ՛ . որպ՝ յորժամ ասէր , *գոհանամ զքեն հայր ։ Եւ առաքելոյն պատուիրէ , *գոհացօղք լերուք զնմ՛ և զհօրէ նովաւ ։ Բ.Ա.Լ Ինչ ոչ ունի բնութիս արարածոց մատուցանել նմ՛ . այլ միայն զօրհնութիւն և զգոհութի՛ և զփառս . որպէս ասէ ,

Օրհնեալ տէր բնակեալդ 'ի բարձունս ։ Զօրհնեալն քննեալ եմք յայլում վայրի զի յայտնեալ է . իսկ բնակեալ 'ի բարձունս ասէ , զի. զմեզ. 'ի յերկրայնոցս 'ի բաց առալեալ առ ամ՛ վերացուցէ 'ի ժամ աղօթիցն . որպ՝ այն զի ասէ , *հայր մեր որ յերկինսդ ես ։ Զի ոչ եթէ միայն յերկինս փակէ զնմ՛ , զի յամ՛ տեղիս է տէրութիւն նորա . այլ որպ՝ ասացաւ , զմեր միտս կամի ամբառնալ առ նմ՛ աղօթիւքս ։

Եւ օրհնեալ են փառք մեծութեան քո ։ *Մեծ է տէր մեր և մեծ է զօրութիւն նորա ըստ մարգարէին ։ Եւ փառք մեծութեան բարերարութիւնն է և նախախնամութիւնն . որ 'ի ձեռն զօրութեան

խորոց ներգործի պէտնչելապէս 'ի մերաւութենէ խորհն առ պտղաբերս խաղ · զոր օրհնէ աղօթիցս քան զսա թելադրութեան մարդկայնն զոր յառաջագոյն նախամայնեալ ասէր ; * Օրհնեալ են փառք մն 'ի անլուծելի խորհն ։ Այլ այսու՝ հրեշտակականացն նմանիմք զատուց , որք միշտ յօրհնութիւն հանգստեան կատարեալ են ։

Որ արարեր զլուսաւորս 'ի քարոզմունս ։ Ո հրեշտակական զաւսակարգութիւն հրամանով բնութե արարչագործեալ , և լուսեղէն կազմեալ , որք երկրորդ լոյսք յարարչականն լուսոյ գոյացան , 'ի պէտս իմանալի աշխարհին առ կայացեալք ։

Երկնից լոյս ծագեցեր ընդ մեր մտեզերս ։ Ո երից աւուրցն սփիռ և տարած լոյսն ասէ · որ նախ քան զգոյանալ լուսաւորացդ տարածեցաւ 'ի վերայ երկրի ընդ առաւօտս , և ընդ երեկս 'ի տեղի իւր հաւաքէր ըստ հրամանի արարչին ։

Արարեր զարեգակն լուսաւոր առաւօտեան , զլուսին և զաստեղս լուսատու գիշերոյ և զլոյս ճրագի ։ Որպէս արարիչ և մարդասէր՝ անմնայնի խնամարկեալ · ոչ միայն զաւուն մեծագոյն լուսովն արեգական զարդարեալ առ 'ի զբօսանս մարդկան և 'ի պէտս գործոյ , այլ և զգիշեր լուսնիւ և աստեղօք պայծառացուցեալ · զի և յայնմ ևս վայելեսցեն մարդիկ · և ծանիցեն զարարիչն մեծապանծ զօրութիւնն ։ Այլ զի 'ի յորդս և 'ի բնակութիւն լուսինն և աստեղք ոչ բաւականապէս ներգործեն լուսովն իւրեանց որպէս զարեգակն , և զայն ևս ոչ արար անտես մարդկանն աէր ։ Այլ և զլոյս ճրագի պարգևեաց 'ի պէտս այնորիկ , որով բազում լինի արդիւնաւորութիւն յերկրաւորսն և 'ի վաստակաւորսն ։ Այլ որպէս զգալի լուսով զզգայարանս զուարճացոյց արարիչն մեր , այսպէս և 'ի ձեռն բանական լուսոյ զիմանալի հոգիս մեր պայծառապէս զարդարեաց 'ի գովեստ փառաց իւրոց ։

Դու ես լոյս գովելի , սուրբ և տաճարին լոյս ։ Ո է լոյսք մեր ասէ 'ի քէն են էացեալք · և դու միայն ես անեղ և արարչական լոյս · որ զմեզ կատարեալս քան պայծառ ակնարկես ։ Դու գովելի ասէ , փառն զի խաւար զնա ոչ փոխանակէ · և ընդ ստուերս երբէք ոչ անկանի ։ Նաև սուրբ ասէ , զի նա միայն է սուրբ և ազատ 'ի սխալանաց , որ ոչ երբէք ընդ կարեօք անկանի , կամ ընդ հնազանդութեամբ նուաճի ։

Ո է թէ հրեշտակականն լոյս որ երկրորդք կոչին յետ տաճարին լուսոյն՝ ընդ սխալանօք անկան ոմանք 'ի նոցանէ և ընդ մեղօք գրաւեցան թէպէտ և դժուարաշարժք էին 'ի չարիս · և սկզբնահարք եղեն մեղաց , գործիչք չարեաց և մեղ ատանդիչք՝ որպէս սատանայ որ 'ի

արբեցոյց։ Իսկ մարդկայինս բնութիւն դիւրամբ և շուտասասաղապ, երրորդասնեալ և հեշտապատիր գոլով, մինչ ընդ մեղօք անկանի բաց զանազան ուրկածից չարին։ Իսկ աստուածականն լոյս միայն է սուրբ յամենայնէ և գովելի և աստուածին լոյս. որպէս ասէ, * Որ զԱծ յամե լինս առաստապէս. և նախանձանաց որպէս և կրակ։ Եւ աստուածին լոյս ասէ, զի սկիզբն և կատարած ամենայնի Ած է, որ ամենեցուն զմի-
նին տայ և զշարունս գոհ շնորհէ։

Նքէն փախչի խաւարն։ Զի հալածիչ է լուսոյ և հալածիչ խաւարի որպէս զանէր և զարարիչ, որ էջսէ հզօրեղապէս ամենայնի։ Զի թէ զգալի և եղական լուսոյս այսոքիկ շնորհեալ է զօրութիւն փախստեան առնել և հալածել զընդդիմակն իւր խաւար. ապա որչափ ևս առաւել ինքն որ անեղ բնութիւն է աստուածական և իմանալի լոյսն՝ սաստկապէս ՚ի բաց հալածէ զամ ընդդիմակ զօրութիւն խաւարի. և
լուսով գիտութեան զուարճացուցանէ զամենեսեան։

Եւ զլոյս քո կենդանի տէր ծագեա՛ ՚ի սիրտս մեր։ Զի այսու միայն չեմք բաւական առ ՚ի կեալ, եթէ ոչ՝ զխաւար մեղաց և զանգիտութեան՝ ողորմութբ և գթութբ ՚ի մէնջ ՚ի բաց հալածես. այլ զկենդանիդ տէր աղաչեմք զի և զկենդանի և զկենդանարար լոյս քո ծագեսցես ՚ի սիրտս մեր որ է բանական միտս. զի զգալի սորին լուսոյ ազդումն ոչ պիտանանայ։ Եւ կենդանի լոյս ասէ ՚ի կենդանի տեառնէն ծագեալ. զի Ած տէրութիւն անցանէ և նորայն միայն է յաւիտենական. բաց այնմ, * Աստուած կայ և մնայ յաւիտեան։

Եւ Ած լոյս փոփոխի և այլայլումն կրէ և զնմանութիւն մեռելութեան ընդունի յինքեան. իսկ նորայն լոյս միայն է անշիջում և անփոփոխելի բնութիւն, կենդանի և կենդանարար. որ ամենեցուն զանմահութիւն պարգևէ։ Զոր և մաղթէ բան աղօթիցս՝ զառհաւատչեայ յաւիտենական կենդանութեանն տեառն ծագել ՚ի սիրտս մեր. և մինչդեռ եմք ՚ի մարմնի՝ լուսաւորել զաչն ոգւոց մերոց. որով և զյաւիտենական կենդանութիւն ժառանգեսցուք յերկրին կենդանեաց։ Եւ այսմ մեծածիր և անճառաս պարգևաց արժանաւոր և փոխարէն այլ զինչ է հատուցանել ՚ի մէնջ, եթէ ոչ՝ զոր հետակայս ցուցանէ բան յաւարտման աղօթիցս ասելով այսպէս,

Եւ մեք միաբան ասասցուք օրհնեա՛լ է անուն սուրբ փառաց քոց։ Եւ քեզ երգեմք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Օրհնութիւն կերակրման։

Լոյս զուարթ սուրբ․ փառաց անմահի հօր․ երկնաւորի սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս։

Նախ քան զանսուտութիւն բանիւ պատուիրած վարկանիմ զզգեստագական բերել յառաջ զբան․ և առաքինութիւն ազգիս յաւելուլ, զի յանփոյթութենէ և ՚ի բարձի թողլ առնելոյ զերեթէ միշտ մոլար և ՚ի խաւարի ընթանամք որպէս և զառաջինկայս է տեսանել, զի զբան օրհնութեանց որ ՚ի սրբոցն կարգեալ է յամ մուտս կերակրոյ երգել ամենք յորժամ տօնախմբեն՝ ձայնիւ երգեն, և առանց ձայնի բնաւ ոչ յիշեն և այնքան մոռացօնք եղեալ են, մինչ զի ամենեքին ոչ գիտեն թէ օրհնութի՞ւն է առ յարութեան երեկոյին, և յամ կերակրի մուտս պարտ է երգել զայս, կամ ձայնիւ կամ թիւ ‹‹ որպէս զօրհնեալ անէք բնակեալն ՚ի լոյս առաւօտն և թէ որք ուրեք յիշէ հրաման զարմանան և առեն տարացուցիչս խմբ բերես ՚ի լուկլս մեր, և նորաձևութեան երս հնամեին, այլ և այն զի կարգեալ է յառաջնոցն, զի յամ կերակրի առաւօտուն հանգստեան աւետարան ընթեռնուն, և բազումք ՚ի գարնանային ժամանակին յորժամ ՚ի դուրս ելանեն՝ ընթեռնուն հանգստեան աւետարան։

Իսկ յետ խաչվերաց աւուրն՝ զի այլ ՚ի դուրս ոչ ելանեն, բազումք անփոյթ առնեն, և ամենեքին այլ ոչ ընթեռնուն յաւուրս կերակրոյն առաւօտուն հանգստեան աւետարան․ և թէ որք խղճեն՝ հակառակին և ընդ դէմ դառնան, իբր թէ բնաւ չեն տեսեալ կամ լուեալ․ և այս ամ ՚ի ծուլութենէ լինի և ՚ի հեզգութենէ և յանփոյթ առնելոյ։ Այսն որոյ և մոռացօնք եղեն․ և զայսպիսի անկարգութի ազգիս մերում թէ յառաջ բերեմք՝ անզգօս ելանեմք, այլ լաւութի պատուեսցի առ այժմ, զի զգարշելիսն քան յայտնել՝ ծածկելն է բարւոք։

Յորժամ վիճաբանելով մարտնչին ընդ այլ ազգ քրիստոնէայս զանձինս արդարացուցանեն ազխաբար՝ իբր թէ միայն հայք են ՚ի Չշմարտութեան և որպէս տեսանեմք՝ քան զամենեսեան մեր է ջնջեալ կարգաւորութի․ և որ ոք այլոց ազգաց իրաւունս տացէ յիրս ինչ վասն Չշմարտութեան՝ ծայր կարգան, և թերթի ՚ի հաւատս, ծանակ առնեն, և հալածեն, և ՚ի մահ սպառնան, մինչ՝ գրեթէ մազապուրծ լիցի, այլ մեք առ այժմ դարձցուք ՚ի կարգ բանիս տեսութեան։

Արդ իմն թուի՝ այս օրհնութի յառաջ է քան զմիւսն, զոր ՚ի լոյր առաւօտն երգեն․ զի մեծն բարսեղիոս յիշեալ է ՚ի հոգւոյն ձառն, որ ընդ դէմ հոգեմարտիցն ասէ թէ՝ ՚ի վաղուց հետէ ունիմք

և 'ի հնոց է ասացեալ։ Նաև և զայս՝ թէ ո՛ւմ ումեք է ասացեալ, ոչ գիտեմք. բայց յորժամ կիրակէմտից երգեմք, և զՀոգին՝ Հօր և Որդւոյ հաւասար փառաբանեմք. զայս բարբառ ասէ։ Նոյնպէս մեք բանիս զաթանագինեալ եղանակաւորս ասեն զերրորդացին, զի յիւրում Ճառին փոքր ինչ նշանակութիւն ասոյ բանիս Ճշմարտութեան։

Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի Հօր. երկնաւորի սրբոյ կենարարի Յսի Քսի։ Այսմանէ այսպէս է ասացեալ, երկնաւորի սրբոյ երանելւոյ Յսի Քսի։ Զի և զԼոյսն ասէ զօրութիւն, զի կենարարն բնութեամբ մշտնջենաւոր կենդանութեան նշանակէ. և երանելւոյն՝ զմեծ բարեաց պարգևութիւն, որ յաւէտ անսպառ է։

Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի Հօր. երկնաւորի սրբոյ կենարարի Յսի Քսի։ Զաւելորդն բանիս առ որդին դնէ, և լոյս զուարթ կոչէ, որ զանմահութիւն յայտ առնէ, և զմշտնջենաւորութիւն և զբարերարութիւն ընկերակցին։ Վասն զի Ճաճանչ է մշտնջենաւոր լուսոյն, և հայելի աներևոյթ ազդմանն Հօր, և Ճառագայթ փառաց և կերպարան էութեան, և Հօրն երկնաւորի սահման և բան և կեանք։ Վասն զի զՀայր ոչ գիտէաք, եթէ ոչ Որդւոյ էր ասացեալ. Ես և Հայր իմ մի եմք. և որ ետեսն զիս՝ ետես զՀայր. և Հայր յիս և ես 'ի Հայր։

Նոյն զոր օրինակ յորժամ զծայրագոյնն նշոյլ Ճառագայթից արեգակնային տեսանեմք՝ զուարթանամք և 'ի գիտութիւն գամք բարերարութեան նորին. և զուարթութեամբ մեր թուի 'ի տեսանելն։ Նոյնպէս և զՀօր գիտութիւն որդւովն ընդունիմք, թէպէտ և անպարագիր պարագայից առ 'ի բացայայտել։ Զի էութիւն որդւոյ անձնաւոր է և գոյաւոր, և բնականապէս յիշեցեալ ունի զՀօր ազդեցութիւն. վասն որոյ և լոյս կոչէ զորդի, ըստ նորում աւետման բանին որ ասէ՝ Ես եմ լոյս աշխարհի. և թէ՝ Ես լոյս աշխարհի եկի. և թէ՝ Գնացէք ընդ լոյս մինչդեռ զլոյսդ ընդ ձեզ ունիք։

Նոյն զուարթ և սուրբ ասէ։ Վասն զի ընդ մեզ կիրս մարդկայնոյ եանց առանց 'ի մեղաց, որպէս ասէր համարձակ զոր այլ ոք ոչ կարէ ասել. Ո՞վ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց։ և թէ՝ Գայ իշխան աշխարհիս այսորիկ և յիս ինչ ոչ գտանէ յիւրոցն արկածից։ Նոյն զի մեղք են թշուառացուցիչք զուարթութեան, որպէս խաւարչական ամպոց լուսոյ և արևու։ Իսկ ասէրն վասն զի ոչ արար մեղս և ոչ գտաւ նենգութիւն 'ի բերան նորա, անթառամելի պանծացեալ 'ի մարդկեղէնութեան իւրում զուարթութիւն էր։ Զայսպիսի զուարթութիւն ունէր և բնութիւն մեր 'ի դրախտին որքան էր յանմեղութեանն. և 'ի յանցանելն զպատուիրանաւն՝ կորուսաք զզուարթութիւնն։ Նոյն Հրեշտակք որք կացին միայն յիւրեանց սահմանի՝ զուարթունք կոչին. իսկ սա-

դայէլ կոլոյս զզուարթուն անուանն և սատանայ կոչեցաւ , որ է՝ հա-
կառակ ։ Զի ուր մեղք է , անդ զուարթութիւն ոչ է ․ իսկ ուր ան-
մեղութիւն է , միշտ զուարթ կոչի ։ Եւ այս է ըստ իմում բանիս
զուարթն և սուրբն ։

Իսկ զի ասէ ՚ի փառաց անմահի հօր ։ Միանշանակ անուն է ․
զի հայր ասելն՝ զորդի նշանակէ , և որդի՝ զհայր ։ Եւ զի փառաց
և զօրութեան անուն է ․ ըստ այնմ , *Հայր՝ փառաւորեա զանուն
քո , որ է զորդի քո ։ Զի փառք հօր կոչի որդի , որպէս և որդւոյ
հայր ։ Եւ անմահի հօր ասէ , որ զարարչական և զանեղ բնութիւն
յայտ առնէ ․ զի անմահութիւն աներևին է տիրապէս ։ Զի հրեշտակք
թէպէտ և անմահք կոչին , սակայն եղանելոք են ․ և մերձիլ նոցա ՚ի
շնորհացն այս՝ մահ կոչի ․ որպէս և սատանայի յետ սխալանացն անուն
մահ կոչեցաւ ․ որպէս առաքեալն ասէ , *Յետին թշնամին խափանի մահ ։
Եւ զոր օրինակ զգայի կենդանիքս թէ զաւրեսաւութիւն օդոյս ոչ
ճաշակեն՝ մեռանին ․ այսպէս և բանականքն եթէ մի ժամ ոչ ընդու-
նին ՚ի շնորհացն այս՝ մեռանին ։

Իսկ մի այս ընդդէմ դիցէ բանիս , եթէ սատանայ մեռաւ և դե-
ւս կայ յանմահութեան ․ այլ գիտել պարտ է , թէ ըստ իւրում բնու-
թեանն մեռեալ է՝ զի անմարմին է բնութիւն , և անմարմին զմարմնա-
ւորի մահ ոչ կարէ մեռանել ։ Այլ զի ասէ առաքեալ , *Յանկու-
թիւն յղացեալ զմեղս ծնանի ․ և մեղքն կատարեալ զմահ ծնանին ։
Եւ զոր օրինակ՝ ադամ յորժամ ճաշակեաց պտղոյն՝ ՚ի մեռելոց
համարի էր ․ թէպէտ ինն հարիւր երեսուն ամ այլ ևս եկաց ։ Նոյն-
պէս և սատանայ յորժամ վրիպեցաւ յիւրոցն փառացն , անկաւ ՚ի
սահմանէ իւրմէ և մահացաւ ըստ իւրում բնութեան ։ Նաև ասելն
նորա և երկարաձգելն՝ ըստ ներելոյն այս է առ ՚ի յօգուտ մեզ ․ ըստ
այնմ , *Մի սպանաներ զնոսա , դի մի մոռասցին զժողովուրդս քո ։

Երկնաւորի սրբոյ կենարարի ։ Զի որ զերկինս ձգեաց որպ
խորան և իւր կոչեաց աթոռ՝ երկնաւոր ասի ․ ոչ որպէս հրեշտակք
ասին երկնաւորք , այլ որպ տէր ամենայնի ․ ըստ այնմ , *Սուրբ է տէր
ած մեր , որ ՚ի բարձունս բնակեալ է ։ Սրբոյ ասէ , Երկնաւորի սրբոյ
կենարարի ։ Որ հայր է փառաց և զանմահութիւն սեպհական ունի
յինքեան՝ երկնային և սուրբ է և կենդանարար ․ ըստ այնմ , *Սուրբք
եղերուք զի ես սուրբ եմ տէր ած ձեր ։ Եւ որ կեանք է՝ կենաց
բաշխօղ է ։ *Որպ հայր ունի կեանս յանձին ասէ , իշխանութիւն ետ
և որդւոյ ունել կեանս յանձին ։ Եւ ՚ի ձեռն նորա ամ հաւատացե-
լոց ․ զի որպ որ ՚ի մահ մերձենայ՝ մահու լինի ընդունակ ․ այսպէս
և որ ՚ի կեանս հայի՝ կենաց կրէ յինքեան ։ Իսկ յս քս ասելն , փրր-
կիչ և օծեալ լսի ըստ եբրայականին ։

Եկեալքս 'ի մտանել արեգականն՝ տեսաք զլոյսդ երեկոյիս: Վասն զի 'ի յարութեան երեկոյիս ժողովեալ միաբան առ 'ի տօնախմբել զօր փառաւոր և կենսակիր յարութեան քո, տեսաք զլոյսդ իմանալի, յերեկոյիս ժամու աղօթից ընկալեալ 'ի սքանչելապար շնորհաց քոց: Նաև յերեկոյացեալ դարուս մարմնաւորիկ տնօրէնութեան քո շնորհ ծագեալ 'ի նսեմացեալ անձն ոգւոց մերոց, ծանեաք զլոյսդ իմանալի: Որ յերեկոյացեալ ժամուս ծագեցուր մեզ յարութեան քո սուրբ ճառագայթ. վասն որոյ զարհաւորն հետակայ բանս ցուցանէ. որպէս ասէ,

Օրհնեմք զհայր. և զորդի և զսուրբ հոգին այ. և ամենեքեան ասեմք ամէն: Քանզի կամաւ հօր և հաճութբ սուրբ հոգւոյն եղև մարմնաւորիկ տնօրէնութի որդւոյ. վասն որոյ զերիս անձինս յիշէ և միով տէրութեամբ փառաւորէ ասելով, Օրհնեմք զհայր իբր ըզպատճառ որդւոյ ծննդեանն: Եւ զորդի ծնեալ 'ի հօրէ բնութենակից և հօր հաւասար. և զհոգին բղխումն 'ի հօրէ: Վասն զի յերիսին մի է ածութիւն և երեքեանն մի՝ յորս ածութիւնն ըստ մեծին աստուածաբանի:

Եւ ամենեքեան ասեմք ամէն: Թէ երկուց և երից վկայութի հաստատուն է ըստ օրինացն, ապա որչափ ևս առաւել յորժամ ամենեքեանս ամ 'ի միասին ամէն ասելով վկայեմք: Եւ զամէնդ՝ եղիցի ասացին որք քննեցինն, կամ ճշմարիտ, կամ ստոյգ, կամ է:

Արժանաւորեա զմեզ յամ ժամ օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց ամենասուրբ երրորդութեանդ: [illegible] հօր յանձին պարտ է բերել զի արժանի լինիցիմք անուանն այ օրհնաբանիչք գտանիլ: Զի թէ նախ սրբիլ պարտ է, և ապա 'ի սուրբս մերձենալ. ապա որչափ ևս առաւել յորժամ առ ած ոք հայի, որ սրբութիւն է սրբոց: Զի թէ այլ ինչ ոչ գոյր փոխարէն հատուցման, այն բաւական է զի անուանն այ օրհնաբանօղ գտանիմք: Եւ փառաց անուն ասէ, զի բնութեան անուն ոչ գիտեմք այ. բայց միայն 'ի միոյն զոր առ մովսէս ասաց, * Ես եմ ած որ էն: Իսկ դրական անուանցն ոչ գոյ բաւ. վասն զի կոչի տէր և ած, արարիչ, թագաւոր, լոյս, բարի, գթած, մարդասէր, հզօր. և այլս բազումս, որոց ոչ է թիւ:

Եւ զի օրհնել ասէ զանուն փառաց ամենասուրբ երրորդութեանն: Օրհնելն և գովելն և փառաւորելն, գոհանալն, բարձր առնելն, և շնորհս ունելն, և մեծացուցանելն, և այլ սոյնպիսիքս զմի և զնոյն ունին դիտաւորութիւն. զի փոխարէնք են 'ի մէջ երախ-

տեսացն է ։ Եւ չէք այլ ինչ 'ի մեզ՝ որ այնքան ուրախ առնէ զԱծ ․ որպէս օրհնութիւն և գոհութիւն և փառաբանութիւնն և նմանք սոցին ։

Մանաւանդ յորժամ 'ի նեղութիւնս և 'ի վիշտս գոհասցի ոք ․ կամ յորժամ 'ի զուր դատապարտի ոք ․ կամ յորժամ փոխանակ բարւոյ չար ընդունի և գոհանայ ։ Այսոքիկ առաւել ուրախ առնեն զԱծ՝ քան զայլ ամ բարեգործութիւնս ․ և թէ և աղօթս ևս առնիցէ 'ի վերայ նեղչացն , յայտնապէս նման լինի որդւոյն է ։ Եւ զի մեծագոյն ընծայ է օրհնութիւն , հանապազ զայս մատուցանեմք է ․ որովք համբերութիւն առնումք 'ի մուտս որդութեանցն և յանդիման լինելոյ երեսացն է ։ Եւ զերիս անձինան մինչ առնել ,

Արժանաւորեա յամ ժամ օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց ամենասուրբ երրորդութեանդ ։ Զի յամ ժամ ունիմք հրաման 'ի տեառնէ աղօթել ․ զի թէ այլոց բարեգործութեանց չափ կայ և սահման , սակայն աղօթից ոչ երբեք սահման , այլ միշտ աղօթել ․ որպէս հնոյն իսրայելի ասէր Ածն , *Խօսեսցիս սոքօք 'ի նստել 'ի տան 'ի գնալ 'ի ճանապարհի 'ի ննջել և 'ի յառնել ։ Եւ 'ի նորումս ասէ , *Արթուն կացէք և յամ ժամ աղօթս արարէք ։ Եւ ոչ ոք կարէ ընդդիմանալ ․ զի հրաման է տէրունական՝ թէ 'ի հինն և թէ 'ի նորս յամ ժամ աղօթել ։ Եւ ոմք յարթնութեան միշտ յաղօթս կային , 'ի ննջելն 'ի նոյն գերբերին ․ նաև 'ի ճաշակելն ևս աղօթեն ։

Որպէս գրեալ է թէ՝ ոմն 'ի հարանցն յորժամ ճաշակէր 'ի սեղանին ընդ եղբարսն զմարմնաւոր կերակուրն , զմի ձեռն յերկինս ամբառնայր և աղօթէր , և ձայնիւ երգով օրհնէր զԱծ յաղօթսն ։ Զի որ ոչ է հնար յամ ժամ ամ ուրեք ձայնիւ աղօթել ․ այլ ձայնիւ իմն ինձ զհաճոյական աղօթսն , որպէս մովսէսին որ ոչ բարբառէր ․ և Ածն ասէր , *Զի՞ գոչես առ իս ։ Նոյնպէս և եղիայէին ․ որ զգլուխն 'ի մէջ ծնկացն խոնարհեցուցեալ զերից ամաց պապարծումն երկրի զովացուցանէր և բարբառ ոչ լինէր լսելի ։ Նաև հրեշտակք իմանալի գոլով բնութիւն , զգալի ձայնիւ ոչ երբէք հանդիսանան յօրհնութիւնսն է ․ և մեք թէ սոսա 'ի հաճոյսն է պարապիմք , յերկրին կենդանեաց նոցին լինիմք ձայնակիցք իմանալի ձայնիւ օրհնել զԱծ ։ Եւ այս վասն յամ ժամ օրհնելոյ զանուն փառաց ամենասուրբ երրորդութեանն ։ Եւ զի՝ երեքն կատարեալ է , ունելով սկիզբն՝ մէջ՝ և աւարտ ․ վասն որոյ երեք և մի ասի , մի և երեք ։ Զի աւելին 'ի բազմաստուածութիւն ցնդի , և պակասն թերի գտանի ․ իսկ երեքն կատարեալ է որպէս ասացաւ ․ որ վայելէ 'ի կատարումն ամենեցուն կատարելութեանն ։

Արժանաւորեա ասէ զմեզ յամ ժամ օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց ամենասուրբ երրորդութեն , որ ասէ զկենդանութի․

վասն որոյ և աշխարհս զքեզ փառաւորէ ։ Միշտ և յարաժամ պարտաւորք կանխել առ ած ամ յօժարութբ, զի մի՛ ապերախտ գտանիցիմք որպէս հինն իսրայէլ․ որոյ ասէր ած մարգարէիւն, *Ծանեաւ եզն զստացիչ իւր, և էշ զմսուր տեառն իւրոյ, և իսրայէլ զիս ոչ ծանեաւ ։ Նաև յայնժամ մտերիմ ծառայք երևեսցուք այ, յորժամ միշտ զսիրովն այ գայցեմք և առ նա միշտ փափագանօք դիմեսցեմք, և առաջի նորա հնազանդ անկանիցիմք, և զերեսս նորա միշտ արտասուօք ողողեսցուք ։ Զի այնժամ անհնար է թէ ոչ առնուցումք զխնդրուածս, որ ըստ կամաց նորա լիցի ․ զի քան զամ հայր գթած է, և քան զամ մայր գորովագութ ։ *Եւ զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր ․ աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա ։

Որ տայ ասէ կենդանութիւն ։ Թէպէտ և ամ գոյիցս կենաց շնորհէ ․ ոմանց զգոյն, և ոմանց զգոյն և զբարւոք գոյն ։ Նոյն և առաւել մարդկայինս ազգի յետ իմանալեացն դասուց, ըստ կրկնակի բնութեանս մերոյ կրկին շնորհէ և զկենդանութի ։ Քանզի որպէս տայ անասնոց կերակուր և զառուբեառութի օդոյ և ձագուց ագռաւուց և ամ կենդանեաց ։ Թէպէտ և ոմանք առանց օդոյս առուբեառութեան կեան ըստ սահմանելոյն այ, որպէս ազգ մեղուացդ ; և նմանք նոցին՝ որպէս ասեն․ և զմարմնաւոր պէտս մարդկան որպէս զայլ կենդանեաց անօրինէ ։ Նաև վասն բանականիս ոգւոյ յայտնապէս հրամայէ տրն, *Ոչ եթէ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամ բանիւ որ ելանէ ՚ի բերանոյ այ ։ Եւ արդ՝ որպէս զգալի կերակրովք մարմնոյ տայ կենդանութի ած կենդանիին յաւիտենից, այսպէս և իմանալի հոգւոյս շնորհէ զկենդանութիւն հին և նոր կտակարանօք և ամ պատուիրանօք իւրովք ։

Վասն որոյ և աշխարհս զքեզ փառաւորէ ․ Աշխարհ է որ յերկնէ և յերկրէ և որ ՚ի միջի նոցին կան, որպէս յառաջնոցն ասացաւ ։ Եւ վերին աշխարհ կոչէ երկինք և երկնից երկինք, ընդ որում և հաստատութիւն ․ զոր հինգերորդ տարր ասացին արտաքինքն առ տարրս չորիցս այսոցիկ ։ Եւ բնակիչք վերին աշխարհին յայտ է թէ անդադար կան ՚ի փառաբանութի, և երբեք հանգիստ ոչ առնուն ։ Զոր օրինակ զգալիքս եթէ գոյզն ինչ ժամ զօդոյս առուբեառութի ոչ ճաշակեն՝ մահանան ․ սոյնպէս և իմանալիքն թէ փոքր ինչ ժամ դադարին ՚ի փառաբանութենէն, ոչ կարեն կեալ ըստ իւրեանցն սահմանի ։

Իսկ երկինքն՝ մեծութբն իւրով և խորանարդ գմբեթաւն և բոլորակութեամբն մատուցանէ փառս այ ․ և միշտ հետ գալովն որպէս ասեն՝ պատմէ զմեծութի արարչին ։ Իսկ արեգակն և լուսին և

սատեղք՝ ՚ի հնազանդելն հրամանի արարչին և յանսայթաք լինելն ՚ի գնալն և յիչ դադարելն պայծառ ճառագայթիւք և անաղօտ նշոյլիւք լուսոյն՝ փառաւորեն զնա։ Իսկ օդդ՝ լայնատարած և դիւրընկալ բնութեամբն և զանազանեան պարունակելովն և դիւրափոփոխ լինելովն՝ առ փառս նորա։ Իսկ երկիր՝ հաստատութեամբն և անշարժ և ևերա և խիտ և կուռ լինելովն և ՚ի վերայ ոչնչի կալովն և մայր և դայեակ ամենայնի լինելովն՝ զատնի փառաւորանաց ամենաառուրք երրորդութեանն։

Իսկ թռչունք և տունկք՝ ՚ի բուսանելն և յաճելն ՚ի գոյնս զանազանս ՚ի համս և ՚ի հոտս, և ՚ի նիւթ բժշկութեան լինելն՝ փառս տան նմա։ Իսկ քարինք և երկաթ՝ ՚ի կարծրութի և յամրութի իւրեանց և ՚ի ծննդականութի հրաշալիութեան, և ոսկի հրաշալիս գունովն, և արծաթ լուսափայլութեամբն, և անագ և կապար ըստ իւրեանց սպիտակութեանն՝ զատնի փառաւորանաց են։ Իսկ ծով՝ լայնանիստ և մեծատարած բոլորակութեամբն և պարփակութեամբն, և կայուն կեռոց և ընդունակ ուղխից լինելովն, և ամ ջուրք գետոց և աղբերաց ՚ի գնացս իւրեանց և ՚ի շրջագայութեանցն և ՚ի սնուցանելն զամ ինչ այլ և անձրևոց որոտմունք՝ անձրևք և փայլատակմունք և ձիւնք սաստիկ ամենայնքեան ըստ իւրեանց եղանակի փառաւորեն զնա։ Իսկ կենդանիք և կայտառք որ ՚ի ջուրս, լողակք և թռչունք որ յօդս, գազանք և անասունք, սողունք և ամ շարժունք, կենդանին իւրեանց և ՚ի կալն ըստ ձայնից և ըստ լռութեան ՚ի բնութեան իւրեանց փառաւորեն միշտ զարարողն։ [illegible]

Յաւիտենից են յայտ [illegible] և [illegible] զմեծագործն արարչին որոյ ծածուկ ութիւն հզօրին նոյ Թուեցից. վասն որոյ յայնժամ և զազգութեանց խոստովանեալ զի անզննութեանց [illegible] ՚ի վեր քան զամենայն զՏէր խմ [illegible]. Բան ՚ի վերայ ամենայնի՝ մարդ և մեզոյն զգայուն պատկեր [illegible], [illegible], թագաւոր ՚ի վերայ ամենայնի՝ և ընդ թագաւորութը վերինցն է։ Այսմ նորա պատշաճ ըստ առաւելութեան շնորհացն և առատաձիր պարգևացն բերան լինել ամ արարածոց՝ և զինչ ամ գոյից փառս մատուցանել մեծագործ արարչին։ Որք յառաջինդ մեծն դաւիթ և երեք մանկունքն թելադիր լինին. և ամ ՚ի սրբոցն ամենայն սովորական յաճախ կարգեալ՝ միշտ երգել առ [illegible] քեզ ամ յաղագս ամի։ Արդ վասն ամ գոյից բարերարելոյ արարածի [illegible] փառաւորելոյ փառաւորեալ [illegible] յաւիտեանս, ամէն։

Յորդորակ.

Փառաւորեսցուք և մեք զած. մի՛ միայն բանիւ և լեզուաւ, այլ և ՚ի խորհուրդս և ՚ի գործս։ *Զի ած փառաւորեալ է ասէ մարգարէն ՚ի խորհուրդս սրբոց իւրոց։ Եւ ինքն հրամայէ, *Տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է։

Եւ արդ՝ փառաւորեսցո՛ւք բերան զած յերգս օրհնութեան, և ՚ի ձայն սաղմոսաց և ՚ի պատմել զմեծամեծս սքանչելեացն։

Փառաւորեսցո՛ւք և ունկն ՚ի լսել պատուիրանացն նր, և ունկն-դիր լինել խնդրողաց՝ որք հայցիցեն զպէտս կարօտութեան։

Փառաւորեսցո՛ւք և ակն ՚ի նայելով ՚ի մեծամասունս զարմանալիս արարչին, և ակնարկելով յաղքատս և ՚ի տնանկս։

Փառաւորեսցո՛ւք և հոտոտելիք յընդունել զհոտ անուշութեան իմանալի և զգալի աստուածային պարգևացն։

Փառաւորեսցո՛ւք և ձեռն համբառնալով առ ած սրբութեամբ իւր զպատարագս երկիւղի, և կարկառելով յողորմութիւն առ աղքատս և տնանկս, և ծրարելով յարաժամ ՚ի գործ արդար վաստակոց. զի բա-ւական իցէ տալ ում պիտոյ իցէ։

Փառաւորեսցո՛ւք և ոտն ընթանալով յաղօթս և ՚ի գործս, ՚ի խոստովանութիւն և յապաշխարանս, ՚ի տեսս հիւանդաց և ՚ի մխիթա-րութիւն բանտարգելոց, ՚ի բարեխօսութիւն զրկելոց և յօգնականու-թիւն զզուելոց և նեղելոց։

Փառաւորեսցո՛ւք և միտս՝ սրբութեան լինելով շտեմարան և տեղի արդար խորհրդոց ՚ի սիրտ սուրբ և յոգի ուղիղ նորոգիլ։

Փառաւորեսցո՛ւք և ողջոյն իսկ զմեզ ցուցանել լցեալ ամ բարի արդասիւք, և զարդարեալ պարկեշտութեամբ և մաքրութեամբ։

Փառաւորեսցո՛ւք և հոգին բանական, և միտքն իմանալի յօրէնս տեառն խորհելով հանապազ, և յաղքատս և ՚ի տնանկս և յամ հա-ճոյս նր. հոգի խոնարհ՝ միտս սուրբս և պատարագ ընդունելի մա-տուցանել նմ զխօսուն պտուղ և զմաքուր աղօթս, ողջակէզ բանա-ւոր և զոհս փրկութեան և պատարագ հաճոյական, մինչ զանձն ըն-ծայել նմ ամենայն լրութեամբ։

Մի՛ թողցուք մասն ինչ արտաքոյ սրբութեան անդամոյն, և մի՛ բաժին բելիարայ. մի՛ գողասցի գողն դարանամուտ, և մի՛ ինչ յափշ-տակեսցէ գազանն պատառող։ Մի՛ խաբեսցէ խորամանկն, և մի՛ թունաթափ լիցի օձն ահագին և վիշապն կամակոր. մի՛ պատարեսցէ

պատիրօղն բազմաց. և մի՛ քարշեսցէ՛ քարշօղն մեհից։ Մի՛ մեղկացուսցէ մեզ անյոյն մեղաց և հայրն չարեաց, զոնէ առօրին չյապաղտակել, այսօր ինձ տալով և վաղիւ ևս. և այսօրն ոչ երբեք պակասի։ Նա որդ և մեք զգուշասցուք մեզ յամենայնի. զամ տացուք ևս. զամ ընծայեսցուք հօրն փառաց. զամ մատուսցուք արարչին։ Մի՛ զերդաբոյթն միայն, մի՛ զթալանթն և զձարդ քաղըթին. մի՛ միայն զքահանայական մասն զերին և զակն աջոյ, այլ և զձախն աջ տպացուք բոլորովինն յաղորդաղութ։ Ամեղ ինքեանս մատուսցուք բոլորեցն ևս, և ամենայնիւ յամենայնի փառաւորեսցուք զփառաւորեալ սուրբ երրորդութիւնն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Մեծին Խոսրովու՝ առա երեկայեան քարոզին։

Որդ՝ յերեկոյն հասեալ՝ նախ համաձայնեալք բովանդակ ժողովուրդն 'ի Դաւթայն օրհնութիւն զոհանալով վասն լուսաւորացն, որ 'ի աւանդեան զմեզ լուսաւորեն, և 'ի գիշերի և վասն լուսոյ Դաւթայն, և հայցեն զկենդանի լոյսն ևս լուսաւորել զմիտս. և 'ի փառս ևս ամենազօրին գլխաւորեն։ Այս ասելովն վերաձայնեն զերեկոյին զոհութիւն բան նմանութիւն առաւօտուն և պատարագին գոհութեան և այսպէս ասէ։

Քարոզ երեկոյին։

Հասեալք 'ի ժամ երեկոյիս ամենեքեան համբառնալով զձեռս մեր փառաւորեմք զքեզ տէր Աստուած մեր։

Քանզի աղաչէր մարգարէն զհամբարձումն ձեռաց լինել պատարագ երեկոյի. և մեք համբառնամք փոխանակ պատարագացն ըզ ձեռս մեր առ անկարօտդ Աստուած, զբովանդակս զմեզ պատրաստելով քեզ պատարագ կենդանի. զոր սրբելով ընկալցիս բանաւոր պաշտամամբ 'ի հաճոյս քո, զի տէր մեր և Աստուած մեր ես և քեզ բարեաց տուող։

Եւ փառաւորեմք զքեզ որ շնորհեցեր մեզ զանցս խաղաղութեան անցուցանել և հասանել 'ի ժամ երեկոյիս։ Ի բազմօրեայ կեանս տուր խաղաղութեան զօրս շնորհեցեր և հասուցեր զմեզ յաջողութեան աւանդեանս յերեկոյի պաշտաման ժամս։

Արժանաւորեա զմեզ սուրբ սրտիւ հեշտալկաւին երգով փառաւորել զքեզ տէր Աստուած մեր։ Նաև զի բազմօգութեան են երախտիք

քո , պահպանելով զմեզ , կերակրելով , առաջնորդելով , և յաղթօղելով մեզ և փրկելով ։ Այլ արդ՝ Տիրոջ սքանչելի արժանացո զՀրեշտակաց երգս մատուցանել առ քեզ մեր ։ Հանապազ զայս աղաչեմք՝ ՚ի գութ անձեռնով զքեզ թէ առ մեր ես և քեզ . որ հանապազ զմեզ ՚ի գութ ողորմութեան , կեցո և ողորմեա մեզ ։

Մաղթանք ։

Հանապազ ՚ի ժամ երեկոյիս ամենեքեան անդադար փառաւորեմք զՀայր՝ և զՈրդի և զՍուրբ Հոգին . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն ։ Առաջնորդին երկնային անարատ զգուշութիւն վասն մեր բարեաց առնելոյ , և վասն միաբան ժողովելոյ առ քեզ և պաշտօն նորա ։

Յորդորումն [illegible]՝ վասն Մեծ պահոցն ։

Ահա ժամ լուսաւորեալ նուիրեալ չորից գտնուի մեզ պատարագեալ [illegible] հանդերձեալ հաւատարմութեան , որք զարժանաւոր [illegible] ։ Որոյ հանդերձ [illegible] կայ առաջի խաչին ; և ողորմեալ աղօթք՝ խնկոցն նման , որով զուարճանաց երկնից ։ Զի թէ քանանին Տէր պատարագ առն ՚ի աղօթս , որպէս ՚ի սաղմոսաց ոմն նուիրէ ; ոմն իւղ , ոմն կերակուր ; ոմն խունկ գեղեցիկ ։ Որպէս խնկարկու հաշտարարն և սաղմոսն ցուցանէ զհամբարձումն ձեռաց պատարագ . և ժողովեալ զերեն միա բանհամայն յերկն՝ միջնորդ ոչ և մարդկան ՚ի մէջ անցեալ՝ զամենեցուն աղօթս ընծայ մատուցանէ նոյ ։

Խոստովանք՝ սակս քարոզին ։

Աղաչեսցուք զամենակալն Տէր զհայր առաջին մերոյ յի՛ թէ զթագաւորին խաղաղութեան ։ Խորհուրդ զմեզ յիշեցուցանէ քաղցրութեան զՏէր ինչ լինի հանդերձել , զնա ...ր առ Ձանաչել , զնա խաղաղութեանց թագաւոր և առաջնորդ իմանալ ։ Զի ինքն իսկ ասաց մարգարէին , * Ես եմ որ առնեմ զխաղաղութիւն և հաստատեմ զչար ։ Զի թէ զայս հաստատեսցեմք ՚ի միտս մեր , ոչ բանիւք ոչ ատելեաց ոչ դիպուածոց և ոչ պատահմանց հակառակեսցիմք զխաղաղութիւն զոր ունիցիմք

՚ի ձեռս, այլ նախախնամութեան ՚ոյ և ողորմութեանն. Կենդանի է և Տէր
՚ի կեանս քոյ մինչ անկեալ կացեմք և յաճախեսցեմք, և զայն՝ յորժամ կամի ՚ի նոր
թիւրս ատեալ զխնդրեսցեմք, կամ ՚ի խաղաղ, կամ վասն յաղթութեան
յայտնեսցէ. Եւ այսպիսի խորհրդով բարեացն շնորհ ունիցիմք ՚ոյ. և
՚ի միաբանութեան համբերութիւն կրելով, յանձինս ՚ի հաւատութեան
զԱծ ունիցուք:

Յաղագս խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ կաթողիկէ առաքելական եկեղեցւոյ. Մայիսի Ջերմն սէր ունելով առ ամենայն մարդիկ, մինչ զի վս ամենայն աշխարհի խաղաղութեան հոգալ և աղաչել զԱծ. Եւ աղաչելն՝ քան զխնդրելն առաւել ունի զկամացն բաղձանս. որպէս զի սաստիկ ցանկութեամբ պաղատել վասն աշխարհի խաղաղութեան, և առաւել հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ. Որպէս զի մի՛ սասանութիւն ինչ յայլազգեաց կամ ՚ի հերձուածոց առցէ. այլ զի խաղաղութեամբ հաստատութեամբ ՚ի հաւատս և ՚ի քարեգործութիւնս ունիցի ըստ առաքելական քարոզութեանց. վասն այնորիկ յաւելու զառաքելականն. Եւ որպէս վասն աշխարհի խաղաղութեան զամենայնն յաւելու, նոյնպէս և վասն եկեղեցւոյ զկաթողիկէն ՚ի մէջ բերէ, այսինքն՝ տիեզերական. զի վասն ամենայն տիեզերաց եկեղեցեաց աղաչեսցուք զԱծ՝ հաստատուն պահել յառաքելական սահմանն: Եւ զի զամենայն եկեղեցիս որ ըստ առաքելոցն դաւանութեան են՝ մի համարեսցուք. քանզի և մեք միայնոյ միաբանական սուրբ կաթողիկէ առաքելական եկեղեցւոյ ասեմք ՚ի քարոզս: Զոր և երանելին եպիփան յիշէ ՚ի սաղմոսաց մեկնութեանն թէ՝ վասն այնորիկ միայնոյ միաբանական եկեղեցւոյ ասեմք. զի ամենայն կաթողիկէ եկեղեցի ՚ոյ ՚ի ծագաց մինչ ՚ի ծագս երկրի մի և միայն ասի:

Ի զգաստութիւնս խաղաղութեան տացէ մեզ տէր Աստուած մեր. Այսինքն՝ զխաղաղութիւն յարտաքին թշնամեաց, զխաղաղութեան ՚ի թագաւորաց և ՚ի զանազան ազգաց, ՚ի զօրաց, ՚ի զօրագլխաց, կռիւս ՚ի միմեանց և ՚ի մերոյին խակ խորհրդոց: Արդ զի ամենայն ուրեք խաղաղութիւն մեզ և մերոցն լինիցի. և նոքա առ մեզ. և մեք առ նոսա խաղաղութեամբ լիցուք և պատուեալք յամենայն խռովութենէ ՚ի խաղաղութեանն ՚ոյ որ կարողն է առ ամենայն պատերազմունս յաղթութիւն տալ, որք ՚ի մարդկանէ կամ ՚ի դիւաց շարժիցին. քանզի այսպէս ասէ, զխաղաղութիւն տացէ բարձմութեամբ մեզ տէր Աստուած մեր. և զթագաւորս խաղաղականս առաքեսցէ առ մեզ վասն մեծի սուրբ փառաց ահաւոր անուանն իւրոյ. զպետս գաւառաց, զզօրավարս՝ զզօրագլուխս՝ զժողովուրդս՝ զդրացիս, զմեզ և զերկիր մեր խաղաղութեամբ պահեսցէ, որ զամենայն պատերազմունս թշնամեացն խափանէ: Արդ տացէ զդիւաց և զմարդկան. և յաղթեսցէ զայս ամենայն խանդարհութիւն ուսուցանէ հայցել.

ձէ 'ի մեր արժանաւորութիւն յուսալ առնուլ զհայցուածսն • այլ նաև՝ զի տէր ա͞ծ մեր է՝ հարկի ողորմել մեզ • Եւ դարձեալ վասն մեծի և նոր փառաց անհասոր անուանն իւրոյ շնորհեսցէ մեզ զխաղաղութիւն , զի փառաւոր լիցի անուանն իւր սուրբ ։ Որպէս զոր 'ի սկզբանն եդ-զամենակալն՝ և 'ի վերջոյս յաւուրս , Ամենակալ տէր ա͞ծ մեր կեցո և ողորմեա՛ մեզ ։

Աղօթք ։

Լուր ձայնից մերոց տէր ա͞ծ մեր • ընկալ զաղաչանս մեր , զհամբարձումն ձեռաց մերոց և զբանս աղօթից ։

Որպէս համարիմ թէ ըստ սաղմոսին մնաց որ յերեկոյն՝ ա-ւել կարգեցաւ , է սկիզբն աղօթիցս ։ Ոչ է անդ ասէ , * Տէր կար-դացի առ քեզ և լուր ինձ • նայեա՛ 'ի ձայն աղօթից իմոց 'ի կարդալ իմում առ քեզ ։ և թէ՝ * Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո տէր , համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի ։

Իսկ յաղօթս ասէ ,

Լուր ձայնից մերոց տէր ա͞ծ մեր • ընկալ զաղաչանս մեր , զհամբարձումն ձեռաց մերոց և զբանս աղօթից , սրբելով զերեկոյին պատարագս մեր 'ի հոտ անուշից 'ի հաճոյս քեզ պատրաստել ։

Արդ յայսմ վայրի զաղօթսս ունի զիմաստ բանիցս , 'ի գեղեցիկս ասացեալ երանելւոյն յովհաննու ոսկեբերանի թէ՝ * Ձայն և կար-դացումն՝ և՛ ջերմագութ սրտի առ ա͞ծ պաղատանաւ , բաւական հոգևոր առնել զբերանն , և ոչ ունել յա͞մ աղանդ ։ Որ͞պ հրով բորբոքել զսիրան 'ի սէրն ա͞յ՝ հոգւոյն , և զաղօթսն զխունկն անուշ՝ դնել 'ի վերայ զի բուրեսցէ առաջի ա͞յ ։ Եւ զի թէ սրբեալ իցէ ձեռն յա-գահութէ 'ի զրկանաց 'ի կռւելոյ զանաւագսն և յայլ մեղաց ըսպա-տաւորութէ , համբարձումն այնպիսւոյ ձեռինն պատարագ ա͞յ լինի ։ Ապա թէ պղծեալ մեղօք իցեն , փոխանակ սուրբ ձգէն յերկինս՝ բարկութիւն անդուստ իջուցանել ։ Վասն այնորիկ նախ զանիրա-ւութիւնն 'ի ձեռաց թօթափել արժան է , և ապա լուանալ զաղտե-ղութի նորին ողորմութե͞ • և այնպէս առ ա͞ծ ամբառնալ և խնդրել 'ի նմանէ լսել ձայնի աղօթիցն , և ընդունել զաղաչանս զհամբար-ձումն ձեռաց և զբանս աղօթից , և սրբել զպատարագ երեկոյին • որ սրբի հոգւոյն սրբով • որ͞պ ասաց պօղոս , * Զի եղիցի պատարագն հեթանոսաց ընդունելի , սրբեալ հոգւովն սրբով ։ Նոյնպէս լինի

պատուիրանին հաճոյ այ և ոչ և ընդունելի. այլ ամենայն յետ զպա-տուիրանն անուշահոտ պատարագաւորելոյ՝ մատուցանել ինչ փոխադարձել ի մեզ.

Յաւել ի մեզ տէր ամենակալ զհաւատ՝ զյոյս՝ զսէր և զամ գործս առաքինութեան. Հաւատս խնդրեցին յաւելուլ առաքեալքն. և մեք ի նոցանէ խրատեալք զայն աղաչեմք. Յուսով լի՛ ասաց ա-ռաքեալ լինիլ Հռովմայեցւոցն. յորմէ ամ խնդութիւն և խաղաղութիւն լինի ի հոգւոյն սրբոյ. Սիրոյն որոյ մեծաւ պաղատանօք խնդրես-ցուք զայնքան բարեաց զհամբարձումն ձեռաց պարգևիչն. իսկ սէր ընդ այ և ընդ մարդկան՝ միաւորէ, և քի աշակերտութեան այս ծա-նօթս. զոր և մեծ առաքելութեամբ հաստատել ի մեզ մաղթեմք.

Եւ զամ գործս առաքինութեան. Զամենայն գործք առաքինութեան ի հաւատոց և ի յուսոյ և ի սիրոյ բղխեն. զի թէ զհաւատս և զյոյս և զսէր արժանացուք ստանալ, դիւրաւ զամ առաքինութիւնս ունիցիմք և կատարեալք այ լինիցիմք. զոր և սաէ իսկ,

Որպէս զի ըստ կամաց քոց բարեխնամ միշտ կրօնաւորեալք բարեպաշտութեամբ. Քո կամքդ ասէ զբարին սիրէ. արդ զի տէր մեր և ած ես՝ հարկաւ ծառայեցս և արարելոցս ի քէն՝ ըստ կամաց քոց լինիլ պիտոյ է. Եւ յայս թէ և մեք յօժարիմք, առանց քո ոչ ինչ կարեմք առնել. վասն այնորիկ պաղատիմք որպէս զի հաւատով և յու-սով և սիրով լցեալք ըստ բարեսէր կամաց կրօնաւորեսցուք բարե-պաշտութեամբ. Կրօնք՝ վարուցն և կարգացն կոչէ. բարեպաշտութեամբ զվարս աշխարհիս ուղել պարտ է. պաշտելն և սպասաւորելն՝ ծա-ռայելն է. բարի ծառայութիւն՝ ըստ կամաց զտէրն պաշտելն է. Իսկ որ ոչ է՛ ըստ այն կամաց, չէ՛ բարեպաշտ. այլ դառնացուցիչ. Արդ հայցելով ըստ կամաց երկնաւոր տեառնն բարեպաշտել՝ յետ համարձակութիւն ելանէ. Եւ ո՞ր է այն. ծառայք առն կատարեալք տերանց՝ վստահութեամբ ունին զայս և զայլ խնդրել ի տերանցն զիւրեանց պէտս և զայլոց. Արդ՝ եթէ լիցի մեզ կատարումս, և բա-րեպաշտս լինի քեզ.

Նաև ի գիշերի արժանաւորք եղիցուք յաղագս անձանց մերոց փրկութեան և վասն հոգևորական կենացն աղաչել զքեզ տէր. Այսպիսի եղիցուք ներքարք, որպէս զի համարձակապէս զտիւ և զգի-շեր առաջի այ կացցուք. և փրկութիւն անձանց մերոց և ընկերացն խնդրեսցուք. զի միմեամբք, զիւրեանց յայս առնէ.

Իսկ վասն հոգևոր կենացն աղաչելն զի՞նչ է. եթէ ոչ՝ * Զի մի՛ ըստ մարմնոյ կեցցեմք և մեռանիցիմք. որպէս ասէ առաքեալն. Ամ զի

հոգւով զգործս մարմնոյ սպանցուք և կեցցուք զի որդիք ա̄յ լիցուք :
* Զի որ հոգւովն ա̄յ վարին՝ նոքա են որդիք ա̄յ : Նախախնամիքն իւրև 'ի հօրէ վստահութը զիւրեանցն և զայլոցն խնդրեն և առնուն զպէտս :

Այլ փառաւորել 'ի քէն շնորհս և ողորմութի : Օ՛ն թէպէտ բա-րեպաշտիկ հաճոյանամք , սակայն առ ըր ա̄յ շնորհք և ողորմութիւն են , այսինքն՝ ձրի և ողորմելով :

Այս գոհութեամբ փառաւորեսցուք զՀայր և զորդի և զՀոգին սուրբ . այժմ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Հանապազ զամենայնսն յարէ գոհանալովս , ուսուցանելով թէ ըստ ա̄մի գոհացողք պարտիմք լինել ա̄յ . թէ 'ի բարօրութե՝ և թէ յոչ ախորժելի կեանս իցեմք : Այս հայցեմք ոչ միայն յայս կեանս լինել փառաբանիչս ա̄յ , այլ և 'ի հանդերձեալն . քանզի զայս նշա-նակէ ասելն 'ի փառս առյն . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-նից , ամէն :

Խաղաղութիւն ամենեցուն :

Քեզ երկիրպագանելով տէր ա̄ծ մեր : Ով բարերարական ձայ-նիւ որք միաս ունին . քանզի՞ հեշտալի է զամենեցունց ա̄ծն մեզ ը-նտանեբար կոչել սրտի մտօք , նմա երկիրպագանել , մտաց տեսութբ առաջի նորա կալ ասելով ,

Քեզ երկիրպագանելով տէր ա̄ծ մեր , գոհանամք զքէն յաղագս խաղաղութբ անցուցանել 'ի մէնջ զերկպառակութիւն առան-ձեանս շնորհելոյ :

Արդարև մեծ գոհութի երկրպագութբ պարտիմք մատուցա-նել ա̄յ խաղաղութբ յերեկոյն հասեալք . քանզի անթիւ 'ի բազ-մութենէ են խռովութիւք վտանգիչք մարդկան , որք ըստ հոգւոյ և մարմնոյ պատահին : Այլ թշնամին կենաց մերոց ամենայնիւ ընդ ամենեսեան մարտնչի , գործակիցս իւր 'ի մարդկանէ առնլով : Բազում անգամ և զանդամս մարմնոյ մերոյ ընդ դէմ վառէ մեզ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ պէտս վտանգելով . յաճախապէս և խորհրդովք մերովք մարտնչի և կռուի ընդ մեզ :

Արդ մինչ ա̄յ պահպանելովն և օգնելովն յերեկոյն հասանեմք խաղաղութբ ընդ առաւուրն երկարութի անցեալք , սերտ սիրով շնոր-հակալութ մերում առատն լիցուք . որ պահէն և փրկէն և զօրացու-ցանէն և յաջողէն 'ի գործս բարիս և ընդ զպէտս մեր , և 'ի նուա-հանգիստ գիշերոյն հասուցանէ խաղաղութեամբ : Այս իբրև վասն

անցելոցն գոհանամք արժանապէս, վասն առաջիկայիցն խնդրել վստահանամք. վասն այնորիկ և յարէ 'ի գոհութի։

Տէր մեր ամէր աղաչեմք զքեզ՝ զերեկս և զառաջիկայ գիշերս առանց մեղաց և առանց գայթակղութե անցուցանել։

Արդարև յոյժ աղաչելի է զերծանել 'ի խաբից սատանայի և 'ի գայթակղութեանց նր յերեկոյի և 'ի գիշերային ժամու։ Ոչ որոյ և ոչ ըսկ ասէ թէ ամէր մեր ամէր, այլ յաւելու թէ՝ աղաչեմք զքեզ. և այսպէս աղաչէ հաստատուն կալ 'ի սէրն ա՛յ և 'ի պատուիրանապա-հութեան՝ այսպէս ասելով,

Հաստատուն կալ և մնալ 'ի սէր և 'ի պատուիրանապահութե քում։ Որպէս իրերօք կապին. քանզի երբեմն ասէ տէրն, * Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք։ և թէ՝ * Պահեցէք զպատուիրանս իմ, կացջիք 'ի սէր իմ։ Զի սէրն քո ժողովուցանէ և յորդորէ 'ի պատուիրանապահութիւն. և պատուիրանացն քո պահպանութի՝ սիրոյ նր հաստատութի առնէ. ըստ ասացելոյն թէ՝ * Հաստատուն կացէք 'ի սէր իմ։ Նոյն 'ի նոյն յարէ * Թէ պահիցէք զպատուիրանս իմ, կացջիք 'ի սէր իմ։ Այս միտս աղօթիցս բան մաղթէ։ Հաստատուն կալ և մնալ 'ի սէր և 'ի պատուիրանապահութեան քոյ։ Ո՛չ մի ժամ կամ օր կամ տարի, այլ հանապազ։

Խնդրելով զխաղաղութի ա՛մ աշխարհի, եկեղեցւոյ քում հաստատութիւն, և անձանց մերոց փրկութիւն։

Արդարև՝ որ հաստատեալ է 'ի սէրն քո և պահէ զպատուիրանս նորա, նա հանապազ հոգայ վասն աշխարհի խաղաղութե և սուրբ եկեղեցւոյ հաստատութե, և վասն անձին և ընկերին փրկութե. և զնոյն հանապազ խնդրէ 'ի քէն։ Վասն զի որ սիրէ զա՛ծ՝ նմանի նմին սիրէ զա՛մ մարդոյ վկեալն։

Զի ընդունելով 'ի քէն զհայցուածս մեր, զմեծ վայելչական փառաբանութի միշտ 'ի բարձունս առաքեսցուք ամենասուրբ երրորդութեդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Չիք 'ի մեզ կար ըստ արժանեաց փոխադարձել ըստ ա՛յ բարեացն անհամարոտին. բայց միայն զի գոհասցուք և փառս տացուք նմա և այնու մեք փառաւոր լիցուք։ Ո՛չ եթէ նմա ինչ յաւելուած արասցուք, որ փառաւորեալն է յամենայնի. զի գրեալ է, * Զփառաւորիչս իմ փառաւորեցից։ Իսկ զինչ է վայելչականն. վ͞ս զի վայելէ ա՛յ յամե գոհութե և փառաբանութե բան, որ արժանի է փառաբանութեան. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Յովհաննու օձնեցւոյ՝ վասն երեքսրբեան երգին։

Ոհ, հեա որոյ և խորհրդաբար կարգեալ է երից սրբասացու- թեանցն երգ, ըստ աւետեան մարգարէին և մեկնութեան աւետարանչին։ Զի զփառս խաչին եսես Եսայի և խօսեցաւ վասն նորա. զնոյն և հայրականն յայտնեաց բարբառ. * փառաւոր արա- րի, և դարձեալ փառաւոր արարից։ Եւ ինքն յաղագս իւր վկայէ յասելն, * Այժմ փառաւորեցաւ որդի մարդոյ։ Վասն որոյ ոչ վայ- րապար մեք 'ի վեր առնումք զխաչեցարն 'ի գլուխ սրբասացութեանցն։ Եւ քանզի սուրբ է որդի և հզօր և անմահ. և կամօքն հօր և հա- ճութեամբ հոգւոյն եկն նա 'ի չարչարանս խաչին. և նովաւ իսկ ծա- նեաք զհայր և զհոգին։ Եւ մի պախարակեսցեն այսպէս խորհե- ցօղքն զերից սրբասացութեանս երգ. որք և ամօթ ևս վարկանին զփրկութեանն մերոյ անօթ։

Բայց մեզ յայտ ինչ մի լիցի պարծիլ ըստ առաքելոյ, բայց միայն 'ի խաչն տեառն մերոյ յի̅ քի̅։ Եւ մեզ առկայացի այս, զի և ոչ ժամ իսկ է. այլ այսքան, զի ծանիցուք զսա հրեղէն պարիսպ եկեղեցւոյ։ Եւ շուրջ արկեալ է 'ի գլխաւորական աղօթս առաւօ- տի, և խորհրդական ժամուն երրորդի, և երեկոյի, երից անգամ յաւուրն զնոյն եռակի կրկնելով։ Եւ զի զխաչին երախտիքն ծա- նեաք, ընդ նմին և զմայրն լուսոյ յիշատակեմք և աղերսեմք 'ի բարե- խօսութիւն առ այն որ հանեցաւ բնակիլ յորովայնի նորա և խաչին սրբով փրկել զմեզ։ Եւ այսպէս փոխանակ օրհնաւոր գառանցն ա- ռաւօտոյ և երեկոյնոյ մատուցելոյ, յեկեղեցւոյ աստի մատուցանի խոստովանութիւն՝ սրբոյ անուան նորա 'ի պտղոյ շրթանց, և յանբիծ վարուց ուղղութիւն։

Եւ տար մաղթանք՝ Փրկել զմեզ, և քարոզ՝ Վասն լսելի լինելոյ, և տուր՝ փոխս։

Համբարձի զաչս իմ 'ի լերինս. և այլն։ Զի պահպանիցիմք տէրունական աջովն նորա. ուստի և ակն ունիմք զօգնութիւն ընդունել յարարողէն երկնի և երկրի։ Եւ զի յարեւու փորձու- թեանցն մի խորշակահար լինիցիմք, այլ պահելով զմեզ 'ի մեղանաց ապրիցիմք և յամ̅ որոգայթից հոգւով և մարմնով։ Տէր պահեսցէ զմուտ քո ծննդեամբ յաշխարհ, և զել քո մահուամբ՝ յայսմ հետէ մինչև յաւիտեանս, յաստեացս մինչև 'ի հանդերձեալ յաւիտեանն։

Աղօթք՝ զկնի Համբարձման։

Հայր գթած՝ արարիչ և բարեխնամօղ մեր արարածոց։ Հայր սուրբ՝ զվերային ծնունդն յաւիտենից առաջի արկանելով՝ ’ի գութ զքեզ խոնարհեցուցանել կամի. վասն այնորիկ և զգթածն յաւել և զխնամօղն։ Ով հայր և գթած և խնամօղն՝ ոչ անուանս առնէ զորս յորդեգրութիւն ընկալաւ. մանաւանդ զի ոչ հայր միայն է, այլ և արարիչ. և վասն զի մեր աշխարհի զողորմութիւն կամի հայցել, վասն այնորիկ յարէ զայն թէ՝ արարիչ մեր արարածոց։

Ընկալ զպաղատանս ծառայից քոց։ Որ հայրական և արարչական գթոյդ թէ և մեղուցեալ իցեմք, ընկալ զպաղատանս մեր. զի և ծառայք քո եմք, և հայր զքեզ կոչեմք։

Ողորմեա՛ ’ի վերայ մեր աշխարհի. հիւանդաց՝ վշտացելոց՝ ճանապարհորդելոց՝ նաւորդաց՝ խոստովանողաց՝ ապաշխարողաց, և հոգւոցն հանգուցելոց։

Վասն զի կամի մեզ ամենեցունց փրկութիւն, և սիրէ զի մեք խնամ ածիցեմք և զերերաց զօգուտն հայցիցեմք, վասն այնորիկ մաղթեմք մեր աշխարհի զողորմութիւն և կարգ ըստ կարգէ ամենեցուն զոր թուեցաքն։ Ապա թէ, ոչ միայն զողորմելիսն յաւելումք, այլ յաւելումք զինչ պէտք են հասարակաց մեզ՝ դու ինքնին գիտես առաւել քան զոր խնդրեմք և իմանամք։ Որդ վասն զի առաւել ես պարգևօք բարերարութեան՝ և զպէտս մեր գիտես, ողորմիլ հայցեմք և գթալ հայրաբար, և յամի քեզ փառս վերառաքեմք. քանզի յարէ ’ի նոյն։

Այլ քեզ հօր արարչի և որդւոյդ միածնի հանդերձ կենդանարար և ազատիչ սուրբ հոգւովդ վայելէն փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Յովհաննու օձնեցւոյ։

Նա արդ սաղմոսօղքն հասարակ մաղթեն՝ ընդ հովանեաւ բարձրելոյն լինել, և յերկինս հանգստեանն արժանաւորել, և ամէն յորսողին փրկիլ որոգայթից զինու չարին պահպանութեամբ։ Նա զի թագաւոր ընդ խաւար շրջի որոգայթադիրն, զօրացն ասեմք զնեթացս արարից մերոց՝ զգիւղաւորական չարութեան

չարասիրին։ Վասն որոյ և յայսմ գիշերի առ քեզ համբառնամք զմտաւորական աչս իմք ծառայս քո տէր, զի ՚ի ծփական տառապանաց դերծուսցես զմեզ. և ընդունիցես զաղխս մեր անխարդախս կանխել առ քեզ ՚ի մէջ գիշերոյ և յառաւօտի, և զկամաւորին մատուցանել քեզ պատարագ բանաւոր։ Այլ քաղցրն միայն խնդրել պայծառակ յարգորել։

Իսկ քահանայն միջնորդէ աղօթիւք առ կենացն անմահից յայն յիք̃, կատարել ՚ի բարի զաղօթսն՝ բարեխօսութեամբ սրբուհւոյ ածածնին և հաճոյական մկայիցն։ Այլ ժողովուրդն դքահանայն տէր անուանելով ասացէ յիշել յաղօթսն զպաշտօնեայս ընտ հոգւոյ և մարմնապէս, և զծնօղսն, և զայլն ես մի ըստ միոջէ։ Իսկ նա համառօտելով ասէ,

Յիշեա զամ հաւատացեալս և փրկեա յիւրաքանչիւր վտանգից և ՚ի փորձութեանց. զի յամենեցունց արժանապէս փառաւորի ամենասուրբ երրորդութիւն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Քարոզ ապաշխարողաց խոստովու։

Եկեալք ՚ի խոստովանութիւն ապաշխարութեան հաւատով զյոյս միածնի որդւոյն այ դիցուք ՚ի սիրտս մեր։

Տեսանե՞ս, զի չասաց լոկ զապաշխարութիւն. այլ նախ զխոստովանութիւն և ապա զապաշխարութիւն. զի առանց խոստովանութեան չէք հնար քաւութիւն գտանել։ Վասն այսորիկ պարտ է փութալ ՚ի խոստովանութիւն քահանային խոստովանիլ միանգամ, և այլ հանապազ, և այնպէս ապաշխարել հաւատով և յուսով։ Թէպէտ և բիւր չարեօք յառաջինն վիրաւորեալ իցեմք, հաւատասցուք ՚ի մարդասիրութենէն քո քաւութիւն և թողութիւն գտանել. զի զայս հրամայէ քարոզն։

Հաւատով զյոյս միածնի որդւոյն այ դիցուք ՚ի սիրտս մեր, խնդրելով ՚ի նմանէ զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց։ Եւ ՚ի հաստատել զյոյսն՝ զբարերարութիւն քո զգործս և զբանս որպէս զառհաւատչեայ առաջի դնէ։

Վասն զի նա ինքն է նախախնամողն աստուած յաւիտենական որ եկն կամաւ հօր փրկել զարարածս. և սաստ զինքն լինել քաւիչ մեղաւորաց՝ յոյս ապաշխարողաց, շնորհելով հանգիստ աշխատելոց, ընդունելով զծանրաբեռինս և զանարժանեալս մեղօք

յապաշխարութեան քաւութեան։ Նախանձամոլն այն է, որ յա-
ջողեալսն քինի առ հայր ուրուք․ քանզի և որդւոց իւր առաւելուծն
բարերարութեանն այս է՝ նախանձողակ լինել առ իւր արարածս․
Վասնզի յառնելն զմարդն՝ նախ զերկինս և զերկիր այլովքն արար,
և ապա զմարդն գոյացոյց․ և յառաջ զդրախտն, և ապա զանասունսն։

Նոյնպէս և՝ իսկ նախքան զելանել մարդկան յարգանդէն՝ և
կամ տնտեսացն ծննդոց, լնու զստինսն կաթամբ առ նոցա պէտս և
սնունդս։ Այլ և զստինս կանանց և զօրէ նոցա երբ ժամանակ լինի
ծննդականութեան՝ նախակարգէ․ Իսկ զհոգւոյն նախախնամութիւն՝
նախ արարածովքս եցոյց զի ծանիցի արարիչն սորա․ յետ այսր սուր-
բովք իւրովք առաքելովք և մարգարէիւք, և իւրով իսկ մարմնաւո-
րովն։ Յետ այսր՝ առաջնորդովք և գրովք սրբովք ազգի ազգի ու-
ղղութիւն ցուցեալ կենդանիս և բնաւորովքն իւրովք․ և մեղաւորացն
ևս օրինակ ցուցեալ ՚ի հնումն և ՚ի նորումս․ այլ և մարգարէիւքն
կոչեաց զամ մեղաւորս յապաշխարութիւն և ՚ի քաւութիւն յուսադրել։
Եւ զհետ գալուստն՝ մեղաւորաց վասն ասէ․ և երթողաց առ ինքն՝
յաշխատութենէ մեղաց և ՚ի բեռանց, նոցա հանգիստ խոստանայ․
այս է զոր ասէն,

Շնորհելով հանգիստ աշխատելոց։ Իսկ՝ ընդունելն զծանր-
բարեռնեալս և զաշխատեալս յապաշխարութիւն քաւութիւն՝ այս է,
որ ոչ բանիւք միայն, այլ և արդեամբ եցոյց զընդունելութիւն մեղա-
ւորաց։ Որպէս զմաքսաւորն առաքեալ և աւետարանիչ արար․ և միւս
մաքսաւորին՝ տանն փրկութիւն ետ։ Զպոռնիկն մերձիլ յամենա-
սուրբ ոտս իւր արժանացոյց, և ՚ի պատրօղ աչացն արտասուացն
լուանիլ, և վարսաթափեալ գլխոյն հերօքն մաքրիլ։ Որոյ ոչ միայն մե-
ղացն թողութիւն ետ, այլ և աշխարհաքարոզ զնորա ուղղութիւն ա-
ւետարանաւն արար․ և ղաւազակն յառաջ եմուծ քան զամենեսեան
՚ի դրախտն։ Զպետրոս ոչ միայն յուրացութեան գլորմանէն կանգ-
նեաց, այլ և գլուխ առաքելոցն և հիմն եկեղեցւոյ և փականք արքայ-
ութեան լինել պատրաստեաց։ Զսոսա և զայլս բազում աշխատեալս
՚ի մեզ՝ այսինքն զաշխատեալս ՚ի չարեաց ծանր բեռինն յայս, ՚ի
սոյնպիսի բարեաց հանգիստ շնորհեաց քաւութեան։

Արդ եկա՛յք ամենեան խոնարհեալ անձամբ՝ բեկեալ սրտիւք՝
անկցուք և լացցուք առաջի տեառն արարչին մերոյ։ Ո՛չ է ինք
ամ վիրաց չարեաց՝ խոնարհամբք և բեկեալ սրտիւ․ զոր ոչ արհամար-
հէ ամ, այլ և պատարագ հաճոյական է նմ խոնարհն։ Այն է որ
զհայրն ՚ի մեղաւորն նմ ասէ․ որպէս ասաց ինքնին մարգարէիւն՝

* Ցո՞ հանգեայց . եթէ ոչ՝ ՚ի հեծս և ՚ի խոնարհս և որք գտանն ՚ի բա-
նից իմոց ։ Չհայտնախսին ոչ հայր և եթ, այլ և հաւաք կայ ՚ի Նոսա՝ այլ
և կեցուցանէ ։ * Մերձ է առն առ առ այնոսիկ որ մաշեալ են սր-
տիւք, և զխոնարհս հոգւով՝ կեցուցանէ ։ Իսկ թէ յանձն բերկեալ
մերձ է մեծ՝ որ այնպիսի խոնարհի մօտ և բեկի սրտիւ, նա յար-
տասուաց ոչ երբեք դադարէ . այլ ՚ի սուգ է հանապազ, առաջի ան-
կանի արարչին իւր . յորմէ և մխիթարի և երանելի լինի ։ Նոյն ոչ
վայրապար յաւել մարգարէն զասելն, * Անկցուք և լացցուք առաջի
տեառն արարչին մերոյ ։ Յորմէ քարոզս զբանս էառ . այլ զի ՚ի մեա
տացուք թէ ո՞վ մեղաք . արարչին, որ արարն զմեզ ՚ի բարիս . վասն
իւր նմանող լինելոյ, վասն հաճոյ իւր լինելոյ, վասն ծառայելոյ բա-
րեաց հաւատչին, և վասն այսց մեծ եղեալ ՚ի նմանէ ։ Փոխանակ այ-
նոցիկ դառնացուցիչք լեալ, յիրաւի լալ և ողբալ պարտիմք առաջի
նորա . զոր թէ արասցուք, գթայ վասն արարչական սիրոյն, ներէ և
ոչ խնդրէ վրէժ . քանզի և քարոզն ՚ի սոյն յորդոր զայս ։

Որ տացուսցէ ՚ի մեզ զցասումն պատուհասի յանցանաց մե-
րոց ։ Մեք յիշելովն զարարչին երախտիս և զմեր ապերախտութիւն,
՚ի լալն այսու գամք եթէ կցեմք երկիւղածք ՚ի տեառնէ ։ Իսկ արա-
րիչն ՚ի գթոյն չկարէ զլացեալս պատժել, այլ և մխիթարէ զնո-
սա նէ . այպս յաղօթս զբանն փակէ ։

Մեծապատիւ տէր մեծ մեր կեցո և ողորմեա մեզ ։

Աղօթք խոստովանու ։

Աստուած բարձրեալ գովեալ և փառաւորեալ ։ Ինկզեմ
աղօթիցս յուշ առնեմք անձանց զքո մեծութիւնն և զքո
յանդգնութիւն, և դարձեալ՝ զքո ներողութիւն առ մեզ . զի մեծ ես,
և զի բարձրեալ ես ՚ի վերայ երկնի և երկրի, և զի գովեալ ես ՚ի բնու-
թենէ և ՚ի գործոց և յերախտեաց իւրոց, և փառաւորեալ ես յան-
ներցունց ։ Իսկ մեր արհամարհեալ զնա և ապստամբեալ ՚ի նմանէ, և նա
երկայնամտէ և ներէ, և անսալ ապաշխարութեան . և ՚ի դառնալն՝
ընկալ պարգևանէ և ընդունի խնդութեամբ . վասն որոյ և առէ,

Որ երկայնամիտ ես քաղցրութեամբ քով ։ Նայ սակս ներո-
ղութեանդ մերձեալ ՚ի մեղս կցեմք ։ Խոստովանեմ և բազմաշնորհ ես
առ ամենեսեան որ կարդան առ քեզ, խնդրեն զբարութիւն և զքո

ղութիւն մեղաց ։ Այս մեր դարձեալն յապաշխարութենէ․ որոյ կամ-
ւոր խոստացաւ ՚ի ձեռն մարգարէին, *Դարձարուք առ իս եւ ես
դարձայց առ ձեզ․ զի ոչ կամիմ զմահ մեղաւորին, որպէս զդառնալն
նորա ՚ի չար ճանապարհէն եւ զկեալն ։ Զայս եզեկիէլ մարգարէ ասէ
յերեսաց Տեառն յապաշխարութեան յորդորելով զմեղուցեալսն ։
Այլ եւ երկրորդ դարձեալ խոկ ասացեր բերանովդ քով սրբով եթէ՝ *Ոչ
եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն․ Զայս, առ-
ասաց յորժամ բամբասեցաւ ՚ի փարիսեցւոցն թէ ուտէ եւ ըմպէ
ընդ մեղաւորս եւ ընդ մաքսաւորս․ Վասնզի վասն բժշկելոյ զհիւանդ-
յանձին կալաւ ընդ մեղաւորսն զանկրաւորութիւն ժողովելոյն ուտելոյ։
Արդ մեք զայսպիսի մարդասիրութիւն յիշելով ասեմք թէ՝ որ մար-
գարէիւն խոստացար դառնալ առ դարձեալսն առ քեզ, եւ քո սրբա-
նասուրբ բերանովդ ասացեր յապաշխարութիւն ընդունել զմեղաւորսն ։

Արդ ողորմեա՛ց ինձ ՚ի վերայ ապաշխարողացս․ ընկալ զաղաչ-
աղօթս զխոնարհութեանս զպաղատանս զխոստովանութիւնս ։ Ցնէ եւ ար-
ժանի գործս չունիցին, զի ողորմած ես՝ ողորմեա՛ եւ ընկալ զապաշ-
խարանս զաղօթս եւ զխոստովանութիւնս ։ Աղօթք է աղերսել ինչ, խնդր-
ուածք է կարեւոր պիտոյից յայտնութիւն․ պաղատանք է՝ մինն վասն
պատուհասի սպառնալեաց երկիւղիւ պաղատանս մատուցանել եւ
տագնապաւ աղերսել առ ներումն ։

Գթութիւնք քո թո՛ղ սոցա զմեղս եւ զյանցանս եւ զպարտիս ։
Դարձեալ ՚ի գթութիւն առաւելնի գթալ եւ թողուլ զմեղսն ։ Մեղք
եւ յանցանք եւ անօրէնութիւնք, պաճնկերեան անօրէնութիւնք եւ պարտիք
են ։ Բայց թէ զանազանէ որք զմեղսն, սաստ եւ զյանցանսն՝ զպատ-
ուիրանաւն Տեառն յանցանելն․ խոկ զպարտիսն՝ զոր պարտիմք, առնել-
նոցա՝ եթէ ոչ ապաշխարեսցուք ։

Մարդասիրութիւնք քո բժշկեսցեն զվէրս աղտեղութեան զանկանելեաց
որ եղեն ՚ի թշնամւոյն եւ ՚ի մերոյ խաբէութենէ նորա ։
Տէ՛ր եւ սաստ ՚ի մարդասիրութիւն քո յուսայ բժիշկ վիրացն լինել․
զանազանէ զանուանեալն եւ սաստ, զի ոմն սաստիկ վիրաւորեալ է եւ ոմն
նուազ հարուածեալ է եւ ոմն խորտակումն ընկալեալ ։ Այլ պատճառ,
ամենեցուն՝ նենգութիւն սատանայի է, որ խաբէ եւ մոլորեցուցանէ
զոչ զգուշացօղսն ։

Արդ զի սոքա առողջացեալք փութանակ ամբողջ մարմնով
մտցեն յեկեղեցի քո սուրբ ։ Պաղատանս մատուցանեն քահանայքն զի
զոր հիւանդութիւս բժշկեսցէ եւ ՚ի սուրբ առողջութիւս հաստատեսցէ ։
Զի փութանակ յեկեղեցի մտանել արժանացին եւ ժողովրդեանն.

նոյ փառաւորանակից լինել. քանզի ամենեքեան որք 'ի քն մկրտեցան, քն անդամք և մարմինք եղեն։ Իսկ մերուցեալքն՝ ըստ առաքելոյն պօղոսի՝ ոչ կարեն անդամք քն լինել. *Զի որ մերձենայ 'ի պոռնիկն՝ նորա մարմին է։ Եւ ինքն իսկ տէրն ասէ, *'ի բաց կացէք յինէն ամենեքեան, ոյք գործէիք զանօրէնութիւն։ Նման այսորիկ և յեկեղեցւոյ արտաքսեն զանօրինեալն. զի եկեղեցին նոյ տունն է, և 'ի նմա որք յառաջադասի միաբան ընդ քն ոգիքն. և յանցաւորքն յերկնայ նորա ընկեցեալք են։ Մինչև սոյդ խոստովանութիւն և ապաշխարութեամբ վերստին առողջանայցեն որպէս 'ի մեղաց՝ արտաքսելոցն ուղղափառ. որով մարթասցեն դարձեալ յեկեղեցի հոգւոյն հովանաւորանն մտանել և 'ի ժողովուրդն նոյ խառնիլ, և ընդ հրեշտակս և ընդ սուրբս նոյ՝ մասնակցել գոհութիւն նմա։ Վասնզի յեկեղեցիս նոյ միաբանութիւն լինի հրեշտակաց և սրբոցն ողւոց։ Արդ՝ արտաքսեալ խոնարհ հոգւով և բեկեալ սրտիւ սուգ առցեն և ողբասցեն յանձինքն վերիցանս. զի հասցեն 'ի գթութեանց նոյ քաւութիւն. և առաջնոցին և 'ի սուրբսն խառնեսցին, և 'ի ժողովուրդան միասցին. որոց ասէն թէ՝

Եւ ընդ ժողովրդեան քում հանցեն զօրհնութիւն և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Սակս կիրակէի արձակման աղօթից։

Թագաւոր խաղաղութ՝ օգնական և փրկիչ անձանց մերոց քս ած մեր, պաղատելով պաշտեմ. զհաւատացեալ ժողովուրդս քո ընդ հովանեաւ պահպանական և ամր խաչի քոյ 'ի խաղաղութի։

Զմարգարէին ասել զբան. զոր կանխագուշակ ասաց թէ պատմաբանել ասէր՝ 'ի դէմս քրիստոսի, *Ես կացի թագաւոր 'ի նմանէ 'ի վերայ սիոնի լերին սրբոյ նորա։ Եւ դարձեալ ասէ, *Թագաւորեաց ած 'ի վերայ հեթանոսաց։ և թէ՝ *Ասեմ զգործս իմ թագաւորի։ Եւ այլ ուր յայտնապէս ասէ, *Տր թագաւորեաց՝ վայելչութի զգեցաւ խաչիւն։ Զի թէպէտ և ածութբ էր թագաւոր յառաջ քան զյաւիտեանս 'ի վերայ ամենայնի, այլ զմարմնով թագաւորելն ասէ. և զի արար խաղաղութի արեամբ խաչին իւրոյ, վասն որոյ և թագաւոր խաղաղութեան կոչէ։

Օգնական և փրկիչ անձանց մերոց քս ած մեր։ Օգնական եղև բնութեանս որ աղարտեալ էր 'ի մեղաց, և փրկեաց 'ի ծառայ-

ութենէ սատանայի. ըստ առաքելոյ, *Ո՛չ ապականացու արծաթե-ղինօք և ոսկեղինօք փրկեցայք. այլ պատուական արեամբն Քի. Սոյն որոյ օրինակս ցուցաւ մեզ տէր և թագաւոր և օգնական Քն մեծ մեր. Քն՝ ըստ մարմնական անօրէնութեն, որով փրկեցաք. և մեծ՝ ըստ արարչական էութեանն։

Պարապեալ պահեմ զկուսացեալ ժողովուրդս քո ընդ հովանեաւ պատուական և սուրբ խաչի քոյ 'ի խաղաղութի։ Մեծ է խնամք բարերարին ո՛յ առ արարածս, բայց և առաւել առ հաւատացեալ ժողովուրդս և առ երկիւղածս իւր ցուցանէ զխնամական գթութիս իւր. ըստ այնմ, *Բանակք հրեշտակաց տեառն շուրջ է զերկիւղածովք իւրովք և պահէ զնոսա։ և թէ՝ *Զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր։ Եւ դարձեալ թէ՝ *Եղիցի ձեռն քո 'ի վերայ առն, աջ քո 'ի վերայ որդւոյ մարդոյ։ Այս է զոր բան աղօթիցս խնդրէ պարիսպ և պահպանութիւն։

Իսկ զի ասէ, ընդ հովանեաւ պատուական և սուրբ խաչի քոյ։ Խաչդ անուն յառաջ մինչև էր Քն 'ի նմա բևեռեալ՝ նախատանաց էր անուն և չարագործաց պատժարան։ Սոյն որոյ և անօրէն հրեայքն այլ ազգ մահուամբ ոչ կամեցան զտէրն սպանանել, բայց միայն խաչիւ. զի յամենեցունց մահապարտ և չարագործ կարծիցի որպէս զաւազակն. վասն որոյ և ընդ նոսա խաչեցին։ Իսկ տէրն որ մարմին զգենլով զմեղանչական մարմինս սրբեաց և մաքրեաց, այսպէս 'ի խաչին բևեռելով՝ պատուական և սուրբ արար զխաչն. և եա պարիսպ ամրութեան և զէն անյաղթ հաւատացելոց իւրոց։

Եւ զօրօրինակ որք ընդ հովանեաւ ծառոց կամ այլ իմիք տաղաւարին, անփորձ մնան 'ի տապոյ արեգականն։ Ըստ այսմ օրինակի որք ընդ հովանեաւ պատուական և սուրբ խաչին պահպանին, ամրացեալ և խաղաղացեալ մնան յամ մեքենայից սատանայի, իբր զքաղաք ամուր եօթնեկի պարսպօք զօրացեալ. զոր և միշտ 'ի մեզ լինիլ մաղթեսցուք։ Վասն զի միշտ դարանամուտ լինի չարն. և ջանայ որսալ 'ի կորուստ զորդիս մարդկան. ոչ միայն զհոգիս վիրաւորելով, այլ և զմարմինս չարաչար վտանգօք լնու։ Զոմանս՝ 'ի ղանազան մեղս գթեցուցանէ, և յոմանց վերայ զաւունս փչուցանէ. զայլ ոմանս՝ զահավէժ կամ բքախեղդ գետակուր և ծովամոյն առնէ. զկէսս՝ զազանակուր և աւազակախողխող առնէ. կիսոց՝ դիւրովին տայ երթալ և անձնամահ լինիլ, զորոց ընդ մարմնոցն և զհոգիսն կորուսանէ և բաժին խաւարին առնէ։ Թողից ասել և զորս կախարդանօք դիւթութեամբ և դեղատուութբ և այլ զանազան չարեօք սովոր է կորուսանել զծնիչսն և զծնեալսն։

Եւ արդ՝ յայսմ ամենայնէ այնոքիկ զերծանին, որք միշտ ընդ

Ո՛վ զի՛նչ. զանձն օրինակ բարեաց տայր ամ զղջացելոց. յագ-ւաց հանելով և ասելով մեղայ առաջն, որով թողութիւն գտանէր. զի ասէր մարգարէն, * Եւ տէր անցոյց զքո զմեղս քո։ Նայց ոչ յանհոգս լինէր վասն այսորիկ, այլ հանապազ տրտում գնայր և արտասուօք զանկողինսն թանայր, 'ի մէջ գիշերի խոստովան լինէր երկուանցն ոչ. Սատակէր 'ի հեծութեանն, և 'ի մահճին հանգստեանն իւր դառնայէս։ Մոխիր փոխանակ հացի ճաշակէր, և զըմպելին արտասուօք խառնէր. և անմխիթար միշտ լինէր, մինչև յէ-ջուծն ոչ ուրախ զնա առնէր. թէ որ առեղծն, նոյն և գթացի հայ-րաքար։ Արդ 'ի դառնագոյն վշտամբերութենէն նեխեսին վէրքն և փտեսին յինքեան. և ոգին նորոգէր 'ի ցաւոց մարմնոյն և յայս մասին վերստին արծարծէր. և շնորհք մարգարէութեանն 'ի նմին մնայր. և օրինակ բարի ամ զղջացելոց լինէր որպ ասացաւ. զի ած հաշտէր, և ընդ ասատեացս և հանդերձելոցն լինէր ժառանգաւոր.

Որպիսի ոք և պօղոսն էր. անօթն ընտրութե, տեսօղն դրա-խտին փափկութե, փողն տարսոնացի, քարոզն հեթանոսաց։ Սա ընդ-ամենայնի ամ լինէր. որ ասէր յայտնապէս, * Ո՞ հիւանդանայ և ես ոչ հիւանդանամ. ո՞ գայթակղի և ես ո՛չ տապանամ։ Արդ այ-նայր հոգին յորժամ յանաստուածութե զոք տեսանէր. և դըժ-ուար հնարս մտանէր զփրկութի մարդկան շահել։ Նա ակնեալ յե-րուսաղէմէ մինչև 'ի լիւրիկէ լի՛ առնէր զաւետարանն, աշխատէր ձեռօքն անձանձիր միշտ ընթանալով։ Սա և գործակցութ սիրով դառնայր միշտ 'ի վս աշակերտելոցն, և 'ի ձեռն գրոյ զհոգոյցեալսն վերստին միշտ հաստատէր և կազմէր ժողովուրդ սեպհականն ոչ, նախանձաւոր գործոց բարութեան։ Նա զայսպէս աւետարանօքն արտաքոյ իւրոց քարոզիցն՝ նզովից մատնէր, թէ և երկնային ոք լի-նէր հրեշտակ։ Սա և ըղձիւք ևս խնդրէր նզով լինել 'ի քսէ վս մարմնաւոր ազգականացն, թէ հնար լինէր փրկութեան հասանել։ Ո՛վ՝ զոր երկնի և երկրի և ասատեացս և հանդերձելոցն և թէ այլ արարածք լինէր՝ անհնար էր մեկնել 'ի սիրոյն քի։

Յաղագս որոյ 'ի հրէից հնգիցս քառասուն՝ միով պակաս գա-նէր. երիցս ձաղկելով և միանգամ քարկոծ լինելով, և զտիւ և զգիշեր մի՝ յանդունդս ծովու տառապէր։ Սա զքրիստոսախոհն վս քի սիրէր և վասն նորին չարչարիւր. և զպակասութի չարչարանաց քի 'ի մարմնի իւրում միշտ լնոյր։ Արդ աշխարհ 'ի խաչ ելեալ էր և ինքն աշխարհի. և քս միշտ խօսէր և զհոգին սուրբ յայտնապէս յինքեան ասէր. և զամենեսեան կամէր զի հանգոյն ինքեան ժուժ-կալեսցին. և կուսանաց զհաճոյից առաջն միշտ հոգալ տայր. զ

կայիւր վասն քո յերուսաղէմ, և 'ի մեծ ապաւէն հռոմ արձակիւր . և հրէից ահագին տագնապ արկանէր, և խնդութի մեծ հաւատա-ցելոց ընծայէր։ Նա և գլուխս եւ անդ շահէր . և յառաջագոյն վերին հրաւիրէր, յառաջագոյն որ միայն և 'ի հարսնարանն ան-մահ բանին։ Ընդ որս և զենքն անդ կայացեալ ընդ մարմնոյ ընծայէր . որ յառաջ քան զլինել աշխարհի ընտրեալ զենքն առեր։ Նա յաւէտ եւս արձակողին ըստ նախահօրն պարտեաց, և դարձեալ բարձրագոյն կարգեալ անապական մարմնով յաներկի առուրն։

Ուրախ արք էր և գլուխ առաքելոցն պետրոս . փակօղն երկնից արքայութեանն։ Որ ոչ 'ի մարդկանէ կամ 'ի հրեշտակաց ուսեալ էր զաստուածութի որդւոյ, այլ 'ի հօրէն լուսոյ . և յերրորդ երանութեան արժանացաւ 'ի քէն։ Այն որ կարէրն ասել համարձակ, *Մեք թողաք զամ և եկաք զհետ քո։ Նա փոխարէն զդատաւորականն աթոռ ընդունէր . որ և մեծ անուանեցաւ 'ի առաքելոց և հիմն եկեղեցւոյ եղաւ . և ջերմեռանդն փափագմամբ խոնարհեալ էր 'ի ոտս քո, և միշտ փափագէր երկմանն ոչ . որ զմիմեան սատարէր վասն նախան-ձու առաւել սիրոյ . և 'ի հռոմ խաչիւր գլխիվայր, և զընթացս յեր-կինս ուղղէր ասելով, *Մի թէ զոր սիրեաց անձն իմ տեսից։ Նա Հռոմայեցւոց 'ի սէր զաւակին վառէր . և փութանակի առ նա հասա-նէր, զանապատ բարիսն ժառանգելով և զկեանս անվախճանս ընդ-առաւել սիրոյ։

Այսպէս նմանեսցուք և մեք . այսպէս հաղորդեսցուք փառաց . զի և այնպիսեացն արժանասցուք . զի թէ ոչ աշխատի մշակն՝ ոչ հնձէ ըստ պատշաճ 'ի դէպ ժամանակի։ Այս է ժամանակ գործոց և աշխա-տութեան . այս է ժամանակ սերմանելոյ։ Սերմանեսցուք զբարիս մինչդեռ ժամանակս 'ի ձեռս է . զի հնձիցեմք յապագայսն զկեանսն յաւիտենից։

Պետրոս խաչիւր վասն քո . և Պօղոս մերկ էր յանձն առ ըստ նեղութիւն մարմնոյ և զարհամարհանս վասն սիրոյն առաւել։

Պօղոս ճնշէր զմարմինն և չարչարէր . դու գթեայ չափաւոր մի՛ սրբեամ։

Կատարեալ [illegible] և մեծացեալ [illegible] և [illegible] [illegible]։

Մովսէս 'ի [illegible] և [illegible] [illegible]։

Յոր հաստատակորդ առնէր զաղքատան ստացուածոցն, և նեղութեանցն և վշտացն ողորմութբ առնէր. դու գտեալ սակաւ ինչ կարկառեա կարօտելոցն, և ՚ի վիշտս մի՛ տրտնջար:

Աբրահամ ընդ հաւատոցն և գործքն առնէր բարիս՝ զառաքինութիւն և զհիւրընկալութիւն, և հող և մոխիր զինքն կոչէր. դու և զեկեալ հիւրան մի՛ դարձուցաներ, և մեծամտութբ մի՛ ամբարտաւաներ. այլ ընդ խոնարհս զիջանիջեր:

Եթէ զայս առնիցես և զսոյին նմանս, ճշմարտապէս ծառայ տն̃ գտանիցես և ՚ի բարւոյ մասին լինիցիս. և ընդ սրբոցն դասուց զանպատում բարիսն և զանվախճան կեանս ժառանգեսցես:

Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել, շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին յի̃ քի̃: Ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ վայել է փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից խաղաղականի ժամուն, որ կատարի ՚ի դէմս հոգւոյն սբյ̃: Եւ ասի՝ Օրհնեցից զտէր յամ ժամ, և այլն որ ՚ի կարգին:

Յաղագս խաղաղականին աղօթիցն:

Իսկ հանգստեան ժամու աղօթքն վասն զի կարգեալ է ա՚ի գիշեր զգաստացուցանել, և պարտիմք ուշիմ մտօք առ խորս նայել. զի կարող լինիցիմք օգնել առ ՚ի գերելոցն յիշատակի:
Իսկ արդ՝ հանգստեան կոչի աղօթք, և խաղաղական ասի. վասն զի օրինակ է իջանելոյն ՚ի դուռն գերեզմանին: Իսկ որպէս ՚ի մեռեալ իջանելով հանգչիմք յաշխատութենէ և խաղաղանամք ՚ի խորհրդոց, զնմանութիւն բերեմք զմահուն հանգստեան և զխաղաղանալն ՚ի զբաղմանց կենցաղոյս: Վասն որոյ և յարժամ ՚ի մահճս ննջիցեմք, պարտիմք զմտաւ ածել ասելով, ո՞ գիտէ թէ օրինակս ՚ի ճշմարտութիւն փոխեսցի. և այլ ոչ յառնեմ յանկողնոյս, այլ փոխեցայ ՚ի ննջեցեալս ՚ի ննջումն մահու: Այսպէս և ՚ի յառնելն յիշել զմահն ասելով, ո՞ գիտէ թէ յերեկոյն հասանեմք թէ ոչ:

Բայց և զայսմանէ ոչ է այժմ զանգիտանել. զի եկեղեցիք հայաստանեայց բազում ինչ թիւրեալ են 'ի սահմանէն, և սպառեալ 'ի կարգաց, զի զարեւագալին աղօթսն 'ի յառաւօտին յարեն և միայարտողեն միջոց ոչ առնելով. և շատք են այն են՝ որ 'ի գիշերոյն սաղմոսն յարեն: Յառաջ քան զօրհնութիւնն և զխաղաղականսն՝ ասեն, Եղիցի անուն տն օրհնեալ, և յաւիտենից, և զառաւօտու զաղօթս: Յետ այս սկսանին զօրհնութիւն և զխաղաղականսն և զհայրցն. և յայժմ անմիաբար է այս և անկարգ:

Իսկ զխաղաղականին աղօթքն՝ յերեկոյին ժամու յարեն, կամ յառաջ ասեն քան զերեկոյին ժամու զկնի սաղմոսին ասելով՝ 'Ի տուէ կարդացի և գիշերի առաջի քոյ: և թէ՝ Շնորհեա անխռով զգիշերս. և թէ՝ Խաղաղացո զմիտս 'ի գիշերիս. և թէ՝ Պահեա յերկիւղական գիշերիս. և թէ՝ Փառաւորեա զխաւարային խորհուրդս: Յետ այս ասեն, Ես առ տն կարդացի և լուաւ ինձ յերեկոյս: Որ յոյժ ծառն է արժանի:

Նաև այս տմ 'ի տարապամութէ լինի և յանփոյթ առնելոյ, 'ի հոգւոց և 'ի զբաղմանց կենցաղոյս, և 'ի միշտ երկրաւորս խորհելոյ քահանայից, և աշխարհական վարուք վարելոյ: Զի շատք են այն են, որք ոչ գիտեն թէ յետ խաղաղականին աղօթից՝ այլ չէ արժան ընդ ումեք խօսել: Նաև ահիւ և թողութբ պարտ է ննջել, և յանկողնին հանդէս առնել մտացն թէ 'ի մանկութէ մինչև 'ի նոյն ժամն ինչ մեղք է գործեալ. կամ յանցեալ աւուրն ինչ է սխալեալ բանիւ կամ գործով և կամ խորհրդով, և զղջալ յանկողնին: Նաև մեք յառաջիկայն դարձցուք բան զոր հանդերձեալ եմք ասել, եթէ տէր ողորմեսցէ 'ի շահ և յօգուտ լսողաց. և ոչ թէ 'ի պարծանս անձին, կամ յարժանաւորութիւն ինչ ապաստան լինելով:

Եւ արդ՝ կարգեալ է 'ի սկիզբն խաղաղականիս աղօթից բան
բնաւ պատշաճի որ ասէ,

Տէր տն փրկութեան իմոյ 'ի տուէ կարդացի և գիշերի առաջի քոյ: 'Ի սկիզբն բանիս խոստովանի զիշխանական տէրութիւն տյ. զի տէր է փրկութեան և տն ողորմութեան. որ միշտ խնամէ զարարածս իւր, և ունկնդիր լինի պաղատանաց որք կարդան առ նա 'ի տուէ և 'ի գիշերի. որպէս ասէ, 'ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո: 'Ի տուընջեան ասէ կարդացի վասն քաւութեան մեղաց իմոց, և այժմ 'ի մուտ գիշերոյս զնոյն պաղատիմ: Յետ թէ որ տիւ զբարեգործութեան ժամանակն ասէ, և գիշեր յորժամ 'ի մեղս ինչ շաղախիցի՝ ոչ մեղանչէ: Զի թէ որ յորժամ առողջ իցէ հոգւով՝ վստահութբ կարդայ. այս և 'ի մեղանչելն չէ պարտ յուսահատիլ և կասիլ յաղօթից, այլ միշտ պաղատիլ առ տէր զի թողութեան

հայցէ։ Խնդրեա և մտաւորին սակս իմ, *Ընդդէմ բնաւ պատմաս զարդարութիւն իմ։ Ուլ այս վասն զարհուրեցուցանելոյ է և յաղթա-խաղութիւն կոչելոյ։ Այս զի բերանն է քահանայն ժողովրդեանն՝ ընդ-ամենեցուն աղօթէ և վասն ամենեցուն պաղատի. և ասէ,

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր. խոնարհեցո ունկն քո 'ի խնդրուածս իմ։ Որպէս առ կուռնելիոս ասացաւ թէ՝ *Աղօթք քո և ողորմութիւնք ելին յիշատակաւ առաջի այ։ Այս մարգարէն ասէ, *Զհեծութիւն կապելոց լուաւ տէր։ և թէ՝ *'ի նեղութեան կարդացի առ տէր և լուաւ ինձ և եհան զիս յանդորր։ Զայս հայցէ բան աղօթիցս. և ընդ փառաբանութեանն և զօրհնութիւն մատուցանէ սուրբ երրորդութեանն։

Այս ապա սկսանին սաղմոս չորք ըստ քառանկիւնութեայ բնութեան. իսկ ոմանք հինգ սաղմոս ասեն ըստ հինգ զգայութեանցս մաքրութեան, և ըստ նախադրութեան գիրքերային սաղմոսացն։ Այս է առաջին որ ասի այս, 'ի կարդալ իմում լուաւ ինձ այ՝ յարդար կենացս ըստ արդարութեան, զի սատանայի չեմ ինչ մեղուցեալ։ Այս թէ՝ Մատուցէք պատարագ արդարութեան զբանականն պաշտօն։ Տէր դու ողորմութեամբ քով յանդիմաներ զիս վասն մեղաց իմոց. և Մինչ յերբ տէր մոռանաս 'ի կենցաղս յայս, որ է ժամանակ արդարակեաթեան. Այս ոչ մոռացօնք ոչ է. այլ վասն անսաս առանելոյն ա։ Մինչև ցերբ բարձրանայ թշնամին 'ի վերայ իմ։ Ո՛ր յորժամ ըսպեղձ խնդրիր ոչ լինիս չարին, նա մեծաբանէ 'ի վերայ իմ։ Ա՞րդ դարձ արա ինձ այ փրկելով յոգւոյ որ ոչ է սուրբ 'ի բանս իւր։ Այս զսուրբս ասա՝ իրաւ պարտ է խնդալ։ Առաջեաւ տէր զզգաց՝ որով զերծայց 'ի տրտմութեանց և խոստովանեցայց զքեզ փրկիչ։ Աստուած յօգնել ինձ նայեաց, զի առանց քո չեմ բաւական յաղթել չարին. իսկ թէ դու օգնեսցես՝ թշնամին ամաչէ. և որք զքեզ խնդրեն՝ ցնծասցեն, զանուն քո մեծացուցանելով 'ի փրկելն քո։ Իսկ են ոմանք որ ասեն՝ և առւր զօրութեան ասեն, և պատասխանաւորէ։ Ո՛չ է խաչին յիշատակ յաւխւոյ առա լինի. և պարտ է ասել զի երկուակք նշանին յայտնին և այս փառաւորի փառաւորեալն յարութեան։

Յաղագս երգոյն . որ զկնի սաղմոսացն եղանակին ։

Շնորհեա մեզ տէր ՚ի գիշերի զերկնային զխաղաղութիւն քո . և պահեա զմեզ ՚ի պատերազմաց թշնամւոյն ամենայնիւ զօրութեամբ սուրբ խաչի քո ։

Զոր խոստացար առաքելոցն , *Զխաղաղութի զիմ տամ ձեզ ։ Նոյն խաղաղութիւնն որ ՚ի վեր է քան զամ զմիտս և զիմացութի . զոր խնդրէ բան աղօթիցս առ մեզ՝ ոչ երբ զփոխարէն կամ զվարձ , այլ երբ զձրի պարգևք շնորհել ։ Նա ՚ի գիշերի աւէ . զի ՚ի գիշերի առաւել մեզ առէ զմեզ չարն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ՝ քան ՚ի տունջեան ։ Ըստ որում և տէրն յայս պատճէր ասելով առ հրեայսն , *Այս է ձեր ժամ և իշխանութի խաւարի ։ Նմին գիշեր՝ զգեստ ցանօս կոչէ . յորում առաւել զօրանայ չարն առ ՚ի մարտնչել , օժանդակ ունելով զմարմնոյս մերոյ տկարութի և զվայրաքարշ բնութի . Վասն որոյ բազում արթնութեան պէտք են մեզ , բազում պնդութեան և աղօթից . զի խաղաղութեամբ պահպանեալ լիցուք ՚ի պատերազմաց թշնամւոյն , զզօրութիւն սրբոյ խաչին ունելով զօրավիգն և ամրութիւն ։

Տէր ած փրկութեան իմոյ ՚ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո ։ Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր . խոնարհեցո ունկն քո ՚ի խնդրուածս իմ ։

Զոր մարգարէն սկիզբն եդ բանիս , զնոյն և սա երկրորդէ . զառաջինն՝ իբրև զխոստովանութի և զհեծեծ քննուածոյս , իսկ զերկրորդս՝ իբրև զհաստատութի և զենթակայ գործոյս ։

Օգնեսցէ առ մեզ տէր պահապան ՚ի քէն և պահեսցէ զմեզ յամ ժամ ։ Նուաճեա առ մեզ տէր զզօրութի սրբոյ խաչին որ պահեսցէ զմեզ յամենայն ժամ .

Զոր օրինակ կենաց Թագաւորականն՝ զանդորրութի և ամրութի է ընդդէմ և երկիւղ գողոց և աւազակաց , պահելով յամ դաւաճանաց . Նոյնպէս և նշան երկնաւոր Թագաւորին՝ զօրութի և երկիւղ է սատանայական դարանամարտից , և զէն անպարտելի մեզ ընդդէմ դիւաց զնդին , ամենեցուն պահելով զհաւատացեալս յամ փորձանաց հոգւոյ և մարմնոյ . Արդ նա և կայ ՚ի վերայ սրբոյ հոգւոյն խաչն , հրեղէն սուր՝ միայն ազանէր ըստ գիտութեան ձեռնադրութեան յանմարմնականս տեղիս . և պարհերեալ երկինքն ՚ի խաւարածին դիւացն . Նա զինու ամեն՝ եթէ քրիստոնէայքն կենցեն զխաչեանս խաչիւն և պահպանեալ լի-

նին , և առաւնադրեալ զինքն խաչիւն՝ ննջէր ։ Այլ ահա զարհուրեցուցիչ դեւքն անդր հասեալ լինէին արհաւիրս առնելով ․ և հուր եկեալ զնշան խաչին տեսանէին և ձիչ բարձեալ սուէին , եկայք 'ի զարմացումն ․ անօթ ունայն՝ կնքեալ մնացանեաւ ․ զի հրեայն ոչ ունէր զմկրտութի սուրբ աւազանին , և անդէն չեք լինէին դեւքն ։ Իսկ հրեայն տեսեալ զզօրութի սրբոյ խաչին սխրանայր ․ և յարուցեալ յառաւօտուն ընթացեալ պատմէր եպիսկոպոսի քաղաքին և միրախուր ։

Իսկ 'ի մարմնական Թշնամեաց զի փրկէ նշանն տէրունական՝ յայտ 'ի մեծէն կոստանդիանոսէ է և յայլոց բազմաց ․ որք զօրացան նովաւ և յաղթեցին ․ և երևելի և հզօր եղեն 'ի վերայ Թշնամեաց ։ Վասն որոյ զայս գիտելով՝ յամ ժամու և յամ իրս խաչիւն ամրացուսցուք զանձինս , 'ի նստիլ 'ի տան և 'ի գնալ 'ի ճանապարհի , 'ի ննջել և 'ի յառնել , 'ի բանս և 'ի գործս , 'ի կերակուրս և յըմպելիս , և յամ շարժմունս ․ զի միշտ պահպանեալ լիցուք փրկական սուրբ խաչիւն ։

Արժանաւորեա՛ մեզ զերեկս զայս խաղաղութեամբ , և առանց փորձութեան անցոյ զմեզ ․ արժանի արա՛ մեզ զգիշերս զայս խաղաղութեամբ և առանց մեղաց պահելով ։

Զի հսկանաւոր ունիմք բնութի և փորձիչն միշտ դարանամուտ լինի առ 'ի գայթակղեցուցանել զմեզ 'ի զանազան փորձութիւնս և 'ի մեղս ․ ըստ այնմ , *Ոսոխն ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ ․ և խնդրէ թէ զո՞ կլանիցէ ։ Այլ մեք թէ միշտ պահպանիմք առ տէր խնդրելով զօգնականութի , փրկիմք 'ի մեքենայից նորա և 'ի խաղաղութեան վայելեմք ։

Ընդ մեզ տէր ած , գիտասջի՛ք հեթանոսք և պարտեսջարո՛ւք ․ զի ած ընդ մեզ է ։ Այլ լուարո՛ւք զայս 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի ․ զի ած ընդ մեզ է ։

Հեթանոսն ազգ կոչի եթէ դիւաց և եթէ մարդկան ։ Այլ յորժամ զած ընդ մեզ ունիցիմք հաւատով և բարեգործութբք , ամ հակառակորդ թշնամիքն 'ի պարտութի մատնին ․ և 'ի ծագաց մինչ 'ի ծագս երկրի լսելի լինին սքանչելիք բարերարին ամ ։ Այլ ծանիցեն ճշմարտապէս թէ՝ *Մերձ է տր առ այնոսիկ որ մաշեալ են սրտիւք ․ և զխոնարհս հոգւով՝ կեցուցանէ ։ և թէ՝ *Զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր ․ աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա ։

Այլ հզօրացեալքդ պարտեսջարո՛ւք ․ զի ած ընդ մեզ է ։ Այլ զի թէպէտ և դարձեալ զօրանայք , դարձեալ 'ի պարտութի մատնես-

ջիք · զի ած ընդ մեզ է ։ Այլ զխորհուրդն զոր խորհիք՝ խափանէ տր · զի ած ընդ մեզ է ։ Այլ զբանն զոր խօսիք, մի՛ մնասցէ առ ձեզ · զի աստուած ընդ մեզ է ։

Բազմադիմի և զանազանք են խորհուրդք մարդկան առ 'ի նենգել, և ևս առաւել դիւաց · որպ ասէ մեծն Աւագրիոս եթէ՝ *Դևք միմեանց հակառակ են, և 'ի մարդկան կորուստ միաբանին ։ և թէ՝ *Դևն պոռնկութե հակառակ է դիւին հպարտութեան · զի զոր սա շինէ, նա քակէ զհպարտութիւնն յընկենուլն 'ի պոռնկութիւն ։

Այլ արդ՝ եթէ դևք և եթէ մարդիկ անյագաբար միշտ խոկան 'ի նենգել որք յայնախիկ են պարապել ։ Այլ թէպէտ բազում անգամ յաղթահարին, ոչ երբէք դադարին 'ի խորհելոյ զչար · այլ դարձեալ հնարս խնամն թերևս կարասցեն զամօթիւս լինել, որպ և 'ի սևանայ կղզւոյն է յայտ · վս որոյ և զերգս ասի երգել 'ի յաղթանիլ դաւաճանօղ թշնամեացն ։ Այլ զոր օրինակ մեծ և կարծրագոյն վէմ յեզր ծովու հաստատուն իցէ, և բազմադիմի ալեաց յարուցմունք ոչ կարիցեն սասանել զնա · այլ հաստատուն կայ և միայն յանշարժութեան ։ Նոյնպէս որք հաւատով յած իցեն խարսխեալք, և զշինուած առաքինութեանն 'ի վերայ հաստատուն վիմին հաւատոյ իցէ արկեալ, թէ և ամ յողդողդմունք չարաց 'ի մարդկանէ և 'ի դիւաց մաքառիցեն, պարտաւորեալ դասցին ։ Այսն զգուշանալ պարտ է 'ի հաճոյսն այ որով փրկութի գտանի · իսկ եթէ և երբեմն արդարք մնանին 'ի վիշտս և 'ի նեղութիս, և այն ևս 'ի թոյլ տալոյ և 'ի խնամոցն այ է վասն բազում իրաց ։

Այլ զի թէ փոքր ինչ կասեալ լինին արդարք յառաքինութէ և կամ մեծամտեալ 'ի գործս բարիս, և թոյլ տայ ած զալ փորձութեանց 'ի վերայ այնպիսեացն զի զգաստասցին ։ Այլ է՝ զի մատնէ ած երբեմն զարս արդարս 'ի փորձութիւն վասն առաւել սիրոյ և մտերմութեան · զի երևելի լիցին յերկիր՝ և յերկինս պայծառասցին · որպ աբրահամ, յոբ, և դաւիթ, և այլք բազումք 'ի սրբոցն ։

*Բանզի յերկիւղէ ձերմէ մեք ոչ երկիցուք և ոչ խռովեսցուք · զի ած ընդ մեզ է ։ Այլ զտէր ած մեր փառաւոր արասցուք և նա եղիցի մեզ յերկիւղ · զի ած ընդ մեզ է ։ Այլ յուսացեալ եղիցուք մեք 'ի նա՝ և նա եղիցի մեզ 'ի սրբութիւն · զի ած ընդ մեզ է ։ Այլ յուսացեալ եղիցուք մեք 'ի նա՝ և նա եղիցի մեզ 'ի փրկութի · զի աստուած ընդ մեզ է ։

Որ յուսայ 'ի տէր ասէ մարգարէն՝ իբրև զլեառն սիոն ոչ սասանեսցի · զի լերինք շուրջ են զնովաւ հրեշտակաց բազմութիւնք և տէրն հրեշտակաց ։ Այլ ոչ թողու զգաւազան մեղաւորաց 'ի վիճակս

արդարոց • վասն որոյ աներկիւղ միշտ լինին 'ի յարկածից թշնամեաց և անխռով խաղաղութբ վայելեն 'ի սէրն այ։ Այս ասացեալն ասէ ; * Յոյս որ տեսանի՝ չէ՛ յոյս • այլ որ առ յապայ ակն ունելի է, և 'ի դէպ ժամանակի հանդերձեալ է կատարումն առնուլ։ Զի թէ ոչ յուսայ ոք վարձուց հատուցումն ընդունել 'ի կատարածի, առաջարկութեան բարեաց փոյթ ոչ կարէ առնել։

Զի թէ ոչ յուսայր աբէլ, հաճոյական պատարագ զընտիր մատուցանէր այ • և ենովս յուսով կոչէր զանունն այ յօգնականութն։ Այսպէս և նոյ զամս հինգհարիւր կուսութբ այսու յուսով անցուցանէր • վասն որոյ հաճոյ գտաւ այ և երկրորդ աշխարհի սկիզբն եղև։ Նոյնպէս և աբրահամ 'ի յոյս յայս զորդին իւր պատարագէր այ • և հայր ազգաց բազմաց կոչիւր, և երդմամբ այ զօրհնութբ ժառանգէր։ Մովսէս և յոբ հայր համբերութեան գտանէր, զօրինակ բազմաց լինելով • և յոյս վկայէր յայտնի լինիլ ամենեցուն։ Այսու յուսով և մովսէս զանէր ապաւէնն կարդայր • և ամենայն օրհնադրէր ժողովրդեանն իսրայէլի • նաև դաւիթ հալածական լինէր 'ի յոյս յայս • և մարգարէքն ամենայն յազգատոհմէ իւրեանց նեղեալք լինէին։

Այլ զի՞նչ է ինձ երկայնել զբանս • առաքեալքն սովիմբ քաղէին ընդ տիեզերս ամ • ստեփաննոս քարկոծիւր • և վկայքն ամն նահատակէին 'ի յոյս յայս։ Այլ զոր օրինակ հուր՝ զանգ 'ի բաց մաքրէ յոսկւոյ և սրբէ զնա, այսպէս և յոյսն որ առ ած և համբերութբ 'ի վիշտս՝ զոգիս մարդկան մաքրէ և սրբէ և փրկութե արժանացուցանէ, սիրելի և մտերիմ ծառայ այ գործելով։ Նաև յոյսն անհասման և բացարձակ իմն է և ընդ այ երկարաձգի • զի որքան է ած, է և յուսալ 'ի նա։ Այլ որպէս զամ ինչ զոր տեսանէ ոք զչափ կէտն առնու և 'ի միտս իւր կշռէ զորքանութիւնն • իսկ զոր ոչ տեսանէ՝ անպարունակելի միտս և յանբաւս ածէ։

Այսպիսի իմն և զյոյսն է տեսանել • զի որքան մտօք ոչ պարունակի, յնս բարձրագոյն ածէ և օր ըստ օրէ պայծառանայ։ Եւ յոյս երբէք զկայ ոչ առնու կամ մտօք փակի, ոչ աստ և ոչ 'ի հանդերձեալ աշխարհին։ Այլ որքան է ած որոյ անանցանէ, է և յառաջ բարեաց ակն ունել ընդունել յաստուծոյ և աստ և յանվախճան կեանսն, հրեշտակաց և մարդկան և ամ բանական բնութեանս։ Զի միշտ սրբէ և պայծառացուցանէ և ածարեալս գործէ, յառաջադէմս առնելով միշտ 'ի սմին։

Այլ ահաւասիկ ես և մանկունք իմ զոր ետ ինձ ած • զի ած ընդ մեզ է։ Զոր օրինակ մարմնաւոր ծնունդքն մանկունք կոչին

ծնողաց ։ և պարծին նոքա ՚ի մէջ մարդկան ․ և ամ՝ ուրեք յիշեն և խրատական և ՚ի բազմաց երանին ։ Զի ՚ի հին յօրհնութե՛ մարդիկ են ամ՝ պարգեւ ծնութեան ․ և բարեպաշտութեամբ կեցեալք պատուաւորս երևեցուցանելով ։ Բայց և որք հարկաւոր ծննդեանցն են պատճառեալ , հրաշալի երևին ՚ի մէջ մարդկան և զարմանալի աստուծոյ ․ և համարձակութի՛ առեն՝ Աստուածային են և մանկունք իմ զոր ետ ինձ ած ։ Որպէս առաքեալ պարծանս իւր կոչէր զաշակերտսն ․ *Զի ամ՝ տուրք բարիք և պարգեւք կատարեալք յայ շնորհին մարդկան բազ առաքելոյ ։ *Եթէ չարաշարեսցի որ ՚ի ձեռն առնէ վասն քո՝ այն շնորհք յաստուծոյ է ։

Իսկ որք բանիւ վարդապետութե՛ աշխատին՝ ծնօղք կոչին բազ- մաց ։ *՚Ի քս յս առնէ աւետարանաւն ես ծնայ զձեզ ։ Նմին և ծնօղ են ուսուցիչք ՚ի մէջ եկեղեցւոյ զհաւս մեր ․ և մանկունս զոր ՚ի ձեռն պատուիրանացս յայտնեալ ծնանին ծնունդ , եթէ բարի և եթէ չար ։ Իսկ որք չար ծնունդքն նախատինք են մարդկան և ամօթ , այսպէս և բարի ծնունդքն պարծանք են առ ած և առ մարդիկ ։ Իսկ այս շնորհ միայն մարդկան տուաւ յայ , անձեռագործ զբանիցս պատուիրանին և պարգևս շնորհին ․ զի հրեշտակք զայս ոչ ունին ։ Մարդիկ ոչ այսպէս որպէս ամ՝ ազգաց ետ ․ և զզօրծս զայս ոչ շնորհեաց նոցա ։ Վասն որոյ զի՞նչ տացուք փոխարէն տեառն ․ այլ գոհութե՛ զանուն նորին օրհնեսցուք հանապազ ։ Զի ոչ բաւ մե- ղաց մերոց որպէս մեզ , և ոչ բաւ անօրէնութեան մերում հասուցց ․ այլ բաւ բարձրութեան երկնից զօրացոյց զողորմութիւն իւր յեր- կիւղածս իւր ։

Իսկ ժողովուրդ որ նստէր ՚ի խաւարի՝ տեսեալ լոյս մեծ ․ զի ած ընդ մեզ է ։ Իսկ որ բնակեալ էք ՚ի խաւարի և ՚ի ստուերս մա- հու՝ լոյս ծագեսցէ առ ձեզ ․ զի ած ընդ մեզ է ։

Մեծ լոյսն քս որ ասաց ես եմ լոյս աշխարհի , ճշմարտապէս ծագեցաւ հեթանոսաց ժողովրդեանն որ նստէին ՚ի խաւարի կռա- պաշտութեան և ՚ի ստուեր անհաւատութեան , միշտ դեգերեալ և տատանեալ յանձինս , ոչ ակն ունելով երբեք ծագման լուսոյն ։ Իսկ զոր օրինակ՝ որ ընդ ծառով կամ ընդ քարիւ նստիցի՝ ՚ի ստուե- րի է միշտ և ոչ ծագէ ՚ի նա լոյս արեգականն՝ որքան ՚ի ստուերն իցէ ․ իսկ յորժամ ՚ի բաց յառնէ և արտաքս դիմէ առ լոյսն , տեսանէ ճշմարտապէս զպայծառութի լուսոյն ։ Այնպէս որքան ընդ մահու ստուերաւ նստեալ նստէին մարդիկ՝ ՚ի խաւարի անածութեան էին , և ընդ մահու գրաւեալ իշխանութեամբ և չարին վհատեալ ․ բայց այժմ , *Մահ հովուեսցէ զնոսա Նայիրքն՝ ՚ի չարաչար ծառայութե՛

և վկայս։ Նոյն յորժամ այդ ասեմ 'ի մեզ՝ աղբերականն առաքելութեան 'ի քարոզանոց և լուսաւորչաց զխաւարն աշխարհի մերոյ. և հրամայեաց դի-մել յօժար կամօք 'ի նոյն Տէրն. ըստ խրատու տեառն բանին. * Գնացէք ընդ լոյս՝ մինչդեռ զլոյսդ ընդ ձեզ ունիք. զի մի խաւար ձեզ հասցէ։ Նոյնժամ կատարեցաւ բան հոգեբղխին. * Տէր հով-ուեսցէ զիս և ինձ ինչ ոչ պակասեսցէ։ 'Ի վայրի դալարոջ անդ բնա-կեցոյց և առ ջուրս հանգստեան սնոյց զիս. Այսմ զի ճշմարտապէս բնակիչքս 'ի խաւարի և ստուերին մահու՝ տեսաք զլոյսն մեծ գի-տութեան եկեղեց հաւատալ։

Նա քանզի մանուկ ծնաւ և որդի տուաւ մեզ. զի տէր ընդ մեզ է։ Նա որոյ իշխանութիւն իւր 'ի վերայ ուսոց իւրոց. զի տէր ընդ մեզ է։ Նա որ կոչի անուն նորա մեծի խորհրդոյ հրեշտակ. զի տէր ընդ մեզ է։ Նա սքանչելի խորհրդական. զի տէր ընդ մեզ է։ Նա տէր հզօր իշխան. զի տէր ընդ մեզ է։ Նա իշխան խաղաղութեան հայր հանդերձելոց յաւիտենից. զի տէր ընդ մեզ է։

Նա քանզի մանուկ ծնաւ մեզ. և որդի տուաւ։ Բնութեան վտանգելոյ 'ի նախահօրն յանցմանց՝ մանուկ ծնաւ մեզ մարմնացեալ բանն տէր և որդի տուաւ խոնարհեցելոյս 'ի բարեծնութեան։ Նա զոր օրինակ ծերացելոյ հօր՝ մանուկն ցուցանէ և հաստատութիւն. այսպէս և հնացելոյ բնութեանս 'ի մեզ՝ նորոգումն և հաստատութիւն եղև. Թարմութիւն տուաւ բնութենականս և աթոռակից հօր որդին. յոր օրհնեցան ամ ազգ երկրի, և եկեղեցի 'ի բազմորդութիւն անթիւ. ըստ այնմ, * Բազում եղեն որդիք ամլոյն առաւել քան զամուսնոյն։ Զոր և մարգարէն հիացմամբ ասէ, * Ո՞ լուաւ, ո՞ եւս, եթէ երկնեաց երկիր և ծնաւ ազգ մի ողջոյն միանգամայն։ Վասն զի երկնեաց սիօն և ծնաւ զմանկունս իւր։

Նա որոյ իշխանութիւն իւր անէ 'ի վերայ ուսոց իւրոց։ Իշխանութիւն զխաչն է իմանալ. ըստ այնմ, * Չև էր հոգի. քանզի յս չև էր փառաւորեալ։ Նա զի փառք և իշխանութիւն զխաչն կոչէ որդի ատացու. զի փառքն այն է՝ որով թշնամին պարտի. և տէրն 'ի խաչի պարտեաց զսատանայ։ Նա յաղօթելն յորժամ ասէր տէրն, * Հայր փառաւորեա զորդի քո։ Նա հայրական բարբառն վկայէր, և * Փառաւոր արարի և դարձեալ փառաւոր արարից։ Զի է զոր օրինակ իշխանութիւն իշխանին փառք կոչի իւր և պատիւ, այսպէս և տէր խաչիւն եառ զիշխանութիւն 'ի վերայ երկրի ըստ մարմնոյ. ըստ մարգարէին, * Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ։ Նա ըստ իւրում տեառն բանին, * Տուաւ ինձ ամ իշխանութիւն յերկինս և յերկրի։ Զի ածութեամբն յառաջ քան զյաւիտեանս էր իշխան 'ի վր ամե. իսկ մարմնով յետ խաչին 'ի վերայ հաւատացելոց եառ զիշխանութիւն

Եւ որ կոչի անուն նորա մեծի խորհրդոյ հրեշտակ և սքանչելի խորհրդակից։ Հրեշտակն սպասաւորի անուն է. և զի սպասաւոր եղև տէրն մեծի խորհրդոյ տնօրէնութեանն. վասն որոյ հրեշտակ կոչեցաւ մեծի խորհրդոյ. ըստ առաքելոյ, *Որ մտադիւրն ծառայեաց բազմաց։ և թէ՝ *Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ՚ի Ք(րիստո)ս և յեկեղեցի։ Իսկ զի ասէ, սքանչելի խորհրդակից. զի կամաւ հօր և հաճութ(եամ)բ հոգւոյն սրբոյ եղև մարմնաւորութիւն որդւոյն։ Եւ խորհուրդ գալստեան բանին ա(ստուծո)յ սքանչելեօք ծանուցաւ սրբոց մարգարէիցն. որ(պէս) ասէր մովսէս, *Մարգարէ յարուսցէ ձեզ տէր ա(ստուա)ծ ձեր յեղբարց ձերոց։ Եւ դաւիթ, *Սքանչացաւ գիտութիւն քո յիս։ Եւ ամբակում, *Տէր զլուր քո լուայ և երկեայ. տէր նայեցայ ՚ի գործս քո և զարմացայ։ Եւ ինքն տէրն առ հայր խորհրդաբար ասէր, *Հայր՝ կամիմ զի որ(պէս) դու յիս և ես ՚ի քեզ, զի և սոքա ՚ի մեզ լիցեն. զի եղիցուք կատարեալք ՚ի մի։ Որ է արդարև սքանչելի խորհրդակցութիւն։

Եւ ա(ստուա)ծ հզօր իշխան. և իշխան խաղաղութեան հայր հանդերձելոյ յաւիտենիցն։ Զի իշխանութիւնն ա(ստուծո)յ ոչ է իբր զմարմնաւոր թագաւորաց, որ երբեմն զօրանան և այլ երբեմն ակարանան. այլ իշխանութի(ւ)ն նորա իշխանութի(ւ)ն յաւիտենից, և տէրութի(ւ)ն նորա յազգէ յազգ. զի տէր հզօր է զօրութ(եամ)բ, և տէր կարող ՚ի պատերազմի։ Եւ այն զի ասէ,

Իշխան խաղաղութ(եան) և հայր հանդերձելոյ յաւիտենին։ *Զի արար խաղաղութիւն ասէ առաքեալն արեամբ խաչին իւրոյ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի։ և թէ՝ *Մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ ա(ստուծո)յ մահուամբ որդւոյ նորա։ Եւ ինքն տէրն, *Զխաղաղութիւն զիմ թողում ձեզ։ Զի բազում է խաղաղութեանն իւր և անխորժելի, և ո(չ) համարատալի. զի ինքն ա(ստուա)ծ է խաղաղութիւնն։

Եւ հայր ասէ հանդերձելոյ յաւիտենին։ Զի արարչութ(եամ)բն ո(րպէս) զա(ստուա)ծ արար յոչ էից, այսպէս և հանդերձեալ յաւիտեանն նմա է արարած։ Եւ արարչութ(եամ)բն հայր կոչի իբր զծնող եղելոցս և յառաջ բերող, յորոց փառաւորի միշտ։

Եւ զմինի այսորիկ զհամբառնալ ձեռացն ասէ սրբութեամբ, և զխոստովանիլ խորհրդոց բանից և գործոց առ յառաջադէմն. և ծածկագէտն, և յողորմութիւն ա(ստուծո)յ միշտ յուսալ և խնդրել ՚ի նմանէ յիշման արժանի առնել, յորժամ վարձս բարեաց պարգևեսցէ արժանաւորացն։ Զի և մեզ լիցի ողորմութի(ւ)ն գտանել ՚ի նմանէ. և ՚ի մի բերան փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգին ընդ վերնոցն զուարթնոց. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

այն տառապելեացն պատրաստեցեր զայն. այլ և զմեղաւորս կոչեցեր յապաշխարութիւն. Վասնզի ասացեր՝ Եկայք առ իս ամ աշխատեալք բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ. Այս է զոր աղօթիցս բան ասէ,

Յուշեցեր առ քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռնս և զտարմնեալս մեղօք, հանգիստ նոցա խոստանալով. Քաղցր է արդարև ձայնն այն որ զմեղաւորս յապաշխարութիւն կոչէ. որ ոչ միայն ազատ 'ի տանջանաց, այլ և արքայութեան հանգստեանն արժանացուցանէ ընդ սուրբս իւր. Ողորմեաց մեղաց ծանրութիւն բեռն 'ի բաց բառնայ 'ի նոցանէ, և յանպատում կեանսն առաջնորդէ յանման և յանանց հանգիստն.

Շնորհեա՛ և մեզ տէր անխռով հանգստեամբ զգիշերս անցանել. Աղաչեմք զի զհանգիստ քնոյ զոր ետ մեզ՝ շնորհեսցէ տալով. զի ոչ դևք և ոչ 'ի գազանաց և 'ի սողնոց կամ յայլ անասնոց կամ 'ի մարդկանէ վնասել կարասցեն. և ոչ զարհուրանք երազանապեցուցանեն. այլ խաղաղական հանգստեամբ զանկարութիւն մեր զօրացուցանել. Եւ ապա յետ այսր վասն միւսոյ հանգստեանն զբանն յառաջ ածէ.

Եւ 'ի ծանրութէ մեղաց զաշխատեալքս յապաշխարողացս ողորմեա քով. Որդի մարդասիրութէ զմարմնաւոր աշխատութիւնս հանգստեամբ գիշերոյն, այսպէս և զհոգիս մեր զաշխատեալս 'ի մեղաց յապաշխարողացս. այսինքն է դադարեցո յանկծութէ. Ոչ ըստ արժանի մերոյ ապաշխարութեան, և կամ 'ի բարբն ջանալոյ. այլ՝ ողորմութեամբդ քով. զի և քո ողորմութիւնդ պատճառ 'ի մեղաւորս խնայելոյ և յապաշխարութի կոչելոյ. և զմեզ յապահովս արասցես յամ մարմնաւոր ցանկութեց, զինուորին ընդդէմ ոգւոյ. Եւ 'ի պարկեշտ և 'ի խաղաղարար դարակերով կեանս փոխեսցես. Այս և վասն երրորդ բուն և անապառ և ուրախալից հանգստեանն պաղատի.

Արժանաւորս արա զմեզ մշանջենաւոր հանգստեանն ընդ ամ ս քո. Վասնզի զսուրբս քո որք աստէն ընդ նեղութիւնս և աշխատութիս անցին վասն սիրոյ քո, առ քեզ ժողովել հանգուցանես յայն երկայն ամին անչափութեան.

Յորում հանգստեան և զմեզ արժանաւորեսցես, և ընդ նոսին ամացուսցես քեզ փառս և գոհութիւն մատուցանել. Վասնզի յայն սակս յարէ 'ի նոյն,

աշխատեալք և ծախեալք գործովք և հոգւովք , և որք հարկին 'ի բռնաւորաց յազգի ազգի տառապանաւ : և վաստակեալք բազմապատիկ վշտօք , դառնաւորին յիւրաքանչիւր արկածից . և գիշերայն փոքր մի յիւրաքանչիւր կրից և աշխատութեանց թեթևացեալ լինին : Քանզի որպէս կարծեմ , լիականին հատար բոլոր գիշերացդ վասն այսորիկ եւ կարգեաց մեզ , զի մի սովորեսցուք կամայ և ակամայ խոնջել յերկրաւորեան գործոց . այլ յայր փոփոխմամբ՝ 'ի հանգստեանն մխիթարութեան անձինս մնասցուք : Նա թէ կարի հարկս հանդիպեսցի 'ի գործս կամ 'ի ճանապարհ , զայն լնուցումք լուսով աւուրն եւս . և զհանապազորդեան հանգիստ գիշերոյն մի մոռասցուք : Ընդ հանգստեանն ոչ եւս պահպանութեան՝ աղաչել հրամայէ . վասն այսորիկ

Նա մեք աղաչեսցուք զբարեգութն մեծ լինել պահապան անձանց մերոց . և նա իւրով ողորմութեամբն պահեսցէ զմեզ անփորձ 'ի տուէ և 'ի գիշերի :

Տեառնեան , դարձեալ ողորմութիւն լսել վասն հաւատացուցանէ զաղաչանսն . վասն որոյ և ասէ , Աղաչեսցուք զբարեգութն մեծ , և նա իւրով ողորմութեամբն պահէ անխռով զտիւ և զգիշեր : Ընկալ՝ անփորձ է :

Նա առաջնորդեալ հասուսցէ զմեզ յաւիտենական ուրախութիւնսն , զոր խոստացաւ տալ սիրելեաց իւրոց Ճշմարիտն մեծ :

Ոչ միայն 'ի խաղաղութեան կալ աղաչէ զբարեգութ և զողորմած տէրն , այլ և առաջնորդել յարդարութիւն և հասուցանել յաւիտենական ուրախութիւնսն . Յաւիտենական ասի անապական . զի անմահութիւն վայելեն սուրբքն յանվախճան կեանսն , ըստ անսուտ խոստման Ճշմարտին այ . որպէս ասէ , Յս Քս Տր մեր կեցցէ և ողորմի :

Նորին վասն Աղօթիցն :

Տէր բարերար որ մեծաւ գթութեամբ քով պատրաստեցեր զյաւիտենական հանգիստն առաքինութեամբ աշխատեցողացն : Բարերար ասելով՝ զբարիսն որ 'ի նմանէ 'ի հոգի և մարմին շնորհեցաւ , յիշելով գոհութիւն մատուցանեմք :

Մեծաւ գթութեամբ քով պատրաստեցեր ասէ զյաւիտենական հանգիստն առաքինեացն : Գութդ քո մեծ և անչափ՝ աշխատելոց պատրաստել զայն ղանչափ զանձուն և զանվախճան հանգիստն . զի սակաւաժամանակս աշխատեալ՝ յաւիտենական ընդ քեզ հանգիցեն : Նաև

միայն առաքինեացն պատրաստեցեր զայն, այլ և զմեղաւորս կոչեցեր յապաշխարութիւն։ Քանզի ասացեր՝ *Եկայք առ իս ամ աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։ Այս է զոր աղօթիցս բան առէ,

Կոչեցեր առ քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռինս և զտաժանեալս մեղօք, հանգիստ նոցա խոստանալով։ Քաղցր է արդարև ձայնն այն որ զմեղաւորս յապաշխարութիւն կոչէ, որ ոչ միայն ազատէ ՚ի տանջանաց, այլ և արքայութեան հանգստեանն արժանացուցանէ ընդ սուրբս իւր։ Զմեղացն ծանրութեան բեռն ՚ի բաց բառնայ ՚ի նոցանէ, և յանպատում կեանսն առաջնորդէ յանմահ և յանանց հանգիստն։

Շնորհեա՛ և մեզ տէր անխառն հանգստեամբ զգիշերս անցուցանել։ Աղաչեմք զի զհանգիստ քո զոր ետ մեզ՝ շնորհեսցէ անխառն. զի ոչ դևք և ոչ ՚ի գազանաց և ՚ի սողնոց կամ յայլ անասնոց կամ ՚ի մարդկանէ վնասել կարասցեն. և ոչ զարհուրանք երազոց տագնապեցուցանեն. այլ խաղաղական հանգստեամբ զտկարութիւնս մեր զօրացուցանել։ Եւ ապա յետ այսր վասն միւսոյ հանգստեանն զբանն յառաջ ածէ։

Եւ ՚ի ծանրութենէ մեղաց զաշխատեալս յապաշխարողաց ողորմութեամբ քով։ Որպէս մարդասիրութեամբ զմարմնաւոր աշխատութիւս նորոգես հանգստեամբ գիշերոյն, այսպէս և զհոգիս մեր զաշխատեալս ՚ի մեղաց յապաշխարողաց. այսինքն է դադարեցո յալէկոծութենէ մեղաց։ Ոչ ըստ արժանի մերոյ ապաշխարութեան, և կամ ՚ի բարին յառաջանալոյ. այլ՝ ողորմութեամբդ քով. զի և քո ողորմութիւնդ իսկ է պատճառ ՚ի մեղաւորս խնայելոյ և յապաշխարութիւն կոչելոյ։ Որով և զմեզ յապաշխարողս արասցես յամ մարմնաւոր ցանկութեանց, որ զհոգւորին ընդդէմ ոգւոց։ Եւ ՚ի պարկեշտ և ՚ի խաղաղարար և յարդարակիրով կեանս փոխեսցես։ Այս և վասն երրորդ բուն և անսպառ և ուրախալից հանգստեանն պաղատի։

Արժանաւորս արա՛ զմեզ մշտնջենաւոր հանգստեանն ընդ ամ սուրբս քո։ Քանզի զսուրբս քո որք սատէն ընդ նեղութիւնս և ընդ աշխատութիւս անցին վասն սիրոյ քո, առ քեզ ժողովեալ հանգուցանես յայն երկնային ամին անչափութեան։

Որում հանգստեան և զմեզ արժանաւորեսցես, և ընդ նոսին արժանացուսցես քեզ փառս և գոհութիւն մատուցանել։ Քանզի յայն սակս յարէ ՚ի նոյն,

Եւ ընդ նմին փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Պարգևատու բարեաց և աղբիւր խաղաղութեան տէր ած մեր։ Տեսանես, համակ զաւրութեանցն ոչ նախ գոհանալով խորանեն զետեղ սուրբքն, և ապա խնդրել զոր ինչ խնդրելին կամիցի։ Զի այս գործ շնորհակալու ծառայիցն է՝ հանապազ գոհանալ ըզ-պարգևատուէն։ Յառաջնումն դրուագին այսպէս ասէ զսկիզբն. Տէր բարերար՝ որ մեծաւ գթութեամբ քո պատրաստեցեր զյաւիտենական հանգիստն, և որ զկնի։ Իսկ յերկրորդումս, Պարգևատու բարեաց և աղբիւր խաղաղութեան տր ած մեր։ Գիտէ ըզ յակոբայ առաքելոյ զբանն երկրորդէ՝ որ ասէ, *Ամենայն տուրք բարիք և ամ պարգևք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի հօրէն լուսոյ։ Զայն և սուրբ լուսաւորիչն մեր ասէ, վասն ոչ թէ՝ Աղբիւր է ամ բարեաց. և ի նմանէն բաշխին պարգևք յորդառատ։ Արդ՝ գոհացեալ զպարգևողէն զբարիս և զխաղաղութիւն բղխեալ աղբիւրաբար, մաղթէ զխաղաղութիւն բարիսն որ լաւագոյն է քան զամ պարգևս. առանց որոյ և ոչ այլ բարիքն հաստատեն։

Յամենայն սատանայական խռովութեանց խաղաղացո զմեզ և զխորհուրդս մեր ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի։

Բազում պատերազմունք են սատանայի և դիւաց ընդ մեզ և ընդ խորհուրդս մարդկան զանազան կարծիւք։ Եւ որ խաբէին զմեզ բարի ցուցանելով. և է որ անհնար զառաքինութիւս դնէ և քաղցրացուցանէ զմեղսն։ Եւ որ յամօթոյ կամ յերկիւղէ կամ յաշխանաց՝ ի մեղս զառածեն. և որ ի ձեռն մարդկան չար դրդեն ի չարիս։ Եւ զի և բռնութեամբ մարդկան պատերազմի ի դարձուցանել զմեզ ի չարիս։ Եւ զի և զարհուրանս և երկիւղս արկանէ ի քուն կամ յարթուն առաջս երևմամբ, կամ յօդին՝ կերպարանէ արհարաց տեսիլս և երևմունս. կամ ի քուն երկեցուցանէ ազգի ազգի գիմօք և իրօք, և ի մեղս ևս խոնարհեցուցանէ. և երազս բազում և պատիրս խաբս բազմապատիկս ցուցանէ։ Զայս և որ սոցին նման խռովութիւս ի վերայ մարդկան բերէ։ Այն է զոր ասէ, Յամ սատանայական խռովութեանց խաղաղացո զմեզ և զխորհուրդս մեր ի գիշերիս յայսմիկ և յամ ժամանակի։ Այլ յարէ ի նոյն.

Արդ զի առաջնորդեալք յանցաւոր կենցաղոյս։ Այլք ի սատանայական հաղբից փրկեսցես զմեզ, կարասցուք զարժանն գնալ

քով, առաքինութեամբ։ Յովհաննու Ոսկեբերանայ ասէ, զի 'ի մեր ազ-ցուք և զխաւարցուք և Ձմեռայցուք անցաւորաւս զամանց բարութեան [illegible] և ասէ [illegible] պատուիրեն.

Աղաչեսցուք յաւիտենականն երկնից արքայութեան քո՝ զոր պատրաստեցեր 'ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց։ Բանիւ Տէր երա-նութի, յաւիտենանս և յերկինս ընդ այ և ընդ սուրբս նորա ուրա-խանալ. այսպ ասէ,

Սու ընդ նոսին միաբանեսցուք [illegible] և [illegible] և զնորա հա-[illegible] և մեզ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ այսպ ասէ Սողոմոն.

Տէր [illegible] [illegible]

[illegible]

Քարոզ.

Աղաչեսցուք զամենակալն տէր, զի [illegible] [illegible] [illegible] [illegible] ամենակալ տէր տէր կեցո և ողորմեա մեզ։

Աղաչեսցուք ասէ, [illegible] [illegible] զի այլ [illegible] և այլ է [illegible] և [illegible]։ Առ ամենակալ

ասէ առաքեալն, զի որ ամենայնի տէրն է՝ և ի նմանէ [illegible] կարգեալ լինիցին։

Զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան. որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս ՚ի դիւական խռովութենէ։ Այսպէս զի դեռ ՚ի գիշերի առաւել խիզախեն. զի խաւարամերձք են և գարշանամունք, որով պատերազմին միշտ ընդ մարդիկ։ Մանաւանդ յորս զամաց... լինին զթշնամս դառնութեան իւրեանց սերմանել խորհրդով բանիւ և գործով։ Իւ այս ամ ՚ի գիշերի առաւել յաճախեն. և քաղցու խռովութեամբ և անհանգստութեամբ զմիտս մարդկան լնուն։ Զոմանս ՚ի քուն զարհուրեցուցանելով, և զոմանս յանթնութեան արհաւիրս առնելով և երկեղուկս. իսկ զոմանս ՚ի ցնորս պղծալիցս յածուցանեն։

Վասն որոյ և զխաղաղարար հրեշտակն պահապան խնդրէ, զի յայսմ ամենայնէ անհոգ լիցուք՝ ով սիրելիք ոգիք որ զօրացեալ էք ամայոյն շնորհիւն, առ ոչ ինչ գրեն զնոցա մեքենայսն։ [illegible] ՚ի [illegible] ՚ի գիշերի [illegible] ՚ի [illegible]։ [illegible] կամ ՚ի դառնանաց [illegible] յածելոյ [illegible]։ Կամ մինչդեռ ՚ի քուն իցէ, յանկարծ ՚ի վերայ փլուզանին ՚ի շարժմանէ երկրի կամ ՚ի մեքենայից դիւաց։ Կամ զի թուլացեալ լինին նիւթք շինուածոյն և խախտեալ կամ մածք շարադրութեանն յերկարաձգութէ ամացն, և ոչ զօրեն ՚ի վեր ունել զծանրութիւն յարկացն. այլ խոնարհեալ իջանեն և քակեն մահ գործեն։ Իսկ այս ամենայնի և որ սոցին նման իցեն, հարկեցուցիչ կամ այլ ինչ դաւից, մարդասէր տէրն երկիւղածաց իւրոց և հաւատով խնդրողաց՝ յառաջագոյն ազդումն ինչ առնէ, երկիւղ զարհուրեցուցանելով կամ նշանաց ազդումն ինչ առնելով, կամ ՚ի տեսիլս երազոց զգուշացուցանէ զնա պատահմանցն. Թէպէտ և [illegible] կամաւ [illegible] լիցի։

Ամենակալ ասէր [illegible] և [illegible]։ Որոյ [illegible] արար բանիւ ամենակալ ասելով, [illegible] և [illegible] ՚ի նոյ

տուարած ։ Յորմէ և զփեկցուցանելն խնդրէ և զողորմելն ․ և զամենե-ւեան ՚ի նոյն յորդորէ սանելով առ ողորմութիւն ․ զի հայր է քարոզողն ժողովրդեանն ։

Աղօթք ։

Շնորհատու բարեաց՝ տուող անմահ Տէր , փարատեա՛ յանձանց մերոց զաղջամղջին և զխաւարային խորհուրդս ․ ՚Ի պատրանաց բանսարկուին պահեա՛ զմեզ ․ և շնորհեա՛ հաւատով տպաւորել յամենասուրբ երրորդութիւնդ ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Զանազանք են շնորհք բարեաց հեղեալ յարարչէն ՚ի յարարածս իւր ։ Այլ են առաւել մարդկայինս բնութե ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ , և այն առատապէս են և լիապատար ըստ մեծամեծութեան արարչին ։ Այլ զի անմահ է բաշխողն շնորհաց , անմահ է և շնորհն իւր յարարածս իւր ։

Բայց դու տե՛ս ինձ և զոր մարդկութե՛ն քո և քաղցրութե՛ առաքելոցն ես առաւել , յաւելում առ հաստատեցեալ քրիստոնեայսս ․ որք և ամենայն աւետարանիչն , ասէ յովհաննէս , * Տեսէք եղբարք՝ որպիսի՛ շնորհս ՚ի ձեռն իմ ես ձեզ տամ , որպիսի՛ ձիրս , որպիսի՛ պարգևս ; և որ ՚ի կարգսն ։ Այլ բազումք են այն են , որ այժմ ոչ երևեին զգալի աչօք այսոցիկ ․ այլ ՚ի դէպ ժամանակի ծանուցեալ լինելոց իմանալի հարանցարանէն ։ Այլ թէ կամիս նկատել ինչ փոքր ՚ի շատէ զառաւելութի շնորհին , նայեա՛ց ՚ի բարբարոսսն և յանհաւատսն , և տե՛ս թէ յորպիսի՛ շնորհաց զրկութենէ են զրկեալ ․ և ծանիցես զուղղութն առաւելութի , և գոհասցիս զառաւօտէն ։ Բայց ոչ է պարտ միայն ՚ի շնորհսն ապաստան լինել ․ զի զհեղգացեալսն և զանփութութեամբսն դատապարտեաց տէրն , իսկ աճեցուցանողացն վարձս բարիս հատոյց ։

Փարատեա՛ ասէ յանձանց մերոց զաղջամղջին և զխաւարային խորհուրդս , ՚ի պատրանաց բանսարկուին պահեա՛ զմեզ ։ Աղջամղջին ասէ և խաւարային , վասն զի խաւարն յայտնի ցուցանէ թէ ձախակողման է պատուղ , բայց քաղցրութեամբն մեղկէ և պարարէ ։ Իսկ աղջամուղջն՝ մասն ինչ լուսոյ ունելով ընդ խաւարի , որով զպարզամիտսն դիւրաւ գթեսցէ ։ Իսկ որք զաէրն զօրավիգն ունիցին՝ յաղաղթեսցեն դիւրաւ զերծանին և շնորհի տեառն արժանանան , որպէս և հետակայ բանս ցուցանէ ։

Շնորհեա՛ հաւատով տպաւորիլ յամենասուրբ երրորդու-
թիւնդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Զանզի
առանց հաւատոց ամենայն անվաւեր և ոչ աւգտաշէն ասելն է, և ոչ
առնու հաստատութի. զի հաւատն հիմն է ամ բարեգործութեան։
Վասն այսորիկ հրամայէ թէ՝ *Զամենայն որ հաւատով խնդրէք՝ առ-
նուցուք։ Նա զամ ասելովն՝ եցոյց թէ՝ ուր բոլոր հաւատ իցէ,
ոչ ինչ լինիցի անհնարին թէ և ՚ի կարի մեծագունիցն իցէ։ Վասն
որոյ ասէ, շնորհեա՛ հաւատով տպաւորիլ յամենասուրբ երրորդու-
թիւնդ՝ ո՛չ միայն այժմ և միշտ որ է սոսի կենաց ընթացս. թէպէտ
և սաս գոն յաւիտեանք, այլ և յանծերանականին յաւիտեանս յա-
ւիտենին։

Յորդորակ։

Նա մեք կայցուք պնդագոյնս յամենայնս մեր զհաստատութի
հաւատոյն, յորդորեալ հանապազօր ՚ի գործս բարիս. ՚ի
վերայ հաստատուն վիմի հիմունս արկանելով, և զշինուածս առաքի-
նութեան գեղեցկայարմար յօրինելով։ Ո՛չ միայն ՚ի հաւատ ապաս-
տան լիցուք. զի մի՛ հրէականին նմանեսցուք ժողովոյ որ ասէին,
*Տաճար տեառն՝ տաճար տեառն։ Յայտնին թէ՝ ապաքէն տաճար
այս շէն է ՚ի միջի մերում, մեք հաճոյ եմք այժմ և ոչ երբէք տրտմես-
ցուք. այլ միշտ զուարճացեալք լիցուք։ Նկատեսցէ և գործս ոչ ու-
նէին, զայս այսպէս կարծէին և յանձն առեալ եղեալ յօրինակն
Որոց ասէր երեմիաս, *Տաճար տեառն է, բայց զայս գիտասջիք, զի
երուսաղէմ կանթեալ է ոչ ասէք. և դուք մի որ եկիք ՚ի սմա վասն
չարաց գործոց ձերոց։ Որպէս և եղեն իսկ. զի եկն բաբելացին այ-
րեաց զերուսաղէմ և զտաճարն, և զբնակիչս ՚ի նմա սատակեաց. և զմ-
մնացեալսն գերի վարեալ եմույծ ՚ի բաբելոն։ Նաև մկրտիչն յովհան-
նէս սաստէր նոցա ասելով, *Մի՛ համարիք ասել յանձինս թէ ու-
նիմք հայր զաբրահամ. ասեմ ձեզ՝ թէ կարօղ է ած ՚ի քարանց
յայսցանէ յարուցանել որդիս աբրահամու։ Որպէս և եղեն իսկ. զի յա-
րոյց զքարացեալ հեթանոսս վերստին ծննդեամբ աւազանին. ոչ միայն
որդիս հաւատոյն աբրահամու, այլ և յորդեգրութի հօրն երկնա-
ւորի և յեղբայրակցութիւն քի։ *Զի որք ՚ի քս մկրտեցայք՝ զքս զգեցայք։

Վասն որոյ առաւել զգուշանալ պարտ է, զի մի՛ վրիպես-
ցուք ՚ի շնորհացս զոր ընկալաք։ *Զի ոչ եթէ դու զարմանն ՚ի

վեր ունիս առ աստուածայինն, այլ պղծեալն՝ դժեալ. զի դու 'ի բուն սանն պատուհասեցար. Եւ զի նա վասն չարութեան անկաւ, բարուք է. և դու վասն բարւոյ պատուհասեցար. Զորչափ լեր գոհացիր. և դու անկանիցիս. զի որ 'ի բուն սատանայ ոչ խնայեաց, և 'ի քեզ ոչ խնայեսցէ. եթէ մեղիցես և ոչ զղջասցիս և ապաշխարեսցես:

Նա զայս գիտելով սիրելիք՝ սրբեսցուք զանձինս մեր 'ի մեղաց. կատարեսցուք զսրբութիւն անձանց մերոց ահիւն Այ: Մի յապաղեսցուք խոստովան լինել նմա զմեղս մեր արտասուօք և ապաշխարութեամբ: Մի երբեք ճգնեալ և այսօր հեղգասցեալ, կամ այսօր ջերմեռու և վաղիւն գինեմպու: Մի անգամ ազատեալ վասն մեղաց, և դարձեալ խոտորեսցեալ անհոգութեամբ. զի ոչ եթէ երկրորդումբք ոսկիք կաշայցէ ոք և ոչ յայս լեգէ; Նաև ոչ միով ակամբ յերկինս և միով յերկիր հայիլ ուժեք հնարաւոր է, և ոչ երկնաւոր և երկրաւոր միով հաճոյանալ աստուծոյ:

Ոի որ երբեմն շինէ և երբեմն քակէ, ոչ կարէ յաւարտ հասանել: Նա զի սէր աշխարհիս թշնամութիւն է առ Ած որպէս յայտ առնէ Ածաբան աւետարանիչն յովհաննէս: Նա է քաղցրութիւնն, և նա է ծորուցիչն. զի յետ աստեացս վճարելոյ՝ դժնեմ ապաշխարութեան այլ ոչ գոյ: *Ահաւասիկ ժամանակ ընդունելի ասէ առաքեալն, ահա օր փրկութեան. մի և մի խեթք տայցէք պատճառս զի մի արտաքսեսցի ապաշաւն: Ոչ հեղգութիւն և ծուլութիւն յորժամ տեղի գտանէ 'ի փոքրիկն 'ի մեծն ելանէ չարն, որպէս և եղև կորուսան իսրայէլին:

Վասն որոյ առաւել զգուշանալ պարտ է, զի մի որկեցուք 'ի սատանայէ: Ոի դրունք են զգայութիւնքս 'ի քաղաքի բնութեան մերում. այսինքն է տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք, շօշափելիք. Նա այսոքիւք անձնեքումբք կռուի ընդ մեզ սատանայ. և ջանայ 'ի ներքս վազել ընդ դրունսն ընդ այսոսիկ զի ըմբռնեսցէ զամրութիւն քաղաքիս մերոյ. և 'ի ներքուստ 'ի դուրս դիւրաւ մարտնչեսցի և յաղթեսցէ մեզ:

Նա մեր զայս գիտելով՝ պարտիմք արթուն լինել միշտ և պատրաստ և կազմ. զի մի յանպատրաստից ըմբռնեսցիմք. Ոի որքան հսկէ տանուտէրն, գողք ոչ կարեն տեղան հատանել և գողանալ. այլ խոյս տուեալ փախիցեն: Գրեալ է 'ի վարս հարանց եթէ՝ ճգնաւոր մի զերկոտասան ամ 'ի պատուիրանս և յօրէնս տեառն միշտ խոկայր և խորհէր: Նա զերկոտասան ամսն զայնոսիկ դեւն 'ի դրանն կալով՝ ոչ կարէր 'ի ներքս մտանել: Նա յորժամ գաղարեաց և թուլացաւ ճգնաւորն 'ի բարի խորհրդոցն, տեղի եգիտ դեւն և վաղեաց 'ի ներքս և ըմբռնեաց զմիտս ճգնաւորին ցնորեցուցանէր:

Սման որպէս բնական հողոյ յանձին բերել պտուղ է եւ բնական. փոյթս առնել ՚ի Քրիստոս աստուածութեան, զի ՚ի բնական մտքենայից չարեաց զերծեալ գտանիցեմք. զի ոսոխն մեր սատանայ գոչէ ըստ առաքելոյն պետրոսի եւ խնդրէ թէ զո՞ կլանիցէ. զի անյագ է ՚ի չարիս նենգաւորն, եւ երբեք հերիք ոչ ասէ. Նա թէ ՚ի դրախտէն խաբելովն ասա զմեզ ընկէց յերկիր անիծից եւ ընդ ծառայութբ դըւաեաց, ապա սաստ յորժամ խաբիցէ՝ ո՞ւր կամիցի ընկենուլ. եթէ ոչ յանդունդս դժոխոց.

Նա արդ՝ զմտաւ ածցուք թէ վասն է՞ր եկաք յաշխարհս յայս. զի ոչ զօրէն անասնոց կայցուք ցեմք ՚ի վերայ երկրի զպորտ եւ զորովայն լնուլ. Զոր եւ առաքեալն նախատէ ասելով՝ *Կերակուր որովայն եւ որոր կերակրոյ. եւ Աստուած զսա եւ զնա խափանեսցէ. Զի մարմին ցանկայ հանապազ հակառակ հոգւոյ. Նա մեզ պտուղ է զպահել եւ գործել հակառակ մարմնոյ. որով կարասցուք մեզ յաղթել դանել ՚ի պատերազմի.

Նա արդ՝ զի պատկեր աստուածոյ եմք, ըստ այնմ, *Արար Աստուած զմարդն ՚ի պատկեր իւր. Պարտիմք զնմանութիւն սկզբնատպին ՚ի մեզ ինքեանս բերել. Նա որո՞վ կարիցեմք բերել արարածքս զարարչի նմանութիւն, հողանիւթ բնութիւն գոլով եւ ընդ մարմնոյ կարեօք մկեալ եւ զգայարանօք կապեալ, ո՞րք շղթայիւք ունիմք. Իսկ ո՞յ ձեռք եւ ոտք եւ կամ բնաւ զգայարանս ինչ իմանալ կամ կարծել՝ անմաթութիւն մեծ է. Զի թէպէտ եւ լսեմք այսպիսի ՚ի գիրս, ըստ մերում տկարութեանս ձեւացուցանեն զբանն զոր մեք սովոր եմք ասել. զի ընդունականն կարիցեմք իմանալ. Որպէս այն զի ասեմք, խոնարհեցո ունկն քո եւ լուր, բաց զաչս քո եւ տես. Զօրութիւն ընդէ՞ր նշխեա, արի եւ մի մերժեր զմեզ. Առ զզէն եւ զասպար քո եւ արի յօգնել ինձ. Նա Աստուած այսմ անձնայնի ոչ պիտոյանայ. զի կամքն գործ է կատարեալ. *Ասաց եւ եղեն, հրամայեաց եւ հաստատեցան ո՞չ ասէ մարգարէն. Նա յայտ է թէ իմանալեան եւ ներքին մարդովն եմք պատկեր Այ. որով յայտ է թէ գայ հնար նմանել Այ ըստ կարողութեան մարդկան, անոխակալութբն՝ սիրովն՝ եւ ողորմածութբն՝ եւ կարեկցութեամբն.

Աղօթեաց տէրն ՚ի վերայ խաչահանուացն ասելով, *Հա՛յր թող դոցա՝ թէ զղջասցին եւ դարձցին, զի ոչ գիտեն զինչ գործեն. Նա դու թէ ոչ այնպէս որդիաբար առ հայր, այլ ծառայաբար առ տէր. որպէս սուրբն ստեփաննոս առ տէր ասելով, *Մի՛ համարիր սոցա զայս մեղս. Նա որո՞վ նա շահեցաւ զանօթն ընտրութն եւ այլ

բազում. այնպէս և դու շահեցիր զկորովս և պայծառացիր հոգւովք։ Որժամնացեալ տէրն զմտաւորին սեղանոյն և զպատիւ լուսանալոյ և հաճոյութեան բազում ջանիւ և յօժարութեամբ. զի կամէր շահել զփրկութիւն նորա մինչև 'ի վերջին կատարածն, և նա ոչ կամեցաւ. այլ ապականեալ կորեաւ, ոչ վայելելով 'ի փրկութիւն փրկագործողին։ Ընծային մեզ դիւցէ և ոչ այնմ որ կամեցաւն կեցուցանել, և ինքն ոչ յօժարեաց։

Մեք և դու անխափան առ թշնամիս քո. թէ քաղցեալ է՝ հաց տուր նմա. և եթէ ծարաւի է՝ ջուր մատո. թէ մերկ է՝ զգեցո. և թէ յարկի է կարօտ՝ և զայն պատրաստեա և երանելի լինիցիս։ Դու մի որ ագահաբար ընդ դէմ բերցէ բանիւ ասելով թէ՝ քո՞ յետ մահու՝ արքայութեան ընդ էր ոչ արժանացայց զկուդս և զխաչահանուսն։ Մի ոք յանդգնեսցի և մի ոք անմտասցի զայսպիսիս խօսելով ագահաբար. այլ ուսցի և տեղեկասցի, որով կարասցէ հասու լինել և 'ի վերայ կալ զօրութեան բանին։

Ողորմ է դատաւոր, և անիրաւ ոչ առնէ դատաստան. զի խնամարկել 'ի թշնամիսն յայսմ կենցաղումս է, և զայն ոչ արար պակաս տէրն։ Իսկ որք անզեղջ աստի գնան անդ, այլ բարեաց ակն ունել ոչ է, այլ պատիժ, պատուհասի ըստ տէրունական հրամանին։ *Մեղաւորքն ասէ երթիցեն 'ի տանջանս յաւիտենից, և արդարքն 'ի կեանս յաւիտենից. և թէ՝ *Ոմանց յարութիւն կենաց և ոմանց յարութիւն դատաստանաց։ Եւ դու յորժամ լսիցես յԱծային գրոց թէ՝ *Բարի արարէք ատելեաց ձերոց և աղօթս 'ի վերայ նեղչաց։ Յայսմ կենցաղումս խմա թէ քեզ պատուիրէ առնել, և ոչ թէ 'ի հանդերձելումն. զի անտի կենացն դու ոչ ես տէր, այլ արարիչն ամենայնի որ անկնկալութիւն է ամենեցուն և յոյս հանդերձելոց աշխարհին։

Սա և Մեծն յաճախ Ոսկի կոչեցեալն բերան՝ իբր բարկանալով ինձ ասասէ այնպէս և վճիռ-ինդիր լինի այնպիսեացն՝ որք խօսիցին այնպիսի հայհոյութիւն վասն Այ. և ասէ այսպէս, *Իբր քարիւ ասէ հարկանեմ զբերան քո բանիւ Ածային գրոց վարդապետութեանս։ Ով է յատու կեանս միայն հրամայեաց զբարի առնել թշնամեաց. զոր և ինքն ասա մեզ և հանապազ արար, յանձնէ օրինակ տալով ամենեցուն Տէր բարեաց։ Եւ դու այժմ թող զհարիւր դահեկանի չափ պարտս ծառայակցին քում, զի և դու գտցես անդ 'ի տեառնէ բիւր տաղանդացն թողութիւն. մանաւանդ թէ ես առաւել բազմապատկեաց։ Ով է այնչափ ոչ կարէ մարդ մեղանչել մարդոյ՝ որչափ մարդ Այ մեղանչէ. և դու թէ թողցես սակաւ զպակասն, գտցես և դու անդ բազմին թողութիւն։

Վասն որոյ և տէրն յաղթեան զայս հրամայէ ասել միշտ և հանապազ, *Հայր մեր որ յերկինս. Թող մեզ զպարտս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Այլ սուտ են որք շրջեն զբանն և ասեն, Թող մեզ զպարտս մեր և արժանի արա թողուլ մերոց պարտապանաց: Զի տէրն զբարին միշտ մեզ օրինադրէ. զի որչափ և ասէ որ թէ արժանի արա թողուլ որ պարտին մեզ, բնաւ ի գլխոյն ոչ եկեսցէ և ոչ հոգ արասցէ թողուլ: Իսկ յորժամ ասէ՝ Թող մեզ որպէս և մեք թողումք, յայնժամ զարհուրի և դողայ և թողու զպարտս ընկերին. զի տես յայս միտս և զերկանակ բանիս այսպիսի եդ ասացի: Զքեզ ինքնին ասէ արարի դատաւոր կամաց քոց. զի թէ թողցես, և լինիցի գտցես թողութիւն. և թէ ոչ թողցես, ոչ և լինիցի ակն ունիցիս: Դու անձին քում օրէնսդրեաց. զի որով չափով չափես չափով չափեսցի քեզ:

Սկսեալ ճշգրիւ զգերամնեաձև մեղս ի քում անձին. և մի խուզեսցես խնդրել զշիւղ յական եղբօր քում: Կազմութիւն մարմնոյ մերոյ ոչ է իբրև զայլ կենդանեացդ՝ որ զգլուխն ի խոնարհ ունելով միշտ ընդ երկիր աչնուն, զայն միայն շահ օգտի համարելով զառ ծրեալ գտեալ կերակուրն: Իսկ մարդոյս կազմուածն կանգուն գոլով ի վեր միշտ զհայելն գուշակէ առ Աստուած. ըստ առաքելոյ՝ *Զվերինն խնդրեցէք հանապազ ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Հօր. զվերինն խորհեցարուք. զի յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն ձեր, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք: Այսպիսի յոյս խոստացեալ ունիմք և այսպիսի մեծագոյն պատիւ կայ մեզ առաջի. և մեք իբր զանասուն անխմաս ի տաւերականս խաղալ յօժարիմք:

Ո՛չ միայն բաւական զատելութիւն ի բաց բառնալ, այլ և սէրն ի տեղւոջն անկել: *Զի Աստուած սէր է. և որ կայ ի սէր նորա՝ յԱստուած բնակէ և Աստուած ի նմա. ոպ ասացն: Այլ թէ՝ *Յայսմ ծանիցեն ասաց տէրն թէ իմ աշակերտք էք՝ եթէ սիրիցէք զմիմեանս: Այլ լրումն օրինաց սէրն ասացաւ:

Այլ դարձեալ ոչ է միայն բաւական զհպարտութիւն և զամբարտաւանութիւն ի բաց ընկենուլ և զնորահաձև ամբարտաւանութիւն, այլ և զխոնարհութիւն ստանալ և զհեզութիւն և զցած ոգի լինելն: *Զի որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի ըստ տէրունական հրամանին: Եւ թէ՝ *Ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ: Այլ մարգարէին դարձեալ, *Ես յո՞ բնակեցայց՝ եթէ ոչ ի հեզս և ի խոնարհս և որք դողան ի բանից իմոց: Այլ Դաւիթ Աստուածահայրն թագաւորն և մարգարէն իբր խրախոյս իմն տալով ասէ, *Զսիրտ բե և զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ:

Նու դարձեալ՝ չէ՛ և չէ՛ միայն բաւական ողջութի և զղջացումն ՚ի բաց ընկենուլ, այլ և ողորմածութի և զձեռնարձակութի առատապէս ստանալ յամ ժամ, և առաւել ևս յաւուրս պահոց։ Օ՛ի մի՛ լուիցէ ՚ի տեառնէ թէ, *Զայդպիսի պահս ոչ ընտրեցի ինձ ՚ի հաճոյս։ Այլ լոյծ զկնճիռն անիրաւութե․ քակեա զխարդախութիւն․ և զմուրհակ չարին անիրաւութե յօժարութբ հերձեա․ զի մի՛ ունայն լինիցի բողոքելն քո յորժամ ես ոչ լսիցեմ։ *Զողորմութիւն կամիմ ասէ ած և ոչ զզոհ։ և թէ՝ *Երանի ողորմածաց՝ զի նոքա ողորմութի գտցեն յայ ՚ի դէպ ժամանակի։

Նու մարգարէն քաջալերէ զմեզ ասելով, *Զմեղս քո ողորմութբ քաւեսցես, և զանօրէնութիւս քո տրովք անանկաց։ և թէ՝ *Բարձր ՚ի գլխոյ պարծի ողորմութի առ դատաստանաւ։ և թէ՝ *Զտուրս զուարթառատս սիրէ ած։ Ո՛չ ճշդիւ և մի՛ տրտնջելով և խոժոռ դիմօք, զի մի՛ անհաճոյ լիցի բարին․ այլ յօժարութբ և առատութբ և պայծառ դիմօք և զուարթ երեսօք․ զի այնպէս ընկալցի փոխարէնն։ *Չափ բարւոք ասէ տէրն թաթաղուն զեղուն շարժուն տացեն ՚ի գոգս ձեր։ և թէ՝ *Որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ։

Ամն յաւուրն ած ասէր և բարեսէր թագաւորացն՝ գրեալ է թէ յորժամ ողորմութի առնէր՝ ասէր, այսօր թագաւորեցաք յորժամ ողորմութի արարաք։ Նու գիրք սուրբք զողորմածն ած ասեն անպատկառ ամ համարձակութբ ըստ կրկնակի բայից և բառից։ Նաև մարդկան սովորութի է՝ յորժամ ողորմութի տացէ որք յումեքէ, և հարցանեն թէ ո՞վ ես, ասէ համարձակութբ թէ ած ես։

Ողորմութի դուստր է թագաւորի, և ունի համարձակութի առ հայր իւր․ և համարձակութբ մուծանէ զատացօղն իւր առ թագաւորն։

Պահքն՝ ՚ի ճանապարհ հանեն զմարդ արքայութեն․ և աղօթքն՝ մինչ ՚ի դուռն տանի․ իսկ ողորմութի-նն՝ ՚ի ներքս մուծանէ յառագաստն առ թագաւորն երկնաւոր ըստ իւրում տեառն բանին թէ՝ *Ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի։ և թէ՝ *Եկայք օրհնեալք հօր իմոյ․ ժառանգեցէք զձեզ պատրաստեալ զարքայութին։ Զի քաղցեայ և եսուք ինձ ուտել․ ծարաւեցի և արբուցէք ինձ․ մերկ էի և զգեցուցէք․ հիւանդ էի և ՚ի բանտի՝ և եկիք առ իս․ և թէ որովհետև արարէք միում ՚ի փոքրկանցս յայսցանէ յեղբարցս՝ ինձ արարէք։

Չէ՛ և չէ՛ միայն բաւական զմեղս մաքրել խոստովանութբ, այլ և ապաշխարութբ և գործովք բարեօք լնուլ զաւերն։ Օ՛ի մի՛ դարձեալ անօթ լիցի չարին ըստ տէրունական հրամանին թէ՝ այսն պիղծ որ վասն մեղաց թոյլ առեալ ոչ մնեալ է ՚ի մարդ, յորժամ

ողորմութե՛ն նորին ելեալ 'ի մարդոյ և հանգիստ ոչ գտեալ յանջր-
դին տեղիս յարդարոցն ոգիս, դառնայ և գտանէ զառաջին տեղին
դատարկ 'ի բարի գործոյ. յայնժամ երթեալ գումարէ ընդ ինքեան
չարագոյնս քան զինքն դևս. ոչ միայն եօթն, այլ և հազարս և բիւրս։
Զի անուն եօթանց՝ միայն բազմաւորութե՛ն է անուն. և տէրն ա-
ռակաւ խօսի։ Որպէս այն որ 'ի յայտնութե՛ն ասէր առ մեծն յով-
հաննէս աւետարանիչ և ա՛ծաբան, թէ առ հրեշտակս եօթն եկեղեց-
եացն ասա՛ զայս և զայս ինչ։ Եւ այն ոչ թէ նոցին միայն էր պատ-
ուէր, այլ նոքօք ընդ ա՛մ տիեզերաց եկեղեցիս խօսի. այսպէս և 'ի
վերայ չարագոյն այսոցն է իմանալ։

Բայց մի՛ ոք անգիտաբար կարծիցէ թէ տէրն այսահարացն
միայն ասէ զայս, այլ և ա՛մ մեղաւորաց. զի մեղաւորն որչափ 'ի մեղս
է, բնակարան է սատանայի. և չար գործովք իւրովք կերակրէ զնա
և հանգուցանէ։ Իսկ եթէ յողորմութենէն ա՛յ զղջացեալ չարժի 'ի
խոստովանութի՛ և յապաշխարութի՛. և փոքր ինչ յառաջեալ 'ի բա-
րիս, դարձեալ ծուլացի և սիրէ զհեղգութի՛ և զամբայութիւն, և
զրկի յայնմանէ որ բարի գործովքն կերակրէր զա՛ծ, և բնակարան
լինէր շնորհաց հոգւոյն սրբոյ։ Եւ տեսեալ թշնամւոյն զոչ յօժա-
րութի՛ նորա 'ի բարիս, և զախորժակօք դիմելն 'ի չարիս, ժողվէ
զբազմութի՛ չարագոյն այսոցն և մտեալ բնակէ ի՛ւր 'ի յարդարեալ
տաճարի անհոգութե՛ն, արկանելով զնա 'ի վիհս կորստեան. այսինքն՝
'ի զանազան տեսակս մեղաց, բնականս և անբնականս։

Եւ զկնի այնորիկ ընկենու զնա 'ի թերահաւատութի՛ և յանդ-
գամութի՛ և յուրացութի՛. և ապա յուսահատ առնէ զնա յողորմու-
թենէն ա՛յ ասելով թէ՝ այլ ոչ գոյ քեզ թողութի՛. և ոչ ևս կարես
հասանել փրկութեան, վասն որոյ պինդ կաց 'ի նոյն անդառնալութեան։
Եւ զա՛ծ անողորմ ցուցանէ նմա, և զապաշխարութեան դժուարին,
զժամանակն երկար, և զինքն անարժան ողորմութեանն ա՛յ։ Եւ այն-
չափ տագնապէ զնա և 'ի նեղասրտութիւն արկանէ, մինչ զի 'ի խեղդ-
մամբերիցէ և զանձին ևս առնէ։ Եւ ահա եղև մարդոյն այնորիկ
յետինն չար քան զառաջինն՝ ըստ տէրունական բանին։

Եւ ոչ տայ չար թշնամին եղկելոյն այնորիկ բնաւ ածել զմտա-
ւ զհրամանս տէրունական եթէ՝ *Դարձարուք առ իս, և ես դարձայց
առ ձեզ։ և թէ՝ *Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցես։ և թէ՝
*Եկայք առ իս ա՛մ աշխատեալք և բեռնաւորք և ես հանգուցից ըզ-
ձեզ։ և թէ՝ *Ո՛չ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխա-
րութիւն։ Զի առաջին ճանապարհ առ ա՛ծ՝ ոչ մեղանչելն է. իսկ
երկրորդ՝ յետ մեղանացն զղջալ և ապաշխարել և ոչ յուսահատել

կորնչել. զի ոչ կամի տէր զմահ մեղաւորին, այլ դառնալ ՚ի չար ճանապարհէն և կեալ:

Եւ արդ՝ ասէ Եսայի, *Ո՞ պատմեսցէ ձեզ զտեղւոյն յաւիտենից եթէ հուր գանձեալ կայ և տանջանք պատրաստեալ՝ ոչ զղջացելոցն ՚ի մեղս. Եւ զի ամենայն հրով փորձելոց է՝ դաւիթ վկայէ. *Աստուած մեր ասէ յայտնապէս գայցէ. և հուր առաջի նր գնասցէ առ ՚ի փորձել զիւրաքանչիւրսն և ՚ի հատուցանել ըստ արժանեաց: Եւ պօղոս ասէ, *Որ շինէ ՚ի վերայ հիման հաւատոյն փայտ խոտ եղէգն: Այսինքն մեղս բնականս կամ անբնականս, յորժամ մր իմն ՚ի հուր անցանէ, որոյ գործն այրի՝ տուժի և գործօղ մեղացն ՚ի հուր և ոչ մեռանի. այլ կայ անմահ ՚ի տանջանսն յաւիտենից:

Իսկ որ շինէ ՚ի վերայ հիման հաւատոյն ոսկի արծաթ ակունս պատուականս՝ որ է բարի գործ. և հաճոյական առաքինութիք, որ ոչ են կեղծաւորութբ կամ մարդահաճութբ և փառասիրութբ: Զի այնպիսիքն ոչ եթէ միայն ՚ի պսակացն զրկին որ վասն այ ոչ առնեն զառաքինութիսն, այլ և տանջին ևս: Իսկ ճշմարտասիրացն և ըստ այ հաճոյիցն ճգնողացն, յորժամ գործն ՚ի հուր արկանի՝ ոչ այրի. այլ և՛ս առաւել պայծառանայ իբրև ոսկի արծաթ և լուսաւոր քարինք. և գործօղն կայ և մնայ մշտնջենաւոր ՚ի կեանսն յաւիտենից ընդ հրեշտակս դասակցեալ ՚ի փառաբանութիւնն այ:

Եւ մեր զայս իմ գիտելով՝ միշտ զերկրաւ գամք և ընդ երկիր աշխամք. և զերկրաւորս յաւէտ խորհիմք, զարդարելով զձիս և զջորիս, և զևս վատթարագոյնս զգազանաբարոյ շունս: Թողից ասել զյարկաց և զապարանից և զբարձրագունից տանց, զոսկիազօծ ձեղուանց և զյախճապակեալ յօրինուածոց, և զկճէփս և զզանազան պատկերովք ցցելովք: Որոց ոգիքն ուրկացեալք և բազմապատիկ մեղօք վտանգեալք. և նա զորմս տանցն պայծառացուցանէ և զինքն մոռացեալ է եղկելին:

Գրեալ է թէ յարտաքնոցն՝ իմաստասէր ոմն տուն շինեաց. և գեղազարդ ոմն տեսաց զնա, ծեփեա զտուն քո զի եկեալ գեղեցկացուցից զնա զանազան նկարուք պատկերաց և յանդուածոց յօրինուածովք: Եւ ասէ իմաստասէրն, եկ յառաջ նկարեա և ապա ՚ի վր ծեփեսցես. զի զգարշելիսն ծածկելն է բարւոք քան թէ յայտնելն:

Եւ մեծն յովհան գրեալ է բերանն ոսկի, թէ զոմն իմաստասէր ՚ի հացկերոյթ կոչեցին. և նա իբրև եմուտ ՚ի տուն և բազմեցաւ, նայեցեալ ՚ի վեր և ՚ի վայր և ՚ի չորեսին կողմունս տանն՝ ետես զանազան գունովք զարդարեալ. և ազգի ազգի երանգովք պայծառացուցեալ. և լցեալ զբերանն խխով՝ եթուք յերեսս տանուտեառն:

Իսկ իբրև հարցեալ եղև թէ ընդէ՞ր արարեր զայդ. պատասխանեալ ասէ, և զի՞նչ վնաս արարի. զոր դուք պատուեալ էիք և ես պատուեցի. և զոր դուք ոչ էիք պատուեալ՝ և ոչ ես պատուեցի։ Հայեցայ յամ տունս և տեսի զարդարեալ ամենեքումբք, և ոչ կարացի թքանել զի սպասուած էր, և զերեսս տանուտեառն միայն տեսի անպատիւ, զի ոչ էր զարդարեալ առաքինութեամբ զներքին մարդն՝ և անդ թքի։

Իսկ թէ այսորիկ արտաքինքն որ զճշմարիտ աստուածածանօթութիւն ոչ գիտէին՝ այսպիսի իմն նախանձ ունէին բարեաց գործոց և առաքինասէր փառաց, արդ ո՞րչափ ևս առաւել մեզ պարտ է բազում զգուշութիւն և փոյթ ունել յառաքինութիւնս. որք մեծագոյն շնորհի արժանացաք զարեամբն Քի և պատուական խաչին փրկագործութեամբն։ Այլ մեք մինչ ՚ի խորին ծերութիւն աղաղակեմք շատաշուտ և բազմահեշտ գտանիմք, զանցաւորօքս բուռն հարեալ և զոչ մնացականսն ճշմարտացուցեալ։ Իսկ զքո ՚ի դրունս տեսեալ բրդդեալ և երեթեալ, անտես առնեմք ոչ գթալով և ոչ ողորմելով և զգեստ ընծայելով։ Իսկ երանի թէ այս միայն, այլ և նախատեմք ևս և բամբասեմք ուղղայն անուն կարդալով ՚ի վերայ. և արատութեամբ և անօթալի գինով գարշացուցանեմք՝ և ո՛չ գեհեան զմեզ ոչ այրեսցէ, կամ ո՛չ տանջանք մեզ բաւական լինիցին։

Որդարև բարձաւ ՚ի մէնջ դայեր իմաստուն և հանճարեղ խորհրդական. ամենեքեան խոտորեցաք ՚ի միասին և անպիտանացաք։ Ըստ և հովիւն իբրև զհօտն, և առաջնորդն իբրև զառաջնորդեալսն. իւրաքանչիւր որ զիւր ախտն պաշտէ և իւրում ուղեկանին զհետ։ Քահանայն և կրօնաւորք, վանականք և աշխարհականք, վարդապետք և վերակացուք, ամենեքեան միապէս սիրեցաք զաշխարհ և որ ինչ յաշխարհի է։ Ամենեքեան միապէս սիրեցաք զչարիս ըստ իւրաքանչիւր չափու. ամենեքեան միապէս ղարառուղի գնացաք ՚ի ճանապարհէ բարի գործոց՝ յաջ և յահեակ խոտորելով։

Վասն որոյ զգուշացեալ՝ բուռն հարցուք զառաքինութեանց գանձ անապական իմն, և գործեսցուք զբարիս. զի և երկնից արքայութեանն արժանի լիցուք փառաւորելով զհայր և զորդի և զսբ հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ա.Ւ.Ր.Տ.

Երես	Տող	Սխալ	Ուղիղ
14	7	ուղեորդք	ուղեորք
21	5	(պաշտօ)	որպէս
36	35	զպարգես	զպարգեւս
68	13	մշակքդ	մշակքդ
72	15	շեղական	շեղ ական
92	30	զամենեցուցն	զամենեցունցն
139	22	ընդուել	ընդունել
165	19	յօրէնս	յօրինես
189	08	հաստատուն	հաստատուն
218	15	յօդէ	յօդէ
224	10	նեխերին	նեխէրին
224	11	փառերին	փառէրին